




Հարգելի՝ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները։ Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները։



**ՉԱՐԵՆՑՅԱՆ
ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**

9

ՀՏԴ 892.981.1:06
ԳՄԴ 83.34
Զ 882 Զ.

**Ժողովածում հրատարակության
պատրաստեց և խմբագրեց
ՎԱԶԳԵՆ ԳԱՐԻԲԵԼՅԱՆՆ**

Զ 882 Զ. Չարենցյան ընթերցումների (Հոդվածների ժողովածու).
Խմբ.՝Վ. Գարիբելյան, Գիրք 9, Եր., ԵՊՀ հրատ., 2012.- 224 էջ:

«Չարենցյան ընթերցումների» այս գրքի հոդվածների եմքում
ընկած են Երևանի պետական համալսարանի հայ նորագույն գրա-
կանության ամբիոնի, ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի և Հա-
յաստանի գրուների միուրյան համատեղ կազմակերպած «Չա-
րենցյան ընթերցումներ» հերթական գիտաժողովի ժամանակ կար-
դացված զեկուցումները:

ՀՏԴ 892.981.1:06
ԳՄԴ 83.34

ISBN 978-5-8084-1657-4

© ԵՊՀ հրատարակություն, 2012
© Գարիբելյան Վ., 2012

Ժողովածուն նվիրվում է

Եղիշե ՉՎՐԵՑԻ

Ճնշոյան 115, գրական մուտքի 100 ամյակներին:

«Այսօր լրանում է ճան իմ գրա-
կան գործունեության քսան և եինձ
տարին. 1912 թվի մարտին «Պա-
տամիում» լրայս տեսավ իմ առաջին
ոտանակորը. «Ծաղիկները եեզ
թերվում են քամու օրորի տակին -
Եվ լսում նրա... և այլ»:

1937, մարտ Ե. Չարենց
Կրառասմամյա տարեդարձիս օրը»



Ծաղիկները հեզ թերվում են քամու օրորի տակին -
Եվ լսում նրա հեռվիցը թերող երգը տխրագին...
Քամին ծաղկունանց շուրբերն է դողդոց շոյում, գուրգուրում
Ու լուս մրմնջում, թե հեռուներում ինչպէս են սիրում...
Եվ այս ամենը կատարվում է միշտ իրիկնաժամին,
Երբ որ տրտում են հեզ ծաղիկները ու մեղմ է քամին...

Եղիշե Սողոմոնյան

«ԳԻՐՋ ՇԱՆԱՊԱՐՀԻ» ԵՐԿՈՒ ՏԱՐԹԵՐԱԿ.
Ի՞ՆՉ ԵՆ ԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԸ

1935 թ. ապրիլին գրած և 1936-ի դեկտեմբերին խմբագրած մի
քառասող բանաստեղծության մեջ Չարենցը, թերևս մի քիչ է
խանդրվ, երազում է.

Օ՛, Ակեսանդր,- ոչ հաշակ, ոչ գանձ
Ես չեմ երազում օրերիս նաշում:
-Ա՛յս, կյանքում եքս տրվեր ինձ եամկարծ
Մի «Թուրիմյան» աշում...

Հայտնի է, որ 1935 թ. աշնանը Պուշկինը ապրեկ և ստեղծա-
գործել է Նիժնի Նովգորոդի նահանգի Բոլցինո գյուղում և երեք
ամսվա ընթացքում գրել է տարրեր ժամերի շուրջ եփուն գործ՝
«Փոքրիկ ողբերգություններ» դրամատիկ պոեմները, «Պղնձն
հեծյալը», «Պիկովյա դաման», ավարտել է «Եվգենի Օնեգինը»
և այլն:

Պուշկինյան ստեղծագործական պոռթկում, լարում ու տպր-
մանը էր երազում Չարենցը իր նկատմամբ ծանր հալածաճների
դժվարին այդ շրջանում՝ իր խոսքերով՝ «օրերիս նաշում», Բոլցին-
յան խաղաղ աշում՝ իրագործելու իր բազում եղացումները: «Երե
տրվեն՝ ր», ..., բայց իրեն արդեն տրվել էր մի այդպիսի «աշում» /թեև
վեց ամիս՝ 1933-ի հունվարից հունիս/, ծնվել էր 317 էջանոց մի
ամրադր ժողովածու: «Գիրք ճանապարհին», որ բացառիկ սևե-
ռուսի, ոգեշնչումի և անդույ տքնանքի ծնունդ էր: Ու պատահա-
կան չէր, որ ժողովածուն եզրափակվում էր հենց Պուշկինի «Աշ-
խատանք» բանաստեղծության շարենցյան բարգմանությամբ.

Ժամն ընծական արդ հասավ. ավարտված է երկար աշխատանքը:
Ի՞նչ է բախիծ է անհայտ սիրուս կրծում ամդադար²:

¹ Եղիշն Չարենց, Անտիա և չհավաքված երկեր, Երևան, 1983, էջ 91:

² Եղիշն Չարենց, Երկերի ժողովածու վեց հատորով, հատոր 4, էջ 470: Այս
հատորում զատեղված «Գիրք ճանապարհի» ժողովածուից նև բաղկած բան-
ստեղծական բոլոր մեջրերումները. Եղիշը կնշվեն տեղում:

Պուշկինյան «անհայտ թախիծի» տագնապը թերևս նաև նրա քարգմանչին էր... Սիրազ կրծող անհայտ թախիծը գուց կանագացուն էր գրի ճակատագրի՝ կարժանանա՝ ապագրյալ գրին, կահորահարի՝ ռուրիկոնը, կապրզվե՞ն գաղտնագրերը, ճանապարհի գիրքը ճանապարհ կը թակին:

Եվ տագնապը գուր չէր ավարտի «ըղձական» ժամից հետո, տպագրության ողիսականը ծագվելու էր գրեթե մեկ տարի. 1933-ի օգոստոսին գիրքը տպարանում արդեն պատրաստ էր երատարակության հոկտեմբերին, անգամ որոշ օրինակներ տպել էին հեղինակին, բայց լույսը նձայումը ծագվեց և նոյեմբերին արգելվեց:

Ծուրջ ուր ամիս Զարենցը «գրմեր էր ծեծում», նամակներ էր եղում տարբեր հասցեներով (ՀԿ/Շ կենտրոնի քարտուղարությանը, Անաստաս Միկոյանին, Ստալինին, Մարինտա Չահինյանին, գրողների միության կազմկոմիտեին), ջամում էր արդարանալ իրու մեղադրանք ներկայացվող «գաղափարական լուրջ սխալների» համար¹:

Օգտվելով կենակումի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի ժամանակավոր քացակայությունից հանգստանում էր գագրայում/ կենակումի քարտուղարներ Արամ Միրզաքելյանն ու Զարմայր Աշրաֆյանը Խանջյանին գաղափարական սխալների մեջ մեղադրելու Խանջյանը նախապես կարդացել էր Զարենցի «Գիրքը» և համաձայնություն էր տպել տպելու/ և նրանցից ազատվելու նպատակով հապշտապ կազմակերպում են «հիմքեր»՝ Զարենցի նախին որոշումներ կայացնելու համար. նոյեմբերի 13-ին կենտրոն է հասնում Լուսավորության ժողովնախայի կողեզրայի որոշումը՝ Զարենցի և Քակունցի կազմած «Հայ գրականության պատմության բրեստոմատիան» շրջանառությունից հանելու և պետքանի մի շարք աշխատակիցների պատժելու առաջարկով, նույն օրը գրադերի միության կազմկոմիտեի նախագահ ե. Չուրարի և «Գրական թերթի» խմբագիր Ն. Դարայյանի ստորագրությամբ կենակումի բյուրոն ստանում է նոր առաջարկ. «Նկատի ունենալով, որ Զարենցի «Գիրք ճանապարհի» աշխատության մեջ գոյություն ունեն նացիոնալիզմի ցայտուն արտահայտություններ և միևնույն ժամանակ կուսակցության դեկավար ըմկեր Ստալինը տրացկացմի դեմ ուղղված պայքարի կապակցությամբ պատկերված է կարիկատուրային ձևով... մեմք որպես գրական ֆրոնտի աշխատողներ, ամերածեցա ենք գտնում արգելք դեմք:

Զարենցի գրի վրա²: Եվ հենց հաջորդ օրը՝ նոյեմբերի 14-ին, կենտրոնի բյուրոն հարցումով որոշում է ընդունում «Հայպետական գրականության անկայունության մասին»: Երասի արտադրանքի իդեոլոգիական ասպարեզում մի շարք ռեակցիոն, բացահայտ նացիոնալիստական աշխատությունների» բվում առաջինը նշվում է «Զարենցի «Գիրք ճանապարհի» աշխատությունը, որը պարունակում է հականեղափական արողկիսական պատմությանը, ակնհայտութեան արտահայտերով հայկական մարտնչող նացիոնալիզմը»: Երկրորդը վերը հիշատակված «Քրեստոմատիան» է, որի մեջ «զետեղվել են ծայրահեղ շովիմիսական ստեղծագործություններ /Գամառ Զարիպա, Իմաֆի, Շահազիդ և ուրիշներ»: Թվարկումից հետո, ինարկե, որոշում է՝ «Արգելվ Զարենցի «Գիրք ճանապարհի»-ի երատարակումը», «Արգելվ Զարենցի «Գրեստոմատիան» և «հետացնել Զարենցի Պետականի գնդարվեստական սեկտորի վարիչի պաշտոնից»³:

Կենտրոնի որոշումը հաջորդ օրը՝ նոյեմբերի 15-ին, ներկայացվում է Երևանի գաղափարախոսական ճակատի կուսակցական ստեղծագործություններ /Գամառ Զարիպա, Իմաֆի, Շահազիդ և ուրիշներ/: Թվարկումից հետո, ինարկե, որոշում է՝ կամ ակտիվի նիստին, որը միաձայն պաշտպանում է որոշումը:

Վերադառնալով Երևան Խանջյանը կանխում է իր դեմ լարված դավերը, խորհրդակցելով Բերիայի հետ՝ փոփոխություններ է կատարում աշխատողների և որոշումների մեջ: Դեկտեմբերին բրուրայի որաշմամբ Երևանում էր նաև Բերիան՝ Զարենցը վերականգնվում է իր նախկին աշխատանքում, բայց գրի բողարկումը համարվում է «աննպատականարմար»:

Հայ ավելի ուշ՝ Զարենցի դիմումները անհետանք չեն անցնում, թե՝ քաղաքական հաշվարկներով/, շուրջ ուր ամիս հետո՝ 1934թ. հուլիսի վերջին օրերին, Սովետական գրողների առաջին համագումարի նախօրեին վերջապես բոլյարկում է «Գիրք ճանապարհին» լույս աշխարի հանել, ինարկե, որոշ փոփոխություններով: «Պատմության բառուղիներով» շարքից հանվում է «Արիկե՞ս, թե՝ Պյեր» ինտերմեդիան, որի փոխարեն ավելի անգամ կայուն է գրական բերդության», և «Գիրք իմացության» բարեցվում են «Արվեստ բերդության», և «Գիրք իմացության» բարեցվում են «Արվեստ բերդության»:

¹ Տե՛ս Եղիշե Զարենց, Նորահայտ էջեր, Երևան, 1996, էջ 222-228, 268-273:

² Նոյն տեղում, էջ 584:

³ Նոյն տեղում:

ժինները, «Տաղեր և խորհուրդներ» շարքից «Յոթ խորհուրդ քաղաք կառուցողներին» բանաստեղությունը փոխարինվում է «Ուղերձ մեր հանճարեղ վարպետներին»-ով, «Զանազան բանաստեղություններ և քարզմանություններ» բաժնից «Ա. Ս.» /Ալեքսանդր Սյասնիկյանին/ նվիրված երկու քառասող բանաստեղություններից մեկը փոխարինվում է մի ուրիշ քառասող բանաստեղությամբ՝ նվիրված Վլ. Մայակովսկուն:

«Գիրք ճանապարհին», որպես վկայություն այն օրերի քաղաքան զարգացումներից թելադրվող շարենցյան անհանգիստ առաջնապետների, դիտարկելի է նախ և առաջ 1933-ի՝ առաջին տարրերակով՝ առանց փոփախությունների: Գիրքը եղացվել և ծնվել էր որպես ամբողջական կառույց, ծնվել էր միամգամից, տարրեր տարիների գրված գործերի հավաքածու չեր: «Երկեր» /1932/ ժողովածուի մեջ յստած և անգամ «Երկեր»-ից հետո գրված շատ գործեր ուներ եղջենակը, բայց դրանք նախապես յներառվեցին անգամ «Զանազան բանաստեղություններ...» բաժնում: Պարտադրյալ փոփախությունները երկրորդ տարրերակում մասսամբ են մերկում առաջին եղացումի կառույցին, «Արվեստ քերության» ու «Գիրք իմացության» շարքերը ինչ-որ չափով շեղում են նախնական նպատակի՝ անցյալից ապագա հայոց պատմական երթի ճանապարհությունում առաջարկություններուն է տապիս քննադատին գրքի վիխսովայություն-խորհուրդը մեկնել եռամաս միասնության մեջ՝ Պատմարյան ճանապարհ, Կյանքի ճանապարհ և Արվեստի ճանապարհ, բայց այս գիրքը սկզբնական եղացումով՝ ներկայով ապրաղ բանաստեղծի հայացքն է՝ ուղղված անցյալից ապագա ճգվող մեր հավերժական երրին: «Այժմը հառել եմ անցյալին՝ ապագայի նժույզը նսած» (էջ 222) և «Ապագայով լեցուն այժմեր» (էջ 223) ինքնարնությունները այդ են հաստատում:

Բայց տեսնեմք, թե ինչ հանվեց առաջին տարրերակից և ինչու: Ապա՝ ինչո՞վ լրացվեց:

Նախ՝ նկատենք, որ տպարանական տեխնիկական պատճառներով գիրքը չի կազմաքանդվել, նորից չի տպագրվել, այլ հանված էջերի ճիշտ տեղում, նույնքան էջերով ավելացվել են նոր գործերը; Եվ քանի որ ինտերմեջիան «Պատմության քառուղիներով» շարքի մեջ վերջինն էր հետո «Տաղեր և խորհուրդներ» շարքն էր, հետևաբար դրա փոխարեն ավելացված բանաստեղ-

ժուրյունները ակամա դարձել են նոր բաժիններ՝ պոեմների և տաղերի միջև: Ի դեպ Չարենցի «Երկերի ժողովածուի» 4-րդ հատորում /1968թ./ խմբագրությունը նպատակահարմար է զաել այս երկու նոր ավելացած շարքերը տեղափոխել դմել տաղերից հետո, որ կարծում ենք՝ ճիշտ չեն: Այսու որ Չարենցի համաձայնությամբ էր այդպես դրվել ապա՝ եթե խմբագիրների կարծիքով դրանք խախտում են զրի էությունը՝ ապա ինչու չեն դրել որպես վերջին բաժին:

Արդեն երաժարակության պատրաստ ժողովածուի բողարկման կասեցումը առաջին ենթին պայմանագործած էր «Արկիե՛ս, թե՝ Պյեր» ինտերմեջիայի «գաղտնագերծմամբ»՝ ու մասին է, ի՞նչ է կամեցել ասել հնդինակը: Վկայված է, թե իրու գրաքննությունը սկզբնապես զիսի չի ընկել, Չարենցը ինքն է երկու ընկերոց մուտ ասել, թե Ստալին-Տրոցկի հակամարտության մասին է: Հուրը անմիջապես անվանգության մարմիններին է հասել, ու զրի երաժարակությունը կասեցվել է: Վկայվում է նաև, թե իրու այդ գործը տողացի բարզմանկել է և հասցվել է Ստալինին, ով իրու թե ասել է, որ այն «որպես գործ լավ է մտահղացված ու գրված», «սակայն որոշ նկատառությունը պետք չէ դա ապագրել»: Կենակումի բյուրոյի որոշման մեջ Չարենցի զրի արգելման գլխավոր փաստարկը հենց այդ էր, թե այն «պարունակում է հականագործական արոցկիստական գրպարտություն կուսակցության դեմ, արոցկիզմի դեմ կուսակցության մղած պայքարի և կուսակցության առաջնորդ ընկ»: Ստալինի դեմ»:

Որքան էլ Չարենցը այդ օրերին վերևներին ուղղված իր նամակներում ջանում էր հավատացնել, թե իր «Ճգնակումն է եղել այդ երկում Տրոցկուն պատկերացնել իրու Պյերը, այսինքն՝ ծաղրածու»¹, թե ինքը «քատերական աշխարհի պայմանական կերպարներով գեղարվեստորեն ցույց է տվել և ապացուցել, որ «համաշխարհային պրոլետարական հեղափոխության առաջադիմական ընթացքի օրյեկտիվ մարմնացումը Ստալինն է», որ Տրոցկին «իրեն հակադրելով հեղափոխության ամբողջ դրական ընթացքին, անխուսափելիորեն պետք գոնեվեր և այդ մասաների աչքում, բաւաժորային «հերոսից» պետք է վերածվեր... ծիծաղելի քատերական գործող անձի՝ «Պյերոյի»², որքան էլ որ ջանում էր իր երկի «իդեոլոգիական միանգամայն անխոցնի լինելը» հաստատելու

¹ Ե. Չարենց, Նորահայս էջեր, էջ 224:

² Նույն տեղում, էջ 269:

փաստարկներ քերել, և ենց այդ գրքում առաջնորդին ճռված քառասողը վկայակոչել, այնուամենայնիվ ինտերմեդիայի ենթատերսում կարելի է կարդալ այն միտքը, որ կա տարեց հանդիսականի և ենց Պյերոյի բռնորդի մեջ, թե քատրոնի անօրենը իմա՞ Ստալինը/նախորդ պիեսի զաղափարը խեղաքյուրել է և իմա էլ հանդիսականին խարելով, շողոքորթելով, վախեցնելով, ապակողմնորդելով, ենց նրանց միջոցով հերոսին վարկարեկով է հաստատում իր միակուրյունը, իր հանճարեղուրյունը:

Ինտեներդիան վերլուծելու խնդիր չունեմ այսօր, բայց պիեսի ամբողջ ընթացքը, առանձին մտքերի ենթատեսանը, որոց հանդիսականների վարանուականականները իհշեցնում են ժամանակի մընողարար՝ առաջնորդի ու ժողովրդի հարաբերությունները, և իմաստեղիան կարդացողը ակամա կարող էր կասկածել հերոսների ճշմարտությանը Տնօրենն է ճշշտ, թե՝ Հերոսը:

Ի վերջո՝ իհշենք, որ ինտերմեդիայի ենց վերնագիրն է հարցականներով՝ «Արլլեն, թե՝ Պյեր»: Այդքան միամիտ չէին՝ այսրանը չհասկանալու համար, և պարզից էլ պարզ էր, որ ինտերմեդիան պիսի հանվեր գործից: Դեռ լավ է, որ գիրքը ամբողջովին չմերժվեց: Դեռ 1933 թվականն էր, դեռ հաշվարկներ էին արվում: Մերժվեց նաև Ալեքսանդր Սյասնիկյանին ճռված քառասողը: Չէ՞ կարելի: Բայց երկու քառասողներ կային նվիրված նրան, հանվեց մենքը.

Են, քարձրացիր դագաղից և կրկին երևա աշխարհին:
Ամերեր, քրոնզյա քո ճնորով կրկին մեր ընթացքը վարիք:
Դու կորված էիր լիմերու զեկավար երկրի և դարի.-
Քեզ արված էր ոսկյա մի քեկոր լիմերյամ զես մ հանճարից (436):

Ինչպիս թե՝ «որու կոչված էիր լիմերու դեկավար երկրի և դարի», «Քրոնզյա ճնորերով մեր ընթացքը վարիք», իսկ Ստալինը, չէ՞ որ նա միակն է ու անհամենատելին: Հանդուժել չէր կարելի, թեկուզ երկու էջ հետո մի քառասող էլ Զարենցը նվիրել էր Ստալինին /«Անվերնագիր»/: Սյասնիկյանին նվիրված մյուս քառասողը «անմեղ» էր. եթե առաջինի մեջ ասում էր՝ «Են, քարձրացիր դագաղից» և «քրոնզյա քո ճնորով... մեր ընթացքը վարիք», երկրորդի մեջ նա տեղայնացվում էր՝ «Նախրյամ արևն էր քո մեջ՝ լիմերյան երավ ճառագած», «կործանվող մեր երկրի համար դու եղար փրկության առագաստ» /«Հայաստանի համար դժվար օրերին Սյասնիկյանն ուղարկվեց դեկավարելու մեր հանրապետությունը»/:

ՀԿ/Կ կենակոմի քարտուղարությանը /պատճենը՝ Ա.

Սիկոյանին/ եղած իր դիմում-նամակի մեջ Զարենցը եկած են է Ստալինին նվիրված այդ քառատողի մասին, ասելով, որ թեն «Անվերնագիր» (էջ 440) է անվանված, բայց «նույնիսկ երեխայի համար պարզ է, որ... նվիրված է ընկ. Ստալինին»: Իհարկե, կարելի էր այդպես հասկանալ բայց մի նրերանգ կա՛ ինչու մյուս քառասողը ճռները անվանական են /Հ.Թ., Ս. Ս., Ա. Ս., Վ. Ս./, իսկ այս մենքը՝ «Անվերնագիր», որովհետև ինքնին պա՛ր է: Բայց նա դիմում է՝ «Օ՛, հանճարեղ մեր Ղեկավար՝ քարձրախոն ու քարձրանում...»: Ապա՝ մեծ է մեր դարը, ասում է քանաստեղծը, անեղու օվկիանի ննան և «առաջն արև անեզրական քո անունն է քարձրանում» և մեր դարը առաջ է մղում «քո անունն երավառ»: Ոչ թե դու, այլ քո անունը: «Հանճարեղ, մեծատառով Ղեկավարը չէ՛ր կարող նաև Լենինը լինել, չէ՞ որ նրա անունն է դարը առաջ մղողը, չէ՞ որ Զարենցը բազմից մեր դարը ենց լիմերյան էր անվանում և Լենինին՝ Ղեկավար. «Պարկած է այնտեղ Լենինը՝ Սեր կարմիր Ղեկավարը» /«Կոմունարների պատր Փարիզում»/, «Ապրում եմ ահա լիմերյան դարում» /«Խոսե»/, «Եվ ոչ մի ժամիք իմ ժի քաժանի լիմերյան դարից» /«Ներբող առ քննադատն N.N.»/, «...Այս լիմերյան դարում... կա այսօր մի այլ իմաստություն»... «Չեզ չի օգնի Լենինը - այս լիմերյան դարում», /«ARS POETICA»/:

«Տաղեր և խորհուրդներ» շարքից հանվեց «Յոր խորհուրդ քաղաք կառուցողներին» քանաստեղծությունը: Աստված գիտե, թե ինչ վասնավոր հուշումներ ենթադրեցին: Գուցե՝ այն, որ վաղվա՝ «ապագայի որմնադիրներին» քանաստեղծը ասում էր, թե ամեն ինչ խորտակվում է ժամանակի ընթացքում /Սի՞թե նաև մեր սովետական երկիրը, գուցե այն, որ խորհուրդ էր տալիս՝ «Այրեցնեք մագաղաթյա մարմինը ննջեցյալի և մոխիրը խառնեցեք ծեր ապագա պարիսպների քարին» /«Սագաղաթյա մարմինը»/ կարող էր հուշել անթար առաջնորդի՝ մարմնի մասին/, թե՝ զալիքի անհողորդ լիմերու անցյալի մնայամերի մոխիրի շաղախով պայմանակորելը. պարզ չէ՝ այսպիսի, թե՝ այլ ենթադրությունների հիման վրա հանվեց այս քանաստեղծությունը:

Այսպիսի մի դիտարկում: Ինչպես արդեն ասել ենք՝ Կենակոմի բյուրոն Հայպետերասի կողմից երատարակված «մի շարք ոնակցիրն, քացահայտ նացիոնալիստական աշխատությունները» արգելելիս առաջինը նշում է Զարենցի գիրքը՝ ոչ միայն որպես «հականդականական արացկիստական գրապարտություն կուսակցության» ու Ստալինի դեմ, այլև «մի գիրք, որը բունդ իդեա-

լիստական մեկնարանում է տալիս Հայաստանի պատմությանը, ակնհայտորեն արտահայտելով հայկական մարտնչող նացիոնալիզմը։ Բայց գիրքը թույլարկեց «համերով միայն «հայկահեղափոխական արոցկիստական զրպարտություն» պարունակող էջերը։ Մոռացվեցին, մերվեցին, թե՝ անտեսվեցին «Հայաստանի պատմության թունդ իդեալիստական» մեկնարանման, «հայկան մարտնչող նացիոնալիզմ» դրսորման մեղադրանքները։ Գուցե Խանջյանի որոշումը՝ վեղավ այդ «մոռացումը»։ պաշտպանել Զարենցին մեղադրանքների բնուց, բայց նաև կանխելով ուրիշներին՝ անմիջապես, ենց հայ գրողների համագումարում անձամբ խոսել նրա գրքի մասին։ նախ՝ սկզբնապես, մեծապես կարևորելով Զարենցի տեղն ու դերը մեր գրականության մեջ՝ համարելով նրան հետոկտեմբերյան շրջանի մեր խոշորագույն քանակատեղը, ասելով նաև, թե նրա գրքի առանձին գործերում արտահայտված զաղափարները մերը չեն, նկատելի է «նացիոնալիստական շեղում», որ «նա պետք է շատ լուրջ մտածի և անհապաղ ուրիշ այն»։ Զարենցն էլ իր ելույթի մեջ բարձր գնահատեց Խանջյանի զեկուցումը, ընդունեց իր սխալը։ Գոհ էր, որ Գիրքը հասել էր ընթերցողին հայտնի «Պատգամն» էլ նրա մեջ։ ինքը պիտի մասնակցեր գրողների միութենական համագումարին, մուսկովյան մամուլում սկսել էին տպագրել իր գործերը, նաև իր մասին եռդվագծներ՝ բարձր գնահատումներով։

Գիրքը լույս աեսավ, իմացնես ասացինք՝ հանված գործերի փոխարեն նոր գործերի հավելումով, որոնց տակ նոյնպես Զարենցի սկզբունքն էր՝ նշված են գրության բվականները, մեծ մասսամբ՝ 1934 թ.։ Տարօրինակ ոչինչ չկա՝ նոր գրված գործեր էին։ Բայց գրքի շապիկի վրա երաժարակության թվվը՝ 1933։ Հապիկը, կազմը, առաջին էջերը՝ միմնև «Արիլլե՞ն, թե՝ Պյերո»ն արդեն տպված էր 33-ի օգոստոսին, չի փոխվել անգամ վերջին էջը՝ տեղեկասպությունը՝ «տպված է պեսերատի տպարանում Յերեվանում հազար ինքը հարյուր յերեսուն յերեք թվին...» և այլն։ Գրքի տպագրության պատմությանը անծանոք ընթերցողը պիտի զարմանար՝ 1933թ. տպագրված գրքում 1934 թվակիր գործե՞ր։

Մի քանի դիտարկում նոր գործերի մասին։

Նախ՝ ավելացված գործերի մեջ չկան նախորդ տարիներին, անգամ 1933-ի առաջին վեց ամիսներին գրված գործեր։ այդ շրջանում գրածները, այն ինչ զրքի հետացման բովանդակության շրջանակում էին, ներկայացվել էին երաժարակության առաջին տարբերակում։ Բացառությամբ Վլ. Մայակովսկուն բնութագրող

բառատողի /գրված 1930թ. Մայակովսկու ինքնասպանության առիթով/, որ ժամանակային առումով հարմար էր բաց մնացած էջին, ավելացված մյուս բոլոր գործերը գրվել են 1933 օգոստոս – 1934 հունիս շրջանում, ճշշտ այն ամիսներին, որ Զարենցը պայքարում էր՝ իրեն վերագրված քաղաքական մեղադրանքներից արդարանալու և տպարանում արգելափակված գիրքը լույս աշխարհ հանելու համար։ Այս գործերը, ինչպես նաև շատ ուրիշ գործեր՝ գրված այդ և հետագա տարիներին, վկայում են, որ տևական հալածանքների պայմաններում անգամ բանաւանդը չի լրել իր մուսաններին /«Անտիպ և չիավարված երկեր», 1983, «Նորահայտ էջեր», 1996, հատորները, մամուլում վերջին երապարակումները այդ են հաստատում։

Սակայն «Գիրք ճանապարհիի» ողիսականի ամիսներին գրած բոլոր գործերը չեն, որ Զարենցը դրել է հանված ինակութեղիայի դատարկ մնացած էջերում, այլ ընտրությամբ /հավաքելով «Արվեստ քերպության» և «Գիրք իմացության» խորագրերի ներքո/։ Ավելի շատ բանաստեղծություններ կարող էր տեղափորել բաց մնացած այդ էջերում, բայց չի արել, էջերը լրացնելու համար նույնիսկ դիստիրուսներն է ցընել։

«Արվեստ քերպության» բաժնի բանաստեղծությունները իրապես այնքան էլ քերպության արվեստի զաղանիքների շարք դատումներ չեն, ոչ էլ խորհուրդներ, ինչպես երկու-երեք տարի առաջ գրած այն բանաստեղծությունների շարքում, որ խորագրել էր «ARS POETICA» /այս են քարզմանել է՝ «Արվեստ քերպության»/։ Այս բանաստեղծությունները որոշակիորեն հուշում են, որ դրանք ծնվել են «Գիրք ճանապարհի» ժողովածուի արգելանքի օրերին, բանաստեղծի ծանր ապրումների պահերին, դրանք ինքնօրինակ գրուցներ են՝ ինքն իր հետ, իր զրքի հետ, իր գորքի ու իր ծշմարտության, իր արվեստի հաստատումներն են, իր հանճարի, իր ոգու արիության գիտակցումը, պատասխանը «Գիրքը» արգելողներին, իր քննադատներին, քշնամիններին։

Օ՛, դուք, որ իրաւ ու բոլոր քարկոններ եք իմ միշտ...
Չեր խավարի համեսաւ – ոգիս միշտ իրակ է (Ծ 399):

Սա շարքի հենց առաջին բանաստեղծությունն է՝ «Սոնետ» վերնագրով։ Թշնամիններին այս հակադարձումը հիմնավորված է։

Դժվար, դժմի տնողվ գրել են ես երգերս,
Երեք հոգնած մշակ՝ տարեկ եմ երգս ես
Ուղիմներով կյանքի թե՝ մառ, թե մուր, թե՝ կեզ...».

Եվ արմուրյունն հաճախ իմ արևից զրկել է:
Բայց ես սիրել եմ հար - և արևոտ իմ սերը
Դեսի Արվեստը իմ եղել է բռը ու բեժ...:

Եվ դարձյալ պատասխանում է քշնամիներին, թեև իմքն իրեն
է դիմում՝ հաստատելով իր կապը հայրենի հողի, հայրենական
ակունքների հետ:

Կարծում են նորա, թե մի օր երգին քո նվազում կզա,
Չգիտեմ խեղճերը, որ դու նման ես երկրիդ գնաերին.
Զանի կա լառ Արազած և քանի աշխարհում դու կաս
Դժվար թե ցամաքն երբեք ակունքները քա ջինջ երգերի... (404):

Այդպես էր տեսնում նա նաև Թումանյանի մեծությունը. «Նա
մեծ էր հողով, արյունով, արմատներ ուներ նա հողում...»:

Ծանր ու դժվարին ամիսներ էին. կուսակցական վերին մար-
մինների որոշումները, քաղաքական մեղադրանքները, «Գրիփ»
տպագրության արգելումն ու աշխատանքից ենացնելը, քշնամ-
րար արամադրված գրադարձների բացահայտ կամ այստեղ-այնտեղ
ասված հերուրանքները չափազանց վշտացնում էին բանաստեղ-
ծին. մնկը Ա. Ռուբերյանը/ հայտարարում էր՝ «Արիլլե՞ս, թե՝ Պյե-
րոն» զրկել է մի ամրող գաղտնի «հակախորերդային խմբակի
կողմից» երեք տարվա ընթացքում և Զարենցին պիտի դատա-
պարտել, մյուսը՝ Նաիրի Զարյանը/ երատարակչությունում զե-
տին էր շպրառմ Զարենցի «Երկեր» հատորը հայելով՝ «հետին
հայելոյանքով», մյուսները ուրախանում էին, որ «Գիրքը» արգել-
վել է տպարանում... Զարենցը բանավոր ու գրավոր դիմում էր
ամենատարբեր անձանց, պատմում իր հոգեկան ծանր ապրում-
ների մասին, արդարություն էր պահանջում, անգամ օգնություն
խնդրում. «Պե՞տք է արդյոք մարդիկ պատասխան տան իրենց
նենց գործերի համար. չէ՞ որ սա խաղ է գրադի կանքի և հեղինա-
կության հետ... Պատկերացնո՞ւմ եք, թե ի՞նչ ապրումներ են պիտի
ունենայի այդ օրերին. չէ՞ որ ես կարող էի սպանել և ինձ, և իմ ըն-
տանիքը, խելազրվել, և ես զարմանում եմ, թե ի՞նչու դա չարեցի... :
... Այս փոքր Նաիրյան աշխարհում ես շատ քշնամիներ ունեմ: Առանց Զեր ազնիկ պաշտպանության նրանք ինձ կուտան...»,՝
գրում էր նա Սարիկետա Շահիմյանին: Իսկ զիշերային պահերին
նա իր հուգումները քորին էր հանձնում չափած խոսքով:

Այնքան մաղձ կա իմ սրտում, այնքան դատնություն,
նու միայն վիշտ եմ տեսել, և քախիծ, և բույն...

Բայց անգամ այդ դեպքում բանաստեղծը ինքնապատասխան
ունի իրեն. «Եթե վիալվեն հավիտյան աչքերդ այսօր - Չես
արտաշա դու մահից», որովհետև՝ «Գիտես, որ խնդի է հավետ,
անօգ ու անզոր մահը քո դեմ, քո ոգու անխորտակ ու մեծ» (էջ 405):
Որովհետև ինչ բնությունը տվել է իրեն, ինքը «արվեստով վսնմ և
քերրությամբ զարդարում» վերադարձել է «իրքը ցնորք, իրքն երգ՝
անմահ ու լուսեղ»... Ոգու արիության այս վկայությունը, որ 1934
ապրիլ քվակիր է, նույնպես ներառվում է «Արվեստ քերրության»
շարգում: Բայց կա նաև մխիթարանքը՝ ստեղծագործական պահի,
«ստեղծագործ ու պայծառ» ոգու զգացողության հաճույքը:

Գիշերային պահերն այս քա,
երբ լապտերի նման վառ
Հորիուրում է քո մնջ ոգիմ
Ստեղծագործ ու պայծառ -
Չարծն արդյոք տառապանքիմ
ու արտունչիմ այս անվերջ
Եվ մարդկային հերուրանքիմ՝
անմարելի ու անծայր... (էջ 403):

Եվ «անծայր» այդ «հերուրանքին» ի պատասխան՝ հաստա-
տում է հավատը իր ծշմարտության, իր գործի հարատևության
նկատմամբ, մերը իրըն «ճուտալզիա».

Երազում եմ ես լուսավոր մի գետ,
Սարմարյա տներ ավերին նրա -
Ծքում եմ շուրջը քնառ աղջիկներ.
Իմ կյանքի մասին պատմելով իրար...
Դարեր եմ անցել արդեն ինչպես գետ,
Եվ երգես պարզ այդ դարերի հետ,
Հասել եմ մինչև ավերի այդ վետ,
Գալիք աշխարհի ավերը լուս (էջ 400):

Ապագայի մասին կարուտարադ այս երազը, որ վերնագրել է
«NOSTALGIA», ունի երկրորդ մաս, որը, ի հակադրություն
առաջինի, անցյալի մասին է՝ «Օ՛, տարիներ առաջ», մանկության
ու պատանեկության օրերի, կորցրած հայրենի Կարսում ապրած
օրերի, և հուշ-տեսիլք դարձյալ «ճուտալզիա» է, կարուտախտ
լցված ցավով ու մորմոքով, որովհետև՝ «Այն ավերում իիմա մի
բարբարոս եռվիվ» իր «երգերի տեղ... երգում է անբառ մի շեր...»
(էջ 401): Իր սիրու ու երազի երգերի, որ «իրքը սերունդների երազ»:
այդպես էլ անկատար, «քաղված մնաց» իր «գորերում»:
«Քարբարու եռվիվ» տնօրինումին ու վայելումին բռած հայրենի

¹ Եղիշն Զարենց, Նորահայտ էքնը, էջ 270, 273:

«ավերի» նկատմամբ արտում կարուսի զգացումը հնչում է բռդոքի շեշտով: Եվ սա գրվում էր այն օրերին, երբ բանաստեղծի արգելափակված «Գիրքը» որակվում էր որպես արտահայտություն «հայկակած մարտնչող նացիոնալիզմի», և ընդհանրապես կորցրած հայրենիքի թեմային անդրադարձողները քննադառության թիրախ էին դառնում: Բայց Չարենցը այս «NOSTALGIA»-ն նույն պես ներառնեց «Արվեստ թերության» շարքում:

Մերը էլ դրսերվում է այդ հավաար իրք բացարություն-մեկնաբանություն տպարանում գտնվով իր «Գրի» և ընդհանրապես իր ողջ ստեղծագործության, իր մեծության:

Ի՞չ ունեցել է ժողովուրդը քո
Հնում, անցյալամ-լուսավոր ու վեհ,
Ի՞չ ունի այսօր, ի՞նչ ցնորդ ու խոհ -
Ուղղը հավաքել և քեզ է տվել:
Տվել է, որ դու այդ ամենը այս
Օրերին խառնած, խոր հավատքով լի՝
Պարզես զալիք ցնորդին անհաս -
Եվ ընդմիշտ մնաս մնծ ու սիրելի (էջ 406):

Առաջին ստոդերը կարծես հնչում են նաև իրք պատախան ճրանց, ուշեր ասում էին, թե այդ գրքում Չարենցը ժխտում է մեր անցյալը: «Լուսավոր ու վեհ» բնութագրությունը հենց «հնում, անցյալում» մեր ժողովուրդի ստեղծածի մասին հարիր չի կարող լինել «նիկիլիզմ» որակումին, և «Պատմության քառուղիներով» պյունը ճշշտ կարդալու համար էլ հավանաբար Չարենցը 1933-ի օգոստոսին գրած այս բանաստեղծությունը ներառեց 34-ին ավելացրածների շարքում: Ու նաև դրանից մեկ օր առաջ գրված մեկ այլ բանաստեղծություն դրեց հենց դրա կողքին՝ հաստատելու համար, որ իր այդ մատյանում /Չարենցը այդպես էր անվանում «Գիրք ճանապարհին»/ մեր հին մատյանների գուզահեռով/ անցյալի «լուսավոր ու վեհ» մեր ժառանգության հետ նաև «դրել է» իր դարը, և որ այդ մատյանը գրվել է անցյալի ու ներկայի խորհուրդը գալիքին հասցնելու նպատակով, ուստի և «անմեռ» է:

Դու զիտես, որ քա մատյանն այս վերջին
Ո՛չ քե օրերի համար ես զընեւ,
Այլ տարիների՝ հեռակա ու ջինջ,
Եվ գուցեն, անզամ, դարերի նորինեկ:

Զանգի քա դարձում իմ որ կար զգաստ,
ԵՎ հուզումնավոր, և խորունկ, և վեհ,-
Դրել ես անմեռ մատյանում քա այս -
Եվ այս է քեզ քափ ու քոհիք տվել:

«Հեռակա», «նորեկ դարերի» մեջ իր գիրքը ու իրեն անսնելու հավատն ու համոզումը նոր միար չէր բանաստեղծի համար: Դեռ 1920 դժվար թվականին նա համոզված էր կանխատեսում՝ «Ես եմ հիմա - մի պոետ և իմ անունը Չարենց - Պիտի վառվի դարերում, պիտի լինի բարձր ու մեծ: Ես եկել եմ դարերից ու գնում եմ հաղթական դեպի դարերը նորից...» /«Անկումների սարսափից»/: Թենի դարերից զալու և դարերը զնալու իր կերպարի մեջ նա ընդհանրացնում էր հայոց բանաստեղծական հանճարը, իրեն միայն որպես «ուկի երակը հնամյա ցեղիս» /«Նախրի երկրից»/:

Բայց այս օրինակներով և ոչ միայն այս/ ուզում եմ մի ուրիշ դիսարկում անել: 1920 և հետագա տարիներին Չարենցի բանաստեղծության մեջ դիմումնային խոսքը առավելապես եղվում է որևէ մեկին հենց իր հեղինակի կողմից: «Ես եմ հիմա - մի պոետ. և իմ անունը - Չարենց - Ես եկել եմ...» և այլն, «Լցված է անհուն իմ հոգին ահա...» («Դեպի ապագան»), «Ես - հայաստանցի պոետ... բոլորի, բազորի համար երգում եմ// Նորից //Հիմա» («Ամենապոեմ»), «Տաղարան» ամբողջ շարքը, «Ես մարդ եմ պոետ ու քաղաքացի...» («Խոհ»), «Ներքողներ ու խոհեր» ամբողջ շարքը «Էպիկական լրասարաց» գրքում և այլն:

Իսկ ահա «Գիրք ճանապարհին» երկրորդ տարրերակում ավելացված վերոնշյալ ու մյուս բանաստեղծություններում, ուսուրայիններում, երբեմն նաև դիսարքուսներում, բանաստեղծը դիմումի մի ուրիշ, նոր եղանակ է ընտրել հեղինակը գրուցում է բանաստեղծ Չարենցի հետ. ասես մի ուրիշն է Չարենցին դիմուր, կամ իր երկրորդ եսը, և նրան մտերմարար, եզակի դեմքով է դիմում՝ դու, քո, քեզ: Ասես մեկը ամրապնդում է նրա հավաար՝ անծայր հերյուրանքներից չընկենակուու, հաստատում նրա ծշմարտությունը, նրա մեծությունը. /«Գիշերային պահերն այս քո...», «Երե փակվեն հավիայան աշքերդ այսօր», «Կարծում են նորա քե մի օր քո երգին նվազում կզա...»/ «Ինչ ունեցել է ժողովուրդը քո», «Դու զիտես, ո քո մատյանն այս վերջին»... «Դու Տերյանից սպարեցիր լսել արտունջը ոգու», «Զգում ես որ՝ անհուն ու խոր...», «Գիրք քեզ իրանը տվեց, խոսք՝ Նայիրին հնամյա...» և այլն: Պոետիկական այս ձևը չկա անզամ «Գիրք ճանապարհին» առաջին տարրերակում:

Իսկ ահա շարքի վերջում, ի պատախան իր «Գրի» ու իր դեմ բոլոր հերյուրանքներին ու բանադրանքներին, զնալուում է «Սոնումնա» բանաստեղծությունը: «Ես մոնումնեա կանգնեցի ինձ համար դժվար մի դարում», - գրում է բանաստեղծը իր

համարի, իր մնջության համեստ հավատավոր գիտակցությամբ, և ամրակուու է ու հարատև այն, որովհետո՝

Իմ մոնումենտալ հյուսնեցի նրգերից եւ խոր ու խրբիմ, Խոներից, որ բոր են ու նոր, որ կյանք են կրում իրենց մեզ, - Որ հորդելով ըխնցին իմ դարի բորբոքում սրաից»:

Կա հարատևության մի ուրիշ պայման ևս՝ հայրենական կարոտով շաղախված համամարդկայնությունը.

Ծավեցի ես Կարսում, սակայն իմ հոգում արևմ Երանի Հար հորիքաց, իրուն իմ հայրենի կարու մի անմար, - Բայց հայրենիքը ոգուս - բռվանդակ աշխարհը եղավ (էջ 408):

Նկատենք, որ վերջին այս եռասոողի միտքը մի ուրիշ մրրերանգով լրացնում է քանաստեղծը նույն շրջանում գրված մի դիստիքուի մեջ.

Չիքք՝ քեզ Երանը տվեց, խոր՝ Նահին հնամյա, - Բայց Հոկտեմբերը կունց քեզ համարեն քանաստեղծ (էջ 419):

«Հոկտեմբերի» շեշտադրումով քանաստեղծը պատասխանում էր նրանց, ովքեր իրեն մեղադրում էին «Հոկտեմբերին, հեղափոխությանը դավաճաննելու» մեջ, իսկ «Մնջումնախ» մեջ ընդգծում էր առավել կարևոր ընթիանքականը՝ «Բայց հայրենիքը ոգուս - բռվանդակ աշխարհը եղավ»:

Ոքքան էլ որ շատ էին այդ օրերին նրա կյանքում իր խոսքերով՝ «ցավ ու դառնությունը», նա շարունակում էր իր կոխվը գրական կյանքի մեջ, երբեմն-երբեմն նաև «հորիքուրում» էր նրա մեջ «ողին ստեղծագործ ու պայծառ», քոքին էին հանձնվում խոհեր, որոնց մի մասն էլ նա հավաքեց «Գիրք իմացության» շարքում լինքնագրում խորագրել է՝ «Սասյան մատության»՝ լրացնելով «Գիրք ճանապարհի» դատարկ մնացած էջերը: Այս շարքում՝ դրվեց 24 քայլակ /առուայի/, 51 երկտող /դիստիքու/ և 8 քեյք: Եթե ոռոքայի ժանրածեն Զարենցը դիմել էր դեռևս 1926-27թթ՝ լույս ընծայելով «Օռուայաք»/1927/ գրքույկը, ապա դիստիքուն ու բեյրը որպես ժանրածեն նոր էին կիրառվում նրա կողմից: Եթե «Օռուայաք» շարքում առավելապես կյանքի դիալեկտիկայի մասին փիլիսոփայական խոներ էին, նոր ոռոքայիները ենց իր օրերի տագնապներից ծնված տարաքնույթ մտքումներ են՝ կյանքի, արվեստի, գրականության, մարդու կոչումի, անգամ աշխարհադարձական խնդիրների մասին: Նաև արձագանքներ՝ անձնական դրամայի: Մի կողմից ստեղծագործական հղացումների վե-

րելը, մյուս կողմից՝ տագնապ կյանքի համար /«Նրանք ինձ կուտեն... ինձ կործանել կարող են շատ հեշտ», - ինչպես գրում էր Մարինա Շահներյանին/:

Զգում ես, որ՝ անհում ու խոր՝ իմշալս մի համբ անսպաս, Բացվում է հար, անով, դժվար, ու խորանու ու հոգին. Դեռ ի՞նչ գանձեր - անհում, անձիր - պիտի համես դու աշխարհ, Եթե անդուկ կյանքի վրա անդուս գիշեր չոքի (էջ 412):

Վերջին մատյանի շուրջ մտքումներն էլ քիչ չեն, թեև երբեմն միայն հուշող տաղով են, կամ ենթատեքստից կոահվող: Խորհում է իր պայքարող ոգու մասին, որ միշտ բարբարում է «վիճ ու տենչանք», «ոռքան էլ մուրը չոքի» /Գ ոռքայի, որ «մեր բերքությունը» մեր երգը կիմի «քարձրակուն ու քարձրախոն», եթե «միածովյ ու միասիրու» լինի դաշինքը դարի ընթացքի և մեր տենչերի միջև /Ե ոռքայի/: Հենց իր Սասյանի մասին չէ՝ արդյոք այս խոնը, եթե թեկուզ միայն ինտերմետիան կամ զաղանգրված հայտնի պատգամը եիշներ.

Խոհն ամդադրում է կուտակվում, ամկշռելի ու անտես, Չի՛ ենթարկվի նա խկումի, որքան էլ հունը քանատեսու- Բայց ինքան էլ հախում օգաս դու կուտակումը ոգուդ - Երգերիդ քերքը հնձնիս պնաք է որև ցեզ կաշկամդս (էջ 412):

Եվ աշքի համար տեսանելի՝ ոռոքայիների վերջում, ասես որպես ամփոփում, դրեց նաև Առաջնորդի մասին ոռոքային:

Պատանությունը տվել է մեզ ուսուցիչներ երեց մնձ. Սեկը դեռ իմ կապանքներում միար ու ընթացք մեզ տվեց, Սյասն նեավ ու կործանեց կապանքները մեզ զերող, Կերտում է կյանք նրանց հունով Ուսուցիչը մեր երրորդ (էջ 415):

Եթե «Գիրք ճանապարհի» առաջին տարբերակի՝ «Անվերնագիր» բանաստեղծությունը, ինչպես արդեն ասել ենք, Չարենցը իր նամակում բացարձում էր, թե Ստալինին է ուղղված, երկրորդ տարբերակում Ստալինին «առուրք» ավելացնում էր ավելի հսաւակ ծնակերպումով՝ նրան անվանելով՝ երրորդ Ուսուցիչ, ով, արդ, իիմա կերպում է կյանք նրանց հունով», այսինքն չի շեղվել լինինյամ գծից, թե հաստատում էր նամակներում ասված իր արդարացումները ինտերմետիայի համար: Էլի մի «առուրք» Ստալինին Չարենցը որպես դիստիքոս գետեղեց այս շարքում, եթե արդեն բույլատրվել իր գիրքը լույս ընծայել:

Ո՞վ համարեն Առաջնորդ ես զիտեմ, որ հասու ու կամքը Աշխարհում ուղի է հարքում - նաև ինձ համար և երգիս (էջ 418):

Ամեն ինչ ասված էր. ընդունում էր՝ «Ես գիտեմ», որ Հանձարեղ Առաջնորդի կամքը հատու է, որ նա է որոշում բռնորդ, նաև՝ իր զորի ճակատագիրը: Ընդունում էր՝ գուցե նաև հեղմանքով:

Իսկ ահա՝

«Ժմ որ զանես այս զրում, ի՞նչ մտածմունք ու խորհուրդ
Ողջ հանած համարիր քա օրերի մատյանից» (էջ 419):

Դիստիրոսում կարծես ընդհանրացված է «Գիրք ճանապարհին» գնահատությունը. Սատյանը օրերի, իրականության անխաքար արտացոլումն է, օրերի ծշմարտությունը՝ իր բոլոր կողմերով, «մտածմունք ու խորհրդով»:

Ինչպես արդեն ասել ենք՝ «Տաղեր և խորհուրդներ» բաժնից հանված «Յոթ խորհուրդ քաղաք կառուցողներին» բանաստեղծության փոխարեն դրվեց «Ուղերձ մեր հանճարեղ վարպետներին» բանաստեղծությունը: «Ուղերձը» գրվել է 1934թ. հունիսին, թերևս ենց շարքի բաց մնացած էջը լրացնելու նպատակով, ուստի և հարմարեցվել է շարքի ընդիմանուր գաղափարին, բայց ժամբային մի փոքր շեղումով: Հարցում բոլոր գործերը՝ տաղեր են և խորհուրդներ: Այս մեկը ուղերձ է՝ /նույնպես միջնադարյան ժամրածն/: Եթե տաղերը ծոներ են խորհուրդներով, եթե երեք «յոթ խորհուրդները» խորհուրդ ու պատգամ էին, այս մեկը ուղերձ է՝ առանց խորհուրդի, ավելին՝ խնդրանք է անցյալի վարպետներին իրենց շնորհները, իրենց մեծ արվեստը փոխանցելու իրեն: «Ուղերձը» դարձյալ կառուցողների մասին է, բայց ոչ ապագայի, ինչպես հանված «Յոթ խորհուրդի» մեջ /«Ով գուր, որ զալու եք վաղը կառուցելու».../, այլ անցյալի /«Քաղաքներ էիր կառուցում, կամուրջներ, բերեն ու տներ, /Հոյակապ շենքեր».../: Ոչ թե ընդհանրապես կառուցողների մասին է, այլ կառուցող վարպետների /«Ես խոնարհում եմ գլուխս հանճարի առջև մեր անճառ»/: «Ուղերձը» ժամանակային ուղղվածությամբ մերժենում է միայն մանրանկարիներին ծոնված տաղի հետ /քանաստեղծի խորը ուղղված է անցյալի մարդկանց/: «Ուղերձը» բացում է «Պատմության քառուղիներով» պոեմի մեջ կառուցող ժողովրդի մասին քառասող բնութագրությունը՝

Իսկ ժողովուրդը, որ եղել է հանճարեղ,
Եղել է որմնալիր, եղել է կառուցող,
Չափացներ է շիմել, պարիսպներ է շարել,
Կանորջներ է զցել կոր գծով... (էջ 210):

Ի պատասխան «անցյալի ժխտման, նիկիլիզմի ու ազգային

մարտնչող նացիոնալիզմի» մեջ մեղադրանքների՝ «Ուղերձի» մեջ Զարենցը ոչ միայն անցյալի վարպետներին մեծարում է, այլև ընդգծում է իր հոգեհարազարդությունը նրանց հետ, հաստատում է նրանց հետ իր կապը, ուզում է դառնալ նրանց արվեստի ժամանգործը:

Թո՛ղ ձեզամից ուսանեն նո այսօր գալումիքը գեղի,
Որ արվեստս լիմի դաշնակը, ինչպես ծեր հմառությունն հսկա...
Ուզում նմ աշակերտ լիմել ծեր և տիրել արվեստին ծեր անհում...
Եվ ծեր նուր քարերի նման՝ քաներս լիմեն սրբատաշ... (էջ 393):

Կարծես թե հարցումով, բայց ըստ էության բանաստեղծը հաստատում է նրանց մեծ «արվեստի» փոխանցումը իր արվեստին:

Մի՞քս իմ մեջ է այսօր արքմացել հանճարը ծեր սեզ,
Ե՞ս եմ շառավիղն արդյոք ծեր, ո վ հանճարներ մեր նոտած...

Եվ կրկին, դիմում է նրանց՝ «իմ թախանձանքը լսեր, - Ձեր անմաս կնիքը դրե՛ք - իմ անմար երգերի վրա»՝ «անմահ» և «անմար» մակդիրներով հաստատելով հայոց հանճարի շարունակականությունը:

Ըստ էության նույն միտքն է արտահայտված, բայց առանց հուեռական հարցականի, այս նույն շրջանում գրված «Արվեստ քերթության» շարքի արդեն եիշատակված բանաստեղծության մեջ՝ «Ինչ ունեցել է ժողովուրդը քա /Հնում, անցյալում - լուսավոր ու վեհ... Ողջ հավաքել և քեզ է տպել»:

«Գիրք ճանապարհին» տարածվեց երկրորդ տարրերակով, ու դա եղավ բանաստեղծի «վերջին մատյանը»: Առաջին տարրերակի սակավ օրինակները պահպանվեցին թաքուն և իբրև մասունք: Միայն 1997-ին բանաստեղծի ծննդյան հարյուր և մահվան վարպունամյակին ի եիշատակ՝ այն նոյն ծևավորումով վերատպվեց հազար օրինակով՝ Հրանտ Սարկսոյանի նախածեռնությամբ ու առաջադիր զնահատի խորսով: Եվ ընթերցողը կարող է տեսնել, թե ինչպիսին էր «ընթացքի, մաքառումի, ճանապարհի այս գիրքը՝ այս «Գիրք ճանապարհին», իմացության լուսի այս հեղեղը...»՝ /Հր. Սարկսոյան/ առաջին եղացումով, իր ծնունդի պահին՝ 1933թ. օգոստոսին, և պարտադրյալ ինչ վիրահատությամբ այն ներկայացավ ընթերցողին 1934 թվականի օգոստոսին:

¹ Եղիշե Զարենց, Գիրք ճանապարհի, Երևան 1997 (1933 թ. արգելված տարրերակի վերատպություն):

ԱԱԶԳԵՆ ՄԱՅԱՐԹԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՁԻ ԵՎ ՓԱՍՏԻ ԶԱՐԵՆՑՑԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

Եղիշե Չարենցի պատմափիլիսոփայությունը, դրա քվացյալ պարզ, բայց խորքային առանձնահատկությունները ըստ էության բացահայտված են, յուրօքի պարզված է ինչպես ժամանակի գաղափարական պարտադրանքի, այնպես էլ անհատական հայություն խառնվածքի դրդապատճառային նշանակությունը։ Նկատվել է, օրինակ, որ «ազգային անցյալի նկատմամբ միակողմանի ու միտումնավոր վերաբերմունքը ժամանակաշրջանի մտայնության զարգելի դրսուրումն էր... Եղավ մի պահ, երբ Չարենցը շափազանցության հասցեց այդ պահանջը»¹։ Իշխառ Եղավ նաև վերագտնումի արճանքը, բայց մինչև վերջ չպարզորշվեց պարտադրանքի մշտականը, և բնական էր տարօրինակ ներդաշնակությունը, այն, որ Եղիշե Չարենցը «մեր բանաստեղծներից ամենակազմակերպվածն էր ու ամենաարերայինը միաժամանակ» (էջ 189)։ Այս յուրօրինակ և կանոնավորման միտուրով դժվար բացատրելի հակասությունն նկատվել է միշտ։

Պատմական անձն ու փաստը չնշին տեղ ունեն Չարենցի բնարերգության մեջ, մյուս կողմից՝ նրա ստեղծագործական բոլիքների, տարամուսիկ անցումների հիմնավոր հանգրվանը երկրի և ազգի ճանապարհի, գոյության տրամարանության վիճարտուքն է, «ո՞վ ենք մենք, որտեղից ենք գալիս» ավանդական հարցադրությունների պարզաբնահան եղանքը, որտեղ դեռ խաղաց երրորդ՝ «ո՞ր ենք գեռում» հարցի պատասխանի վստահության ընդիրքարկվող տարտամությունը, որ բանաստեղծը անընդհատ ճգնել է հաստատել որպես կայուն զաղափար։ Եվ կրկնվում է հայտնի ծշմարտությունը այն մասին, որ «Եղիշե Չարենցի կապն անցյալի ժառանգության հետ գրեթե անշոշափելի է, առանձին դեպքերում միայն՝ առարկայական այդ կապն օրգանական է, երբեմն՝ անտարրալութելի... Ավելին։ Դժվար է մատնա-

ցույց անել հակասությունների միասնության մի այնպիսի բարդ կծիկ, ինչպիսին Չարենցի ժառանգությունն է»։ Եվ թվում է՝ այս հակասականությունները չի հարթում անզամ բավականին բնորոշ դիտարկված ընդեմանրացումը. «Ժերևս ուրիշ ոչ մի գրողի մոտ սիրո եղանական ապրումն այնպիս սերտորեն միահյուսված չէ բնարական հերոսի աշխարհընկալման, նրա հասարակական վարքագծի ու ստեղծագործական որոնումների հետ, որքան Չարենցի մոտ»²։ Այսինքն՝ սիրո և կնոջ կրօնա-հեթանոսական, վերացական-սիմվոլիստական, խաղային-դեմքիական և այլ դրսուրումների կողքին, հավասարապես հեղափոխության և նոր զաղափարների կայուն կամ մոլորայ նվիրումների և այլ շառավղումների ներառեքստում բանաստեղծը հարազատ է մնում դեռ պատմանկան տարիներից սաղմնավորված՝ հայրենիքի որոնման գիտակցությանը։ Միաժամանակ ամբողջ խորքով պատկերացներով պատմության ողին ու փիլիսոփայությունը՝ Չարենցը, ըստ էության, շրջանցել է պատմական անձի և փաստի բնարական կամ էայլկան ժակարտումները, միշտ զգուշավոր չափավորություն պահել անցյալի հերոսների ու դեպքերի նկատմամբ, կամ արվել նիհիլիզմի պորկումներին։

Անցյալի նշանավոր դեպքերի ու դեմքերի նկատմամբ Չարենցի վերաբերմունքը բիտում է ապագայի արժևորումներից, և հաճախադեպ այս ընդգծումները բանաձևել են անզամ 1936-ին գրած «Անդրինմ հայրենական»-ի հատվածներում։

Մոռրենով մեր անցյալ
Կյանքի վրա կույր՝
Ես օրերն եմ մեր պայծառ
Փոխ իրքն քույր³։

Իր կամ «իրենց օրերի» շարժումը միաված է ապագայի հավատին, բայց չի ակտուարված անցյալից, ինչի հաստատումը «Պատմության քառուղիներով»-ի հանրահայտ պատկերն է. լրացնի փայլի վրա աղնկառու ոռնացող մեր բգկտված զայլը գիտի՝ արդյոք, «Որ նշված է արդեն նրա ուղին //Ապագայի գրքում. - որ

¹ Մայիս Ավդարենյան, Հորվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 2009, էջ 240։ Ավդարենյանի մյուս մեջբերումների էջերը կնշվեն տեղում ԱԱ, էջ ...։

² Շնորհ Զավարյան, Գրական հորիզոններ, Երևան, 2008, էջ 63։

³ Եղիշե Չարենց, Անտիկ և չխավարված երկեր, Երևան, 1983, էջ 116։ Այս գրքից մյուս մեջբերումների էջերը կնշվեն տեղում ԱՕԵ, էջ ...։

տարիներ հազար //Չայլելու է այդպես անուշի¹: Մանավանդ 20-ական թվականների «ճախության» շրջանում կարծրանում է անցյալամերժությունը, որը պարզ ձևակերպվում է, օրինակ, «Հեղիս, գրված Վենետիկում»-ի /1925/ «Բզուր ես դու եինը երազում» /ԵԶ 2, էջ 175/ ուղղակի կոչի մեջ, երբեմն ներառում զգուշավոր սկեպախցիզմ նոյնիսկ ապագայի նկատմամբ: «Խոն» բանաստեղծության մեջ, որ գրված է արդեն 1929-ին, նկատում է: «Ես չեմ կասկածում զալիքին, սակայն // Գիտեմ, որ ուղին դեռ շատ է դժմի», (էջ 225), կամ էլ մոտեցող 30-ական թվականների շունչը կարուկ է դարձնում վերամայումի տվյալամբ:

Ես չեմ երգելու այժմ շառաչուն
Գալիքի մասին, որ զալու է դեռ,
Իմ ներսում իման հուզվում եմ, աճում
Ու շարժվում ուրիշ խոների զնդեր:
-Ներկան է իման իմ դեմ աղմկում /էջ 264, «Ես այն չեմ այլա»:

Անցյալից օտարումը, ապագայի մշուշումը մղում են ներկայի տեսանելի-հստակ ընկալմանն ու բանաստեղծական անդրադարձին, բայց ներկային ապավինելու խարկանքն է երկար չի տևելու, իսկ իմբնագանումին 30-ական թվականները, ինչպես հայտնի է, չեն հադրահարում «զեմինյան դարի» ապագայամենա պատրանքը, ուրեմն և՝ չեն մղում պատմության արժնորումների սրափությանը:

Նկատված հակասականությունը ոչ միայն անխուսափելի է ու ճակատագրով պարտադրված, այլև ըստ էության ներկայանում է որպես հակադրամիանություն:

Եղիշե Չարենցի համբնդրկունությունը ծագումնարանական լիցքերով իր մեջ է առնում հայոց պատմության /անձերի կամ փաստերի/, հայ բառամտածողության ոչ միայն հնագույն-առասպեկտարանական, այլև միջնադարյան խոսքային արտահայտածների, անգամ ժանրերի և այդ ամենի նաև կանոնիկության տեսանելի դրսուրումներ: Մինչ այժմ ասված հայտնի մտքերը ամփոփենք այս վերեիշտումով, որ բանաստեղծը նույն անսպասելի դրվագումներով դիմում է Հին և Նոր Կտակարանների կերպարներին, դեպքերին, նաև Քրիստոնին, կառուցվածքային հենքի մեջ առնում միջնադարյան տեսիլի, վկայարանության, աղոթքի, եիշատակարանի, անշուշտ՝ տաղի ժանրային հատկանիշներ կամ ուղ-

¹ Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, չորս հատորով, Երևան, 1986-1987, հատոր 3, էջ 32: Այս հատորներից մյուս մեջքերումների հատորը և էջերը կնշվեն անդում ԵԶ, հատոր, էջ ...):

դակի ժանրեր: Այնպես որ, Չարենցի կապը «անցյալի գրականության ենա առավել օրգանական է, ընդերքային. դա բանաստեղծի ազգային նկարագրից է բխում, նրա՝ բնաշխարհիկ մտածողության, ըմբռնումների լեզվական առանձնահատկությունների իրացման, ընկալման ու արտահայտման բնորոշ գծերի միասնությունից» /ՍՍ էջ 262/:

Դա յուրօրինակ ծագումնարանական լիցք է, կարելի է ասել, գենետիկական կող, որի ներաշերտային բովանդակությունը կարող ենք տեսնել թեկուց «ճախության» շրջանում /1921-24 թ./ երկամած «տարօրինակ» «Երկիր Նախրի» վեպում, մանավանդ զաղափարական ու գեղագիտական խորքեր ներառած՝ Սազուրի Համբյի հայտնի ճառում: Ամրող վիպական կառուցում և մանավանդ այստեղ երգիծանքը չի սրողում գրողի ազգային դրամատիզմը, երբեմն աննկատ է եերոսի և եեղինակի խոսքի ու դատումների սահմանը: Արովյանին վկայակոչելով՝ Սազուրի Համբն եիշում է, որ «Հայրենի երկիր և մայրենի լեզու» «հեգորագույն ազգակմերմ» են, որ «ամեն մի զարգացած ժողովրդից, ամեն մի ցարուցիկ ցեղից կազմում են... կենդանի մի օրգանիզմ- մի ամրոցական ազգություն» /ԵԶ 4, էջ 97/: Իսկ հայրենի երկիրն այն է, այն «հողն ու ջուրը», որով «գրաբերի ընթացքում կյանք են ստացել տվյալ ժողովրդի պատերը, պատերի պատերը և նրանց էլ պատերն ու պատերի պատերը» /էջ 98. միայն վերջին բառերում է եռումորիկ երանց զգացվում: Հայրենիքը մարմնավորվում է դարերի ընթացքում, - շարունակում է եերոսը, - ձևակորում իր մշակություն-«կուլառության», ««Հայրենիքը» տվյալ ազգության մարմինն է, իսկ զեզում- եռօդին» /էջ 99/: Այս ավանդական և լուրջ դատողությունների մեջ, որ դժվար է ասել, թե նաև եեղինակն չեն, երգիծանքը ընդմիջարկվում է, երբ եերոսը անցնում է «մերկա մոմենտին»: Հումորի /ոչ թե սարկազմի/ մեջ նույն դրամատիզմը առկա չէ՝ այն դրվագում, երբ գրողը ներկայացնում է քաղաքը՝ անցյալի վերելուշների ներմուծումներով. «Է՞ն, եին ու մուր պատմություն է, ընթերցող, - ո՞րք թվեմ: Գիտում, խորամանկ, հարուստ ու հպարտ են եղել նաիրյան արքաները. այդպիսի արքաներ իմաս չկան... Բայց դժբախտաբար՝ եսական ու անմիարան երեւ ոչ... եեղինակի բազմակետն է-Վ.Ս/ ինչո՞ւ պիտի կորչեր արքայությունը նրանց, և ավերակի վերածվեր Երկիրը Նախրի...» /էջ 21/:

Հասկանալի է, որ «արքաների» ու տերերի նկատմամբ օրական գաղափարական պարտադրանքը կարող է հասնել մերժման միազդության՝ հանուն ժողովրդի-հասարակ մարդու աշխարհաս-

տեղծ ուժի ներքողի: Եվ այս դեպքում նույնիսկ պատմական անձերի կամ դեպքերի հիշատակումը չէր ճնշելու բանաստեղծին՝ ուշադիր լինել պատմականության, կերպարի պատմա-առասպելային բռվանդակության նկատմամբ: «Պատմության քառուղիներով»-ի կրկին հայտնի բանաձևումը «եիմնավորվում է» մեծ անուններով.

Առասպելյալ Հայկեր ու Տրդատներ բազում,
... Դուք, որ դարձեր երկար, հազարամյակներ,
... Ապրել եք ու կանգնել ողն ապարաներ,
Օտար խարույկներից հայցել ոգու կրակ... /ԵԶ 3, էջ 33/

Հոգևոր հայումի-մուրացողության ծանր և ընդհանրացնող վիճակը, եթե Տրդատի կերպարի մեջ իմշ-որ չափով բացարելի է, ապա այն ինչպես է հնարավոր կարկատել հայոց անվանադիր նահապետին, ում ուսումնառական հավերժակյաց առարելությունը՝ ուղղված ապագայի իր բոլոր ժառանգներին, Խորենացու հաստատմամբ, մեծ ազատասիրությունն է և իմքնուրույնության գոյարանությունը: Այս հարաբերություններում կրկին ստղոսկում է ավյալժամանակյա զաղափարական ճնշումը առ այն, թե՝ «Բակ ժողովուրդը, որ եղել է հանճարեղ, //...Ունի՞ արդյոք թեկուց մի անճշան մասնիկ //Վաստակներում ծեր այս անքանքար» /Էջ 37/. հարցադրումը կարելի է ընկալել ոչ միայն հանառական Ժխտումի, այլև կասկածի երանգով, որ այս դեպքում թիշ կարևոր չէ/ նա, որ կառուցել է ու պայքարել, երգել ու վիպել, «Եվ չի կորել դաժան տարիներում այն մուր» /Էջ 37/: Այսինքն՝ ժողովուրդն է հավերժողը և պատմություն կերտողը, իսկ մեծ անհատները /որ նույնան և ավելի են ազդրում պատմական շարժման վրա/ միի են կամ արժանի միայն շրջանցելու: Բայց այս դիտաւոնների խոհական ավարար կրկին խախտում է զաղափարական թվացյալ հետևողականությունը: «Եվ դարձել է ահա ժողովուրդը ևս, //Իր տերերի նման անուղի ու անդեմ» /Էջ 38/: Չարենցի համար մերժելին պարզապես մնաւ ու ուժի, պոռթկուն երայրի /զուա անճնականապրումային կամ ազգային-գոյարանական/ խամրումը, կամ, որ շատ ավելի դաժան է, բացակայությունը. այն դեպքում, երբ այդ կիրքն է բանաստեղծի փոքրկուն պոռթկումների կիզակեաը և ծգուումի հանգրվանը: Այդ տեղը պիտի գրավի Նահրի երկիրը, ենդափոխությունը, կի՞նը, - սա արդեն մեծ մասամբ մնում է որպես միի կամ մնաւափորային հիմնենք, որ կոչված է նաև գտնելու միշտ նկատված հակասականության ըմբռման, գուց և հաղթահարման բանալին: Իսկ Չարենցին «պատմականությունը»

այդպես էլ չի մտահոգում և 1928-ին «Հ.Հ.»-ին ուղղված «Դագաղականացած» էպիգրամում անքնին հանդարտությամբ շարունակում է ստվերել Հայկ նահապետի կերպարը՝ Բելին խոցող ինչ-որ «ուսկորի» մեջ միայն ակնարկելով ուժի պատրաճքը կամ բացակայությունը.

Այս հարգելի ընկերը
Իր անահ նախահորից
Անոնից բացի ժառանգել էր
Եվ մի հավաս խորին,
Թե բավ է ունենալ մի ուկոր
Որպեսզի խորակն Բելին: /ԵԶ 2, էջ 241/

Եթե իր բոլոր շառավիղներով ուժի-պոռթկումի ջատագովությունն է Չարենցի անհատական էության և ստեղծագործական խառնվածքի կարևոր շարժումն ու ամփոփումը, ապա ինչո՞ւ թե կուզ «Պատմության քառուղիներով»-ի վերօքերյալ հատվածում Հայկ նահապետին չի փոխարինել, օրինակ, բոլոր ժամանակներում մեր հայրանակների ու մեծության պատրաճքային ակունք Տիգրան Սեծը /որին եղանեցրել ենք/ մեր ծովիցծովյան հուշերազանքների մշուշում քննեցներով. իսկ Չարենցը պարտադրված էր այս դեպքում ևս շրջանցել Տիգրանի «կայսերականությունը»: Ավելորդ չի լինի նկատել, որ «օսար խարույկներից ոգու կրակի հայցումը» այս կերպարում թեկուց իմշ-որ կերպ հասկանալի կիներ՝ կապված Հայաստանում հելլենիզմի հիմնավոր հաղորդաշավի հետ: Դժվար է նաև կասկածել Չարենցի հայոց պատմության խորագիտակ իմացության վրա, հակառակ դեպքում այդքան խորքային և ընդգրկուն չէր լինի նրա պատմակիհիշտսկիայությունը՝ ամկախ ավյալժամանակյա զաղափարական վայրիվերումներից:

Մեր հիշողության մեջ ուժի և իմքնության անձնագործ նվիրյալներից մնկը, որի սրբագործումը ևս հիմնավոր չի ցրել իմշ-իմշ հարցադրումներ, որը, սակայն, այն շատ թիշ պատմական անձեռից է, ով հայտնվել է Եղիշե Չարենցի ուշադրության ծիրում, Վարդան Մամիկոնյան սպարապետն է: Ընդ որում, այսաեղ ևս նույնատիպ համադրումներով են ներկայանում 20-ական և 30-ական թվականների զաղափարական տարրերությունն-նույնությունները: Վարդանը նախապես ներկայանում է «Երկիր Նաիրի»-ի Վարդանի կամուրջի մասին պատմա-արդիական դասողությունների զուգահեռի մեջ. բոլոր նահրցիները «համոզված են, որ այդպիսի մի կամուրջ Վարդան զորավարը միայն կարող էր շինել,

որովհետև այսօրվա միամիտ նախրցին այն ամենը, որ մեծ է ու գարմանալի, ինչ որ նախրյան է ու հարքական-վերագրում է Վարդան Մամիկոնյանին, վերջին այդ արքայակերպ նախրցուն /ընդգծումը մերճ է-Վ.Ս. իշխնք Նախրյան արքաների մասին վերևի դիտումները/, որի մասին այսօր ամեն մի հասարակ նախրցի այնքանը միայն գիտե, որ բարեկենդրանի իննօշաբթի օրը բոլոր նախրյան եկեղեցիներում պատարագ է լինում նրա հիշատակին, երգում է «Լոեց ամպեր», և այդ օրը բոլոր նախրցիները «սռն» ունեն» /ԵՇ 4, էջ 15. ուժի գրավականներից մեկը, այսպիսով, իմացությունն է նաև պատմության, և բանաստեղծը, անկախ ամեն ինչից, չեր կարսդ շրջանցել այս պարզ ու հասկանալի զաղափարը: Անցյալի ու ներկայի կապի անհրաժեշտությունը Չարենցը երգիծա-դրամատիկ շաղախում զգացնել է տալիս հաջորդող դիտարկումներում. քանի անգամ Հուսիկ քահանան Վարդանանց տոնին զգաւացը է քաղաքացիներին, որ ամեն մի իսկական հայ պետք է «իշխի Վարդան զորավար քաջին և անդապնդիլի պապերի հավատքով: Պիտի մտարերի այն մեծ նպասակը, որի համար ընկել է նա Ավարայրի դաշտում-և չվարանի» /էջ 15/: Միայն այդ դեպքում կցննի մեր զլիսին կախված չար զորությունը /կրկին իր համար ավելի երգիծված հերոսի բերանում ինչող խորժերը ծաղրի կամ խորժի կոմիզմի առանձնակի բնույթ չունեն, և հեղինակի ցավն է շատ ավելի ամփոփում անցյալ-ներկա կապի իմաստի արդիականորեն կայունացրած դիտարկումը. «Բայց միշտ այն-պես է պատահում, որ ամենավտանգավայր վայրկյանին թքում է Վարդանի անունը վարանուա քաղաքացու ճղճիմ ուղղողից, ու մնում է անդր դատարկ տարածություն, սարսափելի զարգանդ».

էջ 16. Խոմանիշային այս կուտակումը՝ «սարսափելի զարգանդ», ուժի և ինքնության գիտակցության-բնազդի բացակայության արդյունք է, քանի որ վախը բոլության հայտանիշն է: Վարդանի կերպարի շատ ավելի նիմիկանական մենապությունը կա 1933-ին գրած «Զրահապատ «Վարդան զորավար»» պոեմում, երբ երկու դեպքում էլ պատմական անձը պատկերային նեարանք է իր ժամանակի մարդու զնահատման ծրագրում: Եթե 20-ական թվականներին Վարդանը մատուցվում էր «խաչազող» քահանայի խորժի վերամրած ոգեղենության և ժամանակակիցների իրական անտեղյակության հակադրությամբ, ապա 30-ականներին Վարդանը ուղղակի զուգահեռվում է նանկական թատերախսադի խամաճիկային հերոսին՝ արդիականացված նախկին անտեղյակությանը փոխարինելով պարզ երեխայականությունը:

Եվ աչքերի առջև նա տեսնում է համկարծ
Սր բոք սաղակարտ... և իրնն: /ԵՇ 3, էջ 80/

Մետաֆորային ինչ ենթախորք կարող էր պարունակել բարձրագույն ծառի և անտեղյակության համադրումի մեջ ներկայացվող հերոսի անցումը մանկախսադի կերպարին, եթե չպայթեր Չարենցի նիկելիզմի ամենադրամատիկ ձևակերպումներից մենքը.

Օ, չի՞ նուի արդյոք մեր պատմությունն ամրագույն ամրագույն ամրագույն Ավարայր... էջ 81/:

Թենկուու իմքնության գրավական, բայց խոնարի նահատակության դիմաց բանաստեղծը ուժի երայրը է ուզում տեսմեն՝ զոյլարանական առումով ակնեայտ արդյունքով, ողբա-հերոսական ներբաղների փոխարեն թեկուու առօրյա, բայց իմքնապարտադրումի լիցքեր, տիրակալաման հավակնություն, բաղաքակա՞ն, թե՞ անձնական ուղարմերում լինեն դրանք: Այսպես կարող է բացարեկի դառնալ նաև այն, որ պատմա-առասպեկտային հերոսներից Չամիրամ-Արա Գեղեցիկ համադրումն է առավելապես գրավել Չարենցի ուշադրությունը: Կրկին շեշտենք Չարենցի պատմափիլիստիկայության մի կարևոր կողմ ևս. անցյալի դեպքերն ու անձինք, որպես կանոն, նրան պես են զալիս մետաֆորային-միջական կիրառելիությամբ, այսինքն՝ բանաստեղծը ոչ այնքան մտահոգված է հերոսի պատմա-ավանդական նկարագրին թեկուու ընդհանուր երանցներ հաղորդելու, պատմականությունը պահպանելու ծրագրով, որքան դեպքի կամ անձի անունը /ասենք՝ Ավարայր, Չամիրամ/ դարձնելու բանաստեղծական պատկերի, խոին ու տրամադրության հաղորդիչ: Ահա թե ինչու նրա կրքուա պոռքկումների հետ շատ ավելի խոսում է, օրինակ, Չամիրամը, ով կարող է պատկերային հոմանիշություն ստեղծել «ողջակիզմու արև», «սեզ մարմին» և նման այլ համադրությունների նկատմամբ: Ահա ամենաբնորոշ և ընդհանրացնող արտահայտությունը «Հրուկիր» շարքից /որ «Չամիրամ» չէ վերնագրված/.

Երազում եմ այն երկիրը հեռավոր,
Ուր մարմինը, սեզ մարմինը ու հոգին՝
Ամենութացած ու նյութացած, լուսավոր՝
Ողջակիզմ Արևի մեջ, բռյու իմ, կիմ:
...Եվ երբ կանչեմ - դու գրկիս մեջ արևից
Ու տարփանքից, տառապանքից շիկացած-
Գրկես թեւ մամկական ու անքիծ,-
Այս, կիմ - ցնորք, քու յոր, Չամիրամ ու Աստված /ԵՇ 1, էջ 23/:

Իսկ ահա, 1916-ին գրված «Չամիրամ» բանաստեղության մեջ անվան ենա ներառվում են նաև ավանդազրույցային տարրեր՝ «հումառիները», որ թվում է՝ քայլ է դեպի պատմա-առասպե-լային նյութի հարազատությունը.

Իրիկնային փողոցում ես տեսա նրան:
Նա - սևայա աշրուիի, գուցն - Չամիրամ:

Եվ իմ տվեց հիմավորը հումուրները նա.
Երկու համբույր - փողոցում, մայրերի վրա /էջ 236/:

Ժամանակների համադրումը կրկին վկայում է անցյալը «այժմեացնելու» ուղղակի միասնական մասին. «Ծինավորց հումուր-ների» և «մայրերի վրա, փողոցում համբույրի» ներդաշնակումը շարժվում է դեպի նոյն սկզբունքի պատկերային որոշակիություն, երբ պշտուիին նրան հմայելով տաճում է «որյակը եին», իսկ ճանապարհ են դրում «զապատերները ժապալով». և պատկերն ամփոփվում է համադրումների ընդգծումով, որ ժամանակների ետևառաջորդյուն չէ, այլ ուղղակի նոյնություն.

Եվ, շնայած որ անքիլ դարեր են անցել՝
Նոյնմ է երազը նրա, լոկ մարմնմ է - ծեր:
Նոյնմ է խոսք կարծես, նոր տրվող աղջկա,-
Միայն մարած աշքերս էլ երդին չկա /էջ 236/:

Սա պարզապես կիմն է, որի կերպավորման մեջ Չամիրամը պետք է եկել որպես մետաֆորային շերտ: Իսկ «պատմականության» ինչ-ինչ նշանակարգեր ավելի զգայի են երևում նոյնանուն երկրորդ գործում՝ «Չամիրամ» բալլադում, որը ամփոփված է «Փողոցային պշտուիոն» շարքում, որ այս դեպքում կարևոր է: «Հրա երկրի» Չամիրամը պշտուիի-կիմն էր սոսկ, այս Չամիրամը արդեն հարաբերվում է Արայի ենա՝ այժմեականության ոլորտ ներառելով պատմության խորհուրդները ևս, երբ խորագիրը, թվում է, պիտի բացառեր դա: Այսաեւ կիմ-կարուա-կիրը-զգվաճք վիճակները, «ակումք, բատրոն, «կաֆն»» արդիական պատկերա-իմբերով, եասնում են Նահրի-Արա Գեղեցիկ ազգային-պատմա-կան ընդգրկումներին՝ ժամանակների նոյնացում-ենուացումի հա-րափոփոխությամբ.

Նորից՝ անմար կարուսով զգվաճքների ու երի՝
Դու եկել ես տեսնելու քաղաքները Նահրի:
...Դու անցնում ես ու տեսնում քաղաքները եիմա այն,
Որոնց տեղ խու էր բումում, երբ դեռ ապրում էր Արան:

Այլ է աշխարհը եիմա, այլ է եիմա Նահրին.
Ո՛չ նի արքա էլ չկա, որ չտրվի քո երին /էջ 180/:

Այս իրավիճակային տարրերությունը՝ այն, որ այժմ չկան այլևս արքաները, որ չտրվեն նրա երին, անմիջապես անցնում է նոյնացման, երբ նշվում է, թե «ոնոր արքաների» համար պետք չէ կովել, մի ժայիսն էլ բավական է, «Միայն ակնարկ մի թեթև-և կտրվեն նրանք քեզ, //Զո հմայիչ ու անքն տարկիամբներին հրակնեց» /էջ 180/. այդ «արքաները» կան մեկ-մեկ, ու կտանջեն նրանց քո անհազ կրոգվ: Հաջորդում է նոյնացման կտրուկ ու լար-վածարեր անցումը կրկին հակադրության, ուր շատ ավելի է պատմականորեն որոշակիանում պատկերի ազգային-քաղաքա-կան իմաստը՝ հաստատումների և ոչ թե մերժման շեշտադրումով. «...Քայց կիմնի մի զիշեր- ու հմայքով նահրյան //Կրաքրանա մշուշից մանկածպիտ քո Արան» /էջ 180/, որի դեմ ստիպված կլինեն «ամօօ սարսափով» նորից կովի ելնել բայց կխառնվեն կրկին հաղորդանակի ու պարտության սահմանները, քանի որ միշտ այդպես է լինում, երբ հակադրվում, ու համադրվում են անձնական ու ազգային կրքերը, անհատի ու երկրի գոյարանական հետանկա-րի գգառումները, դրանց ուղղորդի՝ զաղափարական պարտա-դրաները, թե՝ ոչ ինչի ավայտանքները իր անձի մեջ պահեց ինքը՝ բանաստեղծը:

Եվ որպեսի չտրվի նա ախտաժետ քո երին-
Ուարի կենն նրա հետա հազարամյա Նահրին:

Եվ դաշտերում Նահրի կալարովի նորից նա,
Կնահանջն զարք հետ, երկիրը քեզ կմնա:

Նա կմնանի, որպես զոհ - բայց չես հաղը դու նրան.
-Դան է խորհուրդը սիրո, շամբշուաշուր Չամիրամ... /էջ 181/:

Այսպես անցում-ավարտը ամփոփվում է վերջնական նոյն-ացման գաղափարա-գեղագիտական իմաստավորումով, որ նորովի հաստատումն է շարենցյան «հակասականության» հա-մալորդումների: Այդ համալորդումների անձնականորեն դրամատիկ խորհուրդն է ներառում Չամիրամ-Արա Գեղեցիկ հարաբերու-թյունների անդրադարձը Յօ-ական թվականներին, երբ հալա-ծամբների մղմականջի մեջ վերագտմանի տվայտանքը միշտ շա-դարձների անցումը ու միայն «լենինյան դարի» մշտուա պատրան-քին, այլևս անցյալի ցավուա նիկիլիզմին: «Հիմ պարտության լեզեն-դր» շատ խորհրդանշական վերնազրի տակ պատմությունը միք-լեզենդի սահմանման մեջ է, իսկ «հազարամյա ոգին» կորացած է «համբերության բույնից».

Անմերձելի է քեզ այդ գանգրահեր Արամ,
Որ հայրերից իր հիմ, որպես աղեղ լարված՝
Ժառանգել էր ողի հազարամյա կորված
Համբերության բույնով հմաղարյան արյան ԽԶ 3, էջ 447/:

Հնազանդ համբերության ինքնակործան ախսաի դեմ պիտի որ
եղին ուժի ու հրայրի պոռթկման շարենցյան հավատամբը, բայց
այսաեղ պատկերը պրկվաւ է ամրօրինակ հարցականով, որ
անմեկնելի վիճակից կարող է ծնվել. միայն այդ բույնով է, որ
Արամ, անգամ մեռած, պիրկ սեղմում է շուրթերը, որ իր «արդար
խորհուրդը» «Ոչ Չամիրամն զգա, ոչ Նվարդը կարդա» /էջ 447/:
Ո՞ր է երկու հակարենուների նույնացման խորհուրդը, որ «Անմերձ
ենի է քեզ այդ գանգրահեր Արամ» նույն սկսվածքով հաջորդ
գործում կարծեն հակվաւ է երկրորդի՝ Նվարդի բացասական ըն-
կալմանը.

Անմերձելի է քեզ այդ գանգրահեր Արամ,
Որին մանկու կանչել էր չար ծնոքերով գերված՝
Արքայադրաւար Նվարդը իրու ասպասովին հրավարս,
Որ դեռ մասուկ դոփին է մի նախրան /էջ 448/:

Ամեն ինչ ծակատագրով է կանխորչված, -եռուշում է երկու
գործի մեջ էլ - նաև հաղթանակի ու պարտության, մահվան ու
կյանքի խառնաշփորք. և մարդու միշտ մնալու է երկրնտրանքի
մշուշի մեջ, եթե այնանդից հասնելու է Նվարդի խոնարի նվիրումն
ու գորովանքը և Չամիրամի երեղեն կիրքն ու տարվանքի տառա-
պալից ուժը /քանաստեղծի համար նախընտրելին միշտ երկրորդն
է/: Եվ այս անխոսափելի կամ թվացյալ հակասականությունը ևս
չի հաղթահարվում արդյոք վերջին պատկերով. «Հանուն սիրո
անեղծ իր Նվարդին ի լուր՝ //Նա ընդունեց անգամ - գիրկը Չամի-
րամի» /էջ 448/: պատմա-ավանդականի շեղումով հաստատելով
նաև, թե ինչու «մանուկ արքան» ընդունեց «հաստուցման բույնը
նույն»:

Խաղային նման խճնկածության մեջ /որ բանաստեղծի վեր-
ջին տարիների կնիքն ունի անշուշտ/ Արայի կերպարը՝ որպես
«ոռփին նախրան», ինչ-որ կեսում առնչվում է Աղասի Խանջյա-
նին նվիրված «ոռփին»-յան շարքին: Չարքի ենտ ուղղակիորեն
կապված «Բնասառություն» բանաստեղծության մեջ, ուր տառա-
պող հեղինակը Խանջյանի վախճանի գուգահեռում ծգուում է հա-
վատույ, որ «մահրյան գրուցի» կամ առասպելի նման կայրի
Աղասու ենտ կատարված աղետը ժողովրդի հոգում՝ իրու «գո-
ղացված, կեղծած նայիրական միֆ», և միայն «վաղվա հաջորդը»

կարող է զալ ու նրա աճյունի ենտ «մնր հաղթության լեզեմը մահ-
վան մաշից հանել». և կարուկ անցնում կրկին չրացված
խորհրդավորություն ունեցող պատկերային համատեքստի.

Որքան իշխնեն՝ բայ նոր նախարարներն այսօր
Չամիրամի մահմին, զանակունեն իր ովհ,-
Նա կեառնի կրկին իր պարտությամբ հզոր... /ԱԶԵ, էջ 136/

Ուրեմն՝ նախ պարտությունն էլ պեար է ուժնու լինի, կամ չլինի
անկամ. և սա նաև ոչ այնքան ինքնահուսապրումի, որքան ինքնա-
լարումի լիցր է, որ զաղափարական և գեղագիտական շատ կող-
մերով առնչվում է ուժի և պոռթկման նախորդ մեկնություններին:
Այնուհետև՝ հենց խաղային խառնաշփորք մեջ միշտ դժվար է
գտնել որպես կանոն, երկդիմի ծշմարտությունը: Եվ Չամիրամի
նկարագիրը ենթախորքում բացնում է արդիականորեն պար-
զորշված և զաղափարական փականքի տակ պահվող հավա-
սարությունը, ավյալ դեպքում՝ Խանջյանի ենտ կատարված աղե-
տի «կեղծած նայիրական միփք», որը պարզ գուգահեռումն է
արագեզների ենտ կապված Արայի վերակենդանացման՝ Չամի-
րամյան խալի, և ուրեմն՝ դավերի ու մասնության «նոր նախա-
րարները» ինչքան էլ կեղծիքի «մահմին» միաժամանակ աիրեն ու
գանակունեն, պիտի չկասկածեն, որ նրա հառնումը իրենց կործա-
նումն էլ է նշանակելու:

Հաղթանակի և պարտության փոխատեղումների, տապալված
կուտքերի և լեզենդի առաջազգականացված ու մեռնող ընկալումների
բարը արտահայտությունները շարունակվում են «Դոփինը նայի-
րական» շարքի յոթ սունետներում, ուր Չամիրամ- Արա հարարե-
րությունը միտված է արդիական նոր շերտեր բացելու: Չորրորդ
սունետը, «Ծրբունքներ» վերտառությամբ, թերևս ուժնու պար-
տության պահանջի խորհրդավորումն է պարտությամբ հաղթելու
գաղափարին /եթե՛ Արան պարտվել էր, բայց Չամիրամն էլ չէր
հաղթել/, իսկ Արա Գեղեցիկ- Աղասի Խանջյան գուգահեռումը
ուրդակի նույնացումն է: Աղասին մահվան մահմում է, Չամիրամի՞ց
հրապուրված, թե՝ Նվարդի սիրավ գերված, «Նա ընդունել էր մահ,-
իբրև հարված //Եթ ոսոխի կողին, որպես հնում Արան»¹: Կեղծված
գրուցը բռվանդակավորվում է լեզենդի վերածվելու առաջակա-
նացումով /«լեզենդ- առասպել» նաև ժամբասահմանը կրկին նոյն-
ացնում է հնագույն և նոր ժամանակներն ու եերուներին/, և 5-րդ

¹ Եղիշե Չարենց, Նորահայտ էցեր, Երևան, 1996, էջ 95: Այս գրքից մյուս
մեջքերումների էջերը կնշվեն տեղում՝ ԵԶՆ, էջ...

սոնեառում, հենց «Լեզենդը» վերնագրով, սկիզբը բացող «ինչպես» քառորդ ոչ թե հարցական, այլ բացականչական հմէերանգով եռետորական հաստատումն է, զարմանքի շեշտի մեջ բացվող իւանցյանի և, իհարկե, իր իսկ բանաստեղծի/, այլևս սճանկ դարձած մեծ նվիրումի.

Ինչպես կարող էիր հրապուրել նրան,
Երբ մամկարյան օրից, զիտեր՝ անգիր արած՝
Իր հայրնենի թերդի պարհապնդերին գրած,
Ջո նշանայն լեզենդը, Շամիրամ...

Ուրեմն՝ Շամիրամյան օտար և երապուրանքով պարտադրված գայրակղաւրյունը և «հայրենի բերդի պարիսպներին» ամրակայած պատմությունը, որի կայուն իմացությունն անգամ չի ապահովում շեղումներից և մօլորություններից: Եթե որ դեռ մանկությունից «գանգրահեր Արան» ևս «Անազորույն իր սերը» որպես նիզակ սրած ընդմիշտ ուխտել էր իր «անդավաճան սիրած Նայիրունուն». բայց ինչո՞ւ արվեց Շամիրամի խարկանքին: Եվ որքան էլ խորախորենորդ այս լեզենդը փորձեն Աղասու «եղերական դիակի» նման բաղել «խեղճ, գողունի երթով»,

Նա կիամի՛ կրկիմ՝ իր պարտությամբ եղոր.
Հազարամյա, անհայտ ուղիներով խորին
Իրքն զրահ՝ մահվան զգեսա հազած,-
Կրաքրանա զրոյցն այս ականդական /էջ 95-96/:

Եթե զրույցի մեջ և զրույց-լեզենդի նման հավերժութեն պիտի շարունակվի Արայի- Աղասու «պարտությունը կողը», ապա բնական է լեզենդը իր բազմաշառավիլոց «վատանգավորությամբ» վերացնելու մղումը: Եվ ճ-րդ սոնեան արդեն ուղղակի վերնագրված է «Մահ լեզենդին»: Սա բամաստեղծի ուղղակի կոչն է՝ մարդ-ազգ հարաբերությունների խորշերը ճամաչելու հոգուվ, երբ նախորդ բոլոր ենթախորքային հարցադրումների տվյալանքը պոռոքում է որպես ճակատագրին- պատմությանը հղած ճարտասամական հարց, որ երախտում է բանաստեղծի «մայիրյան ոգուց» «աղերսակոծ ոռնոցի» նման:

Քամի՛ երորդ անգամն է, որ պարտությամբ հասնած՝
Գերեզմա՞ն ես իջնում, մանուկ Արա.
...Քամի՛ երորդ անգամ, օ՛, Շամիրամ,
Չոհվի արքան մանուկ, որ դո՞ւ զրույց դասմա...

Արդին եղանել ներ մներ այս ամիմաստ բախտից,
Դու մինչև ե՞րբ, Արա՛, մանուկ մնաս,
Եվ մինչև ե՞րբ, - այսպես, - մահով հաղթես.../էջ 96/:

Սա Զարենցի ամենաորշակի և առանց մետաֆորային ենթակարսաերի ասված խոսքերից է, մանավանդ Շամիրամ- Արա Գեղեցիկ մուսիկային կապերի մեջ, և վերնագրի տարադրություն նախորդ փոխառեղումների ընդգծված հստակեցումով, երբ բանաստեղծը նույնքան պարզորդ գոչում է՝ դիմելով Արա-Աղասի համադրությամբ. «Լավ է նաշից քո էլ չքարծրանա՛ս, //Եվ պայրարի եղեն առաջնորդներ պարը, //Որ մեռներով պարտվե՛ն, կամ ապրելով հաղթե՞ն ...» /էջ 96. ընդգծումը մերն է- Վ.Ս./:

Կործանումի ու վերհառնումի պատմական այս հարաշարժ փաստն ու դրա խուսափյալ գիտակցումը, հակասականության նույն քացցալությամբ, երևում է Զարենցի ուշադրությանն արժանացած «ամենապատմական» խոշոր անհատներից մեկի՝ Արիլայի կերպարում: Այս կերպարը յուրովի ամրադրացնում է միփօգտագործման չարենցյան սկզբունքները /թեպես միփը, կարծում ենք, նրա բանաստեղծական համակարգում չպիտի բացարձակացվի, քանի որ դա ընդամենքը քնարերգության կառույցը դարձող մնասափորի շերտերից է և մյուս բանաստեղծական հնարանքների նման միտպած է հեղինակի՝ որպես համընդգրկում անհատականության, և անցյալի մշուշով դեպի ներկա ու ապագա անցման հասարական-ազգային կապերի, ուժի և բուլության, վերհանումի ու ամկումի համադրումների արտահայտության ձևերից մեկը լինելի/: Չմոռանանք, որ «սիմվոլ, միփը, մակդիրը, այլարանությունը մտնում են մետափորի իմաստաբանական շարքի մեջ... Ստեղծագործության և ողջ համակարգի/ իմֆորմացիոն կենտրոնին կարելի է հասնել միայն մետափորային պլանի վերլուծությամբ» (խոսքը, կարծում ենք, ոչ այնքան տեղեկատվական-«իմֆորմացիոն» պատմաբարդիական փաստի, որքան գեղագիտական հաղորդակցելիության մասին է/: Արիլայի պատմական նկարագիրը զուգահեռվում է ավերի ու կործանման որակների հետ, որ ըմբռշնում է «ոսկի դագաղո»-ից «երդենվոր հեռուն» դիտող, «գարերի խորքից արթնացած» բժնակալը, ով կստան է, թե քանի դեռ՝ «Եվ երդենների բոցերը դեղին //Խանճում են ահա աստղերը նորից» /էջ 1, էջ 318. կարևոր չէ՝ սա կոմկրետ ուղղված է Առաջին համաշխարհային պատերազմի, թե սպանդի ու բանդումի ամբոխական կրի դեմ ընդհանրապես, ինքը կելնի նորից իր անվա-

¹ Հենրիկ Էդոյան, Եղիշե Զարենցի պետական, Երևան, 1986, էջ 22: Այս գրից մյուս մեջքերումների էջերը կնշվեն տեղում ՀԵ, էջ...:

բան ուժով: Եթե կերպարը դառնում է ուժի և տիրակալ կրքի կրող, ապա բնական է, որ նրա պատմական նկարագիրը հակադրվում-ամբողջանում է քանասանողի հավատամքի որակներով, և այս երկրորդը դժվար է նույժնակ «պատմական մքնոլորտ» համարել. «Արիլլա» պոեմում «պետք է տարրերակել պատմականի երկու ասպեկտ. նախ՝ հեղինակի և ապա՝ բնարական հերոսի պատմական մքնոլորտը, որոնք թեև չեն համընկնում միմյանց իրենց կոնտերսաների տարրերության պատճառով, բայց սիմվոլը միացնում է նրանց» /ՀՀ, էջ 126/: Ծիշտ է, անշուշտ, որ սիմվոլը միացնում է նրանց, բայց հեղինակի «մքնոլորտը» պատմական չէ, որովհետև Չարենցը պատմականության պահպանման նպատակադրում երբեք չի ունեցել, իսկ այստեղ նկատելի է նաև արդիական գաղափարարանության և հեղինակային խառնվածքի ներդաշնակ ուժով ապամիջիականացման փաստը ևս /միքը և հակամիքը կարող են համադրություն կազմել/:

Եվ այսպես՝ Արիլլան կեառնի՝ կրկին քանդելու և այրելու, ու «Նորից կսողան արքաներ իմ դեմ» //Մանր ծահճային ճիճուների պես» /ԵԶ 1, էջ 319/: Հերոսի նկարագիրը ոչ թե պատմականանում է նրա հզոր հաղթամակների քաղաքական իմաստավորումով, նրանով, որ նա իրեն ներարկեց մինչև Դանուր ու Հռենոս գետերն ընկած երկրները, ներխուժեց Հռոմեական կայսրություն, ավերեց Իտալիայի երուսալիմ և այլն, այլ թագավորների բարոյասոցիական անկումների ընդգծումով, երբ դրանով նրանք իրենց մեջ մահն են կրում, մշշտ «իսեղկատակ ու ողորմելի» են, «համգիստ են երազում Հռոմած մարդկության ու իրենց համար» /հասնում է խոհական ընդհանրացման/՝ մոռանալով, որ կա ինքը՝ որպես «հազարանուն՝ Մահ, Ավերը ու Նեռ», և

Ես-արքա՛, ասավա՛ծ, տե՛նի, դժոխու ու մահ,
Ես-ճշմարտության խարազանը ներկ /էջ 319/:

Պատմականը, իսկապես, «խախտվում»-երկրորդանում է ուժի-այրումի շարենցյան արժնորմամբ, երբ թեկուզ «ավերմունքի ու մահի» կիրքը բացասաւ է «եղոնած մարդկության» համար «հանգիստ երազելու» հնորակ մահարերությանը: Գաղափարագելակալական այս հարաբերություններում պիտի ընկալել հայոց անցյալի ողբա՛ներողային ննջարերության շարենցյան ընկալումներին հակադիր՝ Վահագնի «վիշապաքաղ» ուժի բացասաման նույն միասումը, երբ մեր «եզոր, երուս, երածին» ուժոված միքլեզնդի «Արճարամ ընկած դիակի վրա» քրքում են անորոշ

բավարդ «նրանք», երբ իննց «նրանք» «արյունով, երով» «Մեր երկիրը իիմ դարձրին փոշի», և «Մեր կյանքի իիմերը անդունդը ընկամ» /էջ 317/: Անկարսոր չէ իիշել, որ նույն շրջանում գրած «Հրդենք» լիրիկական բայլադրում այլ կերպ է ընկալում Վահագնի կերպարը: Սկիզբը ավերի այժմնական պատկեր է՝ եռուր ու ծխի մեջ փլվող հսկա շենքեր, ծխից երկինքը բռչող կարմիր բռցեր.

Այն ո՞րան էին, ո՞ր էին պահկած
Փերիմերը ալվան կրակի, երի,
Ամենա Վահագնի հարսներն երավար...
...Երգով ու ծափով երկինք են բռչում՝
Դեպի արևի գիրկը մառացված.
Ընթերը, սակայն, փլչում են, փլչում՝
Նրանց կարոտան ողջակեց դարձած /ԵԶ 1, էջ 36/:

Միմկոլիզմի պոեսիկային բժնորոշ՝ «կարմիր, ալվան, եռուր» գունային նշանակարգերը՝ որպես պայքարի ու հառնումի խորհրդանիշներ, այլարանում են «Վահագնի հարսներին», որոնց բռիչը երկինք, դեպի «արևի գիրկը», ցնծության մքնոլորտ է, և «ծովս ծխանիից», «բռցից» երկնած, «եռուր հեր» և «բռց մորուս» ունեցող առասպելային Վահագնը այստեղ բանաստեղծական իր դրսերման հարազատության մեջ է: Բայց «եռուր ու ծովսը» նաև հակադիր պատկերային իիմնեղքեր են, որոնք, այնքանով որ «հսկա շենքերի» ավերումն են շեշտառ, այդքանով պետք է կարծել, որ հնի-անցյալի խորացակումի ու մոռացման խորհուրդը չունեն, բեպետ «երի ու կրակի փերիների» տարածական անորոշությունը /«ո՞րան էին, ո՞ր էին»/ հավանաբար սողանցը է առաջարկում «Վահագն» պոեմում ընդգծված անկումների համար: Իսկ Արիլլայի ուժը հավերժուն պոռթկուն է, նրա կերպարում պարզ սոցիոլոգիկ նկատմամբ, որ գալու է գետնին հավասարելու բալոր փառքերը և արքաներին, թե՝ խոհական ընդհանրացումը շեշտառ:

Որպեսզի կրկին, երբ երկրի երից
Երկնի աստղերը զանգաւակեն բարին՝
Իր իիմ երազին միշտ հավատարիմ -
Արքա Արիլլը բարձրանա մորից... /էջ 320/:

Երկու հակադիր միքերի՝ Արիլլայի և Վահագնի կերպարներում պատմա-առասպելային շեղումները կարող են բացարկվել նաև միք-ազգ համադրության որակով ևս. իոները խորհրդանշվում են ավերի ուժի խոհապատկերային գուգահեռով, և նրանց արքան

դրա կրողն է լինելու երկակի իմաստավորմամբ. հայերի մեջ Չարենցը, և ոչ միայն նա, տեսել է ցավալի խեղճուրյան ու հնազանդության ոլորային ցնցումները, և նրանց Վահագն միք-լեզենդն է դրա կրողը պիտի դիմավի ու ընդհանրացվի: «Հշենք նորից, որ ինչպես Ծամիրամը, Արիլան /այս դեպքում նաև հոները. ենքուն ու ազգը/ հաճախ են դառնում մետափորային հիմնեղը՝ ընդհանրացնելու ինչպես ազգային, այնպես էլ անձնական ապրում, խոնի վիճակները: Մտեղծագործական այս միտումը բնորոշ է նաև ժամանակի ուսումնական համարից շատերին. օրինակ, Չարենցի գրչակից Վ. Մայակովսկին գրում էր. «Իսկ եթե ես այսօր չցանկանամ քննել, //եթե կոպիտ եռին համրերությունը հատմի, //ես կը քրքջամ ուրախ ու կրքեմ, //կրքեմ դեմքին ձեր, //ես՝ անզին խոսքերի արանձիր ու վատանից»: Հենց իր մեջ «գազան» կրքի, ավերող ուժի առկայությունը Չարենցը հաստատում է՝ 1936-ին գրելով.

Եղին եմ, այո, և հոն, և գազան,
...Եթե ինչ-որ ինտիմ տեսն է կաշկանդել
Զա կնոջական եռքը սրբազն.../ԱՉԵ, էջ 148/:

Միշտ և բոլոր հարաբերություններում այսպիսին է Չարենցը՝ «գազանի» խորտակիչ ուժ ամեն մի «կաշկանդումի» դեմ, համուն «սրբազն եռքի»: Այսպիսին է նաև պատմական անցյալի հոգևոր-մշակութային գործիչների նկատմամբ իր վերաբերմունքի և արժնորումների մեջ, չնայած, այս դեպքում հակադրամիասնության նզրերը ավելի ոժվար ներդաշնակելի պիտի լինեն, քանի որ մի կողմից, ավելի հեշտ է նղած միքը ընդունել կամ միքի վերածել ռազմաքաղաքական գործիչներին, քան պատմագրին կամ տաղերգուին, մյուս կողմից, ինչքան էլ ուժի ու կրքի հարազատությամբ իր մեջ նրանց քարցրած ունենա, սրանք՝ այս եռգևոր-մշակութային գործիչներն են իր տեսակը, նույնությունը իր ենա: Եվ նորոյա գաղափարների ճնշումը գուցե այսանդ ավելի ընդգծված պիտի երևա, որովհետև հենց սրանք են գաղափարի և մտքի ու եղանության կրողները՝ ապագայի ուսումնառական իրենց անմիջական առաքելությամբ: Մանավանդ «Ճախուրյան» շրջանում անցյալի մեջ եղանոր սնունդ չտեսնելով՝ Չարենցը Հովհաննես Թումանյանի մահվան առթիվ /1923 թ./ գրած «Երկու աշխարհի սահմանագծում» եղանակի մեջ գնահատում է «սահմանային»

երեք մեծությունների՝ Թումանյանի, Իսահակյանի, Տերյանի գրականությունն ընդհանրապես և ամսիջապես նշում, որ նրանք նորերին տալու բան չունեն. ուրեմն՝ «ինչո՞ւ է այսօր մեր հայացքը, որորերին հայացքը դեգերու ուրիշ գրականության ավերում ներում՝ որտեղ, զերազանցորեն ուսումնականության ավերում վիճակներվ մեր վաղվա պոեզիայի համար ուղիներ ու շառավիղներ»: Երկու տարի ենտու տպագրած՝ «Սերեժկովսկու «Պավել Առաջինը»» քատերախոտության մեջ Չարենցը պատմության գեղարվեստական անդրադարձի մասին շատ խոսուն եղակացություն է անում, ինարկե, ի վերջո հանգելով գրականության «սովետական» քարոզության դերին: Նա կատահ է, որ պատմության մեջ կան տարրեր, «որոնց հմուտ օգատործումն կարելի է դարձնել պիտի պատմական-ազիտացիոն» /էջ 103/: Բայց արժեքավոր է համարում հեղինակի պատմաքննական գործը, անցյալի լուրջ հետազոտումը, անգամ կերպավորման հացադրվածությունը, միայն թե այդ ամենը բուն «ազիտացիոն» կոչումին չեն ծառայել /Պատմությունը միշտ արդիական ուսումնառական դեր ունի, բայց այսուել պահանջը սոցիոլոգիզմի դիրքերից մերկապարանոց քարոզությունն է/: Ուրեմն՝ «Շնայած հեղինակի բոլոր արխիվային պրավատուններին և մանրակրկիս հետազոտություններին, պիտի պատմական կրողը մնացել է ստվերում» /էջ 104. ընդզծ. մերն է-Վ.Ս./: Անկախ պատմության «սանրակրկիտա հետազոտություններից», քանաստեղծի համար «պատմական կողմը» արդիական գաղափարաբանության ենթակա համահնությունն է, որ հասաւագում է դատողությունների շարունակության մեջ. «Պիետում կա պատմական այնպիսի մեծ մատերիալ որ միանգամայն կարելի է օգտագործել ազիտացիոն նպատակով» /էջ 104/, եթե միայն «անհատական ողբերգությունը» ցույց տրվի «իբրև հասարակական արագեղիա» /էջ 105/:

Այսպիսով՝ քանաստեղծը, անկախ գաղափարական օրակարգույց կաշկանդումներից, չի անկարևորում պատմության ուսումնասիրությունը, բայց նաև չի ընդունում գուա իմքնակա «անհատական ողբերգությունը»: Այս հարաբերության մեջ կարելի է հասկանալ անհատականի ապաստանումը միքի մեջ, քանի որ միքը կա և չկա, իրական է և հնարածո, իր այլարանական խորհրդանշային շեշտերվ կարելի է տարրեր, նույնիսկ հակադիր մեկնության ենթարկել: Եվ անգամ այս ամենից հետո, ինչպես

¹ Վաղիմիք Մայակովսկի, Հատընտիք, Երևան, 1982, էջ 27, («Այ ձեզ», բարգմ.՝ Ե. Չարենցի):

տեսանք, իր իսկ բանաստեղծի «անհատական» ապրումը կիրքը, նաև ողբերգությունը բավականին այլակեցված են ու բարուցյալ: Հոգևոր-մշակութային գործիչների հետ գուգահեռը ավելի բացահայտ կարող է լինել ուստի և՝ միֆականացման անհրաժեշտությունը՝ ավելի անկարևոր: Որքան էլ 1927-ի՝ «ճախության» ստվերագծային մարման շրջանում գրած ««Սաստոցի Դավիթի», պատմական պիտինների և նացիոնալիստական իդեոլոգիայի մասին» հոդվածում նշում է, թե «կան մարդիկ, որոնք «պատմական» անունով փորձում են ծածկել անտես առնել հեղինակի իդեոլոգիան» /Չ, էջ 440/, միննույն է, պատմա-առասպելային նյութը հավանաբար իրեն պետք է եղալ՝ բռնածածկելու ինչ-որ բաներ: Ինչպես են անցյալի մտքի մեծերը «հանճարեն» և միաժամանակ «սրտի դագաղ».

Օ, մասյախս դպիճներ սև-
Դու Ընորիալի, և դու Նարեկ,
Դուք - մազաղաքյա և հանճարեղ,
Դուք - զարիւրելի, ինչպես Դարնե,
Դուք պատան մտքի, դուք - անարն,
Որ սրտի համար դարեր, դարեր
Կերտել եք դագաղ - պատյան քարե,
Եվ ոգու համար - դժմյա տառեր:
/ԵԶ 3, էջ 102, «Գովյօն խաղողի,
գիմու և գեղեցիկ դպրության»:/

Երկու տարի անց՝ 1934-ին, ստվետական գրադիչի առաջին համագումարում արտասահմած ճարի մեջ, նոյն դասակարգային կարուկ գաղափարայնության դիրքերից խոսելով, Չարենցը «ազգային գրականության», «անցյալի ժառանգության օգտագործման» մասին այսպիսի մաքեր է ասում. «Ես վերցնում եմ հայկական պոեզիան՝ նրա անցյալով և ներկայով, որովհետև վերջինս ինձ ավելի է ծանոթ, քան որևէ այլ ազգային գրականություն: Ես տեսնում եմ, որ այնպիսի վարպետներ, ինչպիսիք են մեր միջնադարյան աշխարհիկ բանաստեղծները, այդ «հանճարեղ նորտերը», չի կարելի գտնելու ուրիշ ոչ մի գրականության մեջ, հարկավ ոչ նրանց հանճարենության իմաստով, այլ գույմերի ու երանցների, ծեր և նյութի մշակման ինքնաշխառության իմաստով» /ԵԶ 4, էջ 166/:

Այսպիսի մաքեր արահայտելու իիմնավորվածությունը արգասավորվել է տվայտանքի ուղիներում, քանի որ մեկ տարի առաջ գրած «Մեր լեզուն» բանաստեղծության «Ոչ Նարեկի մրմունքը մագաղաքյա» /ԵԶ 3, էջ 214/ պատկերը ենոտ «Մոնու-

տիքոսներ»-ում պիտի պոռթկա համարձակ ներբողի ցնցումներով. «Ո՞ւմ անվանեմ ես ապա, - եթե ոչ - թեզ միակը, մեծը Նարեկ...», կամ՝ «Ոչ, մեծերից մեծագույնը-օ, ուստի ինքը ես, անմահ Ծնորհալի...» /էջ 469/: Կյանքի վերջին տարիների հալածանքի ու մենարույն հոգեվիճակներում լուսի ու հարազատության վիճարութքը, բնական է, որ բանաստեղծին կրկին կապեին գրիգոր Նարեկացու հետ, նորից տանեին Նարեկի համընդգրկուն աշխարհը՝ դառնալով «Վերջին աղոքը»-ների և այլ տաղերի երկունքի եկմքեր¹: Մինչդեռ դեռևս 1920-21-ին երարխսած «Ես իմ անուշ Հայաստանի...»-ի մեջ «Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա» բանաձնումը զգացնել է տալիս, որ անգամ այս օրերին, ենթագայում համագումարի ճառում շեշտած դրույթը հստակում է բանաստեղծի ակունքի երկու ուղղությունները /հնագույն միֆա-առասպելայինի հետ միասին/ միջնադարյան կրոնակեղեցական բանաստեղծության՝ համամարդկային խոհա-քնարական ընդգրկումներ ունեցող տեսակը՝ Նարեկացու խորիդանիշով, և ժողովրդական բառ ու բանի խորքային ծավալումներում մարգարտացած տաղերի-երգերի-եայրենների տեսակը՝ Քուչակի խորիդանիշով: Երկրորդի երազատությունը իմաստ է ստանում ուժի ու երայրի ազատ պոռթկումներով ևս, ինչը Քուչակից հետո բանաստեղծի տեսադաշտ է բերում նաև Նարաշ Հովհանքանին /Այնպես որ, Չարենցի նիկիլիզմը այս ուրուսում, ի տարրերություն ռազմա-քաղաքական պատմա-առասպելային գործիչների միֆականացված միջավայրի, չեր կարող պահպանել իր հետևաղականությունը և ճաքեր չտալի/:

Այս անունների մեջ Ներսես Ծնորհալուն «մեծերից մեծագույնը» աներկա տիտղոսավորումը ինչ խորիուրդ ունի: Չե՞ որ, անկախ հանելուկներից ու «Ոլոր Եղեսչոյ»-ից, և անգամ անոյնիսկ նրանցով, Սիրնադարի մեր այս տաղանդաշատ քարերգուն, երաժշար, գործիշը նախ մեծ շափով արժնորդվում է եկեղեցական բարենորդչությամբ, ծեսերի-արարողությունների կարգավորումով, նա մեր ամենամեծ շարականագիրն է, շատ առումներով միջնադարյան կանոնի պահպանը ոչ միայն «Բան հաւատոյ», «Յիսուս Որդի» երկերում, այլ անգամ «Յաղագս երկնից և զարդուց նորա», այսպես կոչված, բնագիտական տրակտատուն: Կրկի ն գործել է հայուսն խառնվածքի ներքին հակասականությունը Չարենցի մեջ, իրեն շրջապատող խավար մղմավանջում չի-

¹ Տես «Չարենցի ընթերցումներ», գիրք 7, Երևան, 2002, էջ 176-189:

բավարարել անգամ «վկան Նարեկացի»-ն, և տարերային մղումը տարել է դեպի Ծնորհալու հոգևոր լույսը /նաև դեպի Քրիստոս և Աստվածաշնչան այլ կերպարներ ու դրվագներ/: Հավանաբար՝ բոլորը միասին, թեպես ավելորդ չեւ և բնական է այսպիսի հարցադրումը /ինչպես վերևում ինքնին առաջադրվեց Տիգրան Մեծին շրջանցելու խնդիրը և դրա վեհերուս պատասխանը, ինչպես նույնքան հասկանալի կարող է ծնվել օրինակ, մեր պատմության դրամատիկ, հախուսն կրքերի ու անկումների խտացումներից մեկի՝ Արշակ Բ-ի կերպարի շրջանցումը, երբ նա շատ առումներով է խոսում բանաստեղծի ներաշխարիի հեա կապված և ազգային, և ամճճական կյանքի հորժանուտներին, և այս հայոց արքան եղել և մնում է գեղարվեստական գրականության ուշադրության կենտրոնում/: Նաև ինչո՞ւ եղիշեն Զարենցի ուշադրությունից դրւու և մնացել Մաշտոց- Խորենացիական համադրությունը՝ որպես մշակութա-ազգարանական որակ:

Անկախ իր հանձնարի ուժից կամ ասդանդի չափից՝ որևէ արվեստագետ պարապակոր չեւ գիտական իիմնավորումների որոշակիությամբ ճանաչել անցյալի դեմքերի ու դեպքերի պատմական բրովարդակությունը, դրա տարաշառավիլ իմաստավորումները, նա կարող է պատմության փիլիսոփայությանը հաղորդակից լինել ներհայեցական, անգամ ներազիտակցական շփումներով ու ընկալումներով, որ, վստահ ենք, ենց չարենցյան պատմահայեցողության ուղին է՝ ենթակա օրյենտալի և սուրյեկտալի ելեցումների: Անա ներքնակալումային այլ խորքը կարող է պատճառ լինել Մաշտոց համընդգրկում երևոյթի շրջանցմանը: Ժամանակային որոշ պայմանականությամբ, բայց հստակ արամարանությամբ հայոց պատմությունը կրկնում է մոտ 1400 տարիների մշակութա-ազգարանական պարբերաշրջանը: «Հայկան» շրջանի մոտ 1400 տարին ամփոփվում է հայ պետականության /Վանի-Բիհայենայի կամ Արարատյան և օտարահունչ Ուրարտուի/ հաստատումը՝ մ.թ.ա. 10-9-րդ դարերում: Այս պարբերաշրջանը իր տիեզերաբանական կոսմոլոգիկ/- հերթանոսական- ենթանիստական աստրիուտներով պիտի հաջորդ 1400 տարին ավարտի մ.թ. 4-5-րդ դարերում, երբ նոր շրջանը բնութագրվում է քրիստոնեա-միջնադարյան աստվածաբանական /թեոլոգիկ/ որակումը: 4-րդ դարի սկզբում պարտադրված նոր կրոնը օտարահունչ քարոզի պատճառով փաստարեան չեւ ընդունվում, և 5-րդ դարասկզբի գրերի գյուտագ նաև այս նոր ծրագրի իրագործման նպատակը ուներ, որովհետև, իսկապես, անխուսափելի էր պետականության անկման ստվերագծում:

Անդի մեջ տեսնել հոգևոր- մշակութային այն հիմնեզրերը, որոնք կարող էին ազգի համար գոյարանական արժեք ունենալ: Եղ եկավ հաջորդ պարբերաշրջանային 1400 տարին՝ ամենալրամատիկ անկումներով ու վերելքներով հասնելով 19-րդ դարակեսի նոր Լուսավորչին՝ Արովյանին: Մաշտոցը, այսպես թե այնպէս, քրիստոնեա-միջնադարյան պարբերաշրջանի ակունքներում էր, որից, իր ներքնահամոզմամբ և պարտադրյալ ծիգով, Զարենցը սնունդ չէր կարող կամ չէր նպատակադրվել առնելու, ուստի նոյն ներհայցական ճանաչումների մշուշի մեջ պիտի աղոտանար նաև հայոց նոր պարբերաշրջանի սկզբնավորագործը՝ Մեսրոպ Մաշտոցը:

Բայց Մաշտոցի բուն առաքելության ամրողացումը կապվում է նրա կրտսեր աշակերտ Սովուն Խորենացու անվան հետ, որի նկատմամբ բանաստեղծի հոգեհարազատության կապերը ավելի քան խոսուն են և ընդգծված: Զարենցի համար արվեստի մարդարանական /անտրոպոլոգիկ/ կոչումը մարմին էր ստանում գաղափարների /որոնց վերացարկումների առաջգականությանը հարազատ են միինքը/ և լայն առումով հեղափոխական թօնքների արտահայտչամիմքերով, և այստեղ կարող էր անտեսվել նաև մշակութային շարունականության գոյարանական իմաստը. գուցե նաև այս պատճառով է, որ շրջանցվել է Խորենացին /Պարույր Սևակը «Զարենցը և արդիականությունը» հոդվածում նկատել է, որ «ամեն մի ծշմարիա ու մեծ արվեստագետական մեջ սնջում է հեղափոխականը... Հեղափոխությունը Զարենցի համար ոչ թե կեցվածք էր, այլ պարզապես կեցություն»¹: «Զարենցը ուժի բանաստեղծ էր... Այդ պատճառով էլ նրա գրական ամրող կյանքը իր հերթին նման էր վագրի՝ մի հանգրվանից դեպի մյուսը». (Էջ 328): Թեպես Պատմահոր նկատմամբ Զարենցի ժառանգական ներքին կապը ավելին է, քան, հավանաբար, մեկ այլ անհատականության նկատմամբ: Աշխարհայացքային հիմքը Խորենացու կողմից «մեր նախնեաց անիմաստասէր բարբը» բանաձևումն է, որ հիմնավորվում է պատմական անձերի ու փաստերի շատ օրինակներով: Ավելորդ չի լինի նկատել, որ 1937-ին գրած՝ «Երբ բարձրանում է նա վեր...» խորելդանշային սկսվածքով պոեմի մեջ հասած հատվածներում կարծես ուղղակի ուրվապատճերվում է Միջնադարի մատենագիրն ընդհանրապես և Զերբողահայրը մասնավորապես. խստակենցաղ իր օրերի մեջ

¹ Պարույր Սևակ, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1974, էջ 321:

² Տես «Զարենցյան ընթերցումներ», գիրք 8, Երևան, 2007, էջ 10-30:

պատմագիրը զրում է նախնաց անկումների ու ավերմերի պատմությունը, մարդկության հասած չարիքների մասին.

Մազարաբի վրա
Դրշմում է ներբռվ:-
Օվկիանի նման խոր
Սուրի անհունից,-
Համում է հար, նորից նոր.-
Կոտորածի, արյունի.-
Հալածամքի, գերության
Պատմություններ հավիայան,-
Դրշմում է ապագա
Սերունդների համար նա,
Նրանց, որ դեռ պիտի զան
Եվ՝ դարերից հառնած՝
Ի՞ր մատյանի այս ամէ
Մազարաբյա էջերից...
Զարհուրանքով իմանան,
Իրեւ սերունդ նորոգ.-
Պատմությունն իմանյա
«Նախնաց մերոց » /Չ, էջ 366-67/:

Այսինքն՝ Եղիշեն Զարենցը, անցյալը դիտելով «ապագայի նժույգի» վրայից և իիմնավորումները ներկայի մեջ փնտրելով, բնականորեն իր ներքին հեղափոխականությունը, որ նրա համար գաղափար էր և խառնվածք, ներդաշնակեց 1917-ի իրական հեղափոխությանը: Անձի և իրադարձության այս համադրությունը փաստորեն շխաթարվեց ոչ մի վայրիվերումներից, ուստի պատմությունը ընկալվեց որպես միք և ոգի, առաջինը վերապահվեց, այսպես կոչված, ուազմա-քաղաքական գործիչներին, երկրորդը դարձավ եղօնոր-մշակութային դեմքերի խորհրդանիշը, և այս վերացրկումը հասկանալի դարձրեց նաև պատմական անձի և փաստի նկատմամբ բանաստեղծի ներհայեցական կապի խորքերը:

ԺԵՆՑԱ ԶԱԼԱՆԹԱՐՑԱՆ

ՉԱՐԵՆՑԻ ՊՈԵՄՆԵՐԻ ՆԵՐԺԱՆՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Եղիշեն Զարենցի կենդանության օրոք հրատարակված և հետմահու լույս տեսած՝ «Անտիա և չհավաքված երկեր» ու «Նորահայս էջեր» գրքերում տեղ գտած պոեմների ընդհանուր քանակը հատում է հիսունի սահմանը: Որքան եայսնի է՝ հայ քանատեղծներից ոչ ոք այդքան պոեմներ չի գրել: Միանգամայն այլ հարց է, թե իր իսկ հեղինակի կողմից պոեմ անվանված ստեղծագործությունները որքանով են համապատասխանում ժամբի թե՛ղասական, թե՛ ժամանակակից ընթացմանը: Հարցը քննելու համար իրքն եղանակառ պետք է ընդունել այս ճշմարտությունը, որ ինչպես բոլոր ժամբերը, այնպես էլ պոեմը չունի քարացած ժամբային կաղապարներ և ենթակա է դիմանիկ զարգացման ու փոփոխությունների: Ոչ միայն ժամբի էվոլյուցիան, այլև հաճախ նույն ժամբային անվան տակ տեղադրված իրարից ճևակառուցվածքային առումությունը ենթակա է տալիս մտածելու թե՛ ժամբի սահմանների անորոշության, թե՛ հեղինակների տարյենկաիկ մոտեցման մասին: Այս առումով հետաքրքրական դիտարկում է անում Վ. Ժիրմունսկին: Նա համոզված է, որ որևէ ժամբ, մասնավորապես պոեմը, այս կամ այն չափով իր վրա կրում է այն սկզբնավորող հեղինակի անհատականության կնիքը: Բայրոնի և Պուշկինի պոեմների քննությունը նրան բերում է այդպիսի եղանակացության: «Բարձրարժենք ստեղծագործության անհատական հատկանիշները վերափոխվում են ժամբային հատկանիշների»¹: Եվ քանի որ մեծ գրողները յեն կարող իրենց անհատականության հետքը չըստնել այս կամ այն ժամբի նկարագրի վրա, ապա թերևս կարելի է առանց վերապահության ընդունել տեսարանի կարծիքը, թե գրական ժամբեր «կարելի է համարել այն հաստատված կանոնները, որոնք և՝ կողմնորոշում են գրողին, և՝ իրենց հերքին որոշվում գրողի կողմից»²: Այս

¹ Ջիրմունսկի Վ. Մ., Բայրոն և Պուշկին, Լ., 1978, с. 227.

² Մեջքերումն ըստ «Ռ. Ռեվլի», Օ. Ռարեն, «Գրականության տեսություն» գրքի, Երևան, «Փրիմրինֆո», 2008, էջ 335:

տեսանկյունից նայելու դեպքում Չարենցի պոեմների՝ նույն ժամանի սահմաններում դժվարությամբ համատեղվառ պոետիկական բազմազանությունը պետք է դիմակ իրեն նրա անհատականության բնոգծված դրսարձումներ:

Զարենցի զրերե բոլոր պոեմները չարենցագիտության մեջ քազմից քննվել են զաղափարական ու բովանդակային տեսանկյունով՝ հաճախ տեղիք տալով կրկնությունների, քննվել են նաև գեղարվեստական մերոդի և պոետիկայի հարաբերության և այլ առողջություններով։ Այսօր մեզ ենտարքքրում են ներժանքային առածին խնդիրներ՝ առավելապես կապված հեղինակ-ենրու հարաբերության և կերպարաստանդման սկզբունքների հետ։

Պուեմները դիտարկելիս առաջին աչքի բնկնող հատկանիշը, որն այնքան էլ ժանրային էական նշանակություն չունի, պոեմների ծավալային ընդգծված տարրերությունն է: Անշուշտ, ծավալն էական չէ, բայց այն չի կարելի արհամարեն: Այդ մասին ահա բե ինչ են գրում Ռենե Ուելլեքը ու Օսթին Պուրենը. «Չի կարելի հաշվի շառնել նաև զրական երկի չափը. փոքր ժանրերը ինչպես սուեար կամ նույնիսկ ներբռողը /, անշուշտ, չեն կարող գրավել նոյն

կարգը, ինչ էպոսը կամ ողբերգությունը՝¹ Չարենցը պոեմ է անվանել և՝ 16 տողանոց «Վահագն»-ը, և՝ 745 տողանոց «Սահկան տեսիլք», և՝ 1128 տողանոց, զրեթ անվերջանալի «Կոմիտասի եղշատակին» պոեմը: «Վահագնի» պարագան բացատրելի է: Բանն այն է, որ սկզբնապես այն լույս է տեսել 1922թ. մոսկովյան ժողովածուում, «Արիլլա» պոեմի հետ համարվելով միացած վերնագրով/, որ նշանակում է, թե երկուազ միասին են եղել մեկ պոեմ, և անջատուումից հետո «Վահագնը» պահել է պոեմի իր բնորոշումը: Երկրորդ պատճառը Զարենցի գիտակցված մոտեցումն է պոեմի բովանդակությանը: Ժամանակակից տեսաբանները պոեմի մեջ կարևորում են ազգի և ժամանակի ողին արտահայտելու պահանջը: Է. Յեսենինը գրում է. «Գրավոր խոսքի ամրող պատմության մեջ պոեմը եղել է զրականության առաջատար ժանրերից մեջը, որը բազմաթիվ փոփոխություններ է կրել, քայլ պահպանել է կառուցվածքի բովանդակային կենարունքը՝ թեմայի ընարությունը, որն արտահայտում է «ժամանակի ոգին, ազգի ոգին» իրքն նրա էպիկական բովանդակության պայման».² Դժվար չէ տեսնել, որ ազգային ոռմանտականի բնադրատուրություններ, այդ ոռմանտականի ավերիչ հետևանքները, որ ավելի քան ակներև էին 1916թ., այսինքն պոեմը գրելու ժամանակ, հենց «Վահագն» պոեմի բուն բովանդակությունն են: Անշուշտ, ազգային ողբերգությունը կարելի էր արտահայտել մի քանի հարյուր տողով, ինչը հետագայում անում է Զարենցը: Բայց մի՞թե ավելի ազդեցիկ չէ «Վահագնի» գերիշիտա պատկերը: Այս կերպ Զարենցը ծավալի խնդիրը դարձնում է պոեմի համար ոչ էական: Ըստ էության ծավալի առումով Զարենցի զգալի բվով պոեմներ, ինչպիսիք են «Արիլլա», «Պոեմ եկրոսական», «Հատկած» և այլն, երկար բանաստեղծություններ են, միմյանց ունեն պոեմին համարժեք բովանդակություն:

Առաջադիր նպատակով պայմանավորված՝ մենք այս կամ այն շափով քննության շրջանակ ենք ներառել նաև պոնմի համար կարևոր ժամբային այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են քնարականի և էպիկականի հարաբերակցությունը, ենդիմակ-պատմող-ենթաս շրայի դրսնորումը, բանաստեղծ-հասարակություն՝ ոռմանափակման ընորոշ հակադրության վերափոխումը և այլն: «Հահագն» պոնմի օրինակով արդեն տեսանք, որ Չարենցի համար ծավալը էական չէ, թեև իինմականում նրա պոնմները ծավալուն

¹ Էղիարդ Զբրաշյան, Չորս գագար, Երևան, «Սովետական գրող», 1982, էջ

¹ Օքի Ուեսթ. Օքի Ուոնդ. Գրականության տեսություն, էջ 342-43:

² Э.Ю.Фесенко. Теория литературы, Москва, 2004, с.244.

Են: Սակայն ծավալի հաշվին նա գեղագիտական խնդիր չի լուծում: Եթե քնարակալիկան և էպիկական բնույթի պոեմների համար սյուժեն անհրաժեշտություն է, թեկուզ նվազագույն շափով, ապա Չարենցի պոեմներից շատերը կամ սյուժեի, կամ այն տեղում գործողությունների զարգացման բացակայության պատճառով ավելի շուտ հիշեցնում են քնարական մենախոսություն, ինչպիսիք են, օրինակ՝ «Գալիքի որմնադիրները», «Գովք խաղողի, զինու, գեղեցիկ դպրության», «Իմ լերան աղոթքը» և ուրիշներ: Դրանք պոեմ են այնքանով, որքանով որ ենդիմակն է այդպես անվանել: Օրինակ՝ «Գիրք ճանապարհի» ծողովածուի «Պոեմներ» շարքում տեղադրված «Գալիքի որմնադիրները» երկը եինքում չունի որևէ բախում, որ ընթացք տա գործողության զարգացմանը: Պոեմը ծավալվում է զուտ եռականացված խոհի՝ քնարական ապրումների աստիճանական կուտակման, ինչպես նաև խոսքի կշռության արագացման միջոցով:

Նրանք գալիս են զյուղերից ու քաղաքներից,
Գալիս են հանրերից,
Գործարաններից,
Գալիս են երկրի ենուակոր ծայրերից,
Գալիս են բոլոր վայրերից:

Յուրահատուկ խումբ են կազմում, այսպես կոչված, ուաղին պոեմները՝ «Նայիրի երկրից», «Դեպի ապագան», «Քրոնգե քևերը կարմիր զալիքի», որոնք կանոնիկ իմաստով սյուժեն և ոչ էլ ենդիմակի մերաշխարհի քնարական ապրումների արտահայտություն են: Այս պոեմներն ունեն ոչ թե քնարական, այլ երապարակախոսական բնույթ, ոչ թե ներաշխարհի արացություն են, այլ խոհերի լարված ընթացք, գործողությունների ծրագիր, պարետիկ ներշնչանք, վերամրած խոսք և իրենց մեջ պարունակում են կոչ, եռորդը, ուղերձ: Նշված հատկանիշներից շատերը / դիմումը, ուղերձը/ տեղ են գտնում Չարենցի նաև ենտագա պոեմներում: Որպես օրինակ կարելի է բերել մի հատված «Նայիրի երկրից» պոեմից:

Լսե՞ք, հե՞յ, լսե՞ք,-
Թուրք կողմերում տառապոդ նարդիկ,
Բանվորներ արի-բոլոր կողմերի,
Եվ զյուղացիներ, զինվորներ բոլոր

Լսե՞ք, հե՞յ, լսե՞ք, իմ ողջույնը սեզ
Ու եղայրական...

Զեկի առումով նման դիմումի կարող ենք հանդիպել նաև Թումանյանի «Անուշ» պոեմում:

Դու՞ր եկեր կրոկիմ շիրմից, խավարից,
Դու՞ր եկեր տեսմեն, շոշափեն, լուսեն,
Կյանքով շըմչեցե՞ք, ապրեցե՞ք նորից,
Լըցրե՞ք պօնաի հաճույքը վըսեն...

Սակայն սրանք բովանդակային առումով տարրեր են: Թումանյանը փորձում է արթնացնել մանկության իր եռլշերը, և նրա դիմումը պատասխան չի ենթադրում: Այն, ինչն դիմում է նա, իր մեջ է, բայց Չարենցի հայացքն ուղղված է դեպի դուրս, դեպի ուրիշները, որոնց ենտա փորձում է երկխոսություն սկսել ինքը: Ռադիոպոեմների կառուցվածքն ու նկարագիրը պայմանավորված են նոր գաղափարախոսությամբ, որի առանցքը զանգվածների համախմբումն է:

Ե՞ս եմ-երայրս-ընկերս-օ-, ո՞վ:
Կա'մքը իմ, կա'մքը քո - ու էլի՞, էլի'.
Կամքը նոյնազոր-հազար ու հազար
«Բրանգե քները կարմիր զալիքի»:

Ռադիոպոեմները նորություն էին ոչ միայն երապարակախոսական եռական լարվածությամբ, այլև բանաստեղծ-ընթերցող-հասարակություն երարքերության նոր տիպի բացահայտումով:

Չարենցը գրել է նաև «Ազգային երազ» սատիրական պոեմը, որտեղ ժամբարյին ու ոճական իմաստով նորություն չի բերում: Նորությունը բերևս վավերական անձանց եիշատակումն է որոշակի ենթատերսություն («Օ, Իսահակյան եղրայր Ավետիք, / Քանի կան կյանքում Թորգոմյան որդիք-Արու Ալաներ չեն պակսիլ կյանքից...») և խորհրդանիշ կերպարների (Ան, Լեզեռն) մասին թափանցիկ ակնարկները: Նորություն էր նաև իր անվան՝ իբրև վավերական ու ֆիզիկական անձի, Չարենցի եիշատակումն է:

Կյանքը աշխարհում մի երազ է ենմը,
Օ՛, ցնդած պօնա Եղիշե Չարենց...

Սեփական անվան եիշատակումը առկա է Չարենցի նաև ենտագա գործերում:

Հայ գրականության մեջ Չարենցը ներմուծում է պոեմի նոր տեսակ, որ կրում է «չափած նովել» անվանումը: Եթե չիհներ ենդիմակային այս տարրերակումը, ապա ինչպես արդեն նշված գործերը, այնպես էլ «Անակնեալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում», «Գանգրահեր տղան» երկերը ևս կարելի էր հանգիստ

տեղադրել պոեմների շարքում, մինչդեռ իր ժամբային բնութագրությունը դարձնել գրումով Չարենցը հուշում է հասուկ ուշադրություն դարձնել զրանցում գործողությունների զարգացման ընթացքի փոփոխականության, ոչ միազի՞ւ լինելու վրա, որոնք ինչ-որ չափով եիշեցնում են նովելի հասկանիշներ: Միաժամանակ, սրան զուգահեռ, չպետք է մոռանալ, որ պոեմի նյութը չի կարող լինել սովորական շպետք և մոռանալ, որ պոեմի նյութը չի կարող լինել բանաստեղծականությունը, այլ այն, ինչը իր մեջ որոշակի բանաստեղծականությունը ու վեհությունը ունի, ուսաի այս տեսակետից նույնքան տրամաբանական է եիշյալ գործերը պոեմների շարքը դասելը:

Առաջնամբ խումբ են կազմում Չարենցի կյանքի վերջին տարիներին գրած այլարանական պոեմները, ինչպիսիք են, օրինակ, «Մի ամայի վայրում, չգիտեմ որտեղ», «Որպես գորշ, գեղին տերևներ», «Կար մի պոետ միամիտ» և այլն: Իր ժամանակի, երկրի, հայ ոգու, երգի ու գրականության և իր անձնական ճակատագրի մասին բահանգիկ այլարանություններ են սրանք, որոնցում երբեմն իրականությունը սրողող վարագույրը պատրավում է, և այստեղ ու այնտեղ իրական անուններ են երևում: Սակայն այս գործերը հիմնականում անմշակ են, սևագիր ու երկարարան: Այսուհետեւ, սրանցում շարունակում է աիրապետել դեռևս «Մահվան տեսիլ» պոեմից սկիզբ առնող եզրվասյան լեզուն:

Դրամատիկական պոեմի տեսակը ևս դուրս չի մնացել Չարենցի ուշադրությունից: Եթե «Կապկազ բամաշան» ինչ-որ չափով մոտ է պիեսին, ապա «Արիլլե՞ս, թե՞ Պյերո», «Հերոսի հարսանիքը» երկերը դրամատիկական պոեմներ են: Թեև Չարենցի պոեմների զգայի մասը թեմայի առումով վերաբերում է անցյալին, բայց թե՞ ժամանակային ընդգրկման, թե՞ հերոսի կերպավորման իմաստով զգալիորեն տարրերվում է «Երբ բարձրանում էր նա վեր» անավարտ գործը: Չարենցի մոտ անհամնատ սակավ են բանահյուսական նյութի անդրադաները, բայց ժողովրդայսուական լեզվով պանսի փորձեր արել են: Դրա վկայությունն է նրա «Մածկալ Սաքոյի պատմությունը» «գեղջկական» պոեմը: Յավակի է, որ ժողովրդական էպոսի մշակման Չարենցի փորձը՝ «Սասունցի Դավիթ» պոեմը, համարժեք չեղավ ոչ էպոսին, ոչ իր տաղանդին:

Պետք է ավելացնել նաև, որ պոեմների այսպիսի խմբերի բաժնումը զգալիորեն մոտավոր է և պայմանական, որովհետև դրանք ևս իրենց ներսում բազմազան են: Նշված ստեղծագործությունների եիշաւակման ելակնար Չարենցի կողմից դրանց պոեմ անվանելու է, մանականդ եթե նկատի ունենանք այն հան-

գամանքը, որ նա իր ստեղծագործություններին չեիմնավորված որակումներ չեր տալիս:

Անդրադառնալ այս բոլոր պոեմներին՝ նշանակում է գրել նոր մենագրություն Չարենցի մասին, ուսաի բավարարվենք սուկ մի քանի բռուցիկ դիտարկումներով:

* * *

Տեսական գրականության մեջ պոեմի հիմնական որակը համարվում է նրա բնարականության բնույթը, թեև միաժամանակ գոյություն ունեն թե էպիկական, թե բնարական պոեմները: Այնուամենայիպ, ինչու շեշտը դրվում պոեմի համակապես բնարականության մեջ վերջինը վրա: Ժանրը բնորոշվում է ոչ թե ինքն իր մեջ, այլ նկատի ունենալով գրականության մեջ ստեղծված ավանդներն այդ առումն և ինչ-որ չափով համապատասխանությունը նույն ժանրի սահմաններում ստեղծված այլ ստեղծագործություններին, այսինքն՝ տիպարանությունը: «Որպես զի հայտնաբերենք որոննելի ժանրի նույնականությունը, նրա չընդհատվող գիծը, անհրաժեշտ է տիպարանական մոտեցում, որ դուրս է զայլս ժանրի համակարգի սահմաններից: Պատկերավոր արտահայտած, անհրաժեշտ է ուրիշ օպակական միջոց՝ ոչ թե մանրադիտակ, այլ հեռադիտակ»՝, նկատում են տեսարանները: Մանրադիտակի և հեռադիտակի հակադրությունը հուշում է, որ երևայը երկը/ պետք է քննել ոչ թե և ոչ միայն ինքն իր մեջ /նանդադիտակով/, այլ նմանական երկերի լայն համապատկերում /հեռադիտակով/: Այսպիսի մոտեցումը թույլ կտա ներժանակային բազմազանության մեջ հայտնաբերելու աիպարանական ընդհանրություններ: Սա վերաբերում է պոեմի տիպարանությանը: Ավելի որոշակի է բնարականության մեջ պոեմի տիպարանությանը կառուցվածքի բովանդակային կենարոնը՝ թեմայի ընթարությունը, որն արտահայտում է «ժամանակի ոգին, ազգի ոգին» իրքն նրա էպիկական բովանդակության պայման և պատմողի դիրքորոշումը, որի հետ կապված է գնահատման պահը գործող անձանց պատկերման և ըմբացող իրադարձությունների մեջ,

այսինքն՝ սուրյեկտիվ, անհատական սկիզբը»:¹ Իրադարձությունների պատկերում հեղինակային դիրքորոշումով՝ սա էլ հենց պայմանավորում է պոեմի քնարակայիկան հիմնական որակը՝ չքացածելով այս կամ այն կողմի գերակռությունը։ Չարենցն ունի և քնարական պոեմ, ինչպիսին «Կապուտաչյա հայրենիքն» է, և՝ էպիկական պոեմ, ինչպես «Խմբապետ Շավարշն» է, և քնարաւայիկական պոեմ հնչպես «Մահվան տեսիլն» է։ Բոլորովին էլ պարտադիր չէ, որ էպիկական համարված գործում քանաստեղծը միայն պատմի: «Էպիկական պոեզիայում կամ վեպում/ քանաստեղծը որպես ասացող մասսամբ խոսում է իր իսկ անձինից և մասսամբ կերառում է իր հերոսներին ուղղակի խոսքով / խառը պատմողականորյունն/»,² - գրում են Ռ. Ուելլերն ու Օ. Ուորենը: «Կապուտաչյա հայրենիք» պոեմում ամբողջովին հեղինակի հույգերն են, նրա ներաշխարիի, երազների, ցանկությունների պատկերում: Նկատի ունենալով նաև պոեմի սիմվոլիստական բնույթը՝ հեղինակը գրեթե չի տվել իրական կյանքի դրվագներ, առարկայական աշխարիի պատկեր, ուստի պոեմում հերոսի հույգերն ու երազները գերազանցապես արտահայտվում են խորերդանշիների միջոցով: Այներև է նաև «Խմբապետ Շավարշն» էպիկական բնույթը. այստեղ սյուժեն զարգանում է Շավարշի խոհերի ու վարքագիր դրսնորումների ճանապարհով: Ինքարկե, այդ ամենը դիտված է հեղինակային աշքերով, հեղինակի սուրյեկտիվ ընկալմամբ, քայլ ճնի առումով հեղինակը Շավարշի գործողությունների քացարությունը տալիս է հերոսի խոհերի միջոցով: Այսինքն՝ այստեղ քնարականությունն արտահայտվում է ոչ թե հեղինակի, այլ հերոսի միջոցով:

Միանգամայն այլ, քարդ ու հետաքրքիր պատկեր է ներկայացնում «Մահվան տեսիլ» պոեմը: Բովանդակային առումով պոեմը հայ ազգային ազատազրական պայքարի գաղափարախոսության չարենցյան զնահատականն է: Պոեմի առաղձը պատմական, առարկայական իրադարձություններն են, որոնցով պայմանավորված է պոեմի էպիկամբ և գուա արտաքին, բվացյալ այն տպավորությունը, թե քանաստեղծը խաղաղ պատումով ներկայացնում է այդ ամենը: Սյուս կողմից՝ հեղինակային սուրյեկտիվիզմը՝ գրութեական պատմականը՝ նրա գնահատող վերաբերմունքը, դրսնորվում է հերոսների գրութեակային կերպարների ներկայացման մեջ: Այսինքն՝

¹ Э.Ю. Фесенко, Теория литературы, с.244.

² Տե՛ս նշված գիրքը, էջ 338 :

հեղինակային գնահատող սուրյեկտիվ վերաբերմունքը ի սկզբանն որված է երևույթների ներկայացման հիմքում: Պոեմի պատմողական ոճը («Սենք ափ ենք ելուս միասին և նայում ենք մեր շուդքը մի պահ.-Լուսություն է, մոայ, մատախատ, իսկ վերից գունատ մի մահիկ-») գուգորդված է քնարական գերությների հետ («Այդ տեսիլը դժմի և ժանտաժանտ, անփայլ է և գունական, Եվ զարհութելի է, ինչպես զառանցանք, և անիմաստ է հավեռ»), ուստի թերևս ծիշա կյանի պոեմը դասել քնարաւայիկական ստեղծագործությունների շարքին, թեև բավականաշափ անկայուն են քանաստանման սկզբունքները: «Մահվան տեսիլ» պոեմում քնարակամի ու էպիկականի հարաբերակցությունը իր լիակատար դրսնորումն սահմում է կերպարակերտման մեջ, որն այս պոեմում առանձնահատուկ հետաքրքրություն ունի և չի հենվում միասնական սկզբունքի վրա: Եթե հերոսների մի մասը՝ Րաֆֆին, Այլշանը, Քրիստափոր Միքայելյանը և ուրիշներ, իրենք են ներկայացնում իրենց գործը, և հեղինակը հանդես է գալիս լոկ կողքից դիտողի ու պատմողի դերում, իսկ այնպիսի հերոսների դեպում, ինչպիսիք են Դ. Վարուժանը կամ Միամանքոն, Չարենցն իր ընդգծված սուրյեկտիվ վերաբերմունքն է արտահայտում նրանց նկատմամբ: Դրանում կարելի է համոզվել պոեմից քաղված օրինակներով: Օրինակ՝ Ըք. Միքայելյանն իր մասին ասում է.

Մեր երկրի արի այրենից կազմնեցի ես մե՛ծ մի քանակ, Եվ մեր սև դրոշի վրա գրեցի՝ «Հայրենիք կամ Մահ»:

Այս դեպում հեղինակի ոճը շարունակում է մմալ պատմողական:

Մեր մի քիչ երկար նայեցինք ոսկորի ու մսի այդ կույահին- Տնանք, որ կմախը է դա մի՝ զլիս տեղ-երկարյա մերենա:

Ըստ էության հեղինակային կամ պատմողի խոսքը ըստ ճնի առարկայական է, ըստ բավանդակության՝ գրութեակային: Այսինքն՝ սուրյեկտիվիզմը դրսնորվում է ոչ թե քնարական, այլ էպիկական շնչով՝ հետևաբար սուրյեկտիվիզմը մնում է ենթատերսություն՝ արտաքրուստ ստեղծելով օրյեկտիվության պատրանք: Մրան հակառակ՝ այլ հերոսների նկատմամբ պատմողի վերաբերմունքը ավելի անմիջական ու հուզական է:

Նրա ծայթը եղնում էր կարծես ժայռերում փորած ջրհորից՝ Եվ՝ մաքուր, չի մնաց էր այնքան, ինչպես ցողը՝ դաշտերում շաղած..

Սա Վարուժանն է: Վարուժանի և Միամանքոյի վերաբերյալ

գնահատականը պատմողն արտահայտում է նաև Դանքեի՝ Վարպետի միջոցով /այսաեղ պետք չէ ժամանակավրեպութ փնտրել, քանի որ բոլորն էլ մեռյալների աշխարհում են/.

«Դուք կարո՞ղ եք Ձերության ու Մարի լուսն պարտեզուն նաշակել Ոգու՝ խճություն՝ սնվելով խոհով ու բանիվ.»

Ծնարական այս զեղումները, որ ազգային ողբերգության հիմքի վրա, թվում է, այստեղ պետք է դառնային ավելի անպարագիծ ու եղրդահոս, ընդհակառակը, սեղմվելով էպիկական պատումի շրջանակներում, դառնում են հնարավորին շափ գուսակ և համառուս: Թվում է՝ հեղինակը կավերագրում է մղծավաճախյին իրադրությունը կողդից նայելով՝ շեշտը իր ստացած տպավորությունից տեղափոխելով դեպի բուն իրականությունը.

Խարույկի շոջը բափկած մենք տեսնում ենք զենքեր, ուսկը մեր, Սարդկային զանգեր, հեօրյա զրահներ, մի հիմ երացան: Եվ տեսնում ենք ապա, ալյալված հայացրցւ նայում ենք եր վեր: Շատերի ճյուղերից կախված կմախչեն՝ տասից չորացած: Այս դժնի պատկերց սարաս՝ ուզում ենք արդեն կիսամար: Այդ խարույկը բողնելու ու զանա ընթանալ կրկին, եր հանկարծ, Շատերի եւուից եմերլով՝ երևում է կիսամերկ մի մարդ՝ Սևաներ, ահազին զիլսով, ուաքերը ուրուս ու կարճ:

Այս ամրող երկար հատվածում, ընդհանունը երեք բառ՝ այլայլված /հայացրով/, դժնի/ պատկեր/, սարսած /պատկերից/ միայն եռուում են պատմողի եղանկիճակի մասին, այսպես ասսած, այդ բառերը արտաքին ենթաշերտում են, որ եռուում են ստացած տպավորության մասին, մնացածը պետք է որոնել ենթատերսուում և գրուենկային պատկերների խորքում: Պատումի էպիկական խաղաղ ընթացքը հակադրվում է գրուենկի բովանդակությանը: Բաֆֆու արտաքին նկարագիրը ենուու է դրական լինելուց: Կարծ ու ուրուս ուաքերով այդ մարդն ըստ պատմողի /ասացողի/ չունի արտաքին որուէ գրավչություն, ընթերցողը կարծես նախապատվութ է, որ նման արտաքին ունեցող մարդուց հազին թե կարելի է ինչ-որ դրական բան ակնկալել.

Գաճած է կարծես՝ երաշքով անտառի խավարից նկած. Աչերը շամբեր եմ բափում, ցայտում եմ կայծակներ ու կիրք: Վիրխարի զույլը կարծես տմկած է ուսերի վրա. Ակնոցներ ունի նա դրած, և ճեղքին բանել է նա մի զիրք:

Արհասարակ, ցանկացած դեպքում ժամբաստեղծ հասկանիշները սերտարեն կապված են իրար՝ թեման, կառուցվածքը,

կերպարաստեղծման սկզբունքը: Նույնը կարելի ասել նաև «Սահվան տեսիլ» պոնմի եամար, որի եղացումն իրագործելու տեսակետից էական նշանակություն ունի նաև կերպարաստեղծման սկզբունքը: Ինչ-որ տեղ «Սահվան տեսիլ» պոնմը կարելի է եամարել պատմական այնքանով, որքանով որ պոնմի եերուսները և նրանց արարքները պատմական իրողություններ են: Այդ իսկ պատճառով Չարենցը շատ չէր էլ կարող ենոանալ իրականությունից, սակայն ամրող խնդիրը ներկայացման ձևի ու արամարանության մեջ է, վերաբերմունքի ենչերանզի մեջ: Օրինակ՝ սասցողի կողմից ներկայացրած Բաֆֆու շատ հատկանիշներ նկատել են նաև ժամանակակիցները: Գր. Արծրունու ենտա առաջին համդիպման ժամանակ Բաֆֆին տպավորվում է իրքը «քուիս, շատ թուիս դեմքով, սև միրուգով, սև զանգուր մազերով, կապույտ ակնոցների միջից կարմրած, իիվանդուած եղանած աչքերով... խորիրդավոր լայն ծակատի տակից նայող մարդք»: Թվում չեզոք դիրքերից արված նկարագիր է: Ինչ-որ շափով այս նկարագրին համապատասխան է նաև Ա. Արփիարյանի՝ առաջին հանդիպմանց ստացած տպավորությունը. «...ենովն կուգար միջահասակ, բավական լայն մի պարոն, կապույտ ակնոցներով»: Ըստ երևութին Արփիարյանը ևս եիացած չէր Բաֆֆու արտաքինով, բայց քանի որ իսկապես եիացած էր նրա ստեղծագործությամբ, էական նշանակություն չի տալիս արտաքինին և զրում է. «...ինչ որ ալ լինի արտաքին երևույթը /ընդգծումը մերն է - Ժ.Ք./, այդ ծակատն կրողը սքանչելի կերպով բանաստեղծ, վիպասան կրնա ըլլաք»¹: Պոեմում «միջահասակը» «գաճաճ» է դարձել, մյուս արտաքին հատկանիշները ձևափոխվել են: Զնոռանանք, որ 30-ական թթ. Բաֆֆին, Պատկանյանը, ինչպես նաև դաշնակցականները նացինալիստի պիտակ ունեին և այդ տրամարանության շրջանակներում պետք է ներկայանային ձևախեղված: Սակայն Չարենցը չի անվանում իր եերուսներին, այլ կիրառում է յուրահատուկ ենարքանը՝ ենարքավորինս նրանց ճանաչելի դարձներով ընթերցողին: Այս իմաստով Բաֆֆու իմքնարնութագիրը ոչ միայն շատ բարփանցիկ է, այլև բնութագրական նրա ստեղծագործության համար.

«Այս խարույկը ե՞ս վասեցի աշխարհում ճնորերով իմ քույլ, Եվ տասմյակ տարիներ բորբոքված՝ նա ցրեց շողեր ու կայծեր.»

¹ «Սշակ», 1888, թիվ 48:

² «Սահվան», 1884, թիվ 3737:

Իմ ամրող կյանքում կոսցած՝ փչեցի ես ամիսնց ու ամրու։
Որ երբ՞ն, երբ՞ն՝ չնարի նրա հուրը -և հա՛ր առկայժեն։

Չանվանել եերուսին, այլ ներկայացնել նրան այճպես, որ
ընթերցողը ճանաչի. սա է «Մահվան տեսիլ» պոեմում Չարենցի
կերպարակերտաման սկզբունքը։ Ինարկե, թե այն դեպքում, երբ
պատմողն է ներկայացնում եերուսին և թե այն դեպքում, երբ
եերուսները կերպարվում են սեփական պատմության միջոցով,
առկա է հեղինակի սուրյեկտիվ, ընտրողական վերաբերմունքը։
Բնականարար, դա առավել ևս նկատելի է այն դեպքում, երբ կեր-
պարմերը խոսք չեն ասում, ներկայանում են ասացող-պատմողի
խոսքի միջոցով, ինչպես, ասենք, *Ստ. Նազարյանի դեպքում*.

Գալիս էր ամենից առաջ վիրխարի հասակով մի մարդ՝

Մազերին ենյամ էր ցանեն մառախուղ կարծեն Հյուսիսի,
Որ շողում էր ալեքարդ գլխին, իմշատ սառը, օտար լուսի փայլ.
Նա տխուր շարական էր եղուու ասածո որդի Հիսուսին,
Քայլ քառերը խառնում էր իրար՝ եորդուով անհարը մի քարքան։

Այս պատկերում հիշատակված են *Ստ. Նազարյան գործի*
համար ընութագրական հատկանիշներ՝ ապրել է Հյուսիսում,
պայքարել է տղեւա եոգնորականների դնմ՝ չժխտելով կրոնը, եե-
տևողականորեն պաշտպանել է աշխարևարի դատը, սակայն
գրել է գրաբարախառն յուրահատուկ հայերենով և այլն։ Պատմո-
ղի նկարագրած այս համականիշներն էլ ճանաչելի են դարձնում
Նազարյանին։ Ըստ էուրյան պատմողի դրւս հեղինակը վերա-
հսկում է պատմողի խոսքը։ Այստեղ երկի տեղին է հիշել *Ս. Բախ-*
տինի հետևյալ միաբը. «Հեղինակը ստեղծագործության ամրողա-
կան էներգիայի կրողն է, հեղինակի գիտակցությունը գիտակցու-
թյան գիտակցություն է, որը ընդորկում է հերոսի և նրա աշխարհի
գիտակցությունը».¹ Այսինքն՝ ինքնուրույն, պատմողի, մեկ այլ հե-
րոսի, թե հեղինակի միջոցով ներկայանալը սոսկ պայմանական
ձևեր են, քանի որ ամեն ինչ զամփում է հեղինակային հսկողու-
թյան սահմաններում։ «Մահվան տեսիլ» պոեմում Չարենցը լուծել
է իրար հետ փոխադարձպահպաժ մի քանի քարդ խնդիրը։ Նա իր
հերուսներին ներկայացրել է այնքան իրական ու պատմական հա-
վասարությամբ, որ այդ հերոսները ճանաչելի են հայ մշակույթի
պատմությանը բավարար չափով ծանոք ընթերցողների համար։

¹ М. М. Бахтин, Эстетика словесного творчества, Москва, "Искусство", 1986, с.16.

Նա ժամանակի զաղափարախոսության տեսանկյունից, մերժելու
համար ազգային զաղափարախոսությունը՝ գրութեսկային կեր-
պարանք է տվել իր հերոսներին, բայց գրութեսկի ենթարկելով
առավելապես արտաքինը՝ անխարքար շարադրել է նրանց զա-
ղափարաները՝ ընթերցողին բաղնելով ընտրության հնարավորու-
թյունը։ Ինչպես «Երկիր Նախի» վեպում, այնպես էլ այսան Զարենցը ստեղծել է զաղափարական երկներառություն։

Քազմաքիվ հասկանիշներով «Մահվան տեսիլ» պոեմը հա-
մապատասխանում է իր ժանրային նկարագրին, այն ունի սյուժեն,
կերպարներ, գործողությունների զարգացման ընթացք և ավարտ։
Մակայն այս ամենը մի փոքր այլ կերպ։ Սյուժեն զարգացման
ընթացքում չկա պատճառահետևանքային կազ այն իմաստով,
որ պոեմի հաջորդական դրվագները պայմանավորված չեն նա-
խորով, դրանք հավասարապես կարող են լինել կամ ավելի շատ,
կամ ավելի քիչ, թեև ակնհայտուն նկատելի է հեղինակի միասու-
մը՝ առավել ամրողական ներկայացնել հայ ազատազրական
պայքարի զաղափարախոսներին։ Չարենցը կենարունացել է հիմ-
նականում մատական հերոսների վրա և իրավացի, քանի որ
զաղափարախոսությունը հենց մտավորականներն են մշակում։
Պոեմի կերպարները եպիգոդիկ են, քանի որ ըստ հեղինակային
մտահղացման՝ նրանք հաջորդում են իրար՝ ապահովենով ժամա-
նակի անկանգ ընթացքը։ Թուցիկ են ոչ միայն պոեմում իրենց
գրաված ժամանակատարածքային հատկանիշներով ներևում են
մի պահ ու չեն կրնակում, այլև ամրողական չեն, քանի որ հան-
դես են գալիս իրենց կյանքի մի կողմով միայն։ Սա արդեն, ըստ *Ս.*
Բախտինի, բնորոշ է քնարական հերոսին։ Նա գրում է. «Ծնարեր-
գության հեղինակը չի որոշակիացնում և հստակ ֆարուշա չի
ստեղծում իր հերոսի գործողությունների համար, քնարերգությու-
նը չի գատում ավարատն կերպար ստեղծելու, այն գործ ունի հե-
րոսի ներքին կյանքի եպիգոդիկ պահերի հետ»։¹ *Ս. Բախտինի*
այս դիտարկումը կարող է վերաբերել «Մահվան տեսիլ» պոեմին,
որը քնարական ու էպիկական տարրերը գուգորդված են իրար
հետ։ Թուցիկ լինելով հանդերձ՝ պոեմի կերպարները հավասար
են, որովհետև ներկայանում են իրենց գործի ու վարքագծի
առանցքային հատկանիշներով։

¹ Նույն տեղում, էջ.155.

Ընդհանրապես որևէ ստեղծագործության մեջ ժամրային հասկանիշները լժորդված են իրար և փոխպայմանավորված, ուստի պոեմների քննության ժամանակ էալիկականի և քնարականի համարության հարցը սերտորեն առնչվում է նաև հեղինակներու հիմնախնդրի հետ։ Փորձենք այս խնդիրը դիտարկել «Դանքնական առասպեկտ» պոեմի օրինակով։ Պոեմի քնարական էալիկական բնույթը մեծապես պայմանավորված է ճրանով, թե ում կողմից են դիտվում և ինչ ոճով ու հեշերանգով են ներկայացվում գործադրությունները։ «Դանքնական առասպեկտ» պարագայում խնդիրը որոշակիորեն դժվարանում է այն պատճառով, որ սերսահի դրւու պոեմի հեղինակը իրքն ստեղծագործող անհատ, ֆիզիկական անձ, հեղինակային իրավունքի սուրյեկտ, նկարագրվող դեպքերի մասնակից, կամավորական բանակի գինվոր Եղիշե Չարենցուն է։ Եթե քնարերգության մեջ ընդհանրապես առավելագույն շափով կրծատվում, բայց չի վերանում հեղինակ-հերոս տարածությունը, ապա ինքնակենսագրական բնույթի ստեղծագործություններում, ինչպիսին «Դանքնական առասպեկտ» պոեմն է, առաջանում է հեղինակի ու հերոսի նույնականացման վտանգ։ Եթե պատմական մեթոդարանությամբ կատարվող վերլուծություններում այդ նույնականությունը կարող է օգտակար հույզում ներ թելադրել, ապա ժամանակակից տեսարանները, իիմնվերակ առավելապես տեքստային վերլուծությունների վրա, ժխտում են հեղինակի ու հերոսի նույնականության սկզբունքը։ Դեռևս Ս. Բախտինը, վերը նշված աշխատության մեջ, նկատում էր, որ հեղինակը «անառ է մինչև վերջ օգտագործի հերոսից դրւու լինելու իր առավելությունը», որպեսզի հեղինակ-ստեղծագործողը շշփորվի հեղինակ-մարդու հետ, որովհետև առաջինը գեղագիտական սկզբունքների կրողն է, երկրորդը՝ տեքստից դրւու սոցիալ-բարյական խնդիրների։²

Իրականում «Դանքնական առասպեկտ» բանաստեղծի կիշրություններն են պատերազմի դաշտից՝ նվիրված նահատակ ընկերների հիշատակին, ինչպես նշվում էր պոեմի առաջին իրատա-

րակության ընծայականում։ Սակայն հետագայում Չարենցը վերացրել է ընծայականը, որով մեր կարծիքով ոչ միայն մնծացրերել է պոեմում արձարձված խնդիրների ընդհանրական արժեքը, այլև պոեմի հերոսին հետացրել է հեղինակի կենսագրությունից, թե նրանց միջև չկա աշխարհայացրային հակադրություն։ Անկարուք չենք համարում հետակայ հանգամանքը. պոեմի առաջին տպագրության մեջ /Եժ 2/ վերացել է հեղինակի, պատմողի ու հերոսի անջրպեսը, և բոլորի գործառույթը իր վրա է վերցրել հեղինակը կամ նույն ինքը՝ բանաստեղծը։

Եվ այս խնդագար վայրկյանը քիմուա, Երբ վերջին անգամ դրաց հուսարենի Իմ բանաստեղծի ծնորս վարանուա...

Հետագայում բանաստեղծին վկայակոչող տողերը, որոնք ունեն տարրերակներ, փոխարինվել են այլ տաղերով /492-րդ տողից հետո/: Այսինքն՝ Չարենցը վերացրել է հեղինակային ուղղակի ներկայության հետաքննը՝ մնալով միայն գեղարվեստական ամրագրություններ ստեղծողությունը։ Պոեմում սյուժենն զարգանում է հերոսի պատմության միջոցով, պատմողն ու հերոսը նույնանում են, ճրանք երկուսն էլ /մեկ անձի մեջ/ իրադարձությունների մասնակից են։ «Դանքնական առասպեկտում» ուրվագծվում, բայց առարկայական որոշակիություն չեն սահմանում, չասներ գործող անձեր, այլ դիմաստվերներ, հիշատակվում են ընկերներ (<«Երկու ընկերով քայլում էինք լուս/ Հոգնած զինվորի եռանդով անշեց», «Ընկերու ուղեց, որ ընկնի, ընի», «Երկու ընկերով ներս մտանք այգի» և այլն), մենեկների ուրվագիտականներ (<«Ու դենս կարմիր կրակներ վառած // Յատկություն էին, բառաչում, տնքում// Մեռելներ զվարը ու բազմատարազ»), թշնամին (<«Եվ ընկերում էին ճրանք շարեցար, // Մանջում էին զագանեների պես։ // Բայց խիս, անհատում շարքերով վարար// Չարժվում էին ճրանք դեպի մեզ») և այլն։ Այս բոլորին խոսքի հյուսվածքի մեջ առնողը հերոսն է, որ ստանձնել է պատմողի դերը։ Իրքն պատմող նա ներկայացնում է իրադարձությունների ընթացքը, դիպաշարի հաջորդականությունը, ընդհանուրի վարքագիծը։ Խոսքի մեջ սա դրսնորդում է «մենք» դերանվան միջոցով։ Հերոսն իրքն դեպքերի մասնակից, ընդհանուրի բաղկացուցիչ մաս, որը նաև պատմողն է, առաջին դեմքի դերանվան կիրառությամբ չի տարրերվում պատմողից, տարրերությունը ասկ դերանվան բվի մեջ է /հեղակի, հոգնակի/։ Ընդհանրական արտամադրություններ արտահայտող պատմողի մենք-ից

¹ Նույն տեղում, էջ 156։

² Ժամանակակից գրականագիտության մեջ տարրերակվում են հեղինակներու ընդունում՝ առաջին՝ կենսագրական հեղինակ՝ այսինքն ստեղծագործություններու դրւու գանգող ստեղծագործող անհատ և երկրորդ՝ ներտեքստային հեղինակ, նից դրանքունակությունը և անհատում /տե՛ս «Վեճություն և լուսաբանություն»/, Մ., որ մարմնագրված է անհատում /տե՛ս «Վեճություն և լուսաբանություն»/, 2000, ող բարձրագույն լ. Վ. Չեռնեց, Վ. Վ. Պրօզօրօվ-ի «Ավտօր» /c. 11-21/ հոդվածը։

**Ժամանակ առ ժամանակ անջատվում է հերոսի ես-ը, ինչպես ներ-
ռոիիշյալ օրինակներում.**

Եվ նորից՝ կանուխ, առավուա ծեզին,
Մեմբ ճամփա ըմկանը ամխանզ ու համառ:

Ընդամենը չորս տող հետո նա գրում է.

Ես չեմ մոռանա մեր վերեցը սեզ
Դեպի լեռների գագաքներն անտես:

**Սա բնական է, պատմողն իր ապավորություններն ու հույ-
գերն է ներկայացնում, բայց կամ տպավորորդություններն ու հույզեր,
որոնք կարող են բնորոշ լինել բոլորին՝ տվյալ դեպքում՝ ռազմա-
ճակատ մեկնող կամավորներին: Բայց քանի որ պատմողը իր մեջ
ներառում է նաև հերոսին, որը նպատակ ունի շեշտելու իր անհա-
տական ապրումները, զգացածն ու տեսածը, ուստի հաճախ կի-
րառվող «ես» դերանվան միջոցով կամ պատճառով պատմողի
կերպարը երկինքիվում է՝ տեղ բացելով հերոսի անհատականաց-
ման համար: Այս գործառույթներն իրականացնելու համար դե-
րանվան եղակի ու հոգնակի կիրառությունները փոխնիփոխ հա-
ջորդում են իրար:**

Եվ կրծքերը մեր ահից բումն առան՝
Խորունկ զգացինք, որ ապրում ենք, կանք:

Անմիջապես հաջորդ վեցնյակն սկսվում է այսպես.

Հայրան հայացքով նայում էի ես
Եվ խմում էի անսահման հետու:

**Նման օրինակները բազմաթիվ են: Երբ պատմողն արտա-
հայտում է ընդհանրական տրամադրություններ, ես-ի և մեմբ-ի
անջրպեսը վերանում է, հավաքական մեմբ-ը իր մեջ ներառում է
հերոսի ես-ը.**

Սարսափելի էր այս ամենն այնքան,
Որ մեր շրեթից ո՞չ մի բառ չընկավ:
Բայց ճշում էր մեր սրտերում կարկան
Մի անհում կալիծ ու մի հսկա ցավ:

**Պոեմի զարգացման ընթացքին զուգահեռ ակտիվանում է հե-
րոսի ես-ը, որովհետև կուտակված հույզերը, ապրումները, ցնող
տեսարանները ուղղակի ամերաժեշտություն են դարձնում անհա-
տական ըմկալումների շեշտադրումը.**

**Յնդեցին գանգիս նիզերը հետոին.
Ուղեղս կարծես արդեմ ի՞նչ չեք:**

Կամ՝

Պառկել էի ես - ահապոր ամքում:

Կամ՝

Կրծում էր հոգիս ամեմ մի հմչյում և այլն:

**Այս կերպ հերոսն իր վրա է վերցնում պոեմի քնարական գոր-
ծառույթը, իսկ մեմբ-ի միջոցով պատմողը շարունակում է էաիկա-
կան իրադարձությունների ընթացքը, բայց սա ամենկիմ էլ չի նշա-
նակում, թե պատմողի խոսքը զուրկ է քնարականությունից: Խոս-
քը զերակշխ որակի մասին է: Սակայն իրական ու կենդանի ապ-
րումները միշտ չեն, որ Չարենցի մոտ կարենի է հարմարեցնել տե-
սական սխեմաների: Նրա հեղինակային եռանդուն խառնվածքը
փնտարում է ավելի ակտիվ ու վավերական ներկայության ձևեր:**

**Հեղինակային ես-ի մշատապես շեշտաված ներկայությունը մա-
սամբ թերևս պայմանավորված է Չարենցի պոեմների զգալիորեն
իրապարակախոսական բնույթով և աշխարհայացքային հարցեր
լուծերու նպատակադրությամբ: Այս իմաստով որոշակի հե-
տաքրքրություն է ներկայացնում «Կոմունարների պատը Փարի-
զում» պոեմը: Եղ Չրբաշյանն այն դասում է պոեմների այն տեսա-
կի մեջ, որն անվանում է քնարական մենախոսություն:՝¹ Այն
սկսվում է հանդարտ պատմողական ոճով, որ ենթադրել է տալիս,
թե ընթերցողը կումենա որոշակի առարկայական պատկերացում
խնդրո առարկայի մասին՝ առանց կողմնակի հուզական միջամ-
տուրյան, բայց ընդամենը 35 տող հետո շեշտաված առաջ է մղվում
հեղինակային սուբյեկտակի մոտեցումը՝ անհատական ընկալումը.**

**Թարթանում է սրաից իմ
Ճաման անսայր ալիք:
Ուզում եմ քվել ես նրանց:**

**Ապա բանաստեղծը խոսում է ընկած կոմունարների անունից,
որոնք կարծես իրենց այցելած բանաստեղծից Կարմիր Հատո-
ւում են պահանջում: Եվ ահա պատմողը ծովզում է հեղինակին՝
լայն հնարավորություն տալով վերջինիս քնարական զեղունների
համար: Եվ այսանդ ևս, ինչպես Չարենցի նախորդ և հաջորդ**

¹ Տե՛ս Էղիլարք Ջրբաշյան, Գրականագիտության ներածություն,, Ե., ԵՊՀ
հրատ., 2011, էջ 336:

շատ պոեմներում, բանաստեղծը հանդես է զայխ ոչ իրքն թարմված կամ անձը չշնչառող հեղինակ, այլ իրքն պատմական ու ֆիզիկական որոշակի անձնավորություն.

Փարփակ:

Մշտակ ու ան:

Ես,

Պոետս,

Լեմինյան բայլկեկս՝

Պատից կոմքած անհա

Լուսն նմ նրանց ձայնը:

Ըշուկը:

Եվ պոեմը շարունակվում է բուն բանաստեղծի կերպավորմամբ.

Չեր մաից նմ նս էլ ընկերնե՞ր,
Իմ մե՞ջ է նարմնացել ճեր անյուն:

Չմոռանանք, որ բանաստեղծական ես-ը կարող է լինել պայմանական և չհամընկնել հեղինակի անհատականության հետ և լինել բնորոշ, այսպէս կոչված, «զենիմյան բայլշկեկի» ընդհանրական կերպարին: Այս դեպքում տեքստից դրւում միայն որոշակի իմացությունն է ընթերցողին հնարավորություն տալիս զուգահեռ տանել Եղիշե Չարենցի ու նրա ստեղծած բանաստեղծի կերպարի միջն: Հավանաբար նման դեպքի մասին է U. Բախստինի դիտարկումը. «Ինարկե, հեղինակը իրքն գեղարվեստական ստեղծագործության հանգամանք երբեք չի համընկնում հերոսի հետ, նրանք երկուսն են, բայց նրանց միջն չկա սկզբունքային հակառակություն, նրանց արժեքային համատեքստերը միասեռ են, կյանքի միասնականության կրողը՝ հերոսը և ճեկ միասնության կրողը՝ հեղինակը, պատկանում են մեկ արժեքային համակարգի»: Անկախ այդ՝ այսինքն հեղինակ-Չարենց-քնարական հերոս նույնացումից, հեղինակը շարունակում է բանաստեղծի կերպարությունը՝ պոեմի ընդհանուր սյուժեի մեջ ներմուծելով մի ուրիշ սյուժե:

Մի փոքրիկ քաղաքում եք:

Տասնաւոր քվին:

.....

Ես և ընկերս՝

Երկու արմեյցի՝

Նետեցինք զենքերս-

Գնացինք:

¹ М.М. Бахтин, Эстетика словесного творчества, с.152.

Էջեր շարունակվող այս պատումը ի վերջո զայխ հանգուցվում է կոմունարների պատին, որպեսզի լուծվի զաղափարական խնդիր՝ ցույց տրվի կոմունարների և կոմունիստների պայքարի ընդհանրությունը.

Հասկանո՞ւն եք արյոյոր, ընկերնե՞ր,
Հասկանո՞ւն եք արյոյոր հիմա քե-
ինքա-ն եմք ունեցել մնջը է՝
Պեր-Լաշեզի պատեր:

Ապա հաջորդում են Կրեմլյան պատր, Լենինը, դասակարգը, հարակից այլ հասկացություններ և, քվում է, անկողմնակալ սկսված զրույցը վերջանում է բանաստեղծի բացահայտ բարողով.

Լսե՞ք, լսե՞ք, լսե՞ք...

Այդ բաղերի վրա

Շուառվ կելնե արևը, որպես դահիճ...

Հրապարակախոսական բնույթի, զաղափարախոսական-քարոզական այս պոեմներին /ռադիոպետների, «Սաամրոլ» և այլն/ բնորոշ է տրամադրության ջղային լարվածությունը, շտապղականությունը, արագ ոիքմը, որի խթանը տարրեր պատճառներից կարող է առաջանալ: Մի կողմից դա զանգվածների վրա ազդեցու, իր հակառագ նրանց քելադրելու, իր խոսքը ժամանակի սիրմին համապատասխանեցնելու, գուցե նաև բարձր ներշնչանքի արդյունք կարող է լինել, մյուս դեպքում՝ պարզապես անհատական խառնվածքի դրսւորում:

1920-ական թվականների Չարենցի պոեմներից շատերին բնորոշ է գրականության պայմանականության խախտումը, երբ հաճախ բնարական հերոսը, պատմողը կամ նույն ինքը՝ սկզբից չեղոք դիրքերից հանդես եկող բանաստեղծը, ուղղակի իր անունից, իրքն որոշակի ֆիզիկական անձ, դիմում է ընթերցողին: Չուզենալով իր անձը քողարկել անանուն բանաստեղծի դիմակի տակ, օրինակ, «Ստամբոլ» պոեմում, նկարագրելով «միջազգային պոռնիկ» Սաամրոլի բարքերը՝ զրում է.

Զարմանո՞ւն ես, ի՞նչ է, Չարենց:

Օ զլիարկդ համիք:

Պարո՞ն,

Հասկանո՞ւն ես՝

Նայի՞ր՝

Դա իրենց

«Հիմնական Օրենքն» է պարում:

Այս պոեմում հեղինակի վավերական անվան ելշատակումը մեր կարծիքով կապված է ոչ այնքան հեղինակ-պատմող-հերոս հարաբերության, որքան պոեմի երապարակախոսական բնույթի հետ: Ուղղակի դիմումները («Դու ապրու՞մ ես դեռ, սուրբան Ֆարի՞ն», «Էֆենդի՛՛, Ֆրա՛ք եք հազել դուք: / Սիսամ ֆեսն է ձեր այդ, որ հնից է»), սեփական ստեղծագործության հերոսների ելշատակումը («Դեռ կա Ային ճավաստի»), քաղաքական բացահայտ հակադրությունը («Ու հետքը սուրբանի ձեռքի/Արյունու ճակատից երկրի/Կրերե-/Թուրք կոմսունող») պոեմը դարձնում են երապարակախոսական, թեև պոեմների մեջ նման դասակարգում գոյություն չունի:

Պոեմ անվանված ստեղծագործություններից շատերը ավելի շուրջ քնարական պարեսակի մենախոսություններ են / «Հատված», «Խաղաղության ռազմո».../, քան պոեմներ, որովհետև չունեն զարգացող դիմաշար և ընդհանրապես պոեմի հիմքում ընկած որևէ իրադարձություն: Այդ պոեմներում հեղինակն ունի ասելիք, որ հաճախ պայմանավորված չէ որևէ իրադարձությամբ, այլ ընդհանրական խոհ է:

* * *

Մի դիմարկում նա: Քնարական-սուրյանկատիկ կողմի դրսնորման առումով Չարենցի պոեմները նման չեն ոչ իր անմիջական նախորդների՝ Թումանյանի ու Խսահակյանի պոեմներին, ոչ էլ ավելի վաղ շրջանի գրվածներին / Ալիշանի, Պատկանյանի պոեմներ/: Չարենցին նախորդած գրողների պոեմներում որոշակի անջրապես կա հեղինակի և հասարակության միջև, որն ավելի է սրվում ոռմանտիկ քանաստեղծների մոտ՝ անհատ-հասարակություն հակադրության համատեքստում: Հովհ. Թումանյանի պոեմներից բերևս միայն «Մարտ»-ում է, որ հեղինակը ընդհանուրի ենա է, խոսում է ընդհանուրի անունից մի քանի դրվագներում, ինչպես՝

Պաս չնմք էնտեղ մնմք ուտում..

Կամ

Խաղում էնք, վազվրզում
Գույն-գույն մանրիկ ավազում և այլն:

Սակայն նույնիսկ այս պարագայում հեղինակը ընդհանուրի մասին պատմում է իր անունից.

Անա պատմեմ ճեզ մի դեպք,
Մի պատմություն, որ երբեք
Հիշատակվ տըխրայի
Սըրախս համզիսա չի տարի:

Մնացած բոլոր դեպքերում թումանյանն իրը էայիկ բանաստեղծ, անտեսանելի ճնորով շարժման մեջ է դնում աշխարհն ու մարդկանց, որոնք ապրում ու գործում են «ինքնուրույնաբար»: Ի տարբերություն Թումանյանի՝ Չարենցը միշտ մերկա է իր ստեղծած աշխարհում:

Չարենցի պարագայում որքան էլ պատմողի վերափոխված հեղինակը իր եղանական հույզերմ է արտահայտում, պատումի մի պահի անհատական հույզերը վերածում է հավաքականի, և հեղինակ-հանրություն անջրապես վերանում է, հույզերը դառնում են ընդհանուրը: Դա շատ լավ տեսանելի է «Սոմա» քնարական պոեմում Պոեմի մուտքը հեղինակի հուզական խոստովանությունն է.

Որպես քուրմը Գանգեսի,
Կարուտակեզ, սիրակեզ-
Կյանքս տվե-լ նմ լուսիդ
Եվ երգում նմ քեզ:

Այս անհատական հուզական տրամադրությունը հաջորդ հատվածներում շարունակվում է՝ վերածվելով Սոմային ուղղված ներքողի: Բայց էլ ավելի առաջ զնալով՝ քանաստեղծը երաժարվում է անհատական ընկալումից, իր ես-ը ծովում մենք-ին՝ դառնում ընդհանուր տրամադրությունների երգիչը.

Վառե-լ նմք հիմա աշխարհը նորից,
Ուխտի նմք եկել խնմք ու խնլազար.
Օրինվի՛ բող քո անունը նորից,
Որ հուր դարձրեց մնք սրանքը քար:

Ապա ընդհանուրին ճուզված անհատը, նրանց հետ միասին երավիրում է շորջապարից դուրս մնացածներին, արդեն ոչ իր անունից, այլ ընդհանուրի:

Հե՛յ, հետավոր ընկերներ ու նորայրներ,-
Դուք չե՞ք լսում, ճե՛զ նմք կամչում,-
Զկարք ու ու սեզ,
Եկե՛զ, մսե՛զ շորջապարը մնք-
Եկե՛զ, եկե-ք:

Վերջին՝ 9-րդ հատվածում հեղինակային ես-ը կրկին առանձ-մասում է, Սոմա երևույթի կամ խորհրդանիշի ընկալումը դարձ-

Յում անհատական-սուրյեկտիվ հուզապրում.

Կյանքու կմարի՝ եին, չնշին մի կայծ
Զո ոսկի երում-
Քայց վառվի- պիտի սիրաս մոխրացած
Զո բոլոր գալիք արշապումներում...

Ի տարրերություն «Սոմայի», «Ամրոխները խնդագարված» պումբամ քանաստեղը կոռքից է դիտում իրադարձությունները, նա մասնակից չէ գործողություններին, բայց անունից չի խոսում, այլ բոլորի մասին խոսում է եերոսի անունից: Պոեմի քնարականությունն այստեղ դրսուրվում է ոչ թե հեղինակային քնարական զեռումների, այլ իրադարձությունների սուրյեկտիվ գնահատման մեջ:

Ե՞րգ էր սիրազ ամեն մեկի, երգ էր հայացը կրակուա.
Վառվում էր սիրազ ամենքի, որպես կարմիր մի առավուա:

Որշակի վերապահությամբ պոեմի սկիզբը միայն կարելի է ընդունել իրքն ես-ի ընդգծված դրսուրում:

Հետո-~, մատիկ ընկերներին, - աշխարհներին, արևմերին,-
Հրանման եռակիներին:

Քայց, միևնույն ժամանակ, հիշատակված տաղերը կարելի է ընկալել իրքն կովող ամրոխների դիմումը պայքարով տողորդական մեջ:

Ողջակիզվող եռակիներին- ողջու-յն, ողջու-յն:-

Կոռքից դիմաված իրադարձությունների այս համապատկերում հեղինակի ներկայությունը պեսար է փնտրել դեպքերի նկարագրության մեջ:

Կարծում ենք, որ հեղինակ-եերոս-կերպար-ընթերցող շղթայի օղակների նման սերտացումը թվարկված պոեմներից շատերում արդյունք է ոչ թե գեղարկեստական մեթոդի, գրական սեռի կամ ժամանակին առանձնահատկության, որքան պայմանավորված է հեղինակի աշխարհայացը ու գեղագիտությամբ, ժամանակի տիրապետող գաղափարախնտարյամբ: Թեև եերոս-ամրոխ հակադրությունը առավել բնորոշ է ոռմանտիզմի գեղագիտությանը, քայց ունալիստ հեղինակները ևս, առավելապես քանաստեղները, որոնք այս կամ այն չափով իրենց քնարական հույզերն են ներկայացնում, որոշակի տարածությամբ քաժամված են այն ընթերցողից ու հասարակությունից, որի համար գրում են: Մեր ամենասիրելի ու մարդասեր թումանյանը, որ կարելից սիրով գրում է իր աշխարհի ու մարդկանց մասին, վաղուց արդեն նրանցից մեկը չէ, այլ նրանցից դուրս կանգնած մի անհատ, որ դրսից է նայում,

այսինքն արտաքին հայացքով է նայում քնաշխարի մարդկանց: Հրանտ Մաքենոյանը հարցագրույցներից մեկում, եիշերով Լ. Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» վեպի ոչ հանրահայտ ներու Դանիլային, նկատում է, որ Տոլստոյը կարողացել է նրա այքերով նայել կյանքին և ավելացնում է: «Քայց ոչ Պուշկինը, ոչ Գոգոլը, ոչ Շերսպիրը, ոչ Թումանյանը, ոչ հայ դեմոկրատական մեծ գրականությունը, ինձ քվում է, կյանքին չեն նայել Դանիլայի այքերով: Հայ գրողներից շատերը գյուղացու որդիներ էին, քայց, այնուամենայիշվ, կյանքին նայում էին «ազնվական» հայացքով»¹: Սա միայն էականմի խնդիր չէ: Չարենցը մտնում է այն դասակարգի շարքերը, որի մասին գրում է: Սա էլ, իհարկե, տաղանդի խնդիր չէ, այլ աշխարհայացքի, ինչպես նկատեցինք վերևում: Այս միաքը կարելի է շատ ավելի պարզ ձևակերպել. Չարենցը եթե իր նկարագրած բանվոր դասակարգի շարքերում չէ, ապա միևնույն է, նրանց կողմից է: Դա հստակ երևում է «Ամենապոեմի» սկզբում: «Ես Հայաստանցի պոետ, - գրում է Չարենցը, - բոլորի», բոլորի համար երգում են» և ապա հաջորդ տաճ մեջ ճշգրտում իր դիրքորոշումը.

Քայց ինչու՝ միայն ես երգեմ,
Միայն ես, և ո՛չ թե նրանք,
Որ օրեղը այս հոլմածնն
Գրինել են անցյալի վրա:

«Ամենապոեմը» Չարենցի այն գործն է, որտեղ առաջին անգամ նա վիրձում է կերպարներ ստեղծել, ուստի ուշագրավ են կերպարաստեղծման նրա առաջին փորձերը: Նա փորձում է մենք-ի ընդհանուր զանգվածից առանձնացների, քայց դա նրան մասսամբ է հաջողվում: Պողոսի, Համոյի ու Սոլոյի կերպարներում նա տեսնում է ընդհանուր դասակարգային, քայց ոչ մարդկային-անհատական-անճնական հատկանիշներ, ուստի նրա ստեղծած այդ կերպարներն ավելի շատ դասակարգային կաղապարներ են, խորեղդանիշներ, քան միևնույն ու արյուն ունեցող անհատ մարդիկ: «Պատմություններ կերպում են ժողովուրդները և ոչ թե անհատները» մարքսիստական գաղափարախոսությունը ունենում է որոշակի գեղագիտական հետևանքներ: Պոեմի հերոսներ են դառնում դասակարգային եղոքերանության կրողները՝ բանվոր Պողոսը, խանութպան Համոն և վարժապես Սոլոյն, այսինքն դասակարգային շերտավորումը ներկայացնող մարդիկ: Դասակար-

¹ Հրանտ Մաքենոյան, Ես ես եմ, Երևան, «Ոսկան երևանցի», 2005,էջ 279:

գային գաղափարախոսությունը խառնվում է գեղագիտական սկզբունքներին. անգամ երգելն ու ստեղծագործելը դառնում են բանվոր դասակարգի մեջաշնորհը.

- Ողջու-յն, բյորիանձար ընկն' ք.-

Հանքագո-րծ,

Հանքափո-ր,

Հացրու-խ...

Այս:

Ինչու միայն ես:

Թող բոլո՞րը նրանք - երգեն,

Բոլորի՞ն, բոլորի՞ն, բոլորի՞ն-

Երգեն:

Ֆուտարիխտական եռվերով գրված այս ստեղծագործության մեջ, որտեղ նկատելի է կյանքի արագ սիթմի համարժեք ստեղծման ճիզզը, Պողոսի կերպարաստեղծման մեջ Զարենցն անգամ կիրառում է Սայակովսկու հմարանքներից մեկը: Վերջինիս «Արտասովոր արկած պատահած Վաղիմիր Սայակովսկուն ամաօք դաշայում» ստեղծագործության մեջ, երբ պատկերվում է տսկալի շողը, բանաստեղծի երավերով արևը եյուր է զայիս նրան: Օրվա շոգ պահին է դա կատարվում.

Արցունը սահեց իմ աշքերով,
տապար հոգիս էր համում...

Զարենցի «Ամենապոեմում» ևս երաշը կատարվում է, երբ

Այրում է արևը եփող,

Խանձում է ջղերն հոգնած...

և

Եվ երաշը... այնպիզ պա-րզ եղավ...

Համեսք բանվորի ճակատից

/Տոր էր, շոգն ասում էր՝ զնա' /-

Մի կարի քրաինք ընկավ

Փողոցի փոշու վրա:

Հնբերցողին հայտնի է սրան հետևող ֆանտաստիկ պատկերը՝ քրաինքի կարիից բյուրավոր բանակներ են ծնվում: Այդ ֆանտաստիկան Զարենցին պետք է բանվոր դասակարգի ուժը ցուցադրելու համար, Սայակովսկուն պետք էր բանաստեղծի՝ իրքն մարդկանց լուսավորողի դերը ընդգծելու համար.

Լոյս տալ ամենուր,

Մինչ հատակը վերջին օրերի,

լոյս տալ և ոչ մի առարկություն:

Սիս լոգունքն իմ

և արևի:

Երևակայության քմահաճույքը իրական դարձնելու նպատակով երկու բանաստեղծներն էլ ընտրում են օրվա ամենաշոր պահը, որի ազդեցության տակ մարդ կարող է հայուցինացիաներ ունենալ:

Այսպիսով, «Ամենապոեմում» Զարենցի կերպարաստեղծման փորձերը մնում են ֆուտուրիստական որոնումների շրջանակներում և ուժն ավելի գաղափարական, քան գեղագիտական արժեքը:

Եվ ահա հեղափոխական պարուից, դասակարգային սխեմա-կերպարներից հետո Զարենցն ստեղծում է եղանական խորք ունեցող բարդ ու դրամատիկ մի կերպար, որն իր մեջ խացնում է ազգային ողբերգությունը, մարդկային անհուն ցավը, արժանապատճենության սրված զգացումը, վիրավորանքը, բայց և միաժամանակ դաժանությունը, անզուսակ ու գուենիկ վարքագիծը, անվերահսկելի արարքներ բույլ տալու ինքն իրեն վերապահած իրավունքը... Դա խմբապես Ծավարշն է: Եվ հեղինակային ոչ մի միջամասություն, գործողությունները կարծես ընթանում են իրենց հունով, ինչպես էակիկական պոեմում: Պատմողը պոեմում հանդիս է զայիս իրքն կողմնակի դիսող, որ առարկայորնն ներկայացնում է հերոսի խոհերը, հիշողություններն ու վարքագիծը: Այսինքն՝ Ծավարշը էակիկական հերոս է, որ պատկերվում է իր իսկ արարքներով: Սակայն դա չի նշանակում, որ պոեմը գուրկ է քնարականությունից: Քնարականն այսաեղ դրսուրվում է եերոսի խոհերի միջոցով, նրա ներքին տագնապաներում, հիշողության կայծկացաղ պահերին:

Երգում էր Ղաշաղը:- Թայարի՝ էր, թե ն՞որ

Թուրքերն, որ լսել էր Ծավարշը.- ն՞որ:

Ծավարշի ներքին ձայնը կարծես «զում է» հեղինակը, բայց քնարական հուշը Ծավարշինն է.

Աղմուկ, ճիշ, լաց, սմբակների շոինը,

Ինքը, նստած սև ծիմ, ծեռին մասուզեր,

Փափախութեան դրած, մի ճեռով պիմու

Գրկած ճիռ բաշը՝ արշավում էր...

Կերպարի հիշողություններն են առաջ մղում գործողությունը: Անգամ այն դեպքում, երբ թվաւ է, թե եերոսի անունը ուրիշ՝ երկրորդ մի մարդ է հիշում, Ծավարշն ինքն է իր մասին երրորդ դերով մտածում.

Զամնարի փերի էր, կիմ չէր, չէ.
Չեր տեսել Չավարշը այդպիսի կիմ...

Այսինքն Զարենցը դիմել է կերպարաստեղծման ամենաարժանահավատ սկզբունքին, այն է՝ գործող անձը կերպարվում է իր իսկ խոսքով, գործով, պահվածքով՝ առանց հեղինակային բացասարթությունների: Բայց դա ամենին էլ չի նշանակում, թե պատմող հեղինակը կատարելապես ճետնպահ է մնում երևոյթները զնահատելու:

**Հետո հարրեց Չավարշը զայլը արյունով է հարրում,
իսկ Չավարշը - մի զայլ էր, որ կորցրել էր մի եղ-**

Իհարկե, Չավարշն էլ իր մաքում կարող էր ինքն իրեն զայլի հետ համենատել, բայց ինքն իր մասին չէր կարող ասել «Հետո հարրեց Չավարշը»: Այսուհետև հարբած Չավարշի գործողություններն ընթանում են նրա ներքին խոհի ու հիշողության լուրյան պայմաններում: Հարբածի անջատված զիտակցությունը Զարենցին իիմք չի տալիս փորփիրելու իր հերոսի ներքին աշխարհը, ուստի նա հետևում է Չավարշի արտաքին արարքներին՝ գործողությունների շարունակական պատմությունն արդեն պահելով պատմողի ձնորին: Զարենցը համադրել է կերպարաստեղծման երկու սկզբունքները՝ խոսեցնել, խորհել ու գործել տալ հերոսին և հեղինակային զնահատող վերաբերմունքով ներկայացնել նրան: Հենց այս սկզբունքների համատեղ կիրառությունն էլ տվել է փայլուն արդյունք՝ հնարավորություն տալով սանդենու խոր ու դրամատիկ մի կերպար:

Հստ էության կերպարաստեղծման նույն սկզբունքն է գործում նաև «Դեպի լազք Մասիս» պոեմում: Դրանք Զարենցի թերևս ամենահաջողված պոեմներն են թե՛ պատմական ճշմարտության վերհանման, թե՛ հոգերանական խորքի, թե՛ կերպարների հարստության և թե՛ գեղարվեստական վարպետության առումով: Այս պոեմում ևս քանարկան-հուզական զեղումները արտահայտվում են հերոսի միջոցով, Արովյանն է վերապրում իր քաղցր տենչերն ու երազները: Չարլոտա Շուլցի հիշատակի արթացումը թե՛ Արովյանի սրտում ու նրա խոհի միջոցով, բայց, իհարկե, հեղինակային տեսանկյունից:

**Երիտասարդ էր կուրծքը հեշտանքով լի,
Բարակ մատներն ինչպես սիրո տավիդ-
Սորմքում էր իր սիրուը անհում ցավից,
Երբ պիտում էր պատկերն այդ մեղսալի...**

Մինչև պոեմի վերջին առղջ Զարենցը հավատարիմ է մնում կերպարաստեղծման իր որդեգրած սկզբունքին. թե՛ սիրո հիշատակները վերապրելիս, թե՝ «Վերջի» խորհուրդը տագնապով քննելիս, թե՛ Մասիսի վերելքը եիշելիս ընթերցաղի դիտակենաում Արովյանն է իր խոհերի եետ, որին հեղինակ Զարենցը չի միջամտում: Առանձին առղեր կարող են պատկանել և՝ հեղինակին, և՝ հերոսին, ինչպես՝

**Գիշերը չէր քննի: Հոգմած էր, վաստակած,
Խոհերը խանճիսուար և վրովյալ-
Հոգմած էր ու տասուր, երբ դուրս եկավ սակայն-
Առավուտավ վեհուրյամբ բովկած՝
Զօց համկարծ իրն այնքան քերև...**

Արանք, անշուշտ, պատմողի խորքերն են, բայց կարող էր իր մասին այդպես մտածել նաև հերոսը: Այս պոեմում տարածությունը կրծամկում է նախ պատմողի ու հեղինակի միջև: Մակայն երես հեղինակն ու պատմողն ունեն նույն դիտանկյունը, նրանց միջև տարրերություն չկա, ապա պատմողն/հեղինակը/ ու հերոսն ունեն տարրեր կենսագրություն, քանի որ պատմողը չի կարող կիսել Արովյանի հուշերը, որոնք վերջինիս սեփականությունն են: Այսաեղ արդեն նրանց միացնողը գաղափարների հարազարտությունն է, որը չի կարող դերանվամ շփոք առաջացնել: Դա ակնառու է դառնում լեզվական հարթության մեջ, երբ պատմողի խոսքը սերտորեն ծուլվում է հերոսի խոհին, սերտածում նրան, և այնպիսի տպավորություն է առաջանաւ, թե նրանք մտածում են նույնակերպ: Ըստ էության դա այն է, ինչ Մ. Բախտահնն անվանում էր նույն արժեքային համակարգի պատկանել: Այս պոեմում խոսքի հեղինակն կարելի է դիտարկել «նա» դերանվամ կիրառությամբ: Արովյանի խոհի մեջ «փերը» դերանունն է, պատմողի խոսքի մեջ՝ «նա»: Այսպես:

**Դեմք-դաշտ էր անծայր, իսկ հետպահ -Մասիսը,
Լյատն այն վսիմ, որի ճամապահով մի օք
Բարձրացն էր իմքը և սաոցամիսա
Գեղեցկությամբ գերվելի...**

Զարմանալին այն է թերևս, որ պատմողի /հեղինակի/ ու հերոսի հայացքների միջն հեռավորություն չի մնում, «նա» և «փերը» դերանուններն այնպես են հաջորդում իրար, որ պատմողն ու հերոսը կարող են շարունակել խոհը: «Նա զնում էր կրկին դեպի հեռուն այն լուրքը» առղջ պատմողինն է, քանի որ Արովյանն իր մասին չէր կարող «նա»-ով մտածել, բայց հաջորդ՝

Դեպի լառը անհաս ու վնամիսա,-
Դեպի գագարը բարձր, որ իր ժողովուոք

տողերում «իր» դերանունը կարող էր օգտագործել հերոսը՝ Արովյանը, այլապես պատմողը պիտի ասեր՝ նրա ժողովուրդը։ Շարունակությունը նույն ոգով է։

Դեպի գագարը բարձր, որ իր ժողովուրդը
Համարել է հավանար իր գոյության խարիստը,-
Որ ճաշակն այնան հավերժական հանգիսա...»

Եթե դերանվան նման կիրառությունը լեզվական սխալ չէ, ապա հարցը պետքիկամից տեղափոխվուս է հոգերանական ու բարոյական հարրություն և բույլ տալիս եզրակացնելու, որ Չարենցը ներակացության համար թերեւ ներելի է պատմոլից անցումը հեղինակին /քափանցել է իր հերոսի հոգեզիտակցական աշխարհի խորքը և լիակատար համաձայնության եկել նրա հետ։ Իզուր չէ, որ չարենցագիտության մեջ բազմիցս զուգահեռներ են տարվել Արովյանի ու Չարենցի հոգեվիճակների միջև։ Զուածնական առումով, հեղինակ-հերոս հարաբերության քննարկման դիտանկյունից կարող ենք ասել, որ տեղի է ունեցել հեղինակի ու հերոսի միահամությունը, որն ավելի շատ արտահայտվում է հերոսների ներաշխարհում, քան զործողությունների մեջ, ինչպես նաև հեղինակային խոսքի սիրմի արագությամբ։ Չարենցի կարևոր նորամուծություններից մեկը բանաստեղծի և հանրության միջն տարածության կրծատումն է։ Ի դեպ, այստեղ աներածեցած է մի վերապահում։ Խոսքը վերաբերում է նրա հանրահայտ պոեմներին, և նշանակած է իր կարող բնորոշ լինել կյանքի վերջին շրջանի ստեղծագործությանը, որտեղ պիտի պատճեառում են բանաստեղծի հիասքափությունը, լրվածության և հանրային կյանքից մեկուսացման արամադրությունները։

Եղիշե Չարենցի պոեմների ներժամանական հատկանիշների բազմազանությունը անսպաս նյութ է տալիս հետազոտողին, որը չի կարող սպառվել բույլի մի քանի դիտարկումներու։ Հուսանք, որ արվածը առիք կղարճա ուրիշների ավելի լուրջ ուսումնասիրությունների համար։

ՍԱՍԿԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԵՂԻԾԵ ԶԱՐԵՆՑ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱՋ

Ե. Չարենց վիթխարի բանաստեղծական անհատականությունը, որ սերունդների համար «տղի և ընթացք» էր իրականում, «իր օրերում» նաև ամենահուսալի կամորջն էր անցյալի ու գալիքի միջև։ Իր բանաստեղծական սիրանքով նա հսկայական ներգործություն է ունեցել ոչ միայն ժամանակակիցների, այլև իր հաջորդների մտածողության վրա՝ պատգամելով և մատնանշելով ազգային միասնությամբ հայրենի սրբությունների պահպանության ու փրկության միակ ճշմարիտ ճանապարհը։

Անցյալներում առիք ունեցել ենք զրելու Չարենցի և իր նախորդների գրական ազգակցության նախն՝ փորձելով պարզաբանել ժումայանի, Իսահակյանի, Սիհամանթոյի, Տերյանի հետագած ապրանույթ առնցությունները, մատնանշելով, թե Չարենցն ինչ էր ժառանգել իր մերժավոր նախորդներից։ Գրել ենք նաև «Դանթեականի երկու ըմբռնում։ Չարենց – Շիրազ» քեմայով, իսկ այսօր փորձելու ենք համառոտ ներկայացնել, թե չարենցյան գրական ախնակերպից ինչ են ժառանգել հետանդրները ու ժամանակով նրա անմիջական հաջորդ Հովհաննես։ Շիրազը։

1.

1920 – 30-ական թթ. Ե. Չարենցը գրականության իրական առաջնորդն էր, որը պարզապես իր հետևից էր տանում նորագույն շրջանի առաջին սերնդի բանաստեղծներին։ Լինելով հանճարեղ անհատականություն՝ նա առաջինն էր արժագանքում համաշխարհային գրական նորություններին, յուրացնում դրանք և հարրում իր ու հաջորդ սերունդների գրական ճանապարհը։ Իսկ նրա հետառդրները, որ հաճախ նրա բույլ կրկնօրինակներն էին թե՝ բովանդակության, թե ծեփ իմաստով, հաճախ էին սայթաքում Չարենցի՝ արդեն անցած զայրակղիչ ճանապարհների վրա, բայց նենց նրան էին մեղադրում «շեղումների» համար, որ իր իսկ նվաճած բնագծերից և իր հետառդրներից առաջ էր անցնում։ «Էպիկական լուսաբաց» ժողովածուի ծրագրային բանաստեղծությունները, «նոր քեմայի կառուցման» սկզբունքների և առհա-

սարակ նորագույն գրականության զարգացման ուղիների և հեռանկարների քննարկումներն ենց այդպիսի խոհերից էին ծնվել՝ իր և գրակալիցների՝ անցած ճանապարհին բույլ տված սխալները դատապարտելու և «մի նոր ու դժվարին վերելք» սկսելու գեղագիտական նպատակադրումով:

Գրականության ապագայով մտահոգ Ե. Չարենցը նոր սերմանի ստեղծագործադրությունների մեջ պիտի վիճարեր իր երազած գրողներին, խրախուսեր ու քաջալերեր նրանց թեկությունը բայց հուսադրությունը բայցերը: Այնպես որ, պատահական չէր ոչ միայն Ն. Չարյանի, Վ. Նորենցի, Վ. Ալազանի, այլև Վահան Գրիգորյանի, Արագածի նման բանաստեղծների հանդեպ Չարենցի առավելագույն բարյացականությունը: Առավել դժվարին էր մեծ տաղանդների Բակունցի, Մահարու հանդեպ չարենցյան վերաբերմունքը հատկապես 1930-ական թթ. քաղաքականացված գրական բարդ մբնուրառում, ուր Չարենցի կողմից զնահատվող երիտասարդ գրողները նրա նման արժանանում էին, մեղմ ասած, ոչ բարյացական վերաբերմունքի: Ի՞նչ ամեն ժամանակն ու մբնուրառ երաշալիորեն ճանաչող Չարենցը արժանավորներին բարձրածայն զնահատե՛ր, թե ոչ: Այսպիսի առավալից երկության մեջ էր նա, երբ գրական ասպարեզ էր մտնում Հովի. Ծիրազը, և նրանց հարաբերությունը չէր էլ կարող նուածից ավելի ջերմ լինել: Այդ հարաբերությունը, որ եղել է գերազանցապես ստեղծագործական բնույթի և բնական պատճառներով անձնական մտերմության չի վերաճել, հետևյալ շրջափուլերն ունի:

Առաջին շրջափուլում Չարենցի ողջության վերջին տարիներին՝ 1934-1937 թթ., եղել է մեծավաստակ հանճարի և նոր-նոր գրական աշխարհ մուաք գործող պատանու ընդամենքը մի երկու բռուցիկ հանդիպում՝ վերջինիս համար խիստ ապավորիչ:

Երկրորդը, որ Չարենցի կորսայից հետո էր և առավել տևական, իր ներափուլերն ունի՝ մինչև 1954 թ. Չարենցի արդարացումն ու վերականգնումը և նրանց հետո՝ մինչև Հովի. Ծիրազի վախճանը 1984 թ.:

Հանգամանքների բերումով Հովի. Ծիրազի գրական մուաքը գուգաղիպել էր Չարենցի գրական կյանքի վերջին տարիներն: Ժամանակի գրական կյանքին ուշի ուշով հետևող Չարենցն իր տեսադաշտում էր պահում բարձրացող և ապագա խոստացող օժանական ծիլերին: Շատերի մեջ նա այդպես նկատել էր նաև հետեղեռնյան սերմանի՝ որրանցային բավկաներով անցած պատանի Ծիրազին:

Դեռ «Գարնանամուտը» լույս չէր տեսել: Սակայն ժամանակի գրական մբնուրառ այճպիսին էր, որ Ա. Խանջյանը՝ Հայաստանի այն ժամանակավա Կենսակոմի առաջին քարտուղարը, մի կերպ էր կարողանում զայել նախկին ասոցիացիականների խմբակային բաքուն չարամիւ պայքարը նախկին նոյնմերականների դեմ, բոլոր հնարավոր միջոցներով պաշտպանում էր հայածանքների թիրախ դարձած Ե. Չարենցին և մյուս առողջ գրական ուժերին: Մեծ կարևորություն տալով գրականությանը՝ ճամանակամքը նաև անծամք էր այցելում հանրապետության երկրորդ քաղաքը՝ Գյումրի՝ հետևելու տեղի կենդանի գրական կյանքին: Այսուել էլ նա «Սանածագործ» գործարանային թերթում կարդում է Հովի. Ծիրազի «Թոնիրները» բանաստեղծությունը:

Եթե հավատանք Հովի. Ծիրազի որրանցային ընկերներից մեկի՝ ականատես Ա. Գրիգորյանի վկայություններին, ապա Ա. Խանջյանը նախապես ծանոթ է եղել Հովի. Ծիրազ բանաստեղծին: Իր «Պատումներ Ծիրազի կյանքից» հուշագրքում նա գրել է. «Կարդաց երկրորդ անգամ, ինքն իր համար, բայց և լսելի... Հետո ասաց. «– Բայց սպասեք, ո՞վ է ինձ պատմել այս տղայի մասին, Ալազանը, թե՝ Եղիշեն, Չարենցը: Եէ, Ալազանն էր, որ ասաց. «Եկել է մի նոր բանաստեղծ...»¹ (Խոսքը Ա. Խանջյանի մասին է, բնագծ՝ մերն են – Ս. Մ.)

Բերվածից պարզություն է, որ երկրի դեկավարը՝ Ա. Խանջյանը, Ե. Չարենցի հետ էր դիտարկում նորագույն գրականության խնդիրները, և Ծիրազ՝ երևույթը քննարկվել է այդ բարձր ուղրացում: Սա հավասարվում է և ուրիշ շատ փաստերով: Սակայն այլ խնդիր է, երբ նույն Ա. Գրիգորյանը ներկայացրել է Չարենցի և Ծիրազի, իրք, Լենինականում «կայացած» մի տևական բանավեճ, որի մասին ոչ Ծիրազը, ոչ էլ ուրիշ մեկը որևէ անգամ գրավոր թե բանափոր չի ակնարկել: Իսկ անհրաժեշտ հիմնավորումներ դեռևս գտնված չեն:

Ունանց այսօր նոյնիսկ անհավասարի կարող է քվալ այն իրադարձումը, որ Չարենցն իր ծոցանետքում արտագրած է եղել Ծիրազի «Նիազարա», «Հին աշխարհը չեմ տեսել» և մի այլ բանաստեղծություն: Բայց այն հավասար է ոչ միայն Ծիրազն ինքը, այլև Նվարդ Թումանյանը:

«– Լսել էի, որ Թումանյանի դուստրը՝ Նվարդը, Երևանում է՝ հյուրանցում, – ասել է Ծիրազը «Գարումի» թղթակցի հետ հար-

¹Տես Ա. Գրիգորյան, Պատումներ Ծիրազի կյանքից, Եր., 1987, էջ 79-80:

ցազրույցներից մնկում, – ուզեցի տեսնել, չտեսածն Թումանյանի կարուս առնել: Եվ ահա եռը դեմքով, եռը աշքերով Նվարդը: Երբ իմացավ ով լինելու, ճայնեց՝ այ տղա, մի քիչ շուրա գայիր, այսաեղ էին Չարենցը և իրավարան Գրիգոր Չուրարթը: Եղիշը ինձ և Գրիգորին ցույց ավեց, ծոցից հանելով, քո երեք բանաստեղծությունը. Ալազանից էր վերցրել արտագրել: Սեկը Նիհազարյի մասին էր, մնկը «Հին աշխարհը չեմ տեսել», մյուսը՝ չեմ եկչում: Չարենցն ասել էր՝ այս աղան ոչ մնկիս քրի տակով չի անցնելու»² (ընդգծ.՝ Մ. Մ.):

Ինչպես երևում է այս վկայությունից, դեպքին ներկա է եղել նաև հայտնի իրավարան, ԵՊՀ ինիմադիր դասախոսներից մնկը՝ հմուտ փաստարան Գր. Չուրարյանը: 1926 թ. նա է եղել Ե. Չարենցի դատապաշտպանը: 1962 թ. գարնանը կենսարանական մասնաշենքի դահլիճում իրավագիտության ֆակուլտետի ուսանողության հետ կայացած հանդիպմանը ջերմ ու բնութագրական մի ելույթ ունեցավ Հ. Չիրազի մասին՝ նրան զուգահեռելով Չարենցի հետ. «– Ո՞վ է ատում, թե Չարենցը զոհվել է, չկա. ահա կենդանի Չարենցը» և այլն:

Հանդիպումից հետո արդեն նեղ շրջանակում Հ. Չիրազը նրան խնդրեց մանրամասներ պատմել Չարենցի դատավարությունից: Այս դեպքի վերիշումը կարևոր նրբերանց է ավելացնում Ե. Չարենցի մի բանաստեղծության ստեղծման պատմությանը: «Դատավարությունից առաջ, – ասաց Գ. Չուրարը, – Չարենցին բացատրեցի, որ իր հանցանքը մեղմացնելու միակ միջոցը սիրո և խանդի պատճառաբանությունն է: Նա համոզվեց և խոստացավ, որ դատավարության ժամանակ կհաստատի իմ ինիմավորումը՝ ընդամենը մի «այլ» ասելով, բայց երբ ասացի, թե Չարենցը սաստիկ սիրահարված է Մարիանա Այվազյանին և փողոցում նրան տեսնելով այլ տղամարդու հետ՝ խանդից է կրակել, այդպես չէ», Եղիշե... Չարենցը ոչ միայն դա շիստատեց, այլև հերքեց սիրո և խանդի պատմությունը. «– Ո՞վ, ես սիրահարվելի այս Ժիու մոռորդությունը:» Հետո էլ զբեց «Զիու մոռոր» վերնագրով բանաստեղծությունը³:

¹ Տե՛ս «Բանաստեղծը մտորում է բանաստեղծության մասին» հարցազրույցը «Հովհաննես Չիրազի մասին» ժողովածություն, Եր., 1974, էջ 98 - 100:

² Տե՛ս նույն տեղը:

³ «Զիու մոռոր»-ը զրկել է Երևանի ուղղիչ տանը բանարգելությունից ազատվելու հետո՝ 1927 թ.: Ըստ Երկերի 4-րդ հատորի ծանոթագրության տպվել է «Մարտակոչ» մայիսի 15-ի համարում:

- Հանճարի պատահական սայթագրում է, - ասաց Չիրազը, գղումը ծանր եղած պիտի լինի:

Արևելքի և Արևմուտքի քաղաքակրությունը յուրացրած հանճարեղ Չարենցը, ճայած պատահու հետ իր ներքին որոշ անհամաձայնություններին, խորապես ըմբռնել էր բնածին բանաստեղծին, հասկացել էր նաև, որ դժվար է լինելու նրա գրական դաստիարակությունը, և այս խոսքն իրաք ասել էր:

Իր առաջին՝ «Գարնանամուտ» գրքի երատարակման պատմությունը հիշելով՝ Հովհ. Չիրազը վկայել է. «Գիրքը լույս տեսակ անմոռաց Ալազանի խմբագրությամբ և առաջարանով: Առաջարանը իր մեջ պարունակում էր նաև իմ ինքնակենսագրականը՝ 63 էջ⁴: Այդ ժամանակ Չարենցն էր պեսահրատի զեղարկեստական բաժնի վարիչը: Նա զնդիմացել էր Ալազանին՝ ասելով՝ «Ինչ է, կլսաի՞կ ես երատարակում, այսքան էլ երկար առաջարա՞ն մի պատահու երախայրիքի համար...»: Եվ Չարենցը առաջարանի 63 էջից կրծատում թողնում է 23 էջը: Բայց իման ով կարդա «Գարնանամուտ», կտեսմի միայն 3 էջը: Չարենցը Ալազանից գաղտնի իջել է տպարան և հանել է նաև 20 էջը՝ թողնելով միայն 3 էջը: Այս բոլորի մասին ես շատ ուշ լսեցի, իմացա, որ մեծ բանաստեղծը մտածել է իմ մասին՝ հանկարծ գրական փառքից զլիսապույտ չունեմա՞ն...»⁵:

Չարենցի հետ իր անձնական ծանորության մասին Հ. Չիրազը գրեթե ամեն անգամ այս էր պատմում: Սեր գրականության երկու մեծերն էլ՝ թե՛ Չիրվանզադեն, թե՛ Չարենցը դեմ են եղել Չիրազին «երես տալուն»: Չիրվանզադեի հայտնի խոսքն է՝ «գորգութեցնեք, բայց երես մի ավեր: Ընդհանուր աղմուկի մեջ ժողովրդական լիրիկա է թերում սա...»: Սրցանակարաշչնության ներկայացված է եղել Չիրազի «Սիամանրո և Խօնեարե» պոեմը: Սրցանակ արվելի է՝ 200 սուրբի, բայց պոեմի վերնագիրը չի նշվել թերում տպված մրցանակակիրների ցուցակում: Պարզվում է՝ պատճառը եղել է Ժյուրիի նախազահ Ե. Չարենցը: Հետազայում է Հ. Չիրազը բացել այդ գաղտնիքը՝ Չարենցի հետ ունեցած իր առաջին հանդիպումը վերիշելով: «Այսպիս եղավ իմ առաջին հանդիպումը Չարենցի հետ: Դեռ չէի տեսել նրան, մինչդեռ լսում էի երիտասարդ գրողներից, որ Չարենցը ուզում է ինձ տեսնել: Եվ

⁴ Այսինքն՝ 63 էջ էին Ալազանի առաջարանն ու Չիրազի ինքնակենսագրությունը միախան: – Մ. Մ.:

⁵ Տե՛ս «Բանաստեղծը մտորում է բանաստեղծության մասին» հարցազրույցը «Հովհաննես Չիրազի մասին» ժողովածություն, Եր., 1974, էջ 98 - 100:

ահա մի ոսկե աշուն Ռ. Զարյանի հետ հայտնվեցի Զարենցի տաճր:

— Դո՞ւ ես, Օնիկ, — ասաց Զարենցը:

Ես զարմացա, որ ինձ Օնիկ ասաց, քանի որ արդեն Հռվ-հաննես Ծիրազ էի, և միայն Ալազան էր ինձ Օնիկ ասում: Ի դեպ, այն ժամանակ կարծիք էր տարածվել, թե իրը Ծիրազը գրածանաչ էլ չէ: Երկի այդ պատճառով էլ Զարենցի երկրորդ հարցը եղավ:

— Ի՞նչ ես կարդացել Պուշկինից:

Ես լրեցի, Զարենցը կրկնեց.

— Ծանոթ ես «Եվգենի Օնեգինի»:

Ես թեպեա չէի կարդացել (բարգմանուրյուն չկար), ասացի.

— Ծատ է երկար:

Զարենցը ժապաց և ասաց.

— «Միամանք և Խօնքարեն» երկար չի, որ դրկել էիր մրցանակարաշխության: Իսկ ինձննից ինչ ես կարդացել:

Ես ասացի «Ամրոխմերը խելազարված», մեր դասագրքում կա: Զարենցը ծիծաղեց: Վրա բերի.

— Բայց Զեր ամենից լավը «Ես իմ անուշ Հայաստանի» տաղմ է:

— Որտե՞ղ ես կարդացել չէ՞ որ իմ ոչ մի գրքում չկա:

— «Գրական գոհարների»՝ մեջ, — ասացի ես:

— Ե՛, սիրելի պատանի, սիրելի Օնիկ, դա էլ «Միամանք Խօնքարեններն» էլ անցած էտապներ են...»:

Ես մտքիս մեջ զարմացա և խկույն կրահեցի, թե ինչու իմ «Միամանք և Խօնքարեն» պոեմի համար մրցանակ պանել են, բայց թերության պոեմի անունը չէին գրել ստացել էի 200 ռուբլի դրամ»² (ընդգծ. — U. U.):

Կարենը է Հռվե. Ծիրազի այն վկայություն՝ վերծուշը, որը մի կողմից հասկանալի է դարձնում, թե հետազայում ուղղորդող ի՞նչ ազդեցություն պիտի ունենար շարենցյան «Ես իմ անուշ»-ը Հռվե.

¹ Խուրը գրականագետ Հ. Սուրենարյանի կազմած «Գրական գոհարներ» (Թիֆլիս, 1922) բրեստոնախայի մասին է, ուր տպագրվել էր Ե. Զարենցի «Ես իմ անուշ Հայաստանի»: — U. U.:

² Ե. Զարենցը Հ. Ծիրազին չեր էլ կարող բացատրել, թե ի՞նչպիսի հարձակումներ են եղել իր վրա Հ. Սուրենարյանի «Գրական գոհարներում» 1922 թ. տպագած «Ես իմ անուշ»-ի պատճառով:

² Տե՛ս «Քանաստեղծ մտորում է բանաստեղծության մասին» հարցազրույցը «Հռվեաննես Ծիրազի մասին» գրքում, Եր., 1974, էջ 98 - 100:

Ծիրազ բանաստեղծի ազգային մասածողության վրա, մյուս կողմից հաստատում է Ե. Զարենցի իրական համակրանքը պատանի բանաստեղծի նկատմամբ: «Հանկարծ կինը ներս մտավ և ասաց, որ Զարենցի քնելու ժամն է, — շարունակել է Հ. Ծիրազը:— Եվ իսկապես, Զարենցը հատակին փակած ծիծաղ-նագույն վերմակի մտավ ու վայրկենապես կարծես հանգավ: Ես մի երկար հայացը զցեցի նրա դեղնադադարուկ դեմքին: Երբ անց-նում էի նրա մոտով, նա աշքերը բացեց և դեղնատերն ձեռքը պար-զելով՝ բռնեց ձախ դաստակից, նախ սեղմեց ամուր և ապա ասաց. «Սիրենի մանուկ, կարծում ես որ հանճարդ շարժվեց, աշխարհը կփրկե՞ս» (ընդգծ. — U. U.):

Հնագծվածներից պարզորդ երևում է, որ Ե. Զարենցը լավ է ծանոթ է եղել Ծիրազի ստեղծագործություններին, ճանաչել է պա-տանի բանաստեղծի ուժը անկախ «աշխարհը փրկելու» նրա հնարավորությունից: Հիշենք նաև, որ «Գարնանամուտի» առա-ցարանը Վ. Ալազանը գրել է ոչ թե 1935-ին, այլ դրանից ավելի վաղ՝ ծցքիտ՝ այդ առաջարանն ունի գրույան որոշակի տարե-թիվը ու ամսաթիվը՝ 1934 թ. սնպաններնի 15: Ուրեմն գիրը գեղար-վեստակամ գրականության բաժնի վարիչ Զարենցի գիտությամբ ու համաձայնությամբ մինչև այդ է պատրաստ եղել տպագրու-թյան:

Համալսարանի բանասիրական ֆակուլտետի երրենմեր ուսա-նող Հ. Ծիրազը եիշում էր նաև ցավալի դեպքեր՝ կապված հատ-կապես 1936 – 38 թթ. հայ գրողների ու մյուս մտավորականների բանատարկությանը, գնդակահարաւրյանը և այլ ողբերգական իրա-դարձությունների: Պատմում էր, թե ինչպիսի հնարամիտ հանդրգ-նությամբ էր բանաստեղծ Թնան Խաչյանը անձնագոհարար փրկել իրեն ստույգ վտանգից:

«— Զարենցի անունը տպողը կը ներ Զարենցի օրը. Էլ ուր մնաց կարդացաղը, — ասում էր նա: — Մի առիքով Գ. Արևյանն ինձ պաշտպանելու համար ասել էր, թե՝ նա մեծամիտ չէ, աշքովս ես տեսել, թե նա ինչպես էր Զարենցին դարի մեծահանճար բան-ստեղծ անվանում. արցունքներով թրջելով 1932 թ միհատորյակի էջերը...»

Այդքանը բավական էր: Նույն օրն իսկ հանրակացարանի ին սենյակ մտավ համալսարանի ռեկտորն իր շքախմբով: Կարծես իրար հետ մրցելով՝ իրերս, գրքերս ու ձեռագրերս պատուանից

¹ Խուրը տեղում:

փողոց շպրտեցիմ, ինձ՝ դռնից: Եվ պարտադրեցիմ, որ երեկոյան անպայման ներկա լինեմ կռմասնով ժողովին: Բազմամարդ ժողովը վարում էր քարտուղարը՝ խսկապես օժաված բանաստեղծ Թևան Խաչյանը, որը գոհվեց Հայրենական պատերազմում:

— Ընկերներ, բանասիրականի ուսանող Հովհաննես Կարապետյանը՝ նույն ինքը Հովհաննես Շիրազ բանաստեղծը, քոյլ է տվել Խորերդային ուսանողին անվայիլ արարք: Նա կարդացել է ժողովրդի քշնամի, եակախսորերդային բանաստեղծ Զարենցի արգելված զիրքը և արցունքներով քրջել նրա էջերը: Նրա այս արարքը ի ցույց ենք դնում և դատապարտում ուսանող երիտասարդությանը նման վասնգավար գայթակղություններից ենու պահելու համար: Ուսահ Հովհաննես Շիրազի համար առաջարկում եմ խստագույն պատիճ՝ հեռացնել կոմսոմոլից, այս՝ հեռացնել...

Բարերախտարար, ուրիշ կարծիքներ չեղան: Դեռ ուշիքի չեկած և չզգալով պահի լրջությունը՝ մոտեցա նրան, վախվորած շնչացի:

— Բայց ես կոմսոմոլ չեմ, ընկեր Խաչյան, ինչպե՞ս եք հեռացնում:

Ուղղակի բռունցքներով վրաս հարծակվելով՝ ինձ դահլիճից դուրս երեց:

— Դեռ հանդնում ես հակածառել՝ գոռաց բարձրածայն, կրկնում եմ հեռացնել կոմսոմոլից, հեռաց-մել...

Ուշ հասկացա, որ այդ պահին Թևան Խաչյանը գտել էր ինձ ավելի ծանր պատիճներից ազատելու, գուցե և պարզապես փրկելու միակ ելքը»:

Աղասի Խանջյանի ծանր ողբերգությանն առաջին արձագանքը Ե. Զարենցն էր, որի «Դոֆին Ասիրական» ստեղծաների շարքը համբողանուր սարսափի օրերին չտպպեց և հայտնի դարձավ նրա հետմահու արդարցումից էլ նրկար տարիներ անց: Այդ ողբերգությանը Ժամանակին անմիջարար արձագանքողներից մեկն էլ Հովհ. Շիրազն էր, որը 1930-ական թթ. մքնողորոտում ակնհայտ նմանություն տեսավ միջնադարյան վիպերգի հերոսի՝ բունավորումով դավադրաբար սպանված Սոկաց Միրզայի և Աղասի Խանջյան՝ Թիֆլս երավիրկելու և այնտեղ դավադրաբար գնդակահարվելու իրողության միջև: Հենց այդ օրերին էլ ամբողջացրել է իր «Սոկաց Միրզան» և հասկանալի պատճառով երատարակման ներկայացրել ուրիշ արքալով՝ 1934 – 35, այսինքն՝ Ա. Խանջյանի մահից առնվազն մեկ տարի առաջ:

«Գրական սերունդ» հանդեսի ղեկավարությունը, սակայն, ճամաշելով միջնադարյան վիպերգի հերոսի կերպարում մարմնավորված Աղասի Խանջյանին, տպագրելու փոխարեն մի գրությամբ ուղարկել է համապատասխան նարմիններին՝ երիտասարդ բանաստեղծին հասցեագրելով այն ժամանակների համար բաղադրական ծանրագույն մեղադրանքներ: Խնդիրը պարզաբանել է Շիրազն իմքը. «Սա,՝ զրել է նա,՝ այն պոեմի փշրանքներից է, որ որկել էի «Գրական սերունդ» ամսագրին, բայց տակովն արիմ: Բայց հետո իմացա, որ դավադրություն էր. մազից եմ պրծել. փրկել է միայն պատահի հասակս: Կեռչեի, քանի որ պոեմի տեսանկի բռղի հետևում երևում էր սպանված Աղասու լացակումած աշքերի անհույս հայացքը, – Սոկաց Միրզան ինքն Աղասին էր, որին կանչում են այլազգի տիրակալները և... սպանում, վասնզի ազգապաշտ էր... ուզում էր ծաղկեցնել մի բռու հողմ այս... մինչև հասնեինք այն ծովածիր Հայաստանին, և ահա հույսն սպանվեց, իդմ անգամ...»

Աղազանն ասաց, որ մազից եմ պրծել, հետո կիմանաս, հետո կասեմ, թե ուր են դրկած եղել պոեմն և զրպարտազիրը, – և իմացա, որ ամսագրի խմբագիրը և պատ քարտապարն էին գաղանագրել... Այդ երկու մարդակերներից մեկը Վանի գյուղերից էր և նոյնիսկ ծախսել էր իր հայրենակցին՝ Խանջյանին... Եվ հետո զրերը պարզելով՝ բացեցին ավելի վաթքարը, այն, որ Զարենցին կերել էին դրանք՝ այդ երկուոր և այլը, միասին, վասնզի Զարենցը տաղանդ էր, իրենք՝ պարզապես շնաხաւեր լուսնի վրա» (ընդգ. – U. U.):

2.

Զարենց - Շիրազ հարաբերության մյուս շրջափուլը թե՛ զուաստեղծագործական բնույթ ունի, թե՛ գաղափարական: Դրա վկայություններից է հետևյալ քայլակը:

Աշխարհ եկա՝ հայոց երգի կանքնեները մար տեսա. Նոր էր մարել վերջին ջանի, ու վշտերը քար տեսա. Միաբա մանուկ, ոտարորիկ, միաբա՛ բուրվառ արևի. – Միաբա ողի իմ երգի մեջ ու ջաները վառ տեսա:

Իրողություն է, որ Զարենցն իր հերոսական բնավորությամբ ու ողբերգական ճակատագրով, անվան ու ստեղծագործության

¹ Շիրազ Հովհաննես, Նորահայտ ստեղծագործություններ, հայտնաբերեց, գրի առավ ու կազմեց Ս. Մանուկյանը, Եր., 2002, էջ 11:

արգելման 17 տարիներին և հետո էլ խիզախ ու ժողովրդանվեր քանաստեղի լավագույն օրինակն էր Շիրազի համար: Իսկ Ե. Չարենցի «Ես իմ Սասիս սարն եմ սիրում» և «Պատգամ» բանաստեղծության մեջ զաղանագրված «Ով հայ ժողովուրդ, քո միակ վրկությունը քո հավաքական ուժի մեջ է» կարգախոսները ուղենիշ են եղել նրա ողջ ստեղծագործական կյանքի ընթացքում, մասնական մասիսներգության մեջ ու հայոց պահանջատիրությունը մարմնագործ երգերում: Անգամ «Միամանք և Խճնարե» պոեմում և այլ բանաստեղծություններում համդիպում են Չարենցի եիշյալ կարգախոսների նպատակային կիրարկումները: Ահա մի հասաված այդ պոեմից, ուր մեր ընդգծած հենց այդ նույն չափնեցյան պատգամի բառերով են սկսվում բոլոր տողերը.

Ով խիմ է հայ Սիրանը՝ անխուտա է, անաստված,
Հայ լեռներից գրկված հայը ծուկ է՝ ծովից դորս նետված:
Ժողովուրդ իմ, չի կտրվի քո սիրած քո Սիրիանից,
Զա լողն՝ ինձմով՝ քեզ կվանչե քո Գորքանից, քո Վանից:
Միան առորդ մայրենին է, հայրենին են մասիսված,
Փրկությունը այն կամուրջն է, ուր քո Վշտերն են կիտված:
Զա լեռները քեզ են կարուտ՝ քո վանքերով այն վսեմ,
Հավաքական իմ հուշերով էլ Սիրիանի ո՞րն ասեմ,
Ուժի առյուղ Կարճադրյա՞ւը, թե՞ երաշք ծովն իմ Վանա,
Մեզ յորներայր քո լեռների, ուր հովերն են նիրվանա,
Ե՛, ի՞նչ, երբ որք են Սիրիանը ու քաջերը Սիրիան...

Նոր-նոր արդարացվել էր Չարենցը և համրությանը ներկայացվել 1954 թ. միհամորյակով: Փոխվել էին ժամանակները, մարդկանց մասձողությունն ու եղանակները, ստալինյան մղձավանշից, իր ճայնը կեղծելու պարտադրանքից (սա Պ. Սևակի խոստովանությունն է - Ս. Մ.) մասմակիորն ազատված նոր սերունդը դատապարտում էր անհատի պաշտամունքը, և «աշխարհը ֆայտոն շինած, մարի որդակը լափող մեղծակատ կինառն» կամաց-կամաց կանգնում էր պատմության դատապանի առջև:

Անհատի պաշտամունքի վնասակար հետևանքները վերացնելու ընթացքում, սակայն, նախորդ ժամանակների երկյուղն ու վախը դեռ լիովին չեադրահարկած, սոռացության նաշից հառնում էին 1937-ի անմեղ զոհերը: Մեծ էր Չարենցի և նրա բախտակիցների կորսայան կովկիծը: Նրանց եիշատակի հավերժացման ու ստալինականության դատապարտման մեջ էական եղակ նաև Հովի Շիրազի դերը:

1954 - ից, երբ «հանցակազմի բացակայության պատճառով»

հետմահու արդարացվեցին գնդակահարկածներն ու վերադարձան արտորյալները, Չարենցին՝ որպես անմեղ զոհերի խորհրդապետի լանդումներից և նոր սերունդերին ընտելացմաններից ու առաջին արժնորադներից մեկն էր նա: Նրանց և հատկապես Չարենցի եիշատակին էր նվիրված «Անմեղության հուշարձանը» ծավալուն պտեմը, որը, սակայն, եղանակում-կրծատումներով՝ մի ընդունակ բանաստեղծության չափով, լայս տեսակ գրվելուց շատ տասը տարի անց՝ 1964 թ.¹: Շիրազի այս պոեմը 30-ականների մղձավանքային մթնոլորտի խիստ պատկերն է, որի առղերքում առանձնացված-ցայտունացված է բոլոր զոհերի խորհրդանշից Չարենցը.

Եվ ամեն մի գիշեր ահահար ամեն տուն,
Ամեն սիրու, ամեն դուռ կսպասեր,
Թե իման կմտնեն, կոանեն իր որդուն,
Իր հորը կամ իրեն կոանեն:

Կոանեն, կիանեն եղունգներն, աշքերը,
Որ ասի՝ «Քրավ, բույն են երկրին».
Ու մեռան խինդ ու սեր, ու դասավ երկիրը
Կոսկածի ծով կծիկ մի մքին:

Ու դարձավ Սիրիիր գերեզման բյուրերի՝
Այն իրավ փոքրամարդ մեծ դարուն,
Երբ դարը նմանվեց աշքարաց կույրերի՝
Զրպարտման սարսափը աշքերուն:

Եվ իման էլ ոչ մի զանգրահեր պատամի
Չի գտնի զերեզմանն այն կորած,
Ուր պոեմ է մեռյալ մոնչում կինդամի
Նոցա հետ, որ ընկան վախվորած...

1957 թ. Չարենցի ծննդյան 60 և մահվան 20-ամյակների ամխօրերին նա գրեց «Շիրազնամե» խորագրով, «1937 թ. անմեղ զոհերի ահեղալուս եիշատակին» ընծայագրով մի բանաստեղծություն: Հայաստանի ռադիոյի ուղղի եթեր հեղինակի ընթերցմամբ հեռարձակվեց այդ բանաստեղծությունը, և հաջորդ օրն իսկ փոխվեց ռադիոկոմիանի դեկավար աշխատակազմը: Դրանից հետո խորհրդային վերահսկիչ մարմինները և առաջին եթերին զւավլիտը կամ պետական զաղամիքի պահպանության կոմիտեն սկսեց ավելի աշակուրջ հսկել տպագրվող կամ հետարձակվող խոսքը և մամականդ Հովի: Շիրազի ստեղծագործությունները:

¹Տե՛ս Շիրազ Հ., Զնար Հայաստանի, գիրը 2, Եր., 1964, էջ 215-218: Թե որն է այս պոեմի գրության ստույգ թվականը, դեռ պետք է ճշակի - Ս. Մ.:

ՄԵԾ ՈՇՐԱԳՈՐԾԻ ՄԱՀԻց հԵՏՈ ԵՐԿԱՐ ՄԱՐԻՄՆԵՐՈՎ ՔՅՈՒՆԱԴԱՍՎԱԾ ԱՊԱՄԱԽՈՒ ԲԱՆԱՍԱՆՂԾՆԵՐԸ ՍՄԱՑԵԼ ԷԻՆ ԵԱՆ ԽԱՐԱԲԵՐԱՐԱՐ ԱՊԱՄԱ ԱՐՄԱԽԱՅՄՎԵՐՈ ՈՐՈՉ ԻՐԱՎՈՒՆՔ, ՍԱԼՎԱՅ ՈՅ ՈՐ ՀԵՐ ԱՊԱՏԿԵՐԱԳԵՆՈՒՄ, ՔԵ ԱՅԲ ԿԳՈՐԾԱՊՐՎԵՐ ԱՅՋՐԱԲ ՔՊՈՄ Թ ԱՊՈՐՔՈՒՄ: ԲԱՆԱՍԱՆՂԾՈՒՐՅՈՒՆԸ, ՈՐ ԳՐՎԱԾ ԷՐ, ԱՅՍԱԲՆ ԱՍԱԾ, «ԵՆ ԻՄ ԱՆՈՒՉ ՀԱՅԱՍՏԱՆԻ»-ի ԽԱՆԳՈՎ, ԽԻԱՐԿԵ, ԽՈՐԵՐԴԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՔԱԴՐԱԳԱԿԱՆ ԽԱՍԿԱՆԱԼԻ ԱՊԱՄԱՆՆԵՐՈՎ ՀԵՐ ԿԱՐՈՒ ՄԱՊԱԳՐՎԵԼ և ՄԻՆՉԵ ԽԻՄԱ ԷԼ ԱՃՄԻՎ է. ԳՐՆԵ ՀԻՐԱՎՈյԱՆ ՈՐԵԼ ԺՈՂՈՎԱԾՈՒԱՄ ՀԿԱ. ՍԱԼՎԱՅ ՃԵՄԱԳՋԻ ԿԱՄ ՄԵՐԵՆԱԳՋԻ ՄԵԽ- ՔՐՎ ԱՅԲ ՄԱՐԱԾՎԵԾ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵԶ, ԴԱՐՁԱՎ ԴԱԿԵԼԻՇՆԵՐԱՄ ՔԵՄԵ- ՔԻԾ ԱՐՄԱՍԱՆՎՈՂ «ԱՐԳԵԼՎԱԾ ԱՎԱՐՈՒ», ՈՐԻ ՎԱՅԵՐԸ ԽԱՆԱՊԱԳ ԱՊԱԽԱՆՉՈՒՄ ԷՐ ԱՐԴԱՐՈՒՐՅԱՆ ԺԱՐԱՎԻ ՀԱՐԵՆԳԱՍԵՐ ԽԱՄՐՈՒՐՅՈՒ- ՆԸ: Այդ ԲԱՆԱՍԱՆՂԾՈՒՐՅՈՒՆԸ, ՀԻՐԱՎՈՅԱՆ ԽԱՄԱՐԲՈՒՐ ԱՅԼ ԳՈՐԾԵ- ՐԻ ՆՄԱՆ, ՔՈՂԱԳԵՐԾՈՒՄ ԷՐ ԱՊԵԽԱԿԱՆՈՐԵՆ ՔԱՐԵՎՈՂ ԳԱԼՄԱՆԻՇՆԵ- ՐԸ և ՀԱՅՈԳ Եղենանի հԵՏՈՆԱԲՐՈՎ ՄԵԶ ԽԱՍԳՎԱԾ ԺԱՆՐԱԳՈՒՅՆ ԿՈ- ՐՈՒՄԱՆՆԵՐԻ ՈՒ ՆԱԽԱՄԱԿՆԵՐԻ, և 1937 թ. ԱՆՄԵՆ ԳՈՒԵՐԻ ՄԱՍԻՆ:

Գիտակցարար ընտրված էր Սայար-Նովայի կատարելա- գործած աշուղական մոխսամմազի բանասանղական տեսակը, որով գրված էր Խանճարեն «ԵՆ ԻՄ ԱՆՈՒՉ ՀԱՅԱՍՏԱՆԻ», ծեկ և կառուցվածքի իմաստով միակ տարբերուրյունն այմ է, որ Սայար- Նովան մոխսամմազի հեղատող տան փոխարեն էիմանականում գործածել է քառատող տներ, որին և հԵՏՈՆԵԼ են Չարենցն ու Շի- րազը, սակայն «Շիրազնամե» բանասանղուրյունը կազմված է վեցատող (նրբեմ՝ ավելի) տներից: Օգտագործված են Չարենցի կիրառած որոշ բառակապակցուրյուններ ու ոճական արտահայ- տուրյուններ, հանգարառեր, պատկերավորման-արտահայտչա- կան միջոցներ (ինչպես՝ անուշ Հայաստան, Խայերեն բառ, Հա- յաստան յար, Մասիս սարմ և սիրում և այլն), որոնք մերձեցնում, ազգակցուն հարազատացնում էին երկու բանասանղուրյուն- ներն ու նրանց հեղինակներին:

Շիրազի բանասանղուրյան մեջ Չարենցը գնահատվում էր որպես դարի մեծագույն բանասանղ ու նախատակ, վկա ու մարտիրոս, իսկ նրա կորուսաղ բանասանղը համեմատում էր համազայիմ կորուսաղ սրբուրյունների հետ, նրա լեզենդային կերպարն ստեղծում էր մեր ժողովրդի ողբերգական պատմուրյան, հայոց նվիրական անունների համապատակներում:

Վշախ մեզ է այրում է իմն հայ վերդի հետ քա վերքը բաց, Ո՞նց մոռամած վերիս պես խոր, դարիս պես նոր քա նրգը զամն, Ամենա կորած զերեզմանը՝ կորած, իմշան հողու գերված:—

Առանց Մասիս ի՞նչ Հայաստան, ի՞նչ է իմն է ճակատագոված, Քո կյանքի պես ազգից խված հայոց Մասիս սարմ է հոգիս, Թեկուզ իմն էլ քա բախտը տամ էլի կասեմ դարմ է հոգիս: ԱՌ, քեզ խից՝ սիրու հալեց՝ ով իմ Սիիիան սարմ է խից, Ով իմ շորքից վանա ծովս, ով իմ Աղբամարմ է խից, Նոյն ծովը չէ, բայց նույն չարմ է, ով իմ Մասիս սարմ է խից, Կարսն է խից, հայ բրի բագ Հայոց Ավարայրն է խից, Ով իմ հայոց մարմար լեզվի սուրբ տաճարն է այնտեղ փից, Թեկուզ լուծ իր զանգերով լազող Աղբամարմ է հոգիս, Մասիսն իրու իմ պասերի խված շիրմաքարն է հոգիս:

Դու է, ազիզ, Մասիսի պես ամպել էիր, բայց քանի անցավ, Քեզ մոռացման դուխու տանու քար լուրյան Շարուն անցավ, Չայնդ միթչն Չիմումաշին, Հիմն ու Հարաշ, Տարոն անցավ, Շիրազն ասավ՝ իմ դարմ հասավ, իմն էլ զցող Շարուն անցավ, Ընկածներին բարձրացնող սանդուրյունի քարմ է հոգիս, Երբ բարձրանամ Մասիսն ի վեր, այմժամ կասեմ դարմ է հոգիս:

Զեզ չարմ ասավ՝ զնա մնիր, քարին ասավ՝ արի սիրեմ... Բայց որսե՞ն է զերեզմանը, որ զամ զննե քարմ համրուրմ: Թե քար չումես նվեն Մասիս՝ ամենասուրբ քարը բերեմ, Քարմ ի՞նչ, ազիզ, պիտի եմեն, պիտի Մասիս սարու բերեմ, Կերմեն թեկուզ իմն էլ ասեմ՝ զնա մնիր՝ արի սիրեմ... ԱՌ, բարաշատ Հայաստանը քար չզցեց վրադ, Չարենց, Իմ վրա էլ քեզցեմ՝ էլի կասեմ դարմ է հոգիս, Ամենասուրբ հայոց լեզուն, մեկ էլ Մասիս սարմ է հոգիս, Հայաստանից անուշ չկա, մեր ողջ լեզնաշխարհն է հոգիս, Սիր աջք լույս, մի աշք արցունք իմ Հայաստան յարմ է հոգիս:

Չարենցի բանասանղուրյունն անըստգյուտ կատարելու- րյուն է իր ամբողջուրյան մեջ՝ Հայաստանի բոլոր կաղմերը ներ- կայացնող համանվագային համաշափ դրսուրյուններով: Հայրե- նիքը և ազգային սրբուրյունները սիրելու բացառիկ օրինակ է այն բոլոր սերունդների համար: Նրանց ներշնչված Հիրավոյան բա- նասանղուրյունը նոյնական կրկնուրյուն չէ, և համեմատելու կամ հակադրելու որել է իմն չկա: Տասնամյաններ հԵՏՈ գրված Հիրավոյան բանասանղուրյունն ընդգրկում է այն նոր իրազու- րյունները, որոնք «ԵՆ ԻՄ ԱՆՈՒՉ»-ի գրվելու ժամանակներում դեռևս չկային կամ ընկալելի չէին. Չարենցը դրանց ամդրադար- ծավ «Էպիկական լուսարացի», «Գիրք ճանապարհի»-ի ու մա- նավանդ 1934-37 թթ. գործներում:

Մեջքերկածը քեն Շիրազի դիմարկվող բանասանղուրյան մի մասմ է, սակայն այսքան էլ բավական է ըմբռմելու ամբողջի էուրյունը՝ ազգային ծակատագրի և հայուրյան միասնականու-

թյան ու հավաքականության խնդրում իր մեծ հոգեկցի՝ Չարենցի պատգամներին հավատարիմ ու հարազատ մնալու շիրազյան հստակ նպատակադրումը: Սակայն դրանից ամենին էլ չի նսեմանում Չիրազի անհատականությունը. դիտարկված բանաստեղծությունն ունի զաւաշիրազյան տող - պատկերներ, որոնք, հզոր բռնկումներ լինելով, տերսակից դրւու էլ բանաձևի և ափորիզմի արժեք ունեցող ընդհանրացումներ են և արծարծում են հայության մտահոգող համազգային խնդիրներ, մի կողմից գնահատվում է Ե. Չարենցը որպես ազգային գերազույն արժեք, բնութագրվում են հայության հանդեպ բույլ տրված պատմական մեծ անարդարությունները, մյուս կողմից նրանք արտահայտում են հայության տենչերն ու երազները և դրանց իրականացման ճանապարհին Չարենցի պես զոհարերվելու բանաստեղծի պատրաստականությունը:

Ինչպես տեսնում ենք, բանաստեղծության խորրում միավորված են երկու հզոր անհատականություններ՝ հայոց ծակատագրի հանդեպ միասնական վերաբերմունքով: Սակայն հոգեկցության խորապատկերում ընդգծվում է նաև երկու անհատականությունների ճակատագրական ընդհանրությունը. Հովհ. Չիրազը նույնպես տագնապների մեջ էր, քանի որ Չարենցին հալածողները 1950-60-ական թթ. զետև փառաբանվում էին ու երբեք էլ չդատապարտվեցին, իսկ ինքը ահուդողի մեջ էր ապրում 1930-ական թվականներից:

Զեզ սպանող Չարենց այժմ իմքն էլ ազատ մնան է գալիս,
Չի մի աշքի մեջ քեզ քաղել՝ մնկով իմն է դիս ահ տալիս...

Եվ Հովհ. Չիրազն ինքն էլ տարատեսակ հալածանքների պատճառով չէր կարողանում ազատագրվել «ֆինանսպանության մտքի ազավակներից», ուստի ինքնարերաքար զորեղանում էր Չարենցին ներքին հարազատությունն ու ծագում ճակատագրական գուգահեռը.

Չարենց, քեկուու իմն էլ ասեմ՝ գնա մնուիր՝ արի սիրեմ, –
Ինչ էլ ասեմ՝ էլի կասեմ՝ իմ Հայաստան յարն է հոգիս:

Բայց այս ամենով համերծ է. Չիրազին և Ե. Չարենցին մերձեցնող երևույթներից ու ազգային հոգևոր արժեքներից մեկը միջնադարի վերջի խոշորագույն աշուղ - բանաստեղծ Սայաթ-Նովան էր: Նախ Չարենցն էր «Աշուղ Սայաթ-Նովի նման ծեղ երգ ու տաղ պիտի ասեմ» պատրաստականությամբ 1920 - 21 թթ. գրել «Տաղարան» շարքը՝ գործածելով աշուղական դոշմայի

(«Էլի գարուն կգա»), գագելի («Երր էս իմ աշխարհը մտա», «Կուզեմ իիմի փշն զուսնեն»), մոլիսմազի («Երազ տեսա», «Ես իմ անուշ Հայաստանի») տարատեսակները, ապա Չիրազը՝ Չարենցի արգելված ժամանակներում՝ 1940 թ. երատարակած «Երգ Հայաստանի» գրքում «Տաղարանի» օրինակով գետեղել էր «Աշող Չիրազ» բաժինը, որի լրամշակումներով հետագայում ստեղծվեց «Սիրո զուսանականը» բաժինը Երկերի ժողովածուի 3-րդ հատուրում (Եր., 1984):

Թե՛ Չարենցի, թե՛ Չիրազի այս կարգի ստեղծագործություններում կարևորվում է Սայաթ-Նովայի նկատմամբ նրա հաջորդների վերաբերմունքն ու գնահատականը: Մեծ աշուղ-բանաստեղծի հանդեպ վերաբերմունքը միասնական է, բայց գնահատության խնդրում մի աեսակ մրցակցություն է նկատվում: Երկուսն էլ արժենորում են հանճարեղ աշուղի բացառիկ կենսազգացողությունն ու պատկերավորման արվեստը և զանում են յուրովի գնահատել նրան: Հենց այս իրողություննը, որ Սայաթ-Նովային մեծարելիս Չիրազը, չգոհանալով իր հնարավորություններից, Չարենցի օգնությանն է դիմել նաև, դարձյալ մոտեցնում է նրանց որպես զրական ազգակիցների:

«Խալխի» ամենաշռայլ «նորարին»՝ Սայաթ-Նովային Չարենցի ծոնած դիստիքոսներից մեկը՝

Ուկի քառեր, անզին քարեր, լալ ու գրիար շարել ես դու, –
Զեզ միայն քո յարն է վառել, քանի՛ յարեր վառել ես դու, –

գայրակոյիչ է եղել այնքան, որ, Պետրոս Դուրյանի «Թոքուհին» բանաստեղծության՝ «Սրաի մեղու, ինչպես կըսեր Լամարտին» տողի նմանությամբ, Չիրազը Սայաթ-Նովային նվիրած իր ծոներգ - բանաստեղծության մեջ բառացի մույնությամբ կրկնել է նրա երկրորդ տողը, բայց դա արել է Դուրյանի նման՝ մեծ արվեստագետին բնորոշ ազնիվ խոստովանությամբ.

Չարենցի պես Չիրազն ասաւ՝ խելք ու միտք տարել ես դու,
Մեզ միայն քո յարն է վառել, քանի՛ յարեր վառել ես դու...

«Գիրք ճանապարհի» ժողովածուում «Տաղեր և խորհություններ» բաժինն ստեղծելով՝ Չարենցը հաստատում էր, որ միջնադարից եկող տաղ - ծոներգը կամ խորհությը ամենին էլ «անցած էտապ» չեն և նորագույն գրականության մեջ էլ արևելյան ուրախիները, բեյթերն ու դիստիքոսները արևմտյան բանաստեղծական տեսակների հետ միասին կարող են դրսուրիվել նոր ձևով ու բոլովանդակությամբ:

Այնուամենայնիվ, Ե. Չարենցն ու Հովհ. Շիրազը, այսքան հարազատությամբ հանդերձ, զեղարվեստական մտածողությամբ ու խառնվածքով տարբեր բանասանեղծներ էին: Ե. Չարենցի մեծությունն ամվերապահ ընդունելով, նրա գրական վիրխարի աշխարհից թե՛ բովանդակային, թե՛ ծևական ներքափանցումներ ունենալով հանդերձ՝ Հովհ. Շիրազն ուներ նաև նրա հետ ներքին բանավեճեր: Վերապահությամբ էր ընդունում «Երկիր Նախրի» վեպը՝ երգիծականի և ողբերգականի հարաբերակցության չարենցյան ընկալմանը համերաշխ չինելով և կարծելով, թե չէր կարելի ժաղուածանակի ենթարկել եղեռնից մազապործ ժողովրդին: Չէր ընդունում որոնումների շրջանում Չարենցի սայրաքումներն ու դասական արվեստը հեղթելու փորձերը, դարի և ժամանակի, համաշխարհային եղափոխության չարենցյան ինչ-ինչ բնորոշումներ և մանավանդ ժամանակի շունչը դառնալու կարգախոսը.

Թե ուզում ես երգի լսեմ՝
Ժամանակի շունչը դարձիր,
Կապվիր Յարդով յուարանչուուր
Զո օրերին ու քա դարին,
Կյանքը սիրիր լիանչուում
Եվ մի դավիր քա քարին:

Նույն այդ դարի ու ժամանակի անարդարությունների դեմ Հովհ. Շիրազը իր կոհիվն ուներ՝ հայությանը հասցված ժամբագույն ողբերգության, ոնքագործներին չդատապարտելու և ենց Չարենցի ու նրա բախսաակիցների կորսայան պատճառով: Արդարության վերահասառատման ու հասուցման պահանջաներն էր նա: Ան ինչու չհակադրվելով «Եղրայր Չարենցին» ու նրա աիեղերական կամրին՝ ստեղծեց իր շիրազյան կարգախոսը.

Գործով ճգափիր գազարներին, վար իջնելով՝ վեր բարձրացիր,
Թե ուզում ես անմահ մնալ՝ ժողովրդի սիրազ դարձիր:

ՍԵՅՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ԵՊԻԾԵ ՉԱՐԵՆՑԻ ՏԱՎՏՈԳՐԱՄՆԵՐԸ
Ժանրային նոր ձևեր Չարենցի վերջին
շրջանի քնարերգության մեջ**

Ոչ լրիվ երկու տասնամյակի ընթացքում Չարենցը ասպարեզ է հանել առնվազն երկու տասնյակից ավելի այնպիսի ժամբեր, որպիսիք սոսկ դրվագային կիրառություն են ունեցել նախընթաց հայ պոեզիայում կամ պարզապես ժանրային նորաբանություն են:

Առանց հասուկ հաշվարկների էլ ակնհայտ է, որ ներրողների և խոհերի, էլեգիաների և էպիգրամների, սոնետների և լիրիկական անարականների, տաղերի և խորհուրդների, էպիտաֆիաների և ակրոսափրսունների, դիստիքսունների և բեյթերի այս արարող միայնակ ստեղծել է շատ ավելի հարուստ ժանրային տեսականի, քան նախորդ և ենտագա հայ բոլոր բանաստեղծները՝ միասնարար առած: Խնձիրը, սակայն, բնավ քանակը չէ, այլ այն սոսկալի անտարերությունը և անիրազեկությունը, որ արդեն մոտ հարյուր տարի դրւարում է չարենցազիտարքունք՝ ոչ միայն մենազրական ու հոգվածային ընթերցումները, այլև Չարենցի անզամ պոետիկայի և տաղաչափության համակարգումն իրագործելիս մեծ հաշվով շրջանցելով չարենցյան ժանրագիտարքունքը: Նմանօրինակ անհոգության առավել մտահոգիչ ենականքը անհմացությունից եկաղ սխալներն են, որոնցից մի քանիսը կնշեն այստեղ՝ ուղեկցելով դրանք գրականազիտական կարծառություններով:

Առաջինը, որքան էլ զարմանալի թվա, կապված է հանրահայտ «Պատզամի»՝ բոլորի կողմից վաղուց գոց սովորած ժածկագրի հետ՝ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»: Բանաստեղծի կենդանության օրոր այն պաշտոնապես քննարկվել է միայն մեկ անգամ. 1936 թ. նոյեմբերի 16-ին Մուղդուսու և Գևորգովի վարած հարցաքննության ժամանակ հնչում են մի կողմից «ակրոսափրու», իսկ պատասխանող կողմից՝ «Երկրորդ տառերի ակրոսափրու» բնորոշումները: «Նուազայում՝ Չարենցի արդարացումից ի վեր և մինչև օրս, ենց այդ

երկու արտահայտություններով է բնորոշվել, այն էլ հարյուրավոր անգամ, արդեն հանրահայտ ասաւյթը: Մինչդեռ ակրոսափրոս ասեկով ամսահիկ պոեզիայից մինչև օրս հասկանում են ծայրակապը՝ տողերի առաջին տառերով վերից վար կապվող ուղղահայացը: Միջին տառերով կապվող ուղղահայաց տողը կոչվում է մեզուսափրոս (վերջին տառերով կապվողը՝ տեկնստիքոս): Անվանումը գալիս է ինչ հունարենից՝ *τεσος*՝ միջին բառից: Այսպիսով՝ «Պատգամի» «Ով եայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» ծածկագրությունը մեզուսափրոս է, և այսունեւու պեսք է խուսափել այն «ակրոսափրոս» բառով բնորոշելուց՝ վերջինս վերագրելով առնվազն թյուրիմացության:

Մոտ է պարագան նաև վերջին տարիների մի քանի այլ ժանրերի դեպքում, որոնց ճշգումներին և ստեղծագործական կապերին անդրադառնանը խիստ համառոտ:

Գյորեից քաղված բնարանով դիստիքուներից մի քանի տարի անց՝ կյանքի վերջին տարում, Զարենցը գրեց իր մոնուսափրոսները: Մոնուսափրոսը նույնական քիչ հանդիպող կայուն ժամբածն է, որի շառավիղները ճգփում են հոռմեական էպիգրամից մինչև ճապոնական հորու, 20-րդ դարասկզբից ուստական պոեզիայից մինչև ամերիկյան արդի բանաստեղծություն: Մոնուսափրոսի վերածնունդը շատերը կապում են Վ. Բրյուսովի հայտնի միասողի հետ՝ «Օ զարօ շաու բլեծնու հօգու»: Բրյուսովի ժամբային մշակույթի դաշտում Զարենցը ստեղծում է իր մոնուսափրոսները, որոնց մեջ վերստին պահպանում է կապը սեփական կենսագրության, պատմության և ազգային մշակույթի հետ: Նախասիրած հեղինակին և ազդակ տվող նորուշը չկրկնօրինակելու անուղղակի ապացույց է Զարենցի դիմումը ինչ ճապանական բանաստեղծության փոքր ձևերին:

Փոքր-ինչ ավելի վաղ՝ 1935-36 թթ. են եղրինվել Զարենցի երկու գործեր, որ վերաբերում են դարձյալ ժամբային կայուն ձևերին: Առաջինը՝ «Էկլեզիաստեսը», կրում է տրիպափրոս հեղինակային ժամբանչումը: Տրիպափրոսը երեք մասից կազմված ստեղծագործություն է, որ առավելապես առածկապատճեն է մկարչության և երաժշտության մեջ: Աշխարհի լավագույն գեղանկարչական արիպափրոսներից մեկը՝ վերնագրված «Երկրային յոթ վայելքներ», ստեղծվել է 16-րդ դարի սկզբում և պատկանում է Վրձնին Հիերոնիմ Բոսխի, մի նկարչի, որի կատակերով զմայլված էր Զարենցը և հիշատակում է նրան իր բանաստեղծություններում: Ուշագրավ է նաև, որ բնման «Էկլեզիաստեսում» արոհված է խոս-

քերի՝ Առաջին խոսք, երկրորդ խոսք... Վերջիններիս առնչությամբ բացառված չէ «Էկլեզիաստեսի» ծագումնարանական կամ անուղղակի-միջնորդավորված կապը երաժշտական տրիպափրուների հետ: Հավանական աղյուրների թվում են ժամանակով Զարենցին մոտիկ կանգնած երկու նշանավոր գործեր՝ Կոդ Դերյուսիի «Ծովը» (1903) և Պուշկինի օպերան, որ ենց «Տրիպափրու» էլ կոչվում է և առաջին անգամ բնմադրվել է 1918 թ.:

Բացառված է թվում, սակայն, որ ժանրը մուտք գործած չինի գրականություն: Եվ իսկապես էլ այն գրականացվել է, այն էլ ենց պոեզիայում և, որ ուղղակի ցեցող է, Զարենցի նախասիրությունների մեջ մանող, նրա գրադարանի և ընթերցման շրջանակի մաս կազմող երկու պոետների գործերում: Այդ ձևին սիրով դիմել են Նիկոլայ Գումիլյովը և Աննա Ախմատովան՝ յուրաքանչյուրը մեկից ավելի անգամ: Եթե գեղանկարչական երաժշտական և բանաստեղծական հիշյալ արիպափրուների կամ դրանց մի մասի հետ Զարենցի «Էկլեզիաստեսը» անմիջական կապ չունի, նման զուգադրումների նշանակությունը չի նսեմանում, քանի որ դրանց շնորհիվ որոշակիանում են երկի ինչպես ժամբային բնութագիրը, այնպես էլ բնագրագիտական լուծումները: Յավակի է, թայց պետք է արձանագրենք վերջին կարգի մի վրիպում: Զարենցի «Անտակ և շիվարգված երկերում» (Ե., 1983), որը վերնագրի ներքո առկա է արիպափրու, այսինքն՝ նույնա ստեղծագործություն հեղինակային նշումը, Զարենցի «Էկլեզիաստեսը» տպագրվել է երկու մասով (Լզ 95-98):

Սեղադրանքը չէ այս նկատումի նպատակը, այլ Զարենցի բնագիրը բնօրինակին առավելապես մոտեցնելու մտահոգությունը, մանական որ առկա է բզեզված ճեռագրերի գործոնը:

Տրիպափրուից կարծ ժամանակ անց Զարենցը ստեղծել է «Խորտ սրաի խոսք ընդ Աստուծո» տեսրապափրոսը, որով ամրագում է մոնուսափրու-դիստիքու-տրիպափրու-տեսրապափրու շորան:

Տեսրապափրոսը, ինչպես և անունն է եղանում, չորս մասից կազմված ստեղծագործություն է: Այս կայուն ժամբածկի բանաստեղծական նախօրինակը շատ ավելի հայտնի և մեզամոտ է: Խոսքը վերաբերում է Վ. Սայակովսկու «Վարտիքավոր ամպը» պոեմին, թեև դարձյալ բացառված չեն հնարավոր զուգադրումները արվեստի, այլ ձևերի հետ: Հմոռանանք, որ տեսրապափրոս է երաժշտական մի երկ, որ արդեն մոտ երեք դար գերում է աշխարհը: Խոսքը վենետիկյան հանճար Անտոնիո Վիկոնտիի «Տարվա

չորս եղանակներ» ջուրակի կոնցերտի մասին է. բարոկկո ոճով եղանակած այդ տեսրապատճռոսի չորս մասերը խորհրդանշում են մարդու չորս տարիքները: Չարենցյան տեսրապատճռուր համադրում է մշակութային մի շարք շերտեր: Մի կողմից՝ այն գրված է սոնետների ձևով, կայուն մի ձև, որ պատամեկությունից սկսած գրավում էր ժամանելի վարպետին և անփոփոխ տեղ ունի նաև վերջին տարիների նրա չափածոյում: Մյուս կողմից՝ թեմատիկ, բառապաշարային և ոճական առումներով այն ուղղորդված է դեպի Նարեկացի և, միջառդավորված եղանակով, դեպի Սուրբ գիրք: Բարերախտարար, «Ի խորոց սրբի խոսք ընդ Աստուծո» տեսրապատճռուր մեզ է հասել և տպագրվել անհամեմատ բարվար վիճակում: Միակ անպատենությունը «Անտիպ և չհավարված երկերի» ժանրագրություններում հայտնված այն ենթադրությունն է, թե իրը երկն ունեցել է ենթերորդ սոնետ ևս: Նույնիսկ մեջքերվում է այդ ենթադրյալ մասի մի տարրերակը (էջ 585-586): Նկատի ունենալով շարենցագիտության վիշտուն վիճակը՝ պետք է բացառել նման հավանականությունը. տեսրապատճռուր չի կարող ունենալ ենթադրյալ մաս:

Վերջապես, կյանքի մայրամուտին Չարենցը սկսումով դիմում է մեկ ուրիշ «խորհրդավոր ձևի», որ եղանակների մեջ ամենից եինձ է, սկիզբ է առել անահիկ աշխարհում և երկրորդ կյանքի կոչվել 20-րդ դարի սկզբին՝ մի քանի ուսւ բանաստեղծների կողմից: Խոսքը տավագրամի մասին է, որի բոլոր բառերը սկսվում են նույն տառով:

ՏԱՎԾՈԳՐԱԿ. տավագրամներ կ և վ տառերով

1937 թ. Չարենցը շարահյուսել է մի քանի այդպիսի գործեր, որոնցից մեկի համարյա բոլոր բառերը սկսվում են կ, մյուսինը՝ միայն վ տառով, և գործերի մի շարք, որի բառերը սկսվում են բացառապես մ տառով: Այս բանաստեղծությունները բնորոշելիս շարենցագիտությունը տանջում է իրեն «մ տառի բաղաձայնուր» և նման կարգի ձևակերպումներով, մինչդեռ դա նույնպես ունի հայտնի անուն՝ տավագրամ (հունարեն ταυτό՝ նույն և գրառա՝ գիր բառերից):

1926 թ. լուս տեսած «Հետաքրքրաշարժ տաղաշափություն» գրքում, որ 1929 թ. վերահրատարակվել է «Կիրառական տաղաշափություն» վերնագրով, բանաստեղծական կայուն ձևերի հսկուա մասմագետ Ն. Շուկովսկին ժամանակով բնութագրում է որ-

պես «Ժայրահեղության հասցված ալիտերացիա»: Երևայթի վերածննան առաջին քայլը համարում են Դավիթ Բուօյուկի և տառով մի տավագրամը՝ գրված 1913 թվականին, իսկ ամենամեծ նվազումը՝ Վ. Բրյուսովի՝ 1914-ին ստեղծված հետևյալ տավագրամը.

Մոյ միլյա մագ, մоя Մարիա,
Մечտամ մերցայի մայկ,
Մյատեն մարեա մօրսկա,
Մոյ միլյա մագ, մоя Մարիա,
Մօլչանյամ մանի մունի մրակ.
Մի մետի մելի միրուալ
Մոյ միլյա մագ, մоя Մարիա,
Մечտամ մերցայի մայկ.

Այս խիստ անտվոր բանաստեղծությունը շուտով ունենում է բազմաթիվ հետառորդներ: Չարենցի գործերը, սակայն, ակնհայտորն ներշնչված են հենց Բրյուսովի մեջքերված ստեղծագործությունից: Բնորոշ է, որ նրանից պահպանված նմուշների մեջ գերակշռում է մ տառը: Առավել ուշագրակ է, որ դրանցից լավագույնն ու ամենից պահպանը հենց տրիութ է, ինչպես և Բրյուսովինը.

Մաս մորմորում է մայրամուտը,
Սահկան մնիիր է մովից մաղրում,
Ստանում է մուքը մրնաղրում,-
Մաս մորմորում է մայրամուտը:-
Ստորոտները մահ են, մուք են,
Սարին մոքեր են միայն մլում,-
Եվ մորմորում է մայրամուտը.
Մահկան մրուր է մովից մաղրում...

Տրիութաի կայուն ձևի և տավագրամի համադրությունը ստեղծել է դասականության այնպիսի շունչ, որի առկայությամբ գոնե այս երկու գործերի պարագայում կասկածելի է քվում տարածված այն վերապահությունը, թե նման գրվածքները գեղարվեստորն իմարժեք չեն կարող լինել:

Եվ դարձյալ, ինչպես բոլոր նման դեպքերում, Չարենցը դրսնորում է զանազան ավանդույթների, ազգայինի և համաշխարհայինի, սեփական փորձի և յուրացրածի միաձույլ համադրություն: Առավել խորությամբ դա դրսնորված է մ-ով տավագրամներում, որոնք, ի դեպ, նաև բանակով ամենաշատն են, ունեն մի ամրող շարք տարրերակներ: Բայց դրանց անդրադառնարուց առաջ նկատենք, որ նույնը ամփերապահորն կարող ենք պնդել

նաև մնկական բնագրով պահպանված տավողամների դեպում, որքան էլ դրանք առաջին հայացրից թվան գրչի խաղ կամ փորձարարություն: Անա կ բաղաձայնի կուտակումով գրված «Իմ կեսօրին» բանաստեղծությունը, որի մի քանի բառեր են միայն (այդ թվում մեկը՝ վերճագրում), որ չեն սկսվում կով:

Օ՛, կարմրածուի իմ կեսօր, կյանք իմ՝ կանգնած դեռ կամզում
Կաս-կարմրավոր ես կրկին, - օ՛, կարմրածուի իմ կեսօր,
Ե՛վ կախաղան, և կալանք, և կառափնուս քա կյանքում
Ե՛վ կափարիչ կրագույն, - դու կրեցիր, օ՛, իմ օր...
Կանք, դու կայմեր կամեցար, - և կամարներ կամավոր,
Ե՛վ կարտաներ կապտածիր, և կանաչներ կանալող,
Կամացի կանչ՝ քեզ կամցող, և կարկառող կամաշ օր... (ԱՉԵ, էջ 207):

Բանաստեղծական հենարին խիստ յուրօրինակ կիրառությամբ հանդերձ՝ երշտության մեջ արքանում է այն զուգահեռող, որ հայերեն տառերով գրված առաջին հայտնի բանասողերում առկա է բաղաձայնույթ, և այն հենց կ տառով է:

Երկմեր երկին, երկմեր երկիր,
Երկմեր և...

Առավել հետաքրքիր զուգարարություններ է առաջացնում վ տառով կազմված տավողամբ.

Վաղվարակի վառվել են վառ,
Օ՛, վաղորդայն վոսկւորիկ,
Որ վարդարույր վառի վարակ՝
Վարժ վարողին, վազքալորին,
Վահր ու վրեժ, վոխ ու վարակ
Վամիր վերքից ու վոսկորից,
Վասիր վորու վառ ամարատ,
Օ՛, վաղորդայն վոսկւորիկ... (ԱՉԵ, էջ 217):

Հայտնի է, որ տավողամի պատմությունը սկիզբ է առնում իհն հոռմեական գրականությունից: Մասմագետներից շատերը այդ ժամերի հնագույն նմուշ են համարում մ.թ.ա. 2-3-րդ դարերի եեղինակ Քլիներսու Էնիոսի հետակալ խոսքը. «*O Tite, tute, Tatí, tibi tanta, tyrappe, tulisti!*! Որոշ եեղինակներ էլ անտիկ տավողամի ակունքների մոտ նշում են Հուլիսա Կեսարին վերագրվող հանրակայտ ասույթը, որ լատինական թևակար խոսքերի գիտակ և վարպետ կիրառող Զարենցին կարող էր գրակել վով սկսվող բառերի նպատակասաց հերթագայությամբ. «*Veni, Vedi, Vici!*»:

Բայց Զարենցի վ-ն ավելի սերտորեն կապված է միջնադարյան հայ բնարերգության, առավելապես իր հնագույն ուսուցչի:

Գրիգոր Նարեկացու բնարերգությանը: «Գռիար վարդն վաս առեալ ի վեհից վարսիցն արփենից» հատվածը, որի յոթ բառերից չորսը սկսվում են վով, կարենի է համարել մասմակի կամ, ինչպես տեսարաններն են ասում, ներքին տավողամի: Այդպես են կովկաս նույն բաղաձայնի չափազանց կուտակում պարունակող հատվածները, բայց ներքին տավողամի կարող է համարվել նաև այն տառը, որի մի քանի հարևան բառեր սկսվում են նույն տառով: Այդ իմաստով հենց Նարեկացու տաղերի և անգամ, իմշապես կախսնենք, «Նարեկի» որոշ հատվածներ վստահաբար կարող են համարվել ներքին տավողամի առաջին նմուշներ հայ պնդիայում: Զարենցի ճախորդներից Նարեկացու լեզվական ծերի նկատմամբ շատ ուշադիր էին հատկապես Սիսար Սնծարենցն ու Վահան Տերյանը: Բնորոշ է, որ վերջինս իր մի քանական նեղութության առաջին առողի բարեր բառերը գրել է վ տառով, ընդ որում և՝ բառերն են նարեկացիական, և լեզվամշակութային մտածողությունը: Խոսրը ոռուս նշանավոր բանաստեղծ Վյաշելավ Իվանովին ճոնված բանաստեղծության մասին է, որ սկսվում է այսպես:

Վարդակախ վարդերը վառ
Երգող երգչիո երդիում են ես...

Սիջանկյալ նկատենք, որ այս բանաստեղծության տողերի առաջին տառերով Տերյանը կազմել է ՎեՇԵՍԼԱՎ ԻՎԱՆՆՈՎ ակրոստիքոսը՝ հարություն տալով հայ պոեզիային ոչ այնքան բնորոշ ծայրակապի ծիկն, որի առաջին կիրառմներից մեկը դարձալ Գրիգոր Նարեկացին էր: Վերջինին բնորոշ եիշալ երկու հեարբների եեղյանական դրվագային կիրառությունը Զարենցի պնդակայում դառնում է սկեսուն ուշադրության առարկա:

Վով տավողամի ճախորդների մեջ վերջինը չէ Զարենցի բանաստեղծությունը բացող վաղվաղակի բառը: Հայ միջնադարյան մատենագրության, մասմակորապես պատմագրության մեջ ունեցած հածախակեակ կիրառությամբ բնավ չի նսենանում այն ծանրակշիռ դերը, որ խաղում է այդ հնչեղ, ինքնին վ-դ բաղաձայնույթ ամփոփող բառը «Նարեկի» բառարանում: Բավկական է հիշել որ այդ բառով է ծևակերպվել մատյանի հենց առաջին էջում տեղ գտած սկզբնական հղումներից մեկը Աստծում:

Եղց ի խորոց աստի զգայութանց խորիդակիր սեմեկին՝
Վաղվաղակի ժամանել առ քեզ... (Թամ Ա)

Որ վաղվաղակի-ն «Նարեկի» բնագրում հերթական քառ չէ, հաստատվում է ևս մի քանի խորիմաստ կիրառություններով, որոնց ընդհանրացնող ներիմաստը Աստծուն արագորեն-վաղվաղակի հասնելու տենչանքն է.

Ակնարկեան միայն գրութեամբ՝ և արդարացայց,
Ասա քանի՝ և վաղվաղակի ամարատ գտայց... (Թամ Խթ)
և վաղվաղակի փոփոխեալ գտայց ի լաւ ամդը... (Թամ ՀՇ)

Ի դեպ, վաղվաղակի քառը Չարենցը օգտագործել է վերջին շրջանի այլ գործերում ևս, օրինակ՝ «Լուսամփոփի նման հայխապակն» բանաստեղծության վերջում («Զո կյանքը չէ թարդուր՝ վառված վերուստ՝ Աստղիկների նման վաղվաղակի») և «Իմ լերան աղորքում».

Ո՞վ Տեր, զիստն, որ այս հողն հոգևոր ցործ
Դր հայրենի հողի վաղվաղակի մշակ... (ԱԶԵ, էջ 378):

Ծմոռանանք, սակայն, եղակետային այն դրույթը, որ տավառ-գրամի տեսակի վերածնությունը կատարվել է անցյալ դարա-սկզբի ուստական բանաստեղծության մեջ՝ որոշ սիմվոլիսմերի և ֆուտուրիստների էքսպերիմենտալ էջերում։ Վ-ի առնչությամբ նկատելի է, որ իր բանաստեղծություններից մեկի մի հատվածում մասնակի-ներքին տավառզրամ է կիրառել Կ. Բալմոնաք, որի պոետիկայի նկատմամբ Չարենցի հետաքրքրությունը ճգվում է 1910-ական թվականներից մինչև վերջին տարիները։

Վечер. Взморье. Вздохи ветра.
Величавый возглас волн.

1934 թ. «Կալերի Բրյուտվին» սոնետ-նվիրումը գրած և փառքինչ ուշ Բալմոնտի «Սև ծովի եղերքին» բանաստեղծությունը բարգմանած Չարենցը, անշուշտ, շարունակում էր նորագույն բանաստեղծության այդ երկու քրմերի վարպետության հանդեպ պատահնեկան օրերին տածած երկյուղած սերը։ Ամենայն հավանականությամբ հենց այս ծանապարեին է Չարենցին հանդիպել բրյուտվան տավառզրամը և թելադրել հատկապես մ տառի գերակշիռ ուժությունը մեջ մասնակի համարված գործառությունները։

«Մոյ միլու մագ, մоя Մարիա» և «Մաս մորմորում է մայրամուաք»

Թյուրիմացությունից խուսափելու համար Բրյուտվի «Մոյ միլու մագ, մоя Մարիա» և Չարենցի «մայրամուային» տավառ-

գրամների համեմատական վերլուծությունը սկսննը ակնհայտ տարրերությունների արձանագրումով։ Առաջինը ստեղծվել է ուստական սիմվոլիզմի տիրապետության հասուն շրջանում՝ 1914 թվականին, երկրորդը («Մաս մորմորում է մայրամուաք», «Մխուս է մարիսը. Մզլահուս է» և «Մքնում է. Սուս է մայրամուաք» սկզբնատղերով գործերը կարելի է համարել մեկ ստեղծագործության տարրերակներ կամ ամրողական շաճք, ԱՉԵ, էջ 247-250)՝ 1937 թվականին, որ առնվազն քանի տարով տարանջատված է Չարենցի խորերդապապաության շրջանից և նշանազրում է համայրական բանարվեստի վերջնական ճևավորման բարձրագույն մակարդակը։

Երկրորդ էական տարրերությունը արտահայտված է երկերի թնամայի մեջ։ Բրյուտվը ստեղծել է անճնանունով հիշատակված հերոսութան ուղղակած սիրո երգ՝ մատղիզալ, Չարենցը՝ փիլիսոփայական խոհ-մահերգ հերոսի և ժամանակի մոտալուս վայնանականացումով։

Երրորդ յուրահատկությունը բխում է նախորդից։ Բրյուտվը յան բնագրում տիրապետող սիրերգին պատշաճող թերև-երազանքային ոճն է՝ ծովի (More), երազի (Mечта), կախարդանքի (Маг) առկայօծումներով (Мерцаяօչի)։ Իսկ Չարենցի բանաստեղծությունը գերակշռում են ժամանակի իրավիճակով և եղջնակի հոգեվիճակով թելադրված վայնանական տրամադրությունները՝ մական, մայրամուաք, մորմորումի բառապատկերային ծանր շնչով և ապօկալիպսիսան ոճարանությամբ։

Նույնքան էական են երկու բնագրերի գեղարվեստական ընդհանրությունները։ Ավելորդ չէ ընդգծել, որ ամենից վճռորշը բաղաձայնութային բացարձակությունը հենց հատկապես մ տառով ճևավորելու իրողությունն է, որ երկու դեպքում էլ ունի իմաստային հատուկ իմանակորում և իր հերքին թելադրում է ինչպես հնչերազային-մեղեղային գունավորում, այնպես էլ բնագրային-մշակութային նոր գուգահեռություններ։ Դարձալ հիշենք նաև յուս կարևորագույն նմանությունը։ Բրյուտվին հետևելով թե անկախարար Չարենցը տավառզրամը տեղավորել է արիմենի կայսուն ժանրածեկ մեջ։ Եթե այդ բնարությունը արվել է ոուս բանաստեղծից անկախ, ուրեմն գործել է գեղարվեստական մի սկզբունք, որ շատ ավելի եղոր է, քան բնագրային ուղղակի ազդեցությունը։ Բայց ամենայն հավանականությամբ գործել է հենց վերջինը. մ-ով տավառզրամի և տրիմենի հանդիպադրումը, մեղմ ասած, այն բան տարածված երևույթ չէ, որ ժամանակագրորեն հաջորդող հե-

դիմակի հղացումը այդքան հեշտությամբ անջրպետվի նախորդի փորձից: Իմաստավորված ժանրագոյացման օգտին է խոսում այն զորավար հանգամանքը, որ տրիոլեն են մ տառով կազմված շարենցյան բոլոր բանաստեղծությունները:

Իսկ ինչո՞ւ իննց տրիոլեն: Ռուս գրականագեներից մեկը Բրյուտվի գործի առնչությամբ ենթադրում է, թե տրիոլենի պարտադրած անխուսափելի տողային կրկնությունները հեշտացրել են բանաստեղծի գործը՝ կրկնապատկելով արդեն օգտագործված բառերի բանակը և եղինակին ազատելով մ-ով սկսվող նոր բառեր պեղելու պարտադրանքից: Եթե նկատումը ճիշտ է, նույնը ինքնարերաբար կարելի է ասել նաև Չարենցի մասին: Տրիոլետային հայտնի տողակրկնությունների հետևանքով նրա բնագրերում կրկնապատկել են մի ամրող շարք տողեր՝ դրանք բաղկացնող բառերով հանդերձ («Սառ մորմորում է մայրամուտը», «Սահման մոխիր է մովից մաղում», «Մուգ մզլահու է մովից մաղում», «Սառ մայրամուտը մրնշաղում», «Մընում է. Սուս է մայրամուտը...»):

Ծոշակելի են նաև տաղաչափական և հենցունային երաժշտական ընդհանրությունները: Ինչպես Բրյուտվը, Չարենցն էլ բանաստեղծությունները գրել է ինք վանկանի տողերով և յամբ-անապեսայան ոտքերով: Երկուսն էլ տիրապետող տավառ-գրամի ներսում ստեղծել են բաղաձայնույթի և նույնիսկ ատ-նանս-առօճայնույթի օժանդակ նույններ:

Նշված աղերսները արդեն մասնակի են, և դա միանգամայն հասկանալի է, եթե նկատի ունենանք թեկուզ ոտսերնի և հայերենի հնյունարանական և քերականական մեծ տարբերությունները: Բայց իննց միայն վերջին առումով զարմանք են շարժում շարենցյան և բրյուտովյան բնագրերում առկա արդեն բառապաշարային մերձավորության դեպքերը: Բառերից մեկը, կարելի է ասել, ուղղակի կրկնվող է: Խոսքը մար-մոզ զույգի մասին է. Բրյուտվն այն հատկացնում է սիրած էակին, Չարենցը՝ մայրամուտին՝ սրանից բխող իմաստային յուրահատկությամբ («Մոյ մոլոյ մաց, մոյ Մարի», «Մեռնող մի մոզ է մայրամուտը»):

Այլ դեպքերում բառերը նույնը չեն, բայց մերժիմասս են: Խոսքը վերաբերում է հատկապես բրյուտովյան մարեւա և մուհով մրակ միավորներին, որոնք և բառարանային նշանակությամբ, և եղինակային կիրառությամբ գտնվում են մշուշ - մոայլ բառիմաստային տիրույթում: Գեղարվեստորեն սրանց հարազատ են հնչում մաս, մութ, մթնշաղ, մուժ, մշուշ բառերի շարենցյան կիրառությունները:

Բաղաձայնույթը Չարենցի պոեզիայում

Եվ այնուամենայնիվ, Եղիշն Չարենցի «Սառ մորմորում է մայրամուտը» և հարակից տրիոլետաները բավականաշափ իմք-նուրույն են և կրում են հայ բանաստեղծի պոետական անհատականության ուժեղ դրոշմը: Որքան էլ արտասոց թվա, դա զգալի է իննց մ-ի որպես բացարձակ ալիսերացիայի միջոցի և այն հատկապես տրիոլետի կայուն-բարացած ժանրատեսակով ձևավորելու ընտարության մեջ: Չարենցը ընտրում է մի տառ, որ կենսականորեն ակախվ է եղել այն էլ մոտ քամ տարի, իննց իր սեփական պոեզիայում: Այդ առումով Բրյուտվը խնկապես որ կարող էր կատարել ընդամենը հանճարեղ դրվիչի դեր և բացել այն ներունակությունը, որ արդեն իսկ առկա էր, թող որ բաքնված վիճակում, եայ բանաստեղծի փորձում: Նկատի ունենալով շարենցյան մաքի համադրականությունը և բնագրի ծագումնաբանական տարամիտությունը՝ կարելի է անսնել իննց մ-ի մասնակի կուտակումով հատկանշվող բնագրային այլ նմուշներ նույնպես, ընդ որում՝ դարձյալ Չարենցին եղանակարագատ խոսքային մշակույթների մեջ:

Ինչ-որ խորիրդավոր գուգաղիպատճյամբ ինչպես իին հոռմեական, այնպես էլ միջին դարերում ծագած թևակոր խոսքերի մեջ գերակշռում է իննց Չարենցի սիրած մ-ն: Առավել տարածվածներից նշենք գոնեն «Memento mori»- «Հիշիր մահվան մասին» համարհայտ խոսքը: Այս ամենը, անկասկած, շատ լավ հայտնի էր Չարենցին:

Բայց նա քաջատենյակ էր նաև Նարեկացուն, ում մատյանը իր սեղանի գիրքն էր և ում եղումներ էր անում տավառգրամներին գուգանես ստեղծված նորակերպ գործերում՝ տեսքապատճենություն («Ինչպես վկան մեր իին՝ Նարեկացին» մտքի բառանիստ վարիացիաները), մոնուսափառներում («Ո՞ւմ անվանեմ ես ապա, եթե ոչ քեզ միակը, մեծը լուրեկ...»):

Գրականագիտության մեջ կաղապարի են վերածվել Նարեկացու տաղերում առկա բաղաձայնույթները, այնինչ այդպիսիք հազվադեպ չեն նաև մատյանում: Տողերից մեկի բոլոր երեք բառերն էլ, մյուսի առաջին երեք բառերը սկսվում են կ տառով («Կրկնապարույր, կոածագ կացաւն», Բան Կմ՛, «Կենդանի եւ կեցուցիչ կամաց բարձրեալդ Հաւը», Բան ԼԳ): Օմոռանալով Չարենցի «Վեսորային» տավառգրամը՝ նշենք էլի մի քանի նույնատառ կտորներ մատյանի էջերում: ԿԱ բանի վերջնամա-

սում, ասեմք, երկու տողերում գ-ով են սկսվում երմաք բառեր, ընդորում չորսը՝ հաջորդական («Ապա յօրուն զ զնդի ես զտայց գերեալս ի զաղանեաց զտողին շարեաց»): Այսպես ժամանակ առ ժամանակ մեջտեղ են զալիս ներքին տակառքամներ բ-ով («քարիք ի բարերարէն բարդեցեալը», Բան Լ Գ), ե-ով («Հաւասար եւ համագոյ Հաւըն իւր եղաւրի», Բան Լ Գ), ս-ով և այլն: Եվ այստեղ էլ, ինչպես լատինականի դեպքում, քիչ չեն մ տառով սկսվու բառերով շարակյուսված ներքին կամ մասնակի տակառքամները: Մարդու մեղավորության, դրանից բխող մասյության պատկերների, տասնյակներով իրար ենեւից շարվող մեղա-ների եեղեղը մերք ընդ մերք փոխակերպվում է ճայմի, որի ամենից համարժեք ենյունը մ բաղաձայնն է: Մասյանի Ի՞՛ զլիի համարժեք ենյունը մ բաղաձայնն է:

Սարդու մոլեգնական, տարագրական եւ կորստական,
Սանուկու մեղանչական, անխրատական եւ վարատական...

Մեկ այլ տեղ չորս արդեն հաջորդական բառեր են սկսվում մ-ով.

Փախմու խաւարմ, մնկմի մեզն,
Մերժի մատախուղն, փարատի մոայն... (Բան ԽԱ)

Չարենցյան տակառքամին առնչվող ամենից մեծ անակնիալն ու զլիսավոր արժանիքներից մեկն այն է, որ եայ պոեզիայում նախաղեալը և նմանը չունեցող այդ ձեզ նախապատրաստվել է Չարենցի ողջ բանաստեղծական փորձով: Բանն այն է, որ գրական գործունեաւթյան երկուառիկն տասնամյակի ընթացքում նա անընդեղ ստեղծել է բաղաձայնույթներ, որոնք անգամ բանակապես բազմապատիկ գերազանցում են նախոնքաց շրջանի հայոց բանաստեղծության մեջ տեղ գտած ալիսերացիաները: Այսպես՝ գրականության տեսարաններն ու դասազրերի ենդինակները 19-20-րդ դարերի հայոց բանաստեղծության մեջ իրուն բաղաձայնույթի վարպետների վկայակոչում են գերազանցապես Տերյանին և Սեծարենցին: Մինչդեռ նրանց կիրառած եիրավի ընալիք ալիսերացիաները Չարենցի ստեղծածների համենաւ թվում են դրվագային նախափորձներ: Ընդ որում՝ դրանք բազմազան են բառի բովանդակ իմաստով. ստեղծված են ամենատարբեր ենյուններով, տեղ են զտել թե՝ բանաստեղծություններում, թե՝ պոեմներում, թե՝ վեպում, ունեն և ճայնային-երածշատական, և բովանդակային գործորդումներ: Բերենք բնորոշ օրինակներ՝ բնագրային եղումներից

բացառելով առայժմ միայն մ տառով ալիտերացիաները:

«Դանքեական առասպելի» վեցերորդ զիսում պատմողը ուազմական տեսարանների մուտքը օժտում է թնդանորների ճայնը մարմնավորող մի տողով, որի բոլոր բառերը սկսվում են թ տառով.

Թնդանորները բնորում էին թունդ...

«Հատված» պոեմի առաջին էջում կյանքի խախուտ հիմքերի բնութագրումն ուղեցվում է իս-ով սկսվող բառերի կուտակումով.

Խարիսուլ խուզ ծփում է

Խոնավ

Խորխորատը

Հնի...

«Ծիածանի» «Ուկին» շարքի վեցերորդ բանաստեղծությունը բացվում է արևի հուրը խորհրդանշող հ-երի երավառությամբ, և դարձյալ մեկ ամբողջ տող կազմված է նույնատառ բառերից.

Հրոտ, երաշեն ոսկին արևի՝

Հրդենված եռզու հովն է երևի...

Հուր հովը եռզու հրդենված հիմա...

«Ծիածանը», որ գույների գիրք է գերազանցապես, ասպարեզ է հանում նաև այսպիսի ենյունային-ճայնային բազմաթիվ գործորդումներ: Ահա, օրինակ, կ-երի, ավելի ճիշտ՝ դրանով սկսվող բառերի շարանը, որ կապույտի երածշատական նվազագործումն է.

Իմ խոսքերը կարկաչում են կապույտում,

Կարկաչում են ու կամչում են կապույտում...

...Երազներ կամ, որ կարուաներ են միայն,

Լույս կարուաներ, որ կամչում են կապույտում...

Գույներին հարակցվող ենյունային կուտակումների ձեզ շարունակվում է սիմվոլիստական ուշ գործերում ևս: «Ողջակիզվող կրակ» շարքի «Առավու» բաժնում Չարենցը դարձյալ ենցեցնում է, ասենք, ե-ով բաղաձայնույթը.

Օրերը հուր են եիմա,

Օրերը հորդ են երե...

...Ես զիտեմ՝ դու ես վառել

Հուրը, երդին այս նվաս...

Փոքր-ինչ ուշ՝ արդեն պառնասականների պանակայի տիրություն գտնվող «Էմալե պրոֆիլը Զեր» շարքում, Չարենցը ստեղծում է շ-ով բաղաձայնույթ, ընդ որում այն տեղ է զտել «Տրիումբներ» բաժնում: Այսինքն՝ «Մառ մորմորում է մայրագորդումներ: Բերենք բնորոշ օրինակներ՝ բնագրային եղումներից

մուտք» տավառգրամի և հարակից տարրերակների ստեղծումից մոտ տասնյոթ տարի առաջ նա զրել է ներքին տավառգրամ (ուր տողում կա նույն շ տառով սկսվող 14 բառ) և այն զետեղել հատկապես տրիտեսի ժանրաձևի մեջ.

Երշում եմ իմ շուրջը, շրջում
Ըսրեր ու շորեր կանացի
Անցնում եմ մայրով փողոցի-
Երշում եմ իմ շուրջը, շրջում:
Լուս եմ զարնան մի շրջում,
Կարծես թե անտառ գնացի-
Իսկ շուրջու շրջում եմ, շրջում
Ըսրեր ու շորեր կանացի...

Թվում է՝ «Դանքեական առասպելից» ու «Ծիածանից» մինչև «Էմալէ պրոֆիլը Չեր» ճգվող այս պոետական հնչյունաբանությունը համապատասխանում է սիմվոլիզմից մինչև զալանտ պոեզիա ընկած տիրությին և պետք է որ ավարտվեր 1920-ական թթ. սկզբին: Բայց նախ՝ բաղաձայնությոթ հաճախադեպ է նաև նույն շրջանի առանձին՝ շարքերից դրւու զտնվար գործերում: Օրինակ՝ նույն շ-ի շատ տպագրիչ ալիսերացիա, այն էլ՝ ուղեկցված ն-ի բաղաձայնություն և ա-ու ասոնանսով, առկա է 1919 թ. գրված «Աշունը դեղնաբուխ նստել է դասնը» բանաստեղծության մեջ.

Աշուն է, օ, շուն իմ, աշուն է, աշուն է...

Ապա՝ բաղաձայնությի և անգամ ներքին տավառգրամի դեպքեր են առկա ոչ միայն, ասենք, ակամա խորհրդապաշտությանն առնչվող աշնանային պատկերներում, այլև Զարենցի կողմից այնքան սիրված զարմանային երգերում: Մեկ տարի հետո գրված «Գարունը սիրու է հուզում» բանաստեղծության մեկ տողի բոլոր բառերը, բացի մեկից, սկսվում են նույն տառով:

Հորիզոնից-հորիզոն հուր ու երդեն է վառել...

Միջանկյալ նկատելով, որ հ-ն գնալով հավակնում է գրավելու առաջին անդր Զարենցի նախասիրած հնչյունային կրկնությունների մեջ, նշենք նաև վերռնիշյալ ենթադրությունը ենթող երրորդ փաստարկը: 20-ական թվականների ամբողջ ընթացքում ամենատարբեր թեսաններով, ժամբերով ու ոճերով գրված գործերում նա սանա-սանապ դիմում է բաղաձայնությին, ընդ որում շարունակվում է հաջորդական երկու և ավելի բառերը նույն տառով սկսելու, այսինքն մասնակի կամ ներքին տավառգրամ ստեղծելու նախասիրությունը: Դեռևս «Զարենց-նամե» պոեմում ևս մեկ անգամ հնչում է հ-երի երավառությունը:

Եվ ահա-
Հոմիս,
Հուլիս...
Եվ ահա-
Սեպտեմբեր,
Հոկտեմբեր...

Կուտակումներն ավելի շատ են նույն 1922-ին գրված «Ուղարկումներ» պոեմում (թ՝ «Ճող քքեն, քքն բուրխալով կացմեն», վ՝ «Վշտահար, Վշտա, Վշտունեղ», ո՝ «ռոման անոռման կամ ոռման անսեր», շ՝ «Ծու: Ծու-շու: Մշուշում: Կշոյե շշուկը-շոգ», կ՝ «Կոմքերի կոմքը կոր» և այլն), և դարձյալ թվում է՝ երաժշատականության այդ արդեն կոպիա դրսությունները բիսում են գրական նորագույն որևէ ուղղությամ, այս անգամ՝ ֆուտուրիզմի սկզբունքներից: Բայց անցնում է նաև այս ալիքը, և նոր գործերում Զարենցը շարունակում է բաղաձայնների խաղը՝ ցուցահանելով նոր անակնկալներ: «Էլեզիա, գրված Վենեսաիկում» (1925) պոեմում, որ մոտ երեք տարով անջատված է բանաստեղծի մողեանիստական վերջին փորձից, Բանիակյանի հիշողությունները մարմնագրվում են շ-երի կուտակումով:

Նա փաղաքը եր հուշը այդ ուշ,
Եվ ի՞նչ եր հուշը - մշու ու մուժ:

Արված դիտարկումները եիմք են տալիս պանելու Զարենցի «Սառ մորմորում է մայրամուտք» տավառգրամի և հարակից տարրերակների երկու կարևորագույն հատկանիշները և դրանց նախապատրաստումը հեղինակի նախընթաց ստեղծագործության մեջ:

Առաջինն այն է, որ այդ գործերը բացարձակության հասցած բաղաձայնույթ են, և որքան էլ դա ոճարանական ու ժամանակային նորաբանություն է ողջ հայ պոեզիայում, ներքուստ նախապատրաստվել է ավելի քան քսան տարի ճգվող չարենցյան բաղաձայնությի փորձով:

Երկրորդ իրադրությունն այն է, որ Զարենցի տավուգրամները և առավելապես մ-ով կազմվածները բանաստեղծական զաղտնագրեր են, ևս մեկ արտահայտությամբ հարստացնում են շարենցյան գաղտնագրությունների համապատկերը, և ծայրահեղ բաղաձայնության տավառգրամը նույնպես հանդես է գալիս որպես գաղտնագրման միջոց:

Մտածի գերիշխանություն շարենցյան բաղաձայնութեաւ

Գաղտնագրում ինքնին Չարենցի պոեմիկայի նուրը և քիչ հետազոտված երևույթներից է, որ խռատանում է գրականագիտական նոր անակնկալներ: Իսկ ահա բաղաձայնություն և հատկապես մ-ով արվադ գաղտնագրերը մեկնարանելիս աջքի է զարնում, որ Չարենցը իր ողջ գրական ճանապարհին գործադրված բաղաձայնութեաւի համեմատ առավելությունը ավել է հենց այդ տառին: Մ-ով, որ առաջին տառն է մահ, մռայլ մութ, մայրամուս և նման ու հարակից այլ բառերի, բնագրային բնոգծված արտահայտություն է ունենում ինց այլ պահերին, երբ հեղինակն անդրադառնում է անձնական, ազգային կամ հասարակական կյանքի մոայլ վիճակներին: Պերճախոս փաստ է, որ մ-երի կուտակման առաջին դեպքերից մեկը թերևս ոչ պատահականորեն զուգադրվում է Չարենցի առաջին գաղտնագրերից մեկին՝ Սեռած Քաղաքի այլարանությանը: «Դանենական առասպելի» իինքերորդ զիսի սկզբում կից երկու տաղերի ինը բառերի կեսից ավելին՝ իինքը, սկսվում է հենց մ տառով:

Սեռ նոտանց Սեռած Քաղաքի շնորհից
Սեռած Քաղաքի փողոցները մաս:

«Ազգային երազ» պոեմում, որ նույնպես գաղտնագրություն է՝ ամրադրովին և ըստ էության, տաղերից մեկի գրեթե բոլոր բառերը սկսվում են մ-ով՝ ակնհայտորեն կազմելով ներքին տավագրամ:

Մինչ վազում էր նա դաշտում ամայի,
Ուր նուր էր ու մուժ, մշուշ էր մահի...

Եվ դարձյալ, ինչպես և մյուս տառերով ստեղծված ալիսերացիաների պարագայում, մ-ով բաղաձայնությունը չի սահմանափակվում որևէ թեմայի կամ ժամանի շրջանակում: Հարևան երկու-երեք բառեր, երրեսմ տաղի գրեթե բոլոր բառերը մ-ով սկսելը սովորական երևույթ է Չարենցի 1910-ական թթ. պոեզիայում:

Եվ այնուամենայնիվ, մ-ով բաղաձայնությունը որակապես ավելի էական դեր է խաղում նամարայնութեան կարևոր խնդիրներ շոշափող գործերում: Այդ տեսակեաից չարենցյան վաղ չափածոյից առավել բնորոշ է «Ամրոխները խելագարված» պոեմը: Բռվանդակության մի կողմի՝ իին կյանքի վախճանի պատակերման մղումով Չարենցն այստեղ զիսավար խորեղանիշ է եղակում մայրամութը (պոեմի գլուխներից մի քանիսը սկսվում են

մայր մտնող իրիկնային արևի պատկերով), որը մոտ քսան տարի անց պեար է դասնա «Սառ մորմորում է մայրամութը», «Մընում է: Սուս է մայրամութը» և մյուս արիոլեատ-տավաղօրամների առանցքային թեման և կենտրոնական պատկերը: Բացի այլ՝ պոեմում տասնյակ ծներով շրջանառում են մշուշ, մխաշաղախ, մութ, մուժ, մեղ, մարմանդ և նման բառեր: Վերջիններս ժամանակ առ ժամանակ հայտնվում են կողը կողքի: «Ին քաղաքը, օրինակ, «Լողամում էր կարծես մարմանդ մշուշի մեջ», իսկ կայարանը գրավելու պահին «Սուր էր արդեն, մայր էր մտել արեգակի շողը վերջին»:

Նախանական տպակորությամբ 1920-ական թվականներին Չարենցի պոեզիայում նկատվում է մ-ով բաղաձայնություն նվազում: Փախարենը դրանով գերառած են 1930-ականների գործերը: Այս առմանակությամբ նկատելով առեասարակ բաղաձայնություն արտահայտչամիջոցի (նաև այլ՝ կ, վ, ի, ծ, գ, ն, իւ, թ, շ տառերով) ուժգնացումն ու խորացումը Չարենցի վերջին տարիների չափածոյիւմ և մեկ այլ ասիրի բաղնելով դրա համակարգված մեկնարանությունը՝ արծանագրենք, որ հենց միայն մ-ի ալիսերացիոն խաղերը բավական կլինեն մայրամուտային տպաղօրամները համարելու ոչ թե դիպված, այլ Չարենցի ստեղծագործական որոշակի որոնումների արամարանական ամփոփումը: Ընդ որում՝ հազվագենեւ է միայն, որ մ-ով բաղաձայնությունը կամ ներքին տավագրամը չունի արամարայաված ողբերգական ներիմասա: Նման չեղոր դեպքերից է, օրինակ, «Տաղ՝ ծոնված բնությանը» բանաւոնդության մի տողը, ուր մասնակի տավաղօրամբ ծայնագրում է սոսկ մշտագնականության գաղափարը.

Օ՛, Թնուրյուն, օ՛, Մայր
Մշտակով, մշտագուն և մշտատն...

Իսկ «Քույր իմ քարե» ոռնդոյի «Սատներ մաքուր, մարմին մարմար» տողը մարմնավորումն է սիրած էակի կամ մուսայի անրիծ էության:

Բացարփակ գերակշռություն ունեն, սակայն, ինց ողբերգական կամ վախճանական տրամադրություններ մատնող տաղերն ու հատկածները: Համապատասխանարար փոխվում են նաև ընտրված բառերը, որոնք գնալով ավելի ու ավելի են մոտենում և անգամ նույնանում: «Սառ մորմորում է մայրամութը» տավաղօրամի բառապաշարին: Ապացույցը «Գիրք ճանապարհի» ժողովածուի ինց առաջին գործերն են: «Սասունցի Դավիթ»

մշակման մեջ այն պահին, երբ Դավիթը քննկնում է փոսք հաջորդում է «Ծուրցը – մըություն, ու մուժ, ու մեզ» տողը (հմմտ տավառգրամի «Մարում է մուժը մթնշաղում» տողը):

Հաջորդ՝ «Պատմաթյան քառուղիներով» պոեմի առաջին էջում Չարենցն ասում է, որ մեր պատմության մեջ («օրերի հետվում») տեսնում է միայն «Սարկություն, մոխիր, մոռացություն ու մահ»: Եվս մի քանի տարի, և «Սայրամուտք» տավառգրամ-տրիության մեջ արդեն իր օրերում նա քանից կտեսնի մահ, իսկ առաջին բնագրի երկրորդ տողում կտեսնի մահվան մոխիր փոխարերությունը («մայրամուտք մահվան մոխիր է մովից մալում»):

«Նորք» պոեմի ուրենակներից մեկը Չարենցը սկսում է «Սանգաղի նման մահարեր» տողով՝ ճան այդպես գաղտնագրելով եղեռնը, որի իսկական անունը կարծես թե չի տալիս իր ոչ մի գործում:

Նոյն գրքի «Մահվան տեսիլ» պոեմում, որ գաղտնագրություն է լսու ամենայնի, Չարենցը պատկերվող նյութի և մարերի մայլությունն արտահայտելու համար դարձյալ դիմում է մ-ով սկսվող բառերի կուտակման («Լուսաբան է, մոայլ մառախոտ, իսկ վերից գունատ մի մահիկ Իր մեռյալ լույսի հետ մեկտեն», «Միննոյն մառախուղն է բռնել թե՛ մոտիկը մեր, թե՛ հեռուն»): Ծածկագրված հերոսներից մի քանիսի մուտքն ու բնուրագիրը նույնական տրվում է մ-երով.

Սուսանում է մեկը. դեպի մեզ, դեպի մեզ է գալիս
տես նա...

Սուսանը մեզ մոայլ մի մարդ՝ մազերը գանգուր
ու խորի...

Վերջին օրինակում անընդմեջ իրար են հաջորդում մ-ով սկսվող վեց բառեր: Դա ինքնին արդեն տավառգրամ է, որ յուրահասուկ իմաստ է ստանում նրանով, որ «Գիրը ճանապարհի»-ից մինչև «Մայրամուտք» ընկած մի քանի տարվա ընթացքում արդեն սովորական մի բան է ստանում ամբողջ կամ գրեթե ամբողջ տողը այդ տառով սկսվող բառերով կազմելը: Մահվան և դրա գաղտնագրը դարձող մ սկզբանաւորի գերիշխանություն է վերջին տարիների քաջամարիկ գործերում:

«Կոմիտասի հիշատակին» պոեմում դիմելով վախճանված ու վերադարձած հերոսին՝ Չարենցը ևս մեկ անգամ ութասող տան մի տողի բալոր բառերը սկսում է մ-ով:

Կարծես տեսել եմ նս քեզ,
Սանկությունից մինչև մահ... (ԱՉԵ, էջ 335)

Հաջորդող տներում բանաստեղծը նկարագրում է նրա մոմենտանում նրան իրեն մեռած մարգարեի, իսկ իր եռորդ՝ կոչում մարդ ի դեպ, պահնում արկա են ճակ ուրիշ տառերով կազմված ներքին տավառգրամներ):

Նոյն 1936 թվականին գրված որոշ գործերում Չարենցը պատկերում է արդեն իր օրերի մարդկանց և իր կյանքի մահացությունը և հենց մահը, որոնց ներդաշնակում են ամբողջովին միայն մ տառով սկսվող բառերից կազմված տողեր: Ամենից ցայտուն օրինակները կարելի է քաղել թաղման սարսապղեցիկ նկարագրություն ներկայացնող երկու գործերից: Առաջնը «Անվերնազիր» կոչվող անավարտ պոեմն է: Չտեսնված տրամարախիծ թաղմանը մասնակցող մի քանի մարդկանց առջևից զանցող և դագաղի կափարիչը զվահին դրած խորերդավոր մարդուն բանաստեղծը բնորոշում է այսահին մարդ տողով:

Մի մամուագույն մշակ մանրանարմին... (ԱՉԵ, էջ 352)

Ոչ պակաս ցնցող է «Դոֆին նայիրականի» «Սոնեւս բատմնելի» մասի առաջին տունը: Հենց այսանուն է տրված Աղասի Խանջյանի բուն մահվան կամ սպանության պատկերը, և խիստ բնորոշ ու տպավորիչ է, որ բառատղությունը տրված է գրեթե միայն մ տառով սկսվող բառերից կազմված տողով.

Ընկած ես դու, Հոգին, գրոսանքի համար
«Թարեկանի» կանչով անտառ տարված-
եվ-լիկվերուց հետո- դաշունահար արված
Մի մալորկած մանկան մեռած մարմնի նման... (ԱՉԵ, էջ 134)

Այսպիսով՝ թաղածայնույրը Եղիշե Չարենցի բանաստեղծական մտածողարթյանը խիստ բնորոշ երևույթ է, և տավառգրամի՝ որպես բացարձակ բաղածայնույրի հայանությունը նրա գրական ճանապարհի մայրամուտին ուրագալ պատկանություն է, ոչ զրյա խաղ, ոչ սոսկական ազդեցություն: Այն չարենցյան պոետական հենցունաբանության, ավելի ստույգ՝ ալիսերացիայի տրամարանական գարգացման արդյունը է:

«Մաս մորմոքում է մայրամուտք» տավառգրամի բառապաշտքը

Բայց տավառգրամները Չարենցի գրարվեստի ամբողջությանը հոգեհարազատ են ճակ այսպես ասած բառագիտությամբ՝ բառապաշտքը, բառիմաստեղությունը ու բառագործածության նրան-

թյուններով: Ակնհայտորեն երևում է, որ քանաստեղծն առանձնապես դժվարություն չի կրել նույնասկիզբ բառեր հայրայթելու հարցում: Բավկական է նկատել օրինակ, որ քիչ առաջ վկայակոյված տավագրամային տողերի բառերի մեջ մասը (նամագույն, մշակ, մանրամարմին, մոլորված, մանուկ, մարմին...) գործածված չէ մայրամուտային տավագրամներում: Գործածված են ուրիշ բառեր, որոնք Չարենցի պոեզիայում ունեցել են տասնյակ, երբեմն հարյուրավոր իմաստալից կիրառություններ: Այդպիսին են հատկապես արիութային կրկնության ներարկված բառերը, որ նույն այդ կրկնությունների հետևանքով ամենից շատն են հանդիպում նաև հենց տավագրամներում: Երևույթը դիտարկենք մի քանի տողերի օրինակով՝ բնականարար սկսելով առավել տարածված, եիմնական բնագրի դեր կատարող առաջին տողից:

Սառ մորմորում է մայրամուտը: Եթե մի պահ սոսկ պայմանականորեն անտեսներ խիստ անսովոր, նույնիսկ արտառող մաս բառը, մյուս երկու բառերը Չարենցի բառարկեսաի ամենից կենտրոնական միավորներից են՝ առաջին տարիներից մինչև վերջ: Մայրամուտը, որ փաստորեն տավագրամի զիսավոր հերոսն է, խորհրդանշում է ժամանակը և առարկայորեն (օրվա ավարտ), և փիլիսոփայորեն (կյանքի վախճան): Ինչ-որ պահերի այն ասես նույնանում է հերոսի՝ բանաստեղծի էության հետ: Այս և այլ նրերանցներով բառը նախապատրաստվել է մոտ քսան տարի: «Ծիածան» գրքի «Գաղեներ» շարքի 12-րդ գաղելում մայրամուտը դառնում է կրկնվող բառապատկեր այնպես, ինչպես տավագրամուտը, բայց շնորհիվ գաղելային հանգի հաճախականության:

Ի՞նչ տրաում են զանգերը, քո՞ւր, մայրամուտի, —
Զանգերը բաց ու գողարք լոր մայրամուտի...

Ավելի քան քսան տարի հետո սիմվոլիստական մայրամուտը վերաճում է մահվան համարժեքի: 1936-ին գրված «Ի խորց սրտի խոսք ընդ Աստուծո» տեսրապատիքոսում բառը բանաձեռնում է քանամյա հանրային ու անձնական կյանքի ողբերգական կերպափոխությունը:

Վաղ աղջամուղջ այնքան ըղջյալ Այգարացի
Մայրամուտի վոխվեց արյունալին... (ԱՉԵ, էջ 195)

Գյուտի արժեք ունեցող «Մառ մորմորում է մայրամուտը» առաջին տողից հետո և դրա իսկ թելադրանքով «մորմորում է մայրամուտը» նախադասությունը հանդիպում է ևս ուր անգամ: Այս հանգամանքը, ի դեպ, կանխորոշում է ևս մեկ կարևոր յուրահատկություն: Բնարավիլիստիական տավագրամի ընդերքում

ձևավորվում է փոխարերություններով ու անձնավորումներով առաջ շարժվող այլարանական ներքին սյուժեն: Թնարական այդ դրամայի պայմանական հերոսներն են մուրը («Մեռնում է մուրը մթնշաղում»), մառորմները («Սարիս մառեր են միայն մխում», «Մտորումներս մահահուա են»), մուժը («Մարտում է մուժը մթնշաղում»), մարխը («Մխում է մարխը»), միրզը («Մզկել է միրզը մեր մադախում»), մովը («Մտքերս մովն է մահվան մղում», «Մեռնում է մովը մթնշաղում»):

Բայց զիսավոր հերոսը, այնուամենայնիվ, մայրամուտն է, իսկ տավագրամի հիմնական գործողությունը՝ նրա հոգեվարքային վիճակը, որ մարմնավորվում է մորմորում է բայց: Իսկ ինչո՞ւ է հատկապես այդ բառով: Պատասխանը բխում է արդեն փաստացի հիմնավորվող դրույթ դարձող այն տպավարությունից, ըստ որի՝ տավագրամները գրական դիպված չեն, այլ Չարենցի ստեղծագործությանը բնորոշ մի ամբողջ շարք միտումների խստացումը: Թանն այն է, որ մայրամուտային տավագրամում հաճախականությամբ երկրորդ տեղում գրավող այդ բառը մորմոր գոյականական և մորմորել բայական ծերով բազմիցս և հարատև գործածվել է Չարենցի ողջ ստեղծագործության մեջ: Թեև մեզ հասկանալիորեն ավելի շատ հետաքրքրում է բայց, հպանցիկ արձանագրենք նաև մորմոր գոյականի խիստ տպավորիչ երկուական կիրառությունները առաջին «Մահվան տեսիլում» («Անրոց մորմորը նահրյան իմ ո իր հոգու», «Ինչպես մորմորը օրերի») և «Երկիր Նահրի» վեպում («Ասում է՝ չե՞ն ծանաչում: — Սոռացն իս, — հարցնում է մա: Եվ իս, փայտ զնելու փոխարեն անողոք մորմորը սրտիս — վերադառնում են տուն», «Գուցն սուսա է Նահրին, Նահրին — չկա... Գուցն — իուշ է միայն, — ֆիկցիա, միի: - Ուղեղային մորմոր, սրտի եիվանդություն»), իսկ տավագրամին ժամանակակից գործերից՝ «Նավզիկեի» այս տողերը:

Նայալների նման, նայալների նման,
Կարուտներիս ծայնով կանչում է ինձ,
Խոստանալով սիրո անհատնի հմայք
Եվ բողնելով մորմոր և կորստի կոկիծ... (ԱՉԵ, էջ 345)

Իսկ ահա մորմորել բայի անդեմ և դիմավոր զանազան ձևերով տառացիորեն ողողված են Չարենցի տասնյակ գործեր, որոնցում կսկծայ, մրմուալ, երեմն նաև վշտացնել բառարանային իմաստները ամեն անզամ յուրավի են իմաստավորում անձնական և հանրային կյանքի ողբերգությունը:

Մահվան մոխիր է մովից մաղում: Ի տարրերություն առաջին առողի, որի երեք բառերից առնվազն երկուսը խիստ հարազատ են Չարենցի պոեգիային, այս առողի արդեն չորս բառերից երեքը (բացի Մահվան բառից) բվում են ոչ այնքան շարենցյան: Բայց նախ՝ բանաստեղծի ամբողջական բնագրին խիստ բնորոշ է մաս բառը՝ «Մահեղ, զիտե՞ս, մի լուսավոր առասպել է, քո՞ւր» խորեղապաշտական պատկերից մինչև վերջին տարիների գործերը, որոնց մեջ կամ անզամ այդ բառով վերջացողներ (երրորդ «Մահվան տեսիլ»), «Ընկել է վար – չոր կրծքին... լուրջուն: Մահ», «Անվերնագիր» պոեմ՝ «Տուր ինձ, երկինք..... Այդպիսի մահ..... Եվ այդպիսի բարդում.....»): Այս առնյությամբ չանախենով հանդերձ բառի նաև ուղիղ ձևի գործածությունը տափողրամներում («Մասրումներս մահ են», «Մահ է մայրամուտար»), հարկ է հատուկ ընդգծել որ մյուս դեպքերում և քանից բառը օգտագործված է սեռական-տրական հոլովաճնով՝ մահվան մոխիր, մահվան մրուր, մահվան մողում, մահվան նշուշ... Իսկ այդ ձևը տափողրամների լեզուն ապնի է մոտեցնում Չարենցի մյուս գործերի լեզվին, որում սիրված է բառի հենց այդ հոլովաճնով՝ այն ասաիճան, որ մի բանի անզամ արտահայտվել է երկի հենց վերնագրում (երեք «Մահվան տեսիլներից» բացի՝ նաև «Մահվան բայլերգում»), երբեմն էլ՝ վերնագրից ոչ պակաս տպագրիչ կիրառությամբ արտահայտվել բնագրի որևէ ցայտուն մասում (օրինակ՝ «Խմ մահվան օրը կիշնի լուրյուն»): Եվ երբ բանաստեղծը նախապատվորյունը տախուն է հատկապես իրեն շատ սիրելի մահվան բառածնին, դրան հաջորդող կամ հարկանություն անող բառերը նույնպես հնչում են որպես չարենցյան, եթե անզամ նրա բնագրում չեն ունեցել նույն հաճախականությունը:

Մոխիր-ը, օրինակ, նույնպես ընկալվում է որպես կյանքի ոչնչացման բառապատկեր, մանավանդ որ նույնանշանակ կիրառություններ է ունեցել Չարենցի տարրեր գործերում՝ առաջին գործում («Գնա, սիրելիս: Խող կյանքը զլսիս մրրիկներ տեղա Ու մոխիր ցանի»), Տաղարանում («Սիրաս վասկեց, մոխիր դարձավ՝ ինքը կրակ ու հուր մնաց»), «Ամրօխները խելագարված» պոեմում («Ու մնացած մոխիրը ճիզ պիտի այրե՞ն նրանք նորից, Որ կյանքը իին, որպես փյունիկ, չբարձրանա՛ մոխիրներից... Քամո՞ւն տալով մոխիրը այն, որ տանի ու ետ չբերի»), «Պատմության քառուղիներով» պոեմի արդեն վկայակոչված հատվածում («Բայց օրերի հեռվում ես տեսնում եմ միայն Սարկություն, մոխիր, մոռացություն ու մահ»): Ընդ որում՝ բառը իմաստ է ստանում

խոսքաշարում, ոչ թե սուկ բառարանային նշանակության կամ հեղինակի նախընթաց որևէ գործում հանդիպած լինելու փաստի, այլ բնագրի ծիշա տեղում նպատակապաց համադրություն կազմելու շնորհիվ: Տվյալ դևակում, ասենք, մոխիր բառը վերահմաստավարփում է մի կողմից մահվան մոխիր բառակապակցության լրացուցիչ իմաստի միջոցով, մյուս կողմից՝ նրանով, որ մաս մորմօքող մայրանուափ մադած մոխիրն է: Տպագորությունն էլ ավելի է ուժեղանում հաջորդող բառային միավորի՝ մով բառի շնորհիվ («Մահվան մոխիր է մովից մաղում»): Պատկերի ողբերգականությունը սասականում է նաև մաղել բայով, մանավանդ որ երշում ենք, թե ինչպես իր կյանքի դեռևս առաջին դրաման «Երեք երգում» Չարենցը արտահայտում էր նաև այդ գործողությամբ («Թոռն էր մադում միապաղադ, ցուրտ ու բաց»), որ շատ տարիներ անց հետահայաց իհշողությամբ վերականգնվել է նաև «Սուսայիս» բանաստեղծության մեջ («Նախ՝ աղջիկ կր դու մի հասարակ, Որ դեմս եղար օրերում դժմի: Անձրն էր մադում իմ զլսին բարակ, Ու չկար կյանքում սրբազան կրակ»):

Եվ ահա մոխիր և մաղել դաժան բառերի արանքում առանձնահատուկ նշանակություն է ծեռք բերում մով բառը: Այն տեղ է գտնել տպագրված բոլոր չորս տարրերակների երկրորդ տողերում:

1. Մահվան մոխիր է մովից մաղում
2. Ու մզկանու է մովից մաղում
3. Սարմանդ մրուր է մովից մաղում
4. Մահվան մշուշ է մովում մաղում

Բառարանային նշումով բարբառային համարվող այդ բառը, յմտնելով հանդերձ լեզվի ընդհանուր գործածական բառաշերտի մեջ, Խսահակյանի և Տերյանի ենարով Չարենցի պոեզիայում ունեցել է առնվազն նույնքան գործածություն, որքան տավառգրամում: Հաստատուն կերպով այն խորեղդանշել է իր բառիմաստին (բաց կապույտ, երկնագույն) ներդաշնակող բերկրանքն ու գեղեցկությունը՝ ներերանգային փոփոխություններով հայտնվելով «Մարի, է գ բազում...» լիրիկական բալլարի («Զգիտեմ, Մարի, երկնքի մովից ինչո՞ւ էր հոգիս կարուսով կանչում») և «Վերադարձի» («Երբ երկնքի մովում վերջին ասադը հանգավ՝ Նա իր առունը բողեց ու ծանապարի ընկավ») հենց առաջին առղերում, «Գագելներից» մեկում («Հոգմեցի կապույտ մշուշից, մովից»), «Էմալե պրոֆիլը Չեր» շարդում («Երգերը Չեր մարմանը ու մով») և, վերջապես, «Տաղ անձնական»-ում:

**Թողած Կարսում, գետի ափին, տունս՝ շինված
ամսաշ քաղաք
Կարսը քաղաք, Կարսի այզին ու հայրենի
երկինքը մով...**

**Խորերդապաշտության ու պառնասականության շրջանի
պայծառ-օրիներգային մով-ը մոտ երկու տասնամյակ հետո
Զարենցի մտապատկերում ենթարկվում է մահվան
համբճիւանուր գերիշխանությանը:**

**Նույնը կատարվում է նաև սիրելի այլ երևոյթների և բառերի
հետ։ Օրինակ՝ դեռ «Տաղարանում» նա բանաստեղծը հոգեկան
աշխարհը քանից զուգորդում էր մրգի հետ («Նազանք արավ,
Սայաբ-Նովի սիրար լցրեց միրգ ու մուրազ», «Ես էն սրտին
դրախտային մրգերի բաղ պիտի ասեմ», «Ամառվա մրգերի նման
անո չը է քո բառը, ասին»), իսկ ալելի ուշ՝ տավոզգրամին
նախորդող շրջանում, մերկացնում էր բառի խորերդանշական
առումը՝ գեղագիտական սահմանումներում տեղ բացելով միրգ-
պոեզիա վոլխարերության համար։**

**Եվ դպրությունն են մեր երգում ես,
Գեղեցկությունը դպրության վես,
Որ օրնում այս պարզեն մեզ
Հոյզեր երահուր և մրգեր կեզ:**

**Այսպես է ասվում 1932-ին, իսկ արդեն իինգ տարի անց
Զարենցը մահերգում է նաև մրգի մզելը, այսինքն՝ մահացումը.**

Մզել է միրզը մեր մադախում...

Եվ դարձյալ բառի այլարանական արահայտչականությունը ավելի է ուժգնանում դրկից բառի շնորհիվ. մրգի՝ հատկապես մաղախ - տոպրակում դրված լինելու հանգամանքը պատկերին եադորդում է շարժման և կենսական իրավիճակի՝ ճանապարհ գնալու, մրգով սնվելու և հարակից ուրիշ գծեր։ Պատկերի կենդանացմանը նպաստում է մաղախ (ընդ որում հենց այդ և ոչ արդի գրական նորմայով քննունված մախսադ ձևով) բառը թե ինքնին, թե՝ Զարենցի նախընթաց պոեզիայում ունեցած դրվագային, բայց խիստ խորիմաստ, գրեթե միշտ ճանապարհ, ընթացքի դժվարություն, մաքառում խորերդանշող կիրառություններով։

**Կյանքի դրական իիմունքները մարմնավորադ բառերից
մահվան ափրություն է հայտնվում, մովից ու մրգից բացի, նաև
դյութական մոզը։ Ժամանակին Զարենցի պոեզիայում այդ բառը**

երեացել էր դիպվածով միայն («Մոգ-վարսավիրը սակայն թափում է նույրը հմայքմեր»): Եվ ահա տավոզգրամին ոչ շատ առաջ գրած «Մակագրություն իմ պորտարեի վրա» բանաստեղծության մեջ նա իմքն է երազում դամալ մոզ («Դու դեռ անփորձ ես ոգով, դեռ բույլ ես, Զարենց, Վարժիք ոգիու, եղիք ը մոզ, ինզ ու արեգ - Ինչպես Գանդին Սահաթմա՝ հնդիկն հանճարեղ»), իսկ «Լերան աղորքը» պոնմում Տիրոջից հայցում է կորով՝ լինելու «մոզ իմքնախոն ու իրօ»։ Վերջին գործը ստեղծվել է տավոզգրամների հետ զրեթե միաժամանակ, և ահա մով բառերի տարավի մեջ հայտնվում է նաև մոզը : Եվ երբ չորրորդ արիոլետում ասվում է՝ «Մեռնող մի մոզ է մայրամուտ», մոզ-մայրամուտի մահը զուգորդարար ինչ-որ առումով ընկալվում է նաև իբրև իր՝ բանաստեղծ հերոսի մոտալուս մահ։

Սակայն կյանքի համընդիանուր վախճանի զգացողությունը ներառում է նաև այնպիսի երևոյթներ, որոնք Զարենցի պոեզիայում ժամանակին արդեն իսկ հարուցել են դառը, մոռյլ հոգեվիճակներ։ Վերջիններս մարմնավորող մութ, մթնշաղ, մուժ, մարխ, մրուր, մշուշ, մզլահուա բառերը նույնպես, ինչպես և վերը դիմարկվածները, այս կամ այն շափով և ծևով գործածվել են հենդինակի գործերում և դրանով իսկ մասնակցել մայրամուտային տավոզգրամի ճնապարհմանը։

«Սառ» բառը տավոզգրամում և Զարենցի պոեզիայում

Եվ մեկը միայն, այն էլ առաջինը, ամենից տպավորիչը, խորախորեւրդն ու պերճախոսը՝ ՄԱՌ բառը, թվում է, երբեք չի օգտագործվել ոչ Զարենցի, ոչ էլ որևէ ուրիշ բանաստեղծի սանդածագործության մեջ։ Այլ կերպ ասած՝ գոնե իբրև բանաստեղծական բառապատկեր՝ մաս-ը բողնում է նորագոյուտ բառի տպավորություն, տպավորություն, որ ամբապնդվում է նաև մոզական այդ բառի հանդեպ չարենցագիտության ունեցած առնդժկածային անտարերությանը։ Միանգամից ասենք, սակայն, որ դա բյուր տպավորություն է, բանի որ տավոզգրամի այլ բառերի նման մաս-ը նույնպես Զարենցի պոեզիայում ունեցել է տասնյակ կիրառություններ, ընդ որում հենց առաջին գործերից և մինչև վերջ, մինչև 1936-1937 թվականները՝ տավոզգրամներին անմիջապես նախորդող գրվածքները։ Բնագրային մանրազնին քննությամբ կառանելով, որ տավոզգրամներում չկա Զարենցի սանդածագործության ամբողջությանը չիհամապատասխանող, այսինքն՝

պատահական կամ դիպվածային որևէ միավոր, սկսում ենք ուշադիր վերընթերցել հեղինակի գրվածքները՝ համոզված, որ շուտով կատնենք նաև այդ խորհրդավոր բառը: Եվ ահա գտնում ենք այն հենց սկզբում՝ «Դանքեական առասպելում», այն էլ հանրահայտից հանրահայտ այդ պոեմի երից քաջածանոթ մասերում և այն էլ մեկից ավելի անգամ: Առաջինը Վաճ քաղաքի կործանումը զաղանազրող հատվածում է, որ մեկ անգամ արդեն մեջքերել ենք որպես մ-ով բաղադայնույթի առաջին դեպքերից մեկը.

**Մենք մտանք Մեռած Քաղաքի շնչցից
Մոռած Քաղաքի փողոցները մաս:**

Սա կարծենք թե Զարենցի ստեղծագործության մեջ մաս բառի առաջին կիրառությունն է, որ խորհրդանշորեն գուգաղիպատ է նրա առաջին նշանակոր զաղանազրմանը: Եվ մեռած-մաս հնչյունային ու իմաստային համադրման մեջ արդեն 1916 թվականին նախնականորեն, բայց խիստ հստակ արտահայտված է այն գեղագիտությունը, որ ավելի քան քսան տարի անց պիտի արտահայտվեր մահվան տակտոգրամներում:

Եթե հավատանք հայերենի հիմնական բառարաններին, գրաբարից սկսած՝ մաս նշանակել է և ցարդ նշանակում է առաջին ենթին մասը: Բայց Զարենցը հենց սկզբից այն կապում է մով սկսվող այլ բառերի հետ, որպեսզի վերջնական արդյունքում շարադյուսի այսպիսի տողեր.

1. *Սառ մորմորում է մայրամուար*
2. *Սառ մայրամուար մթնշաղում*
3. *Սառ մզլահուս է մթնշաղում*
4. *Սառ՝ մզիսրանում է մզլահուար*
5. *Սառ մզլահուս է: Սահը: Սուրը:*

Մրանք Զարենցի անտիպ երկերի առաջին գիտական հրատարակության բնագրերի մասում և բնագրային տարրերությունների մեջ բերված բոլոր այն տողերն են, որ պարունակում են մաս բառը: Եվ եթե հաշվի ենք առնում, որ դրանցից մի քանիքը կրկնվում են չորս-հինգ անգամ՝ բայց ընդհանուր հաճախականությունը հասցներով մոտ մեկուկես տասնյակի, ակնհայտ է դառնում, որ անգամ քանակական չափանիշով մաս-ը տավածորամի կենարոնական բառերից մեկն է, եթե ոչ ամենից էականը: Վերջին առումնով առավել ուշագրավը բերևս այն է, որ Զարենցը հենց դրանով է սկսում հիմնական բնագրի դեր կատարող, առավել մշակված երկու տրիումիաները: Բացի այդ՝ մաս-ը տավածորամի

տասնյակ բառերից միակն է, որ միշտ դրված է առողի սկզբում, այսինքն՝ բնագրի ամենաերևացող մասում:

Առավել կարևորը, սակայն, բառագործածության որակն է: Այդ բացառիկ գեղեցիկ և խորհրդավագոր բառով բանաստեղծը բնութագրում է և առարկաները՝ ստեղծելով բազմանշանակ մակդիրներ («Սառ մայրամուար», «Սառ մզլահուս»), և գործողությունները՝ բառին հատկացնելով հայերենին ոչ այնքան բնորոշ մակրայական-պարագայական ոճական կիրառություն («Սառ մորմորում է», «Սառ՝ մոխրանում է»): Որքան էլ այն ոչ մի անգամ չի հարադրվում մասի, մեռնել և հարակից այլ բառերի հետ, մեռնող երևույթները և մահացման գործողությունները արտահայտչորեն բնորոշելու ուժով մասնակցում է մահվան համընդհանուր տիրապեսարար կերպավորմանը:

Բառի գեղագիտական իմաստարանության այդ եզրացմանը Զարենցը հասել է տասնամյակների արժանիքի ճանապարհով: Նոյն «Դանքեական առասպելի» վերջին փիլիսոփայական մտահաճման մեջ Զարենցը էապես ընդարձակում է բառի նշանակությունը՝ այն իրքն որոշի դնենքը խիստ վերացական, անշոշափելի զառանցանք բայանվան կոռդին (ընդ որում խոսքը տիեզերքի զառանցանքի մասին է):

...Ու պե՞տք է քայլե՞լ ու քայլե՞լ համառ՝
Սպիրելու հսկա տենչը թե արած, —
Քայլի ամիսասա մի կյանքի համար,
Սպիրել — ու վատել ասալելոք մարած,
Որ — տիեզերքի զառանցանքը մաս
Չցնդի՛ նրբեր ու մնա — երազ...

«Մոռած Քաղաքի փողոցները մաս» և «այնեղերքի զառանցանքը մաս»: Տպագրիչ, ցեցող, բայց ի վերջո առարկայորեն շոշափելի առաջին պատկերի և բնագրանցական-տիեզերասույց երկրորդի միջև ասես մի ողջ դարաշրջան է ընկած, և այնուամենայնիվ երկուսն էլ ստեղծվել են 18-19 տարեկան նոյն բանաստեղծի կողմից, գրեթե միաժամանակ և նոյն ստեղծագործության մեջ:

Թվում է՝ «այնեղերքի զառանցանքը մաս» մասհայեցողությունից այն կողմ այլևս գնալու տեղ չկա: Բայց չարենցյան անակնելերը սահման չունեն: Անցնում է մոտ վեց տարի, և ահա «Ասպետական» ուսպասիդիայում (1922) դարձյալ հայտնվում է մաս-ը և կրկին՝ նոյն ստեղծագործության մեջ մեկից ավելի անգամ: Եվ եթե «դաշտերում մաս ավագն» տողը էական նրբերանգ չի հավելում մաս փողոցների պատկերին կամ խորությանը չի

գերազանցում այն, ապա գեղարվեստական նոր անակնակալ է բառը որպես անձի անվան՝ Ալֆոնս Անդրյի դոյակի դռնապան զինվորի վերապիր օգտագործելը.

Դարրասը շնչնով քացվեց.-
Մի զինվոր էր մաս ու մրհի:

Սա 1922 թվականն է, և Չարենցը արդեն առնվազն չորս անգամ գործածել է մաս բառը: Միանգամայն բնական հարց է առաջանում, թե այն ունի՞ արդյոք որևէ սկզբնադրյուր: Դիտարկումները մղում են ոչ վերջնական, բայց գրեթե հաստատ այն ենթադրության, որ մինչև 1922 թվականը ոչ իին, ոչ նոր շրջանի որևէ բանաստեղծ չի օգտագործել մաս բառը:

Ժումանյանը կարծեն թե միակն է մինչչարենցյան հայոց բանաստեղծության մեջ, որ գործածել է մաս բառը (նետչարենցյան շրջանի կիրառությունները առանձին քննության նյութ են), ընդ որում՝ երկու անգամ: Առաջինը «Սիրիոսի երաժեշտը» բանաստեղծության մեջ է:

Սիրիոս, երկից շրբեղ գնիար,
Որ խաղում ես,
Փաղիսաղում ես
Ծերմակ ու բիկ լուսով քա վաս,
Ու գարդարում,
Զըկարք վառում
Սեր զիշերվան ճակատը մաս :

Երկրորդ կիրառությունը տեղ է գտել «Անրուն կկուն» ստեղծագործության մեջ:

Եսպես կկուն իրնն ըընում
Քերամ-քերամ լաց էր լինում:
Մին էլ տեսավ՝ ցինզիր տալով,
Մաս ու մոայ, հերերալով,
Ո՞ր սև սարից, ո՞ր խոր ճորից,
Եկավ դաժան զեր նորից:

Չարմանալին այն է միայն, որ Հովհաննես Ժումանյանը և «Սիրիոսի երաժեշտը», և «Անրուն կկուն» գրել է կյանքի վերջում՝ երկուսն էլ այն նույն 1922 թվականին, երբ գրվել է մաս «Ասպետականը»: Դրանից վեց տարի առաջ Չարենցն արդեն գրել էր «Դանքեական առասպելը»՝ մաս բառի կիրառություններով եամդերձ, որոնք բումանյանական մաս-երի հետ, հասկանալի է, որևէ կապ ունենալ չէին կարող:

Իսկ որտեղից կարող էր քաղված լինել շարենցյան մաս-ը: Տարրական տրամարանուրյամբ իսկ հասկանալով, որ դա նորարանուրյուն չէ, ինտենսով հայ իին մատնեազրության, միջնադարյան և նոր բանաստեղծության բառամբերքին՝ կարելի է ներառնել, որ Չարենցի ուշադրությունը այդ բառը գրավել է որևէ բառարանում: Ամենահավանականը նշանավոր հայկացյան բառարանն է, որը ՄՊԱՆ բառակողվածում ներկայացնում է երկու միանցամայն տարբեր իմաստներ: Առաջինը զինու երեսին գոյացող մածուցիկ եյութն է (փառը), որի համար բնագրային նմուշ է բերվում «Գիրք Վաստակոց» նշանավոր աշխատությունից: Իրականում այս առաջինը բոլորավիմ ուրիշ բառ է, որի հետ Չարենցի որևէ բնագիր առնչություն չունի: Որպես երկրորդ իմաստ՝ բառարանը նշում է խավար, մուր, մնզ, մառն, մոայ՝ իրրե նմուշ քաղելով Սանիանու Լեհացու «Ծածկեցաւ մատամբ բաղան ամենայն» նախադասությունը («Նոր բազիրք հայկազեան լեզուի», հ. 2, Ե., 1981, էջ 210): Հետաքրքիր է, որ բառի հաջորդ կիրառության մեջ՝ «Էլեզիա, գրված Վենետիկում» (1925) պոեմում, Չարենցը կողք կողքի է դնում մաս և քաղաք բառերը՝ որոշ իմաստափոխությամբ եամդերձ կրկնելով հայկացյան բառարանում բերված օրինակի բառերը.

Բացին էր դեմս մի մուր կամար,
Ուր արեգակը՝ թելից կախած՝
Լուսավորում էր քաղաքներ մաս...

Եվ դարձյալ, ինչպես և մ տառով բաղաձայնույթի պարագայում, մաս բառի եամախականուրյունը անհամեմատ մեծանում է 1930-ական թթ.՝ «Գիրք ճանապարհի» ժողովածուի և դրան հաջորդող գործերում: Պոեմներում Չարենցը մի քանի անգամ այդ բառով է բնորոշում ազգի անցյալը: Էպոսի մշակման մեջ նախ մաս մակդիրով է բնորոշվում Շենով Օհանը.

-Եվ զուր է ասում զրույզը հար,
Թն պահում այդ սև, այդ ժամին չար.
Օգնության եկավ խորհուրդով վաս
Շենով-Օհանը, իշխանն այն մաս:

Պոեմի վերջնամասում ենդիմակը ընդհանրացում է անում, որ հայրենի երկրում «Տիրեց Օհանի սերումնը մաս Բազու տարիներ, - ու դարենար», իսկ փոքր-ինչ ինտո երկրորդում է:

Այսպես Օհանի սերումնը մաս
Տիրեց աշխարհում երկա՞ր, երկա՞ր...

Վերջին տողերից ընդամենը չորս տարի հետո նույն հայրենի

Երկրում դարձյալ կտիրի մաս-ը: Որպես տավողքրամի նախապատճեն՝ նկատելի է օրինաշափության կարգի մի երևոյթ: Նույն գրվածքի մեջ Չարենցը բառը օգտագործում է մեկից ավելի անգամ: Այդպես էր «Դանքեական առասպել» պոեմում, այդպես էր նաև ուսպողիայում, իսկ ահա «Սասունցի Դավիթ» պոեմում մաս-ը գործածված է արդեն չորս անգամ: Չուզահեռարար տեղի է ունենում բառի իմաստային և գեղարվեստական նշանակության ընդարձակում: «Մաս սերմային» շուտով հաջորդում է նույնքան խորիմաստ «մաս բարբառ» («Գովը խաղողի, գինու և գեղեցիկ դպրության»), որ խորիրդանշում է մշակույթի մրագնումը և շղթա կազմում բաղաքական ամենամ ու մռայլության ենտ:

Որ մաս բարբառով դպրության մուր
Կոփել եք ստրոկ մի ժողովուրդ...

Ավելի բնդեանրական-վիլխութիայական բնույթ ունի բառը «Արվեստ քերպության» շարքի առաջին՝ «Սոնետ» բանաստեղծության մեջ («Ճրբեն հոգնած մշակ՝ տարել եմ երգըս ևս Ուղիներով կյանքի թե՛ մաս, թե՛ մուր, թե՛ կեզ...»):

Առավել հաճախակի, բազմազան և նուրբ են մաս-ի հայտնությունները «Գիրք ճանապարհի» ժողովածուից հետո, այսինքն՝ տավողքրամմերից անմիջապես առաջ սաեղծված ճեռագրերում: Վստահաբար կարելի է ասել, որ այն Չարենցի թերև ճեռով դառնում է պոեզիայի անօտարելի բնական ներկայություն, անսպասելի զյուտերով զարդարում այս կամ այն բանաստեղծության, պոեմի, բարգմանության բնագիրը: «Երբ բարձրանում էր նա վեր...» պոեմում միջնադարյան պատմիչը իր պատմության մեջ նկարագրում է ավերված երկիրը:

Մաս անսպատ դարձած
Ե՛վ լս, և հովիտ... (ԱՉԵ, էջ 364)

Նույն մաս անսպատը՝ որպես գտնված պատկեր, տեղ է գտել գրեթե միաժամանակ զրված այլ գործերում, այդ թվում՝ Պուշկինի «Մարգարե» բանաստեղծության բարգմանության աշխատանքային սևագիր նշումներում («Մաս անսպատում դեգերում լուս»): Վերջին գործերում նույնպես, ինչպես «Դանքեական առասպելից» մինչև «Գիրք ճանապարհի» ընկած կիրառություններում, բառը արտահայտում է մերք ազգային-հասարակական կյանքի ողբերգությունը, մերք բանաստեղծի ներաշխարհի դրամատիկ զացողությունները: Առաջին կարգի է, պատմիչը դրվագից բացի, նաև Կոմիտասի ճակատագիրը եղեռնի մռայլ

համապատկերում բացահայտող համակածներից մնկը.

Ծիշա է, Վարպետ: - Զո ոգուն
Իջած մուժի նման մատ-
ել հայածող մահարույն,
Եվ խավարի պես խավար,-
Այն օրերուն մեր երկրի,
Մեր աշխարհի վրա ողջ-
իջել էր սև ավերքի
Զարդուրելի մռայլ քոն... (ԱՉԵ, էջ 315)

Երկրորդ կարգի կիրառությունները նույնպես մեծապես նպաստում են մաս տավողքրամմերի վերջնական ճևակորմանը: Շանապարհի հենց սկզբում տիեզերքի մաս զառանցանքի փիլխոսփայական պատկերը հայտնաբերած բանաստեղծը ավելի քան քսան տարի հետո մաս իրականության անդրադարձն զգում է նաև իր եղանակ և սաքի մեջ: «Հեղեղնուինի Սաֆո» ստեղծագործության մեջ նա առաջին անգամ այդ բառով է բնորոշում իր եղանակը («Ես քո կարուն եմ մաս Զգում անվերջ»), իսկ երազներին նվիրված «Պոեմ անվերնազիր» հոգենվերտունական երկում մաս է համարում հենց իր ճակատագիրը.

Միաշրանքի իմ կուտք՝ Կալկարայում գտած,—
Իմ ման, իմ ման, իմ Մոյրա՝ Սոս— Շակատագիր... (ԱՉԵ, էջ 374)

Վերջին տողը, որ նաև ակնհայտ ներքին տավողքրամ է՝ իյուպակ մ տառով, պարունակում է մաս բառի ամենայն հավանականությամբ վերջին գործածությունը բուն տավողքրամմերից առաջ: Բաղաձայնույթի և բառախալի արվեստավոր շաղախով եյուպակ այս պատկերը մաս ։ մաս ։ ճակատագիր համադրությամբ խորիրդանշում է մաս բառի չարենցյան փիլխոսփայության բարձրակենտրոպիա: Այսանդից արդեն բնդամենը մի բայլ է մնում մինչև տավողքրամը, և Չարենցը բառի իր հզոր զգացողությամբ կատարում է այդ բայլը: «Պոեմ անվերնազիր»-ը նա գրել է 1937 թվականի գարնանը՝ իր բառասնամյակի օրերին, և նույն ժամանակ սաեղծել է մ-ով տավողքրամմերը՝ ամփոփելով բացարձակ բաղաձայնույթի, մ-ով սկսվող մողական բառերի և մանավանդ ՍԱՌ խորախորհուրդ բառի գեղարվեստական իմաստավորման իր երկարամյա ջանքը.

Մաս մորմոքում է մայրամուտը...

ԱՍՏՎԻԿ ԲԵՋՄԵԶՅԱՆ

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՎ ԳԵՂԱՐՎԱՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ ԵՎՀԸ ՉԱՐԵՆՑԻ «ՆԱՎԶԻԿԵ»-ՈՒՄ

Ամեն անգամ, երբ այս կամ այն առիթով հարկ է լինում անդրադանալ Եղ. Չարենցի գրական ժառանգությանը, մնկ անգամ ևս հանգում են այն արդեն հայտնի եզրակացությանը, որ հանճարեն ստեղծագործողի երկնած յուրաքանչյուր գործ, միաք, առողի մեջ այնպիսի խտացումներ, շերտեր, անակնականներ ունի, որ հնարավորություն է ընձեռում անընդհատ ապշելու և ավելի խորը ու նորովի ընկալելու, թվում է, վաղուց ծանօթ գրական նյութը։ Որքան էլ Եղ. Չարենցի թե՛ գրական, թե՛ գրականագիտական, թե՛ կենսափիլիքայի ական ժառանգությունը արժանացել է վերուժարանների տարաբնույթ և բազմաշերտ մեկնարանությունների, այնուամենայնիվ նրա երկերի բուն բանասիրական կառուցվածքային հետազոտության ուժուար տակալին մնում է «քաց»՝ ընծեռելով անսպառ հնարավորություններ՝ բացահայտելու համարեն հեղինակի ստեղծագործական որոնումների, գեղագիտական աշխարհների սազմական, քաղաքացիական և բարոյահեղողերանական չափանիշների, գեղարվեստական տեքստի նկատմամբ ունեցած պատասխանատվության համարյա անընդգրկելի տիրույթի այս կամ այն շրջանակը կամ օդակը։

«Նավզիկեն» նույնական բանաստեղծի այն ստեղծագործություններից է, որոնք միշտ էլ մնալու են նորանոր հետազոտությունների ուրատում։ Մեր ուշադրությունը գրավեց այս երկի իմաստային – կառուցվածքային ամրողականությունը կազմակերպող հատկանիշներից մեկը՝ ոդիմի, ոդիմականության, երաժշտակա-

¹ Եղիշե Չարենցը եայ գրականության այն հեղինակներից է, որոնց գրական ժառանգությունը պարբերաբար արժանացել է զրականագետների ընդգծված ուշադրությանը։ Մեր բոլոր անվանի գրաքննադատաները թե՛ բազմարիվ եղովածներով, թե՛ առանձին մենագրություններով անդադարձել են հեղինակի չափանիշն, արձակին, գրականագիտական հոդվածներին և այլն 872։ հիշատակելի են Ս. Աղարարյանի, Հր. Թամրազյանի, Եղ. Զբրաշյանի, Գ. Անանյանի. Հ. Էղոյանի և այլոց մենագրությունները, պարբերաբար լուս ընծայվող «Չարենցյան ընթերցումների» հատորյակներում տեղ գտած ուշագրավ հրապարակումները և այլն։

նուրյան քրոնուսոպային ճևավորումը։ Ինչպես մի առիթով պոեզիայի մասին խոսելիս գրում է Պոլ Վալերին. «Պոեմը զնահատվում է երեք չափանիշներով. նախ և առաջ՝ ես լուս եմ միայն նրա երաժշտությունը՝ որպես ծայնանիշների / նուաների / շարք, ենտու ես ըմբոշինում եմ նրա բառերը, վայելում եմ լեզուն, ի վերջո, անցնում եմ զաղափարներին, երեք դրանք կան»¹։ Աստիճանական ընկալման պայմանականության այս ընթացքը կազմակերպվում է գեղարվեստական ստեղծագործության ներքին և արտաքին կառուցվածքների միասնականությամբ, որը ենց գրական տեքստն է։ Իսկ «Գեղարվեստական տեքստը կանոնակարգվածության ընդգծված բարձր հատկանիշներով տեքստան է... Կրկնությունը տեքստում հանդիս է զալիս որպես պարադիզմատիկական / նորվական-խոնարհումային-Ա. Բ./ պանի կարգավորվածության իրականացում։ Լեզվաբանական ընկալման պարագայում պարադիզմատիկան բնութագրվում է որպես զուգորդական ծրագիր։ Տեքստը բաժանվում է տարրերի, որոնք դասավորվում են մեկ միասնական կառուցվածքի մեջ։ Ի տարրերություն շարույթյան կապի, որը միացնում է տեքստի տարրերը տարրերը ըստ հակադրության, ճևարանական կապը տալիս է տարրերի համեմատականություններ, որոնք որոշակի մակարդակում ստեղծում են փոխադարձորեն սահմանազատված տարրերակներ։ Յուրաքանչյուր մասնավոր դեպքում տեքստը դրանցից ընտրում է մեկը», - գրում է Լուսմանը։ Երեք այս տեսանկյունից մոտենանք մեր ուսումնասիրության առարկային, ապա կարող ենք հաստատապես ասել, որ տարածածամանակային հանգույցները «Նավզիկե»-ում ինքնաշխատ շեշտադրություններ ունեն, որոնք կայանում են առաջին հայցը աննկատների, սակայն տեքստի իմաստավորման համար եղակի կուր և միասնական աստիճանական զարգացում ունեցող օղակներում։

Այս իր «ամենաշքնաղ երկը», ինչպես ընութագրում է ենց ինքը՝ Չարենցը, ումի ներքին կառուցվածքային մի յուրահատուկ համակարգ, որի հենքային շերտերից են նաև բայական, անձնանկանական, տեղանկանական, գումային հասկացությունների գեղարվեստորեն վերակենաստավորված զուգահեռումները։ Այս զուգահեռումների իիմնական առանձնահատկությունը հակադիր իմաստների պարբերական և անընդհատ համատեղումներն են,

¹ <<Pol Vale'ri vivant>>, 1946, p. 242:

² Лотман Ю.М., Анализ поэтического текста, Ленинград, 1972, стр. 39-40.

ինեն դրանք ժամանակային, տարածական, թե ընդհանուր թեմատիկ նյութ կրող: Ինչպես իրավացիորեն նշում է Հ. Էդոյանը, «Նավզիկեն անցնում է տարրեր և հաճախ հակառի ձևերի միջով, որովհետև նա չունի միասնական ծև և որևէ ձևի մեջ յուրաքանչյուր մարմնավորում ելք է բացում դեպի մի այլ ձևի մարմնավորում: Այդ պատճառով նա «անձն» ծև է, «չմարմնավորված» մարմնավորում, ձևի մեջ նաև և՝ առկա է, և՝ բացակա, և՝ գոյություն ունի, և՝ գոյություն չունի, այսպես ասած՝ նա երազ է իրականության մեջ և իրականություն՝ երազի մեջ, կամ, եթե ավելի ստուգ ասենք՝ մետաֆորային մի կերպար – սիստուացիա է, որի մեջ բացակայում են երազի և իրականության սահմանները / ինչպես նաև սահմանները ժամանակի և հավերժի միջև, քանի որ յուրաքանչյուր ձևավորում նշանակում է ժամանակի կոնկրետ հայանություն, որն իսկույն անցնում է մի այլ ժամանակի, այսինքն՝ ձևի մեջ և մտնում հավերժի ոլորտը /: «Նավզիկեի» մեջ, այսպես ասած, միանում են «ապօղոքյան աշխարհը» / երազ և հավերժ / և «առօրյան» / իրականությունը, որի նշանն է կոնկրետ «ձևը»/: Ստեղծագործության կառայցի եիմանական սկզբունքը սա է, որ առկա է թե՛ թեմայի ծավալման, թե՛ կերպարի և ընդհանրապես պատկերակերպաման, թե՛ կոմպոզիցիայի ձևավորման մեջ:

Արդեն ընծայականների երկակիությունը ստեղծում է քեականության մի իրավիճակ, որը ողջ սահեղագործության ընթացքում ալիք առ ալիք խսանում է, ապա նույնականացնելու հաջորդ քայլում մեկ անգամ և կուտակվելու և պոտերիալու:

Եղ. Չարենցի գրական ժամանակությունը, իր այլ առանձնահատկությունների հետ միասին բնորոշվում է նաև ընծայագրերի, մակագրությունների եզակի առատությամբ և բազմախոսությամբ /սա ուստիմնասիրության մի այլ, դարձյալ խիստ ուշագրավ ոլորտէ/, սակայն «Նավզիկեի» պարագայում խնդիրը տարրեր է: Նախ. դժվար է եիշատակել մեկ այլ գործ, որը մեկից ավելի ընծայական ունի: Այստեղ դրանք ոչ թե երկուսն են, այլ մի քանիքը. վերևագրից հետո՝ «Արփիկին, Արփիկին, Իզարելլային իմ ամենաշքնաղ երկը», ապա երկրորդ եատվածում՝ «Կնոջս՝ Արփինիկ Չարենցի եիշատակին»: Տարբերակների մեջ էլ տեղ գտած բանաստեղծություններից մեկը ունի ընծայագրի՝ «Լ - ին»: Ինչու է առաջին

¹Հեմքիկ Էղոյան, Եղիշե Չարենցի պոետիկան, Եր., 1986, էջ 419:

² Այս և հետագա հղումները՝ Եղիշէ Չարենց, Անտիկ և չհավաքված երկեր, Եր., 1983 ժողովածուից, էջեր 345-352:

122

ընծայականում երկու անգամ ծցում Արփիկին, և եսու էլ մի առանձին հատված մասնավորեցնելով ընծայում միայն Արփենիկին... Սուտքային ընծայականի մեջ «Արփիկին, Արփիկին» կրկնությունը արդյոք առաջին կնոցը և դստերն է վերարերում՝ որ մենք ամենաանհավանականն ենք համարում՝ եներով չարենց-յան՝ ցանկացած բառի և ճնակերպման նկատմամբ ունեցած սկզբունքային պատկերազեղագիտական իմաստավորում ապա-հովող սկզբունքից/, թէ՝ այս ՚հենց մուտքային բառակըրկնուրյամբ ենդինակը ցանկանում է մեկ անգամ ևս անդրադարձնել իր երկի՝ հատկապես ում ընծայված լինելու գաղափարին... Զէ՝ որ ցան-կացած հանճարեղ բանաստեղծ ոչ մի բառ պատահական և հենց այնպես չի գրում... Ընծայականի ՚հենց այս անհավասարակշռա-կան ճնակերպումը ողջ ստեղծագործության ոիրմակառույցի բա-նալին է:

Բացառիկ բանաստեղծական այս երկը, եթև պայմանականորեն ճեակերպենք, յորորինակ «առիթմիկ սիրմայնության» կրող է. այս «առիթմիկ սիրմայնությունը» կազմակերպվում է ժամանակաշրջանական զգացողության երկար և կարճ տարածությունների ինքնատիպ գուգորդություններով:

Ստեղծագործության մեջ տեսատի աստիճանական ընթացք - զարգացումը տեղատվության և մակրեացության ենթագիտակցական զգացողության գեղագիտական իմաստավորմամբ է ծևափորվում, որը իրականանում է մի շարք բառ - պատկերների, քերականական կառույցների, նույն մարի տարածն մատուցումների պարբերական կրկնություններով։ Նշված գործընթացի կազմակերպման համար որպես բանալի են հանդես գալիս նաև բայի ժամանակային որոշակի կոնկրետ դրսևորումներ, դերբայական մեկ - երկու ձև, մի քանի քառային խտացումներ, պատմականորեն ծանաչելի մի քանի անուն և տարածությունն ու ժամանակը ի մի բերդող, ևսակեցնող որոշ բառեր։

Քանի որ վերնազիրն ու ընծայականը արդեն հուշում են, որ ընթերցողը գտնվելու է մի անցյալ- անտակ/ նայադներ, Նավզիկե, Ուլիս/ և ընդգծված առարկայական ճերկա / Արփիկ, Իզարելլա, ես / ժամանակներում, այս մեծաքաջի կապը ստեղծելու համար բանասեղծը օգտագործում է ժամանակացուցիչ ուշագրակ մեխանիզմներ:

«Նավզիկեն» բաղկացած է չորս մասերից, որոնց ծավալաբանակային անհամամասնությունը /առաջին մասը՝ քառատող, երկրորդը՝ չորս, երրորդը՝ վեց, չորրորդը՝ տասներինգ քառա-

սող/ ընդունված համամասնությունից շնորհ է արդեն, սակայն եթե նկատի ունենանք, որ առաջին մասը «Հին Նավզիկեն» է, երկրորդը՝ Կնոջը՝ Արփենիկ Չարենցի հիշատակին ընծայվածը, ապա այս «Երկար-կարճ-կարճ-երկար» ընկալումը ընծայագրից ենտո հաջորդ առիթմիկ սիթմայնության կրողն է: Իսկ տերսաի մեջ ժամանակաբնկալումը ստեղծվում է ենտևալ շերտաներով.

դերքայական կառույցների յուրօրինակ կիրառում,

բայական եղանակների և ժամանակների սկզբունքային նախապատկույթուններ,

անձնանունների և տեղանունների ընտրողական ներմուծում տերսու,

վերացական և նյութական գոյանունների փոխատեղումներ, գունային ընութագրումների տարածաժամանակային իմաստավորումներ,

անցյալի և ներկայի վերահաստավորում հավերժության ենտո համենատուրյան մեջ,

գրաֆիկորեն կարծ և երկար բառ - գրությունների գուգորդումներ և այլն:

Այսպես, ստեղծագործության առաջին հատվածում իհմնականում կիրառված են բայական ժամանակներից անկատար և վաղակատար ներկա ժամանակները՝ «կանչում է ինձ, քվացել է, սպասում է, պատկերացել է, ինայել է, սպասել եմ, հսկում եմ, տենչացել եմ, կանչել եմ» և այլն, միայն անցյալ կատարյալը՝ երկորդ հատվածում՝ «խոստացավ, կանչեց, ընդրունեց, եղար, դարձավ, ժպատար, անցար, աներևույթ դարձար», երրորդում՝ այս երկուսը գուգահեռաբար, և սրանց ավելանում է նաև մի հարկադրական եղանակի բայ՝ «այսի տեսնեմ», իսկ չորրորդ հատվածում սրանց ենտո հավասար ներմուծվում են թե՛ լողական, թե՛ ներքադրական, թե՛ նաև ժխտական խոնահման ծներ՝ «սպասում էի, չժպատաց, տալու էի, չմնա, չկանչեց, չսպասեցին, կանչում ես, կանչեցի ես, կիանչեմ»:

Հատկապես անկատար ներկայով գերհագեցած առաջին հատվածը դանդաղ և եղրիգոնականորեն ծավալվող խոհական մտորումների թերև ալերախման է նման, ուր անցյալը մեղմ ու հաճելի եիշառության կրողն է:

Յուրացամշյուր բացվող առավոտվա, կամ իմ
Յուրացամշյուր տեսած երազի մեջ,-
Ամգամ մի դրաւ է երբ իմ դեմ բացում քամին-
Հանդիպում եմ հսկում, իմ Նավզիկեն:

Առաջին հատվածի խաղաղ պատմողական ընթացքը երկրորդում վեր է ածվում կատակորիկ վերջնականության՝ ավարտվածության զգացողությունը կարուկ շնչուադրումներով ամփոփելով.

Նաժիշտներով իր յոր շրջապատված՝

Նաժիշտներով սիրու և ցավի կե'զ,-

Իրքն հոժար կամքով մահապարտված՝

Ընդունեց սիրմ իմ ևս - իմ Նավզիկեն...

Իսկ արդեն չորրորդ հատվածում բայի տարրեր ժամանակները «խառնվում են» միմյանց՝ ստեղծելով լարված, իրար հակասող և լրացնող միար - զգացողությունների փոքրորիկ.

Ուղիներում կյանքի քիրու օրերում մեր այս,

Ինչ-որ կարու էր, եռուր - ես ավի քեզ,

Որ չմնա երազ' էլ, որ երազեմ նրանց,

Որ չկանչէ էլ ոչ մի ո՛չ մի Նավզիկեն: -

Եթե առաջին հատվածի բայական մուտքը «Նայադների նման, նայադների նման // Կարուաներին ծայնով կանչում է ինձ»-ն է, երկրորդինը, որ նվիրվում է հատկապես Արփենիկի հիշատակին, հենակեալն է. «Նայադների նման, նայադների նման // Կարուաներին ծայնով կանչեց նա ինձ», երրորդ հատվածում այս միարը ծեռը է բերում հետևյալ ծե-իմաստը. «...Արդեն նայիլ դարձած նայադների նման, // Նայադների նման քննուզ ծայնով // Խոստանալով զարուն ու զարնանային նմայր - // Այն ո՞վ է ինձ կանչում, այն ո՞վ...», ապա չորրորդ հատվածում՝ «...Կարուաներին ծայնով կանչեցին ինձ» մուտքային բայակառույցն է: Այսինքն. բայական ենց առաջին ալիքայնությունը ստեղծվում է բայի ներկայի և անցյալի իմաստային կարուկ փոխատեղումներով՝ կանչում է, կանչեց, ո՞վ է ինձ կանչում, կանչեցին.... Բայական այս կառույցները միմյանցից բավականին ենուու են կիրառվում՝ յուրաքանչյուր հատվածի սկզբում, սակայն սրանք այն բանալի-ծներից են, որոնց բազմացերա առկայության շնորհիլ է ստեղծագործությունը ծեռը բերում թե՛ արածական և թե՛ ժամանակային ալերախության ներդաշնակություն:

Հաջորդը դերքայական կառույցներով ստեղծված ոիրմայնությունն է: «Նավզիկենում» կիրառված են իհմնականում հարակատար դերրայր և անորոշ դերրայրի գործիքական հոլովածներ՝ խոստանալով, բողնելով, հավատալով, տալով և անցած, կառչած, տեսած, դարձած, հազած, մերկացած, բացած, ինձած, ելած, կարծած, փնտրած, սիրած, հանդիպած, զրած, ցրած, կորցրած և այլն: Ընդ որում՝ հարակատարով ծները բանակային առումով

շատ են՝ մոտ 50-ը 2 -ի հարաբերությամբ, սակայն «խռոսանալով.... քաղմելով» միաբար վեց անգամ որոշակի պարբերականությամբ կրկնվում է՝ յուրաքանչյուր հաջորդ անգամ նոր իմաստավորում ստամալով.

Խռոսանալով սիրո անհատնեի հմայք
Եվ քողմելով մորմոր և կորստի կսկիծ...

Խռոսանալով սիրո անհատնեի հմայք
Եվ քողմելով լոկ մահ և կորստի կսկիծ...

Խռոսանալով զարուն ու գարմանային հմայք...

Խռոսանալով սիրո անհատնեի հմայք
Եվ քողմելով միայն – մահու կսկիծ...

Խռոսանալով սիրո անհատնեի հմայք
Եվ իմ տարով միայն – մահու կսկիծ...

Խռոսանալով իմ սեր, տարով – կսկիծ...

Այս ընդհանուր միտք – ոիբրմը քերականորեն «խախտվում է» միայն մեկ անգամ. երկրորդ հատվածում այն հմցում է այսպես.

Նա խռոսացավ սիրո անհատնեի հմայք
Եվ իմ բաղեց միայն մահու կսկիծ...

Անընդհատ անորոշով ներկայացվող մաքի նման «տիմավորումը» երկրորդ հատվածի իմաստային ճևակերպման լարվածության կրողներից է, քանի որ այստեղ բոլոր հարաբերությունները կատարված, անցյալական, որևէ ներկայական հնարավորություն բացառող իրադրություններ են. ոչ թե՝ խռոսանալով, քաղմելով, այլ՝ խռոսացավ, քողմեց: Առաջին դեպքում ընկալման ենթադրվող շարունակականություն, իմ – որ քերասացություն կա, հեռանկարի հնարավորություն, բաց, անակարա իրադրություն, որ առում է ողջ սահեղագործության ընթացքում, երկրորդ դեպքում՝ վերջնականություն, մի շրացաւրված դատապարավածություն, որոշակելորեն անեղանելիություն, որ անհուսություն էլ է պարունակում իր մեջ:

Գեղարվեստական ժամանակի գնդագիտական արժեքը այս պարագայում ձեռք է բերում հոգևոր - փիլիսոփայական ենթաւերսություն զգացողությունների ներկա - անցյալ - ապառնի անցումները հոգերանական հարցադրումների խտացումներ են առաջացնում գոյի և զգության, սիրո և անարամարանական կորստի, ըմբռշխման և հոգու պարպէածության մասին՝ եզակիորեն պրկելով քեմայի զարգացման աստիճանականության ընկալումը:

Բայի քերականական ժամանակների գեղարվեստական վերմշյալ իմաստավորումը միակը չէ այս ստեղծագործության համակարգում: Ուշագրավ են նաև գոյականական բանալի - բառերը, որոնք մի քանի շերտեր են կազմում՝ բայ իմաստի, մյութականության և վերացականության, բայ առարկան կամ անձը տարբերակող հատկանիշի: Այս առումով առանձին տարածածամանակային արժեքը են ձեռք քերում անձնանվանական և տարածությունները իմաստավորող գոյականները մի կողմից, և զգացողությունները, վերացական իմաստները արտահայտող գոյականները՝ մյուս կողմից:

Ստեղծագործության մեջ անձնանվանական շերտը այնքան էլ ընդգրկում չէ՝ Նավզիկե, Ուլիս, Մանոն Լեսկո, նաև՝ նայադներ, աղջիկ, կին, կույս, եղիպատիկ, նաժիշտաներ, արքայադրուսար, սիրումի, ո՞վ: Ըստ էության, այս ինքորմացիոն դաշտը հասցված է նվազագույնի՝ անգամ նյութի գեղարվեստական իմաստավորման տարածածամանակային կողմնորոշչների հարցում. կա մի անցյալի ընկալում՝ Նավզիկե, Ուլիս, նայադներ, եղիպատիկ, և մի համընդհանրական ժամանակային ճևանշամ՝ կին, կույս, աղջիկ, նաժիշտա, արքայադրուսար, սիրումի, ո՞վ: Եթե անցյալը նշող անձնանունները ընդգծվածորեն կոնկրետ են և ճանաչելի՝ Նավզիկե, Ուլիս / սրանք նաև սիմվոլային արժեք ձեռք բերած միփական կերպարներ են, որոնք, ճանաչելի լինելով, նաև սիրելի են, ընգործինակելի, պատմականորեն քևակոր խոսքի արժեք ստացած/, ապա մյուս կառույցը՝ աղջիկ, կին, նաժիշտա և այլը, համաժամանակայ և խիստ վերացական է թե՝ ճանաչելիության, թե՝ տեղայնացվածության առումով: Անունների այս խումբը իմաստային առումով նյութական «պատասխանատվություն» չի կրում, ինչպես առաջին խումբը, սրանք ընդգծվածորեն աննյութական են, անդեմ, և որպես նման շատերին ու համարյա ոչինչ չասող՝ սրանք բնորոշվելու, այս կամ այն հատկանիշով անպայմանորեն նշվելու, դրանով իմաստավորվելու անհրաժեշտաթրյուն ունեն. առաջին և երկրորդ խմբերի անձնանունները բացադրկ հակադիր անվանական զգացողական աշխարհընկալումների համադրություն են, որ պահանջում են միասնականացման, համապատասխանեցման մի որևէ օղակ, և այդ «օղակը» Մանոն Լեսկոն է: «Մենակ» է մնում Մանոն Լեսկոն այս համակարգում, նրան չենք կարող դասել ո՞չ առաջին, ո՞չ էլ երկրորդ խմբի մեջ: Ընդ որում, այստեղ մի ուշագրավ փաստ է առկա. նյութի մշակումների մեջ բանաստեղծը անձնանվանական մեծ շերտ է անդրադառնում:

այստեղ նա տերսում է նեղենոնին, քախսին, գոյային, նաև՝ քագուհի, արճաշաղախ զերի..., /Սերք Դեղդեմոն աննոծ, մերը մի Մամոն Լեսկո...// ...Սերք քախսի նման մի տարփուիկ դարձած...// ..Անակնիալ ընկած և /քագուիկ/ դարձած...//..Եղ Գոյայի անգամ կապի մեջ..., //գենքը շրջի, ժպառ, արճաշաղախ զերի.../¹, սակայն բուն տերսուի մեջ երաժարվում է սրանցից՝ բողներով միայն վերոնշվածները: Ստացվում է, որ Մամոն Լեսկոն իրական անցյալի և անհրական ներկայի ու ապագայի միակ կապն է մնում՝ մեկ անգամ ևս զգացողության կրիտիկականություն ստեղծելով ապրումի ճևավորման հարցում: Անցյալի կերպարների՝ հավատարմության, նվիրվածության, բարյականության, անդավաճանության, ազնվության խտացում – ճենքի / Նավզիկի և Ուլիս / Վերոնշյալ հասկանիշներից ոչ մեկը կրելու պարտավորվածություն չունեցող անանուն կերպարների /աղջիկ, կիմ, նաժիշտ/ տարածածամանակային կապն «ապահովում» է միջնադարյան ամենասիրված կերպարը՝ Մամոն Լեսկոն՝ անճնակործան իր նվիրմամբ, անվերապահ հավատարմությամբ՝ անգամ դավաճանելիս, անքարոյի և բարյականության նոր իմաստավորման իր առաքելությամբ: Այս՝ ամենանվաճական շերտի տարածածամանակային ճևակերպման պարագայում նույնական բանաստեղծը ներազիտակցորեն առաջնորդվում է մի կարծ՝ անցյալական խտացած իմաստակիր կառույցի / Նավզիկի և Ուլիս, և կոնկրետ արժեքային իմաստի բացակայությամբ բնորոշվող անճնանունների /աղջիկ... և այլն/ որևէ ժամանակ և տարածություն չկանխորոշող անկոնկերտության զուգադրմամբ՝ դարձյալ ստեղծելով անհամամասն հավասարակշռություն:

Եթե անճնանունների կրառումը այս պատկերն է ներկայացնում, ապա այլ գոյանուններ, որոնք կարող են տարածածամանակային արժեքը ունենալ, կիրառված են հետևյալ հակադրություններով. կարուա – կորուսա, երազ – մահ, ենօտուներ – օրեր, տարիներ – վայրկյաններ, և այս ամենի կապող բառ – օդակը ավագ և երազ բառներն են՝ իրենց բազման իմաստավորումներով: «Տարիներիս կարմիր ավազի մեջ..., վայրկյաններիս կարմիր ավազի մեջ..., իմ երգերի կարմիր ավազի մեջ..., իմ կրքերի կարմիր ավազի մեջ...» արտահայտությունները կրկնվում են որոշակի պարբերականությամբ, սակայն երբեմն – երբեմն ճևափոխվելով դառնում են «Վայրկյան

ներիս կարմիր երազի մեջ.., զիշերմներիս կարմիր երազի մեջ.., վայրկյաններիս վերջին երազի մեջ..»: Ավազի և երազի այս համակարգված վոխսաւելումները նույն ընկալման նյութականացված և վերացարկված ճենքն են, և նմանատիպ իմաստային «բոլիքները» գոյի և անգոյի, շոշափելիի և անշոշափելիի նույնականության, այսինքն մշտականության իրադրությունն են ապահովում տերսուած: Ուշագրավ է երկու բառի կիրառման ափրույթը ստեղծագործության մեջ՝ կարուա և երազ: «Կարուաներիս ճայնով, կարուաիս կազած, կարուաի մնան, կարուաներիս ծովի կղզիներում, կարուաներիս կարմիր ավազի մեջ, կարուաներիս կայմ, արկածներիս կարմիր կարուաներում փնտաքած, կարուա էր,... կարուաներս անհում՝ իմ երգերում զրած, -// Չսպառնեցին կարուան իմ...»: Նույն կերպ և երազը « երազանք անզին, / երազեցի միշտ, / երազի մեջ, / որպես էզ մի օճ երազի քեզ, / երազելոր երբս երազվի քեզ, / յուրաքանչյուր տեսած երազի մեջ, / իմ օրերում՝ անցած երազի պես, / արճանամ երգի, երազի սե՛ր, / անդառնալի ցնդած երազի տեղ, / մի անհնար, չընադ երազի մեջ, / անդառնալի անցածը - երազի պես, / վայրկյաններիս կարմիր երազի մեջ, / երազներում ամվերջ երազելով նրանց, / իմ չերազած միակ իմ Նավզիկին, / երազներում սիրած, երազի պե՛ս, / որ չմնա երազ էլ, որ երազեմ նրանց, / վայրկյաններիս վերջին երազի մեջ»: 180 տաղ ունեցող ստեղծագործության մեջ նույն բառի այսպահ օգտագործելը, անշուշտ, ո՛չ պատահականության, ո՛չ էլ լեզվի բառապաշարին լավագույն չափանիշներու հետևանքը է, այլ ընդգծված և հետևողական միառումնավորություն, որի արդյունքն է իննոց այն եղակի, բացառիկ հոգեկան – եղանակական ներդաշնակությունն է, որն առանձնացնում է այս երկը մյուս բոլոր նմանատիպ բովանդակություն ունեցողներից:

Կարուա և երազի հակաշիր բառ-իմաստները «մահը» և «կորուստն» են, որոնց կիրառումը տերսուած հասցված է նվազագույնի: Ընդ որում, «մահ» բառին հանդիպում ենք հատկապես երկրորդ մասում, որտեղ այն զուգորդվում է նաև «սերն իմ սե», «մահացու իմ սեր», «հոժար կամքով մահապարտակած» միար – իմաստներին՝ մեկ անգամ ևս ընդգծելով այս հատվածի անհաղթահարելի ողբերգականությունը: Կարուա և երազի՝ մի կազմից, մյուս կողմից կորսաի և մահվան՝ բանակային իմաստով՝ նմանատիպ անհավասար «հավասարակշռումը» ներքին բովանդակային լարվածությունը ծայրահեղության է հասցնում: Այս համատերսուած հեղինակը նաև այլ ժամանակասարածական միավորներ է

¹ Եղիշե Չարենց, Անախական չհավաքված երկեր, Եր., 1983, էջ 655-658:

օգտագործում՝ «մամկություն անդարձ, հեռումներ, միկնմյան կավե վազ, ցնորդ», և կամ.

Վերելքներում անծայր, հովհաններում այն ցած,
Կամ ծովափնյա ոսկե ավազի՝ մաջ.-
Մերք շատաչում ծովի, մերք լճերում անծայի-
նս լսել եմ քո բայլը, իմ Նավզիկն:

Կամ է՝

Ե՞կ համեմարեղ երգում, Ե՞կ համեմարեղ զրբում,
Ե՞կ հանճարեղ ամեն մի կապավի մեջ,-
Ե՞կ հյուսիսաւմ, և հիմ Արևերցում,
Ե՞կ հարավում դեղիմ, իմ Նավզիկն:

Եվ այսպես շարունակ. յուրաքանչյուր քառաւառ կառուցվում է որևէ մարի, պատկերի կամ կերպավորման ժայրահեղ, հակա-
ղիր ձևակերպումների ենթագիտակցական համեմատուրյամբ և
համակցմամբ, ինչպես, օրինակ, «վերներներում անծայրը» գուգա-
հեռվում է «հովհաններում այն ցած»-ին՝ որպես այլընտրանք ներ-
կայացնելով «կամ ծովափնյա ոսկե ավազի մեջ»-ը, և կամ «շա-
ռաջումը ծովի» գուգահեռվում է «զերում անծայն»-ին՝ այլընտ-
րանք՝ «քա քայլը» պատկերն է, «մյուսիսումը» գուգահեռվում է
«հարավում դեղիմ»-ին՝ այլընտրանքը՝ «հիմ Արևելը» - և է ..., և
այս սկզբունքը առում է, տուում է և յուրաքանչյուր հաջորդ մտքի
մեջ ավելի շեշտվում, ընդգծվում, խոտանում:

Տերսուում հանդիպում են նաև տարածաժամանակային բոիչքների ձևակառույցներ, որոնք ունեն մեկ-երկու կիրառում: Օրինակ՝ տողասկիզբներում մերք՝ և, ես, իմ բառերի կուտակուս-
ները, երբեմն կրկին, կրկին, կրկին, նույն, նույն, նույն, ուրիշի, ուրի-
շի, ուրիշի բառերի նորովի իմաստավորումները, կամ է՝ «Մերք՝
դարերով ծանօթ, մերք՝ միայն ճար....// ...յուրաքանչյուր վայրում,
յուրաքանչյուր վայրկյան,,//եւ օրերում ապա, տարիներում
անդարձ...»և անընդհատ, անվերջ այս սկզբունքով:

Հակադիր իմաստների այս հետևողական կուտակումները
մտքի ափեափ մետառումներ են, որ ի վերջո / քանաստեղծի նպա-
տակն է այդ է / Եյուրի ընկալման փոքրիկն են պայմանավորում: «Տարածաժամանակային գերսեղմվածուրյունը քանաստեղծու-
րյամ մեջ իրականացվում է արտաքին և ներքին կրմպողիցիայի միջոցով: Արտաքինը գործում է քանաստեղծուրյամ հորիզոնա-
կան կարվածքում, ներքինը՝ ուղղահայաց: Արտաքինը կազմում է
տարածադրության սյուժեն, ներքինը՝ ենթաթերակա: Այդ պատճա-
ռով ներքինը ոժվար է նկատվում, այն խորի մեջ է: Ֆիզուրային
քանաստեղծուրյամ մեջ կոմպոզիցիան արտաքին է: Տաղաչափե-

րի միջոցով քանաստեղծուրյամ արխիտեկտոնիկան կարող է ըն-
դունել սրաի, եռանկյունու, բուրգի, խաչի ձև: Իսկապես, թե՛
առանձին վերցրած քանաստեղծուրյունը, թե՛ քանաստեղծական
շարքը, թե՛ արձակ ստեղծագործուրյունը ենթագիտակ-
ցուրյամ մեջ ձևավորված որոշակի ձևախմասաի նաև գծային ներ-
դաշնակվածուրյամ ֆիզիկական պատկերի կրողն են: Եղ. Չա-
րենցի այս ստեղծագործուրյամ գծապատկերը կարծ և երկար
ալիքների հաջորդականուրյունն է, որտեղ յուրահատուկ կուտա-
կումներով իմաստավորվում են ժամանակացուցիչ քառ-
իմաստներ՝ իրենց դրական և քացանական էներգետիկայով, և
որոնց տարածաժամանակային ընդգրկումը դարձրի մեջ է և
միտված է դեպի ոչ թե ապագա, այլ դեպի հավերժուրյուն:

Այս տեսանկյունից հետաքրքրական է «Նավզիկեի» նաև
գումանակ կառույցների տարածաժամանակային իմաստավոր-
ման համակարգը: Ինչպես անձնանունների պարագայում, այն-
պես էլ այստեղ ի հակադրություն սևագիր տարրերակների, որտեղ
հեղինակը մի շարք գույններ է օգտագործում, բուն, մշակված
տերսառում մնում են միայն կարմիրը, սևը, կապույտը և վարդա-
գույնը: Ընդ որում՝ վարդագույնը, կապույտը և սևը՝ մեկական
անգամ, և սրան ի հակակշիռ՝ անընդհատ և ամենուր՝ կարմիր:
Սևն ու վարդագույնը երկրորդ հատվածում են համդիպում:

Կարուներին ծովի կղզիներում անցած
Դու իմ կղզին եղաք միակ ոսկե,-
Բայց սև աղինա դարձալ ու մահացու հանցանը
Ջեզ համար սերմ իմ սև, իմ Նավզիկե...

Եվ՝

Եվ վարդագույն, իմայն մի վարդագույն մարզան,
Կարուներին կարմիր ավազի մեջ-
Դու ժառացիր, անցար, աներևույր դարձար,
Օ, մահացու իմ սեր, իմ Նավզիկե...

Ստեղծագործական կյանքի առաջին շրջանի համատարած կապույտին և ծիածանին ասես հակակշիռ՝ այստեղ քանաստեղծը
նվազագույնի է հասցնում աշխարհեղնակալման իր նախորդ՝ «կյան-
քի» գունային ներկապնակը՝ դրանով ևս վերաիմաստավորելով իր
«վերջին օրերին»՝ ենթագիտակցական ու նաև նմբատերստային

¹ Զ.Ավետիսյան, Գրականաւրյան տեսուրյուն, Եր., 1998, էջ 150:

² Այս առումով տեսն նաև Ա. Ռիբմելյան, Կոմպոզիցիան հավասարակշռու-
թյան խնդիրը Վահան Տերյանի «Երկիր Նախրի» շարքում, Համատերստ - 2010,
Եր., 2010, էջ 181 - 191:

զիտակցումը: Կապույտին շատ չենք առնվազում այս ստեղծագործության մեջ. հանդիպում ենք երրորդ հատվածում, մեկ -երկու ամպամ հանդիպում ենք սկզբ, իսկ կարմիրը իր տարիմաստ կիրառություններով ողջ ստեղծագործության գաղափարի ձևակառուցվածքային լեյտումունկներից է. «... Տարիներիս կարմիր ավազի մեջ..., վայրելյաններիս կարմիր ավազի մեջ..., կարուտներիս կարմիր ավազի մեջ..., իմ երգերի կարմիր ավազի մեջ..., իմ կրքերի կարմիր ավազի մեջ..., արկածներիս կարմիր կարուտներում վնասած», և որը ի վերջու հասունացնում է վերջին գունային ամփոփումը, որտեղ համատարած ավազային ինքնազիտակցումը վերածում է «զիշերմների կարմիր երազի».

Ո՞չ զգվանքներս՝ քեզ շաբախուն ցրած՝
Գիշերներիս կարմիր երազի մեջ,-
Ոչ կարուտներս անհում՝ իմ երգերում ցրած,-
Չապառեցին կարուտ իմ, Նավզիկե՛:-

Այս ամենից բացի և այս ամենով հանդերձ բանաստեղծական այս «երավառությունը» ամբողջականանում է յուրաքանչյուր բառատողի վերջնարառով՝ «իմ Նավզիկե», որի «իմ» խիստ անճնականացված և կոնկրետացված իմաստը զուգահեռվում է Նավզիկե՝ ըստ էության միքական արժեք ունեցող կերպարի սիմվոլիկային: Եվ ավելին. առաջին հատվածը ենթավերնազրված է «Հին Նավզիկեն», որ ենթադրել է տալիս, թե մի ինչ – որ եատվածն էլ պետք է ունենա «Նոր Նավզիկե» վերաառությունը, և ողջ ստեղծագործության ընթացքում այս սպասում - ակնկալիքը մնում է չպատասխանված, բաց, առկախ... Սրանով էլ, վերը նշվածներով էլ, և դեռ մի շաբաթ այլ հատկանիշներով /որոնց մենք չենք անդրադառնում այսօր/ մեկ ամգամ ևս կիրառվում է ողջ ստեղծագործության ընթացքում թեմա - իմաստի ձևակառուցվածքային կայացման հիմնական սկզբունքը՝ յուրաքանչյուր միտք ձևակորել հակառիր իմաստների այնպիսի զուգակցմամբ, որտեղ պասիկ կամ բացասական իմաստակիր միավորը կարծ է և սակավ կիրառելի, իսկ ակտիվ կամ դրական իմաստակիրը լայն և առաջանուն զարգացում ունի և տևական է. դրանից էլ ստեղծագործության ոիթմը իմաստային կարծ եադնարացի ու ամեն անգամ այլքվող, խառարող, ծառացող, երկարորեն առաջմղվող վերահմաստավորման խաղ է սրանից էլ այն առկախ մնացող, անբացարելի, ներաշխարեց ալեկոծող հոգածառությունը, որով ենդինակի բոլոր երկերի մեջ առանձնանում է նրա «ամենաչքնաղ երկը»:

ԱԾԽԵՆ ԶՐԱԾՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ԿԱՑՈՒՆ ԶԵՎԵՐԸ ԶԱՐԵՆՑԻ ՊՈԵԶԻԱՑՈՒՆ

Եղիշե Չարենցի պոեզիան, ինչպես հայանի է, աշքի է ընկառում տաղաչափական ծևերի աննախադեպ հարսառությանը, բանաստեղծության կառուցման ամենասարքեր հնարքների ու ծևերի բազմազանությամբ: Հայ զրականության ողջ պատմության մեջ դժվար է մատնանշել մեկ այլ բանաստեղծի, որն ունենա տաղաչափական ծևերի այնպիսի լայն ընդգրկում, ինչպես Չարենցը: Արդեն վաղուց է նկատված, որ միայն Չարենցն այնքան շատ բանաստեղծական ծևեր է կիրառել, որքան մնացած հայ պոետները միասին վերցրած: Միևնույն ժամանակ դժվար է նաև մատնանշել մեկ այլ բանաստեղծի, որն այնքան նախանձախնդիր եղած լինի իր բանաստեղծությունների ժանրային սահմանների հստակեցման, առանձնացման ու դասակարգման հարցում:

Ուսումնասիրման մի առանձին և ենթաքրքիր նյութ է Չարենցի պոեզիայում բանաստեղծության կայուն ծևերի ըննությունը, որը ոչ միայն բացում է նրա պոետական ենթաքրքրությունների նորանոր ծալքեր, այլև զծագրում այն կամուրջները, որոնք Չարենցին կապում են մի կողմից արևելյան, մյուս կողմից եվրոպական և ուսուական պոետական ավանդույթների ենա: Հայտնի է, որ բանաստեղծության՝ դարերով մշակված կայուն ծևերը հայկան պոեզիա են մուտք գործել երկու հիմնական աղբյուրից՝ արևելյան և եվրոպական, ընդ որում՝ թե՝ մեկը և թե՝ մյուսը արևելյանայ հատվածում հաճախ միջնորդավագրվել են ուսուական պոեզիայով: Այս առումով Չարենցը, անշուշտ, Վահան Տերյանի անմիջական ժամանակարդը եղավ, որի պոեզիայում հատկապես ստեղծության տրիմետը և զագելը հասան եղկվածության բավական բարձր ասահինանի: Սակայն չի կարելի անակնել նաև թումանյանի փորձը, որի բառյակների մի մասը իսկական առումով

1 Տե՛ս՝ Դ. Գասպարյան, Սովորական պոեզիայի տաղաչափությունը, Ե., 1979, էջ 225:

սուրայիններ էին և իրենց մշակվածությամբ, ճեկ կատարելությամբ Չարենցի համար եղել են ոգեշնչման և ընդօրինակման աղջուր:

Ե. Չարենցի պոեզիայում բանաստեղծության կայուն ճներն իրականում շատ ավելի մեծ տեղ են գրափում և շատ ավելի բազմազան են, քան կարող է բվալ առաջին հայացքից: Ծիշա է, շատ դեպքերում նա տալիս է դրանց հստակ անվանումները՝ գագել ուրայի, բեյր, ունդր, սոնեա, տրիոլեա, մոնուտիրոս, բանկա և այլն, բայց երբեմն էլ դրանք անվանումներ չունեն, և միայն տաղաշափական վերլուծությունն է ի հայտ բերում այդ ճների առկայությունը:

Արևելյան պոեզիայի կայուն ճների՝ գագելի և ուրայու հանդեպ Չարենցի հետաքրքրությունն ի հայտ է եկել ստեղծագործական կյանքի ամենավաղ շրջանում՝ 10-ական թթ.: Արդեն «Ծիծան» ժողովածուում նրանասարդ բանաստեղծը ոչ միայն «Գաղեկներ» ընդհանուր խորագրի տակ է զետեղել եռամառն փոքրիկ գագելների մի ամրող շարք, այլև «Հրաժեշտի երեկոն» շարքի մեջ: Ընդ որում՝ գագելին բնորոշ երկար տաղերն այստեղ հիմնականում պահպանված են. գերակշռություն են 11-16-վանկանի տաղերը, թեև կան նաև տասկանկանի ավելի դիմամիկ, կարճ տողերով գագելներ: Ակնհայտ է, որ Չարենցն այդ շրջանում արդեն լավագույնս տիրապետել է բանաստեղծական այս ճնի կառուցման տնիսնիկային և կարողացել է վարպետորեն կիրառել ինչպես ուղիփոք, այնպես էլ ներդիմ հանգը:

«Տաղարան» շարքը 20-ական թթ. սկզբներին արդեն երևան է հանում Չարենցի բուռն հակումը արևելյան-աշուղական պոեզիայի ճների, թեմաների և կառուցման եղանակների նկատմամբ, մյուս կողմից, այդ ճները Չարենցի համար ոչ օտարամուտ և արենատական էին և ոչ էլ նոր, և «Տաղարան» դառնում է ստեղծագործական նոր որոնումների և արդեն յուրացված հին ճների հանդիպման յուրօրինակ խաչմերուկ, որտեղ լավագույն դրսւարփում է Չարենց բանաստեղծի համարը: Չարքը բացվում է երկու իսկական ուրայիներով՝ «Ինչքան որ ետք կա իմ սրտում...» և «Ամուսն անուշ, եռորերատող տոք ես, զան...»: Պատահական չէ նաև շարքի վերնագիրը՝ «Տաղարան», որտեղ Չարենցը կիրառել է սայաթնավայան և արևելյան աշուղական տաղերի (այսինքն՝ երգվող բանաստեղծությունների) մի շարք հանրահայտ ճներ՝ ուրային, գագելը, հանգադարձ ունեցող տներով բանաստեղծությունը: Ընդ որում՝ Չարենցը հաճախ կիրառում է աշուղական գագելների այս հնարքը, երբ վերջին բեյրում եհշատակվում է հնդինակի

պոետական անվանումը: Չարենցը ճգտում է մեծ մասամբ պահպանել առդի վանկային այն կառուցվածքը, որը հաճախ է կիրառվել աշուղական տաղերում, մասնավորապես՝ 15, 16-վանկանի տաղերը՝ բանաստեղծությունների զգայի մասը ենց գագելներ են, ընդ որում՝ կամ ինչպես ուղիփոք, այսպես կոչված կամակի գագելներ, այնպես էլ հանգադարձով՝ բանաստեղծություններ, որտեղ յուրաքանչյուր տան ունի իր ինքնուրույն հանգը, բայց բոլոր տների վերջին տողը ավարտվում է նույն հանգով և բառերի կրկնությամբ (ուղիփոք): Այդ ճնավ են գրված «Ես իմ անուշ Հայաստանի...», «Եղի գարուն կզաք, կբացվի վարդը», «Երազ տեսա, Սայաթ-Նովեն մուս եկավ սազը ծերին» և մի շարք այլ բանաստեղծություններ:

Հետաքրքիր է, որ զետ «Տաղարանից» առաջ՝ 1919 թ., Չարենցն այս ճներ կիրառել է իր նշանավոր բանաստեղծություններից մեկում՝ «Տաղ անձնական»-ում, որտեղ նույն աշուղական պոեզիայի սկզբունքների համաձայն՝ բոլոր տների վերջին տողն ունի նույն առաջին տան հանգը: Բացի այդ, այստեղ ևս կիրառված է աշուղական պոեզիային հարազարար չափ՝ բառանդամ 16-վանկանի տողը: Եվ այս լույսի տակ ավելի հասկանալի է դառնում, թե ինչու է Չարենցն իր բանաստեղծությունն անվանել «Տաղ»: Ծիշա է, տաղեր անվանված են նաև ավելի ուշ շրջանի՝ «Գիրք ճանապարհ»-ի մի շարք բանաստեղծություններ, սակայն վստահորեն կարելի է պնդել, որ 1910-20-ական թթ. Չարենցի համար տաղը տաղաշափական, կառուցվածքային և հանգավորման որոշակի կայուն սկզբունքների ամբողջություն էր:

Որ այդ տարիներին իրոք բուռն էր Չարենցի հետաքրքրությունը արևելյան պոետական ճների հանդեպ, վկայում են նաև 1920 թ. գրված մի շարք այլ գագելներ, որոնց թվում և նշանավոր «Սորու համար գագել»-ը կամ «Դու իմ գարնան առավու, ինչպես կանչն քեզ հիմա», «Հիմա հիշում եմ բոլոր օրերս իհին ու անցած»: Այս բանաստեղծություններն արդեն ակնհայտորեն կրում են Տերյանի գագելների, մասնավորապես՝ «Եկան օրեր ու անցան, ու իհին ուիհն չմնաց» գագելի ազդեցությունը, որի ոչ միայն տողաշափը, այլև անգամ բառապաշտի որոշ շերտեր ակնհայտորեն փոխարփած են: Այս գագելները արդեն, կարելի է ասել, որոշակիորեն «Եվրոպականացված» են: ի դեպք, գագելի ավանդույթը մեզանում չի կարելի կապել միայն արարապարսկական ազդեցության հետ:

¹ Այս մասին տես՝ Մ. Աքելյան, հ. Ե, Երևան, 1971, էջ 381-382:

Հիշեմք, որ զագելներ են գրել այնպիսի նշանավոր ոռու բանաստեղծներ, ինչպես Վ. Իվանովը, Վ. Բրյուսովը, Ա. Ֆեռար և ուրիշներից՝ Գյորեն: Ակնհայտ է վերջիններիս ազդեցությունը Տերյանի վրա:

Որպական նոր ասախճան է արդեն «Ռուբայար» շարքը, որի 44 ուրայիններն ունեն ընդգծված խոհական բավանդակություն և գրալի կենսափորձի յուրօրինակ համրագումարն են: Ի տարրերություն Թումանյանի քայլակների, որնց միայն մի մասն է ինկական առումով ուրայի, իսկ մյուսները պարզապես քառասորդ բանաստեղծություններ են, Չարենցը հավատարիմ է մնացել արևելյան ուրայու կառուցման սկզբունքներին, այն է՝ առաջին, երկրորդ և չորրորդ տողերն ունեն նույն հանգը և բառերի կրկնությունը, իսկ երրորդ տողը մնում է անհանգ: Սակայն «Գիրք ծանապարիի»-ի ուրայիններում Չարենցն արդեն երաժարվում է հանգավորման խիստ ուղղիքային ճկից, բայց կիրառում է 1-ին, 2-րդ և 4-րդ տողերի հանգավորման սկզբունքը՝ 3-րդ տողը կրկնի բողներով անհանգ: Ի դեպ, այս ճկը հաջողությամբ կիրառել է նաև Թումանյանը: Բեյթերը (Երկառող բանաստեղծությունները) արդեն ավելի կանոնիկ են և ունեն ուղղիքային վերջավորություն: Ի դեպ, հետաքրքիր է, որ Չարենցը հստակորեն սահմանագատում է բեյթերը դիստիրուսներից՝ առաջիններին տալով կանոնիկ հանգավորում, իսկ երկրորդները բողներով անհանգ, ինչպես ընդունված էր անտիկ պոեզիայում:

Ինչ վերաբերում է իստալական սոնեահն ու տրիոլետին, ապա պետք է ասել, որ Չարենցն այդ ճկերը սկսել է կիրառել 20-ական թթ. սկզբներից: Ի դեպ, տրիոլետն այդ առիթներին նրան կարծեն ավելի հոգեհարազարտ է եղել, քան սոնետը: 1921թ. նա արդեն գրել էր «Տրիոլետներ Արլիկին» և «Տրիոլետ Լ. Բ.-ին», որտեղ մեծ վարպետությամբ կիրառել է բանաստեղծության այդ անսակը: Հայտնի է, որ նույն՝ 1921 թ. գրված «Ուրնյակներ արլիկ» շարքը Չարենցը նախապես ցանկացել է անվանել տրիոլետներ: «Հիմա ես արիոլետներ եմ գրում, - հաղորդում է նա 1921թ. եռունիսի 18-ին գրված իր նամակներից մեջում: - Տրիոլետներ - Արլիկ»: Սակայն էլ ո՞վ, եթե ոչ Չարենցը, լավագույն գիտեր, թե իրականում ինչ է տրիոլետը, իսկ Արլիկն ծոնված տասնվեց բանաստեղծություններից ըստ եռթյան մեկն է ինկական տրիոլետա («Ինչպես շոգ, ծննդող ոսկի...»): Եվ սա է, ինչպէս, պատճառը, որ Չարենցն այդ

շարքը անվանել է ոչ թե «Տրիոլետներ», ինչպես նախնական մտահղացումն էր, այլ «Ուրնյակներ»՝ ինչք զնդունելով բանաստեղծությունների առղաքանակը: Ստեղծագործության վերջին շրջանի տրիոլետներից նշանավոր են «Մառ մորմոքում է մայրամուար», «Մխում է մարխը: Մզլահու է» և այս շարքի մյուս տրիոլետները:

Զարենցից մեզ հասած առաջին սոնեաը նույնպես վերաբերում է այդ շրջանին՝ 1920 թվականին: Դա «Էմալե արտֆիլը Զեր» շարքը բացող և ենց «Սոնեա» վերնազիրը կրող բանաստեղծությունն է («Ես ինչպես Զեզ չսիրեմ...»): Իրքն առաջին փորձ՝ սիրային բովանդակություն ունեցող այս սոնեան աշքը է ըմկնում մշակվածության բավական բարձր աստիճանով. ճիշտ է, քառասողերի հանգավորումը տարրեր է /աբա սիրա մնկում/ խաչաձև, մյուսում՝ օդակածն, բայց դա չի խանգարում, որ թեման ստանա միանգամայն «սոնետային» զարգացում է լուծում: Նույն չափը, բայց այլ բովանդակություն ունի 1921 թվականին գրված «Կարմիր սոնեաը»՝ Վ. Բրյուսովից վերցված բնարանով, որտեղ պոետը կրկին հնչեցնում է այդ տարիներին իր ստեղծագործությանն այնքան բնորոշ կարմիր, վառվագայի երգը:

Պետք է նշել, որ տարրեր ազգային գրականություններում սոնեաը հանդես է եկել տարրեր ժամանակաշրջաններում: Այսպես, եթե Եվրոպայում այն ճեավորվել է Սիցիանարում, ապա ուսական առաջին սոնեաները գրվել են 18-րդ դարի 30-ական թթ: 19-րդ դարի կեսերից Ռուսաստանում սոնեաի մասսայականությունն աստիճանաբար նվազում է, իսկ 20-րդ դարասկզբին՝ սիմվոլիզմի աշխատացման շրջանում, այն ապրում է իր «Երկրորդ վերածունդը»: Եվ պատահական չէ, որ մեզանում նունակն սոնեաի վերելքը (Տերյան, Չարենց) համբնկալ սիմվոլիզմի երևան գալու հետ:

Ակսած 1922 թվականից՝ «Երեքի դեկլարացիայի» և «Ճախորոնների» շրջանում, երբ Չարենցը և նրա համախորհները ամբողջովին համակված էին դասական պոեզիայի ճերի Ժխուման պարսով, ոչ միայն սոնեաը, տրիոլետը, այլև բանաստեղծության սովորական, ավանդական տնային կառուցներն անգամ նրանց ստեղծագործությանը խորթ էին: Բայց, ինչպես իրավացիորեն նկատված է, «... արդեն 1924 թ. նրանք սկսեցին ընդունել դասական ժառանգության նշանակությունը այդ ասպարեզում: Խորիրդային բանաստեղծներն սկսում են վարպետորեն օգտվել աների դասական ճերից»: Օրինակ, ավելի հաճախ օգտագործում

¹ Տես՝ Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 6, Ե, 1967, էջ 375:

ևն քառասոր տունը (քարենը):¹ Պարզ քառասորերից ամ-ցումը դեպի բանաստեղծական ավելի բարդ ստրոֆիկական կա-ռույցների տեղի է ունենում արդեն 20-ականների վերջին, երբ Զարենցը նորից անցնում էր դասական արվեստի մեծ քառույթնե-րով: 1928-ին նա գրում է «Երկու տոնետ Արփիկի հիշատակին», որտեղ, ընտրելով նույն՝ 12/6+6/ վանկանի տողաչափը, կարողա-ցել է հյուսել թեսատիկ և զաղափարական առումներով իրար ևն սերտորեն կապված և բար էության մեկ ամբողջություն կազմող երկու բանաստեղծություն:

Սակայն «Գիրք ճանապարհի» ժողովածուն, որն աչքի է ընկ-նում բանաստեղծական ժանրերի և ձևերի աննախադեպ բազ-մազանությամբ, պարունակում է ընդամենը մեկ տոնետ՝ «Արվեստ քերրության» բաժինը բացող բանաստեղծությունը՝ ևնոց «Սո-նետ» վերնագրով («Դժվար, դժնի տենդով գրել են ես երգե-րս...»)՝ գրված 1933թ.: Բայց այս արդեն էապես տարրերով է նախորդ տոնետներից իր չափով և հանգավորման սկզբունքով: Ակնհայտ է, որ Զարենցն արդեն տոնետի ասպարեզում թևակալիսնել էր որակական միանգամայն նոր աստիճան: Եթե Տերյանը ժամա-նակին ջանում էր գրել «իսկական տոնետ»՝ հետևելով բանաստեղ-ծական այդ ձևի իտալական տարրերակին, ապա Զարենցն այս-տեղ փորձել է հետևել ոտսական տոնետի կառուցման սկզբունք-ներին, որոնց նա, անշուշտ, լավ ծանոթ էր: Ի տարրերություն նա-խորդ շրջանի տոնետների՝ Զարենցն այստեղ կիրառել է վե-ցումյա յամրական չափը (ոտսական տոնետի ամենատարած-ված չափերից մեկը), իսկ հանգավորման մեջ խստորեն պահպա-նել է իգական և արական հանգերի գուգորդումը, ինչը ոտսական և ֆրանսիական պոեզիայի պարտադիր սկզբունքներից մեկն էր:

Սակայն, կարելի է ասել, որ «Գիրք ճանապարհի»-ից հետո Զարենցն ավելի բուռն հետաքրքրություն է ցուցաբերում տոնետի հանդեպ: Միայն 1934-1936 թթ. ընթացքում նա ավելի շատ տոնետ-ներ է գրում, քան ստեղծագործական կանոնի ողջ նախորդ շրջա-նում: Սա, անշուշտ, պայմանավորված էր դասական արվեստի հանդեպ նրա հետաքրքրությունների վերածնմամբ: Բացի իմբա-տիկ հանգավորման եղանակներից՝ Զարենցը կիրառում է տոնե-տի ամենատարրեր ձևեր, որոնք մինչ այդ արևելահայ պոեզիային անծանոթ էին՝ պոչափոր տոնետ, անզոլիս տոնետ, կիսատ տոնետ և

այլն: Ինքնատիպ են նրա «Վալերի Բրյուսովին» (1934), «Ինչպես ենում վկան այն՝ Նարեկացին...» (1936), «Դոֆին նայիրական» վերնագրով տոնետների շարքը՝ նվիրված Աղասի Խանջյանի հի-շատակին (1936), «Անառակ որդին» և այլն: Զարենցը տոնետներ է գրում նաև իրեն այնքան հարազատ համաշեշտ ուսանավորի տաղաչափական սկզբունքով. այդպիսին են «Չքնաղ Մագդա-յին», «Ծմ լուսաստոր» (1936) տոնետները. վերջինս նաև պոչափոր (15 տողանի) տոնետի օրինակ է: Այստեղ բանաստեղծը վարպե-տորեն կիրառել է արական և իգական հանգեր, քառասորերում՝ օդակածն և խաչածն հանգավորում: Գրիգոր Նարեկացուն նվիր-ված «Ծ խորոց սրտի խոսք ընդ Ասածու» տոնետների շարքը նույնպես ի հայտ է բերում յարենցյան վարպետության տարրեր շերտեր: Ե. Զարենցի վերջին տարիների անտիպ էջերում՝ ծեռա-գիր և սևագիր բժագրերում, պահպանվել են բավական մեծ բվով տոնետներ, շատերը՝ բազմաթիվ տարրերակներով, ինչը խոսում է բանաստեղծական այդ տոնետի հանդեպ Զարենցի հետաքրքրու-թյան կարուկ ամի, եկրոպական և ուստական տոնետի նկատմամբ ցուցաբերած մեծ հարգանքի մասին:

Զարենցի հետաքրքրությունը բանաստեղծության կայուն ձևերի նկատմամբ սրանցով յի սպառվում. նա կիրառել է նաև այնպիսի ձևեր, որոնք շատ հազվադեպ են մեր պոեզիայում: Այսպես, մոնուսահրոս կոչվող բանաստեղծությունը, որը կազմված է մեկ՝ համենատարր երկար տողից և իր մեջ բանաստեղծական մտքի մեծ խտացում ունի: Օրինակ՝ «Դու Ղարսում թեկուզ ծնվեցիր - բայց աշխարհն էր քո հայրենիքը»: Բանաստեղծության կայուն ձևերի շարքում կարելի է նշել Զարենցի ոռնդոները (15 և 16-տողանի), ճապոնական բանկաները, եռուները և այլն:

Եղիշե Զարենցից հետո՝ պատերազմական և հետպատե-րազմյան շրջանի արևելահայ պոեզիայում, բանաստեղծության տնային (ստրոֆիկական) կառուցվածքի հանդեպ վերաբերմունքն սկզբում է աստիճանաբար փոխվել՝ ընդհուպ հասնելով մինչև իհն ձևերի հետ կարուկ խզման: Եթե Տերյանի, այնուհետև Զարենցի մոտ նկատելի է հստակ միտավածություն՝ յուրացնելու և սեփական՝ ազգային բանաստեղծության մեջ շրջանառելու արևմայան և արևելյան պոեզիայի բազմաթիվ կայուն ձևեր, ապա սկսած XX դարի 40-ական թվականներից՝ այս ձևերն սկսում են կարուկ նա-հանգ ապրել՝ կապված նոր ժամանակների ոգու և գեղարվեստա-կան պահանջների հետ:

¹ Գուլյան Բ. Ռ., Развитие строфических форм в армянской советской поэзии (1920-1930 гг.) в кн. «Проблемы стиховедения», Е., 1976., стр. 225.

ՍԱԹԵՆԻԿ ԱՎԵՏԻՄԹԱՆ

ՉԱՐԵՆՑԻ ԴԻՍԱԿԱՐԾ՝ ԸՍ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐՈՒ

Գուրգեն Սահարու կենսագրությունը նույնանում է 20-րդ դարակզրի հայոց և խորհրդային պատմության զրեթե բոլոր շրջադարձին դրամատիկ շրջափակմանը իրավունքին: Նրա կյանքի ուղին՝ իր գերիսիւ ու հարուստ ընթացքով, մի քանի մարդկային ճակատագրերի տարածամանակային հագեցվածությունն ունի: Լինելով 1920-30-ական թվականների հայոց զրական դաշտի եռամբուն, սկզբունքային մասնակիցը՝ Սահարին հարաբերվել է այս շրջանի եղանակոր և աննշան դեմքերին և դեպքերին՝ դրանց բխող բոլոր դրական և աղետայի ենթականությունով: Գ. Սահարու զրական ժառանգության մի արժեքավոր մասն են կազմում հուշագրությունը և իր ժամանակ ապրած ճամաչված մարդկանց դիմանկարները: Նա եղել է ընկերը, բարեկամն ու մտերիմը Ե. Չարենցի, Ա. Քափունցի, Վ. Սարոյանի, Վարդան Աճնյանի, Հր. Ներսիսյանի, Ա. Խանջյանի և այլոց, ովքեր 20-րդ դարում հայոց մշակույթի և հասարակական կյանքի մոնումենտալ դեմքերն են: Զգուել նրանց մասին Սահարին չեղ կարող: Լայն առումով Սահարու զրական ժառանգության զգայի մասը հուշագրություն է. նա միշտ գրում է երեկով ապրած օրվա, այն կենսական տարածքի բնակիչների ու իրողությունների մասին, որոնք գոյաւմ են իր հիշողության դաշտառում՝ որպես ժամանակի ռեալության և եղող եղանակոր շարժներացի ստեղծարար, էական բաղկացուցիչներ: Տարապանքի հետազիծը, որ բաղեց Սահարու կենսագրությունը, լեցուն էր փորձառությամբ, իմաստուն հայացքով, եղող բազմապահի շփումներով, միջանձնային ապրանույթ փոխառնչություններով:

Չարենցի մասին իր հուշերը Սահարին երապարակել է երեք խորագրով՝ «Չարենց-նամե», «Նորից նրա մասին», «Չարենցի մեկ օրը»:

«Չարենց-նամե» հուշապատճենը գրվել է 1957-1966 թվականներին և պատկերագրում է մինչև 1936 թվականի օգոստոսի 10-ն ընկած ժամանակահատվածում Սահարու մտապատկերներում ամրակայված Չարենցի դիմանկարը՝ ենարակորինս պահպան-

լով պատկերի նախնական անխարթարությունը: Չարենց բանաստեղծի, մարդու, բաղաքացու, հայի բազմաշերտ, միարժությունների չարգու, բարդ ու հարուստ կերպարը ամրողանում է թե՛ պարզ մարդկային, ընկերական շփումների, թե՛ զրական առնչությունների, թե՛ զաղավարական տարածայնությունների արդյունքում: Պարզվում է, որ դիմանկարի էսքիզ Սահարին արել է դեռ Չարենցի կենդանության օրոք՝ 1934 թվականին, երբ նա աշխատում էր պետարանում: Վերջինս զարմանում և միաժամանակ երծվում է՝ կարդալով Սահարու հուշերն իր մասին և նկատում, թե հուշեր գրում են մեռած մարդկանց մասին և նույն պահին էլ ինքն իրն միան ժխտություններ կարելի է գրել միայն մեռածների մասին, - ենքուց իր դրույթը, ո՞վ չի ուզում իր կենդանության ժամանակ կարդալ հիշողություններ իր մասին: Բայց չեն տայի, չե՞ս տեսմում, բայց ու դանակ են դառները¹: Չարենցը սիսակում էր. Սահարու՝ վաղ շրջանի հիշողությունները տպվեցին «Գրական թերթում» (դրանք ընդգրկում էին Սահարու և Չարենցի առաջին հանդիպությունը (1919թ.), մինչև խորհրդայնացում ընկած ժամանակահատվածը. սկզբնական հանդիպումների դրվագները հետազայում ենքությունիցին «Երիտասարդության սեմին» ինքնակնենսազրական վեպում), բայց գրվածը ըիչ էր միասին ապրած օրերի պատկերը և նրա դիմանկարը ամրողացնելու համար. 23 տարի ենտու գրվեց «Չարենց-Նամեն», որպեսզի սերունդներին ավանդվի «իր ամրողության մեջ այնքան ներդաշնակ այդ արտակարգ մարդու կերպարը»:

1919-ից Չարենցը դարձավ Սահարու եղանակոր կենսագրության առանցքային ուղղողորդ ուժը. սկզբնական շփումները հարուստ չեն և ժամանակի, և բովանդակության առումով, ենտու Սահարու հուշապատճեն այս շրջանում բառահումքով աղքատ է, գերակշռում են համառոտ, միակազմ, թերի շարակարգերը, երկիխոսությունները կամ ուղիղ խոսքը հակիրծ է, երբեմն ամափառ, թեև տարողունակ և ասելիքի ներքին լեցունությամբ.

- Ինչո՞ւ այդպես գրեցիր «Երկիր Նաիրին»:

- Այդպես գրվեց, ես մեղապոր չեմ (էջ 450):

Սեղմ, անզարդ, բայց ծշզրիտ մտահանգում. զրական երկը ծնվում է գրողի՝ ավյալ շրջափուլի ներքին կուտակումներին, աշ-

¹ Գուրգեն Սահարի, Երկերի ժողովածու, Երևան, 1989, հ. 5, էջ 447: Այս գրքից բաղկած մյուս մեջբերումների էջները կնշվեն տեղում:

Խարհաճաճաշողությանն ու հասունությանը համարժեք ու ներդաշնակ:

Սահարին փաստում է, որ «Երկիր Նախրին» Չարենցը սկսել է գրել 1919-ին, երբ աշխատում էր որքանոցում, և իր իհշողության մեջ սենոված մի տառը՝ «Դուրս մշուշ էր, չարկամ մառախուղ», նա հետագայում չի գտնում վեպի մեջ, ինչը վկայում է, որ Չարենցը հետևողականորեն մշակել է այս:

Կարծատև հանդիպումների ընթացքում երևակվում է երիտասարդ Չարենցի եռանդուն, շայլ, մշտաշարժ վարքագիծը. նրան բնորոշ չէ կեցության ստատիկ կերպը. նա անվերջորեն ճգառում է նոր տարածքների, նոր մշակութային շփումների, զաղափարական քարմ իսոսանքների աղերսներով հարստացնում է իր հոգևոր անհագուրդ ժարավը. «Արովյանի վրա ման գալով բան չես դառնա: դու պետք է Մուսկա զմաս: Թիֆլիսից դենք չես եղել, չէ...» (էջ 452): Հանդիմանությունն ուղղված էր Մահարուն: Աշխարհաճաճաճաշողության չարենցյան անպարագիծ ճգառումները բավարպում էին ժամանակի կուսակցական և գրական դաշտի դեկավարների կողմից, մասնավորապես մեծ և էական դեր ուներ դրանում Ալեքսանդր Սյասմիկյանը՝ Չարենցի գրի և տաղանդի երկրպագուն. «Սեծ մարդ է», - բնորոշում է նրան Չարենցը:

Թիֆլիսյան շփումներում Չարենցի կերպարն ավելի որոշակի ու ամրողական է, համդիպումների տևականությունն ու բազմաշերսությունը բացահայտում են նորանոր որակներ, բացառիկ նվիրումն ու զնահատանքը հայոց դասական գրականությանը. հիացմունքը Տերյանի գրական վաստակի, Սայաթ-Նովայի տաղանդի բազմակերպության հանդեպ: «Դա... համ գրել է, համ եղանակ սարքել համ երգել համ նվագել: Ուղիվիտենի քանքար է եղել» (էջ 454): Այս երկու գրական հսկաների արվեստի բացառիկ զնահատանքը բացորոշում է նրա գրի տարածքում Տերյանի և Սայաթ-Նովայի բանարվեստի ազդեցության և իրացման չարենցյան գեղագիտության ակտոնքները: Խոջիվանքի գերեզմանոցում՝ հայոց մեծերի գերեզմանների մոտ, իմաստուն հայացքով արժենուով գոյության տարակերպությունը՝ կյանք-մահ փոխածնությունը Չարենցն ընդունում է որպես խաղաղակած հոգու վերջնական հանգրվան: Հայրենյաց մասունքները նա ուզում է տեսնել հայոց հողում, որպեսզի ազգային պետականության նպատակադիր կառուցման հիմքում լինի հոգևոր ժառանգության, դասական ավանդների բարձրացումն ու արժենորումը. «Երևանում հայկական պանթեառ պիտի սարքել, նշանավոր հայերի ամյունները տե-

րափոխնել այնտեղ: Տերյանին էլ հարկավոր է Օրենքուրզից համեկ: Ի՞նչ է անում էնտեղ մենակ» (էջ 455): Իր բնօրրանը կորցրած բանաստեղծը հայրենաստեղծ խոհերով ու ծրագրերով է մորմորված, իր ստեղծագործության իրական արժևորումով դիտարկում թե՛ գրական միջավայրը, թե՛ արտազրական իրողությունները: Նյութական, առարկայական աշխարհը միջոց է իր տաղանդի, ոգենեն մղումների իրացման համար և ոչ երբեք նպատակ. «Ի՞նչ չախումների փող... Հա, չախումների փողով «Ծիծածան» տպեցի. Արգար աղի ենտ քվիթ...» (էջ 459): «Որ՝ Արգար աղայի տված 500 չախուի փողը դառնում է գիրք, նյութը ոգու վերածելու որակը նրա էուրյան հիմնաստարքերից է. աշխարհին հարաբերվում է հոգու և մտքի բացատիկ մերկությամբ, խաղը, կենծիքը, թիկունքում գործելով անհարիք են նրա նկարագրին. «Բանվորա-զյուղացիական»: Էսպիսի գրականությունն չկա: Պրոլետարական-վասսալամ: Միությունը պիտի դարձնել համահայաստանյան: Պիտի վերցնել Հայաստանի խորհրդայնացման ամիսը՝ նոյեմբերը» (էջ 462): Հայաստանի պրոլետարուների ասցիդիացիային հակակի Չարենցը 1925թ. ստեղծում է «Նոյեմբեր» միությունը, որին անդամագրվում են Գ. Սահարին, Մ. Արմենը, Ակսել Բակունցը, ում գրական մտերմությունն անշափ բարձր էր գնահատում Չարենցը. «Իմ դարրա Ակսելն է, նա էլ որ միացավ մեզ, էլ դարդ չունեմ» (էջ 463): Տարվում է «Նոյեմբեր» միության կազմակերպական խնդիրներով, դեկտյարական գրում, քերք հրապարակում՝ շեշտադրելով իր կապերը, որոնք անմիջապես վկայությունն են ժամանակակիցներից նրա արվեստի բարձր զնահատանքի և համբնդեանուր ծանաշման: «Ակսելի մի պատմվածքը հազար դեկտյարական հետա չեմ փոխի» եզրահանգումը ամրագրում է Չարենցի՝ ազնիվ գրականության անվեպ զգացողությունը՝ խարսխված գրականության դերի խորքային ընկալմանը. «Հեղափոխությունը, սոցիալիզմի կառուցումը դիոլ-զուտնայով հարսանիք չէ, ոնց որ պատկերացնում են մեր պոետներն իրենց ուսանակությունը» (էջ 465): Նրա անքենանելի համոզունքն էր, որ նորագույն հայոց գրականությունը պիտի դառնա ժողովրդական կյանքի և ժամանակակից մարդու հոգեբանության գեղարվեստական պատկերը: Իր պատական աշխարհի հայտնակերպման ակունքներում տեսնում էր ուսւ և եկրոպական բանաստեղծական հանճարի ներկայություն - ներգործությունը, իրեն համարում Բյուտովի, Բալմնադի, Թրեկի, Եսենինի բանարվեստի կրողն ու զարգացնողը. «Ես Վերհարնից եմ գալիս ու Վեռենից: Արտոր

Ումբոյի անունը լսած կա՞ս..., Չեզ համար կյանքը սապճած շուսի պես բան է, աղդալով գնում եք: Ֆրանչիական բանաստեղծ Յրանտուա Վիյոնի մասին գիտե՞ս, երկու անգամ բանս է նստել...» (էջ 474):

Եսենինի ինքնասպանության լուրը խորապես ալեկոծում է նրա ներաշխարեք՝ մղելով արվնատագեսի և իր դարաշրջանի միջև հարատև հակասության մասին խորեղածությունների: Անհավասարակշիռ, գերեզմանական, համառ ու սկզբունքային՝ նա անվերջորեն կոնֆլիկտի մեջ էր միջավայրի հետ. արդյունքում՝ Երևանի ուղղից առն, եղանական դժվարին կացություն. նրա և Արփիկի համդիպումը բանահի խցում՝ պատկերված առքատ քառամբերքով, բայց դրամատիկ մեծ լիցքով.

«Ծանր հանդիպում բանաային խցում,

Արտասկեց պատժած մանկան դառն արցունքներով. «Հազար մերդություն»:

- Դու ներիր ինձ, որ քեզ բաղի անտեր-անտիրական ու Լենինգրադ գնացի: Իմ մեծ, իմ մեծ երեխս...

Իմ մեծ...» (էջ 476):

Բանտային առօրյայի մեջ էլ նա յուրօրինակ կեցվածք ունի՝ ներքին ազատությունը, եղանոր մարդու կապանքներ չհանդուրժագ նրա հությունը փորձում է ապրել ինքնահատուկ կերպով՝ երգը շուրբին, բանաստեղծությունը՝ իր և իր կողմից արժնարվածների, անվերջորեն իր ներսում և խոսքի մեջ, իր վիճակին անհարիր շառայլ պահվածքով: Սահարու վկայությամբ՝ նա ուղղից տաճը պոեմ և բանաստեղծություններ է գրել, իիշում է առողեք «Հատուցում» պոեմից և մի ութնյակ, որոնք ամփոփված էին կարմիր կազմով տեսրում, դրանք Զարենցի բնորոշմամբ բացահայտուեն անկումային տրամադրություններ են ունեցել, կացությանը համապատասխան զաղափարներ՝ վախճան, ինքնասպանություն, մահ: «Բա ինչպե՞ս: Բանտում նստած դիֆերանք գրեմ, գուցե՝ մարշ...

Այրեց» (էջ 479):

Տառապանքի նրա չափաբաժինը դաժանորեն մեծ էր՝ իր մեծությանն ու հանճարին համապատասխան: Երբ նա բանտում էր, մահացավ Արփենիկը. հանգավ նրա ճակատագիրը լուսավորող, իմաստավարող, ջերմացնող պայծառ ջահը, մեծ սիրո երկրային ուղին ընդհատվեց՝ խորացներով տառապանքի ու նվիրումի եղանոր ընթացքը: «Երկորոր Արփենիկ ես չեմ գտնի աշխարհում»: Մորի ու եղոյզի աիրականները տառապանքից ուժնանում ու

մարքում են՝ ինքնարարնան բացասիկ բարձունքներ նվաճելով: Բարձրագույն մարդու համականիշը ինքնահալորդական նրա կամքն է, նախասկզբնական ծգուումը՝ բոլոր արժեքների վերածնորումը: Անդարմաննելի հայրենացավու ու մեծ սիրո կորստի վերքը եղանում անվերջութեան կրող երիտասարդ Զարենցը այն զրեղ անհատն էր, ով առգործած էր արարման ջանքով, անընդիեատ զորանալու, ոգեղեն կատարյալ հալթանակներ ծեռք բերելու բնական ծգուումը: Հարազատների մոտ՝ Սայկոսում, եղան ցավը մեղմերուց հետո նա կենսական նոր լիցքով, առավել անանձնական խոհերով վերադասնում է Հայաստան:

Սահարու այս շրջանի հուշերի պատառիկները շարունակվում են իրացվել ոճական սեղմ ու ժամա պատկերների մեջ, հաճախ մեկ կամ երկու պարբերությունից կազմված պատկեր, որ միայն Զարենցի միտքն է՝ գերխիտ, իմաստավոր մտակառույց, որում բանաստեղծի զգացուրությունների և խոհերի տարաշերտ ու տարաբնույթ գոյացումները երևակում են նրա իմացությունների, ծանայության, լայնախորհության, ծաշակի անսպառ հնարավորությունները: Բացասիկ խնամքու վերաբերմունքը գրական տեքստի նկատմամբ նրան ստիպում էր ընդգել կենսական աղքատ շերտերով, իրականության կեղծված պատկերով ներկայացող նորորյա գրականության դեմ: «Մի թե էս մարդիկ չեն եղանում, չեն ախրում, չեն սիրում, չեն կարուում: Սա ի՞նչ բնորդային, անեղողի պոեզիա է:

Կստեղծենք մեր լիիրկան, նեպրավդա, կստեղծենք մեր էաիկան» (էջ 481): Սահարին նրան բնորոշում է որպես գրականության շահերը կարևորող, թափրիված, անկազմակերպ ստեղծագործական ընթացքը չհանդուրժագ գրական կատարյալ տեքստի նախանձախնդիր անձ: Սահարու գրական «պորտֆելի» խառնավնքոր վիճակը զայրացնում է Զարենցին, այդ զայրութիւն մեջ խտացած են եղանակը ընկերոջ գուրգուրու վերաբերմունքը, գրական նյութի հանդեպ խիստ բննական հայացքը, որով նա անմիջապես խտանում է քոյլ գործերը, զատորոշում և առանձնացնում է աշխատանք պահանջողները և ոգևորվում-ոգևորում կայացած-հաջողված ստեղծագործություններով: Ժամանակի ցանկացած գրական արտադրանք չէր վրիպում նրա ուշադրությունից, առաջին ընթացքումն իսկ անխնակ արժնորում կամ խոտանում էր ստեղծագործությունը: «Չնշին բան ես գրել այ տղա» գնահատականին է արժանացնում նա Սահարու «Մանկությունը». կյանքի իր՝ համապատկերային ընկալումը չէր գտել այնտեղ, իսկ Հահան

Չահնուրի «Նահանջը» որակում է «ամենի գիրք» և խորհուրդ տալիս կարդալ այն:

1934-ից գնալով խորանում է նրա և զրական միջավայրի կոճիլիտը, Գրողների միությունից հետացվելը, «Գիրք ճանապարհի» բախումը գաղափարազորկ և ապազգայնացված գրական միջավայրի հետ մի կողմից մղում են ֆիզիկական իմքնակեղեման՝ «Սորֆի: Դանդաղ իմքնասպանություն», մյուս կողմից խորացնում իմքնարժերման, իմքնապահպանման գիտակցությունը. «Ինքը իր մասին կարող էր գրել «անհուն», «վեե», «մեծ», «հսկա», «վառ», «պայծառ»..., բայց կտրականորեն ընդվզում Մահարու իրեն արված «մեծ» որակումն, «Անհարմար է, ի՞նչ մեծ, ի՞նչ բան, մեծը Խումանան է, Տերյանը» (էջ 491):

«Զարենց-նամնում» Մահարին առավելաբար վավերագրող, փաստագրող է, իսկ «Նորից նրա հետ» կուշագրության մեջ նա նաև վերլուծող-մեկնարանող է. բնորդի արարին և ներքին գույները քանձրանում են՝ զծանկար-էսքիզից փոխարկվելով հարուստ ներկապնակով ստեղծված գեղանկարի: Հուշագրության մանրապատմների վերնացրերն անգամ վկայում են, որ կենսանյութից հեղինակը զնահատական-բնութագիր է ստեղծում, ամենագետ մարդու, մեծ ճարտասանի, եզրը արամարանի, անխման երգիծողի էապատկերը. «Նա հոեսոր էր և փայլուն հոեսոր: Ոչինչ չուներ նա բեմական՝ ոչ ճայն, ոչ բոյ-բուսաք, ոչ էլ հարուստ միմիկա:

Բայց նա հոեսոր էր:

Գիտելիքների մեծ պաշար և հումոր, - անա նրա հոեսորական գենքերը» (էջ 500):

Զարենցի և Բակունցի հոգևոր եղայրությունը խարսխվում էր նաև Կոմիտասի մեղեդիների համազգացողությանը. «Գնաճը Ակսելի մոտ, Կոմիտաս լսնեք» տուորող պահանջմունքը հոգեսույզ իմքնահահատության տաճող բացառիկ վիճակներից էր, իսկ Զանգվի ափին ջրի խշողով «զրու մենանալը»՝ իր փորորկվող էանյուրի խաղաղ հանգրվանը: Նրա զրական պատգամը իր ընթացակից գրողներին առաջնորդող մանիքնասի արժեք ունի. մշակույթի պատմությունը նախորդների փորձի յուրացման և սեփական իմքնօրինակ արժեքի արարման շարժընթաց է՝ հետադիմում և լճացում շիամադութաղ. «Ես հերքեցի Տերյանին և ստեղնեցի իմ գրականությունը, բա իմ չու ինձ չեք հերքում, եթե ուզում եք մեր գրականությունն ստեղնել...» (էջ 501):

Հուշերի պատառիկներից արարվում է ճաշակավոր արվես-

տագենաի, հմուտ արվեստասերի, բացառիկ նուրք լսողության ու խորության գունազգացողության տեր բանաստեղծի կերպարը, ով հասկանում ու զնահատում էր բարձր արվեստ ու վարպետ արվեստագետին. «Հիանալի իմտելիգենցիա ունենք, մի անս. Ծիրական, Ավետիք, Մարտիրոս, Ռոմանոս... զարմանալի տաղանդներ» (էջ 498):

1967-ին Մահարին նորից է անդրադառնում Զարենցյան հուշմասունքներին, ժամանակ առ ժամանակ հիշողության օվկիանից լողում, դեպի մտածումների ու խոհերի տարածք են շարտվում ապրված ու իմաստավորման միավող պատկերներ, և ծնվում է հուշի մի նոր բեկոր՝ «Զարենցի մեկ օրը» խորագրով, որը զայիս է ակներևարար լրացնելու-ամրողացնելու արդեն հայտնի կերպարը կենցաղային նուրք մանրամասներով, որոնց պատկերագրման մեջ առաջնային կարևորություն ունի Մահարու հումորը. մեղմ ու մանրիկ ծիծաղը ոճավորում է պատումը սկսած փողկապ կապել չկարողանալու Զարենցի մտահոգությունից մինչև Տերյան արտասանելով կոչիկ հագնելը, «Սոկաց Միրզա» երգելու փորձն ու իմքնադատությունը՝ «Հե՛ջ ճայն չունեմ...»:

Մեկ օրվա իրադարձությունների փաստական ու հոգևոր խառնությունը ապշարք է առաջացնում: Կեսժամյա սրճախմության ընթացքում, բայց Մահարու դիտարկումների, նա հասցրել է յոթ կետից բաղկացած գրական և ոչ գրական խնդիրներ առաջադրել և լուծել: Զարենցի մեկ օրը մարդկային մի քանի տարիների կենսական հագեցվածությունն ունի. նա այրվում է մշակութային-հանրային բազում մտահոգություններով, հանդիպում ժամանակի գրական, հասարակական-քաղաքական կյանքի հայտնի դեմքերին՝ Փանոս Թերենելոյանին, Արուս Ղոշարյանին, Պողոս Մակինցյանին, և օրն ավարտում՝ «մեծ վանեցու»՝ Աղասի Խանջյանի հետ «գրական գիշեր» անցկացնելով: Ա.Խանջյանը ազգային պետականաշխնության իր մեծ հույսի կրոգն էր այնքան ոչ հայտնակերպված «գրքինը նաիրական», արվեստասեր ու արվեստարան «արքայի» կատարելաւիքը, ով կարող էր կեսզիշերին հյուրընկալել տարարնույթ խոհերով մորմորվող անհանգիստ բանաստեղծին՝ հումորով հայտարարելով. «Գրական գիշերը համարում եմ բացված»: Զարենցն ընթերցում է իր նոր գործերից, քննարկում դրանք Խանջյանի հետ, և ապա զրոյցը ծավալվում է ընդգրկելով առաջին հայացքից գրի մարդուն շառչվող թեմաներ: Իրականում «արքայի» և պոետի մտահոգությունների պարագծում առաջնա-

յինը պես է լիներ հայրենիքն ու նրա վաղվա օրը. «Այ տղա, զյուղի դրությունը լավ չէ: Բամբակի պարտադիր պլաններ էն տալիս՝ ի հաշիվ հացահատիկի...Ո՞նց անենք» (էջ 512): Հացը՝ որպես պետության կայացման համար կենսականորեն եիմնայինը, այդ օրվա մեջ արդեն շեշտադրվել էր. «ազատ հացի» վաճառքից նրա ոգևորությունն անսահման էր, դրա կարևորության քաղաքական բանաձևումը՝ անքնին. «Պետականության, ամեն պետականության հիմքը հացն է, հաց ունեն, ամեն ինչ ունեն, հաց չունեն, ոչինչ չունեն: Չուրունից լավաշ չես թխի...» (էջ 509):

Չարենցի գրական ողջ ժառանգությունը՝ «Վահագնից» միմէն բանառում գրված վերջին բանաստեղծությունները, երևակում են նրա պատմաքաղաքական հայեցակարգի իրաւանական հիմքերը. Ա. Խանջյանի նենգադավ սպանությունից շատ առաջ նա արդեն տագմապում էր հայոց նորելու պետականության հիմքը սասանող հնարավոր հարվածից: «Երթական «մանուկ Արայի» տեղը նեղն է ներսի և դրսի դավադիմների ջանքերով («խանգարում են Քերիայի ազենտները»), երկրի ու մշակույթի որբացման տեսիլը նորից սողոսկում է բանաստեղծի նոզին. «Այ տղա, ամբողջ զիշեր աշխատել եմ ու շարունակ մտածել. եթե աստված ոչ անի Աղասին քողմի, ենուանա Հայաստանից, ու՞ն ընտրենք առաջին քարտուղար, ի՞նչ ես կարծում...» (512): Ինըն ուզում էր հայոց երկրի դեկավարին տեր լինել, մինչդեռ նրա մահով վերջնականացնեն որբանալու էր նաև ինքը: Աղասի Խանջյանի սպանությունը իմմանազորապես խորտակում է իր և հայոց կյանքի վերափոխման նրա հույսերը, կորսայան ցավի ահազնությունից խսանում են խոհերն ու հույզերը՝ ծնունդ տալով «Դոֆինը ճահրական» սոնեաշարին.

Սի՞րս «որմի՛ն» էր այդ, - վերջին նայիրական
Արքայա՞զմը՝ ննջած դափնիմների ներքո -
Արմաշաղսլ՝ քաղած իր ստիւական ծնորով¹...

Սինչ այդ իրեն ենսապերդ տագմապի զգացողությունը հետևողականորեն առարկայանում է. «Ընծ այնպես է թվում, ուր որ է ետևից կամ վերևից մի կիրապիչ է ընկնելու զլխիս» (էջ 495): Տագմապի, անանուն, անմարմին վասնզի զգացողությունը նրան ենսապերդ է մինչև այն պահը՝ 1937 թվականի հուլիսի 27-ի ողբերգական այն օրը, երբ այդ վտանգը՝ արդեն որպես իրական աղեա, իորդրային Հայաստանի ՆԳԺԿ-ի աշխատակիցների

տեսքով նրան ուղեկցելու է ստույգ նահկան: Մահարու վերջին հանդիպումներից ստացված պատկերագրումները մարտիրոսության գնացող առաքյալի կերպար են ստեղծում. «մատները՝ մոմն, դեմքը՝ մագաղար, աչքերը՝ ջաները»: Ծայրասահճան պրկված նյարդերով Չարենցը լսում, զգում և զատորացում էր մոտալուա աղեաի բոլոր լսելի և անլսելի ձայները, անորսալի դավի տագնապը՝ եղագում, և շուրբերին՝ Սիամանբոյի («Չարմանայի, զարդուրիլի պոես է...») պատկերները՝ իր ներքին զգացողություններին այնքան համահունց ու հարազատ: Ժամանակը քակարդ էր լարել. քանի ներին էր հաջողվելու դիմակայել հավատաքննությանը: Պատմական ժամանակի նրա զգացողությունը անվեպ էր. 30-ականների դավադիր հավատաքննությունը դիմազրկում և հանցավար հապատակության էր մղում նույնիսկ իր եղագու եղրայրներին՝ ծնունդ տալով բանաստեղծական դառնազին պատկերների, որոնք կենսական փաստի գեղարվեստական իրացումներն էին:

Մահարուն հաջողվել է շարենցյան հուշապատճենների մեջ սանդեկ մեծ բանաստեղծի հիրավի բարդ, բազմածալ եղագետիպը՝ վերելքներով ու վայրէջքներով, բայց միշտ խորքային ու անկեղծ, «ծերունու պես իմաստուն և մանկան պես բաց ու անկեղծ, բուրմի պես խորեղդավոր ու խորագենա». «Զէ՛, կախարդ էր նա» (էջ 503): Իսկ կախարդ էր նա, որովհետև բնությունը նրան շայլորեն նվիրաբեկ էր ներքնատեսություն, երևույթների բարուն էությունը քննելու զորություն, վերլուծական միտք, արարման անկասելի ավյուն և բազում առաքինություններ՝ ծորանությունը արգելակող արժանապատճեն, եերսացման վայրէնական պատրաստակամություն, հավատաքննություն բարձրագույն կոչմանը և միակ ճիշտ ճանապարհին, որը բացառում էր հանցավոր համագործակցությունը հոգեսպան համակարգի հետ, որի գոկը դարձավ նա:

«Չարենց-նամենի» վերջերգում Մահարին գերիուզական լիցքավ շեշտադրում է իր ոգեղեն տարածքներում Չարենց մարդու և արվեստագետի մշտամնա ներկայաւություն-ներգործությունը, նորից ու կրկն ամրագրում նրա հանճարի վերժամանակյա խորհուրդը. «...Եվ գնում ես մինչև իմա իս ուղեղում և եղագում, ուղեղիս փշերի և եղագու ծաղկեմների վրայով, դու, մեծ երգիչ, մեծ ու ահապար մեր դարի, դու տարերային, անհանգիսա ու ալեկոծ վեհություն, պայծառ զավակի իմ ժողովրդի, մեծ ուխտի կարմիր ուխտավար, դու նահատակ ու մարտիրոս, ընկեր եերսացման և ազնիկ ուսուցիչ Եղիշե Չարենց...» (էջ 497):

¹ Եղիշե Չարենց, Նորահայտ էջեր, 1996, Եր., էջ 93:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ՄԻՋԱՎԱՐԹԱՆ ՏԵՍԻԼԸ ԵՎ ՉԱՐԵՆՑԻ «ՄԱՀՎԱՆ ՏԵՍԻԼՆԵՐԸ»

Չարենցի ստեղծագործական ողջ կյանքն ընթացավ գրական-աշխարհայցքային որոնումներով, որոնք ուղեկցվեցին տարրեր ժամանելի ու տաղաչափական բազմազան ձևերի դիմելով։ Այս որոնումների ընթացքում Չարենցը քանից օգտագործել է նաև արևելյան և հայ հին գրականության մի շարք ժամաներ։

Այս իրողության ամենաբնորոշ արտահայտությունն է Սայաթ-Նովայի ստեղծագործությունների և միջնադարյան Տաղարանների կառուցվածքային առանձնահատկությունների ենթադրությամբ գրված «Տաղարանը»։

Իր գրական մուտքից մինչև ստեղծագործական տառապայից կյանքի ավարտն ընկած շրջանում Չարենցը բոլորից շատ դիմել է տեսիլի ժամանելի և տեսիլային պատկերումներին, որոնց շարքում գլխավոր տեղը գրավում են բանաստեղծի երեք «Մահվան տեսիլները»։

Մինչև այս երեք գործերի ըննությանն անցնելը նախ համառուս ներկայացնենք տեսիլի ժամանելի միջնադարյան գրականությունում և թե առաջի ինչ վերիմաստավորում ստացավ նոր շրջանի գրական ուղղությունների և ազգային ճակատագրի ու ոգորումների ընդհանուր համատեքսուում։

Տեսիլը բխելով տեսնել բառից՝ նշանակում է ոչ առգրական, արքմնի երազում աստվածային վերին իրողությունների և կամքի հայտնությունը տեսանողին։ Տեսիլները իմաստային առումով բաժանվում են երեք խմբի։

ա. Աստվածային վերին խորհուրդների հայտնությունը.

բ. Ազգային կամ համամարդկային բնույթի, երբ տեսանողին հայտնվում է, թե ինչ է լինելու մոտ կամ հեռավոր ապագայում մարդկության կամ որևէ ժողովրդի հետ։

գ. Ներանձնական, երբ տեսանողին ծանուցվում է իր հետ կատարվելիքը։

Քանի որ տեսիլի բարձրագույն ձևը աստվածային վերին խորհուրդների հայտնություն էր, ուստի այն ուղեկցվում էր նաև

որոշակի պատկերային կառուցվածքով։ Տեսանողը տեսնում էր տեսանելի երկնքի բացվելը, որից այն կողմ արդեն աստվածային երկինքն է, ապա տեսիլը պատկերվում էր համապատասխան գործողությամբ, և ենաող ծայրը կամ Տիրոց երեշտակը բացառում էր երևացածի խորհուրդը։ Հին Կտակարանում տեսիլներն ու մարգարենությունները սերտ կապակցության մեջ են։ մարգարենության ժամանակ երևում է տեսիլը, և տեսիլում էլ ներկայացվում է մարգարենությունը (տեսն Եսայի, գլ. Զ, Եգեկին, գլ. Ա, Դանիել, գլ. Ը)։

Երկրորդ խմբի տեսիլները պատկերներով ու գործողություններով ուղեկցվում են հատկապես այն դեպքերում, երբ ունեն վախճանարանական բնույթ կամ ներկայացնում են ազգային պատկան։

Ներանձնական տեսիլներն էլ իրենց հերթին բաժանվում են երկու խմբի՝ եղանոր-բարյական ուղղվածության, երբ տեսանողն երևում է Տիրոց երեշտակը կամ որևէ այր և համապատասխան պատկեր երահանգ է տալիս։ Նման տեսիլները, որպեսզի տեսանողի կողմից ընկալվեին որպես բնույթ տեսած երազ, մի կարծ ժամանակում կրկնվում էին երեք անգամ, որով տեսանողը հասկանում էր, որ դա մարդկային սովորական երազ չէ։

Ներանձնական տվյալ անձի հետ կապված տեսիլների մյուս խումբը ոչ թե առանձին ստեղծագործություններ են, այլ մասն են կազմում վկայարանությունների, որոնցում տվյալ սրբերին իրենց նահատակությունից առաջ երևում է երկնքից իշնող լուսե պսակը, որը խորհրդանշում է նրանց կողմից նահատակության պսակն ընդունելը, և կամ էլ երկնքից հնչած ձայնն ասում է՝ զգացիք և արիացիք, որպիսին են կեկ և նահատակության ժամը։ Տեսիլը ոչ միայն որպես սրբալուսական գրականության առանձին ժամը, այլև այդ գրականության ժամերից վարքերին ու վկայարանություններին մաս կազմելու և ամփոփող վերջարան լինելու մասին Զ։ Տեր-Դավթյանը գրում է. «XI-XV դդ. Ժողովրդական ուղղության՝ հատկապես պարզ պատմողական և հայսմակուրքային վարքերի բաղկացուցիչ մասն են կազմում տեսիլներն ու երաշապատումները, որոնց միջոցով ընթերցողին է հաղորդվում երկերի հիմնական բարյախրատական գաղափարը»¹։

Տեսիլները ոչ միայն եղանոր բարձր ապրումների, այլև ազգային անկատար իղձերի՝ մոտավոր ապագայում իրականացած տեսնելու արտահայտություններն են։

¹ Զ. Տեր-Դավթյան, XI-XV դարերի հայ վարքագրությունը, Երևան, 1980, էջ 156։

Ազգային և անձնական բնույթի տեսիլները վերիմասսաավորվեցին նոր շրջանի գրականությունում: Առաջինների միջոցով ժամանակային նոր դրսւորումներով անդրադարձ էր լինելու տառապող մարդկության կյանքի ընթացքին և ազգային ճակատագրին: Նույն ճառվ երե անհատական տեսիլները ներկայացնում էին ապագա նահատակի հոգեկան խոռվը և նահատակության պատրաստվելը, ապա նոր շրջանի գրականությունում անհատական տեսիլը պետք է ներկայացներ բանաստեղծի և ընդհանրապես մարդու հոգեկան ապրումները:

Տեսիլային գրականությունը առանձնակի ուժգնությամբ դրսւորվեց հայ նոր գրականությունում նախ 19-րդ դարի արձակում, ապա 20-րդ դարասկզբի հայ բանաստեղծությունում: 19-րդ դարում այն արտահայտվեց որպես ապագային նետված ազգային մի հայաց ու տեսչ, որի բարձրակետն էր դառնալու «Խենքի երազը»: 20-րդ դարասկզբին ազգային իրականությունը առավել դժմի դարձավ, ինչպես նաև զուտ բանաստեղծական առումով է զումարվեց սիմվոլիզմի գրական ազդեցությունը, որի արտահայտությունն են Տերյանի «Մթնշաղի ամուրցները», որը անուրջը տեսիլի մի արտահայտությունն է: Նման մի դրսւորում են Սիհամանքոյի ջարդերի խտացած գեղարվեստական պատկերը նղող տեսիլասողները և Չարենցի «Տեսիլաժամները»: Հայրենիքի տեսիլային մի արտահայտությունն է նաև Վահան Տերյանի «Երկիր Նախրի» շարքը, որը Հայաստանը պատված է Նախրի երկրի անցյալի հեռավոր տեսիլաշարով:

Չարենցի մոտ ներանձնական գացցումներին գումարվում և միահյուսվում է նաև ազգային ապագայի հանդեպ տագնապը: 1915 թ. աշնանը Կարսում բանաստեղծը գրում է:

Սի լուս աղջիկ, լուս մի մնան
Օքնի միզում ներևում է ինձ¹:

Երազ-տեսիլ ընդհանրությամբ «Ծիածան» շարքի բանաստեղծություններից մնկում ասկում է:

Զույր, երազներն այրվեցին ու անցան,
Եվ ջինջ մնաց քա աշքերում, իմ հոգում-
Սի սրբացած, անքացած ծիածան՝
Վերջին սիրո մի լուսավոր անորում²:

Տեսիլները բե ինչու առանձնակի ուժգնությամբ արտահայտ-

վեցին սիմվոլիզմի բանաստեղծությունում, Ս. Աղարարյանը գրում է: «Սիմվոլիզմի գեղագիտական համակարգում արտահայտված երազանքի, հույսի մոտիվները, խստագույն համապատասխանելով երազներով իր կյանքը թերևացնելու մարդու հավերժական մուսւներին, բնականորեն տեղ գրավեցին այն գրականության մեջ, որն ավելի էր զգում իրականության ծանր մղմափանջից բեռնաթափիկուլ կարիքը»¹:

Չարենցի վաղ շրջանի սանդագործությունների մասին նույն այս համատեքսառում Աղարարյանը գրում է: «Սի կողմից՝ ազգային-տեսլական հոգերանությունը, մյուս կողմից՝ սիմվոլիստների տեսլական գեղագիտությունը՝ այս երկու իմացական աղբյուրներն են սնում վաղ շրջանի Չարենցի գեղարվեստական մտածողությունը»:

Եթե ազգային տեսիլները կոչված էին պատմության անբարարացն մշտական մեջ կորած հայրենիքը ստեղծելու խնդրին, ապա սիմվոլիստական տապակարարությունները կոչված էին արտահայտելու մարդու խորքացումը անհերեթ բառայահին իրականությունից»²:

Միջնադարում ազգության ուրացության պահանջը ըստ եւրիյան նաև հավատութացության պահանջ էր, քանի որ այլազգիները պահանջելով ուրանալ հավատը՝ վաստորեն պահանջում էին ուրանալ ազգությունը, որի համար, սկսած Ավարայրից, հավատի նահատակները ընկալվել են նաև որպես ազգության նահատակներ: Այս ընկալումը այնուենաև բավականին ցայտունորեն արտահայտվել է Վահան Գողբենցու նահատակության պատմությունում: Անա այս պատճառով վկայարաբնությունները եզրափակող տեսիլները լինելով անհատական բնույթի, ստանում են նաև ազգային շեշտադրություններ:

Ազգային և անհատական բնույթի տեսիլներն իմաստային առումով կարելի է բաժանել երեք խմբի:

ա. *Տեսիլներ*, որոնք վերաբերվում են հանուն հավատի և հայրենիքի նահատակությանը,

բ. *Տեսիլներ*, որոնք վերաբերվում են ազգային-մշակութային մեծ իրազործություններին (ինչպես, օրինակ՝ Ս. Էջմիածնի եիմնադրման մասին Ս. Գրիգորի տեսիլը Ազարանցեղոսի «Հայոց պատմությունում» և «Հայոց Այրութենի արարումը Ս. Սեպուղի տեսիլով),

գ. *Անցյալի իրադարձությունների լայն համապատակների վրա*

¹ Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, ԽԱ. Երևան, 1962, էջ 33:

² Նույն տեղում, էջ 94:

¹ Ս. Աղարարյան, Եղիշե Չարենց, ԽԱ. Երևան, 1973, էջ 40:

² Նույն տեղում, էջ 44-45:

Անրկայացվող և ազգի պատգային վերաբերվող տեսիլներ:

Չարենցի երեք «Մահվան տեսիլ»-ներից յուրաքանչյուրը նվիրված է տեսիլների այս երեք տեսակներից մեկին:

Հանուն հայրենիքի զոհարերմանն է նվիրված առաջին «Մահվան տեսիլը»: Անցյալի համապատկերի վրա ազգային-ազատազրական պայքարին է նվիրված երրորդ «Մահվան տեսիլը» (պոեմը) և վերջապես ազգային-մշակութային իրագործումները ներկայացնող տեսիլների ենաւողությամբ է գրված երրորդ՝ Ալեքսանդր Թամանյանին նվիրված տեսիլը:

Այս երեք տեսիլները թեև գրվել են 16 տարվա ընթացքում, որը բավականին փոքր ժամանականաւագած է պատմության ընթացքի մեջ, սակայն նրանցից յուրաքանչյուրը գրվել է պատմականութեան միանգամայն այլ իրավիճակում, և երեքից յուրաքանչյուրի բովանդակությունը և կառուցվածքը ուղղակիորեն հարաբերվում են տվյալ ժամանակի պատմա-քաղաքական իրավիճակի հետ:

Առաջին «Մահվան տեսիլը» գրվել է 1920թ. հոկտեմբերին, երբ Հայաստանի առաջին Հանրապետությունը Ալեքսանդրապոլի ամկումից հետո բուրքական նոր հարձակման սպառնալիքի ներքո ապրում էր իր իր հոգեվարքը, և վտանգված էր նաև հայկական վերջին հողակառի պատգամ: Սաեղծված այս իրավիճակում է ծնվել չարենցյան նշանավոր տողը:

Թող ո՛չ մի զոհ չպահանջվի իմձնից բացի...

«Մահվան տեսիլ» պահմը Չարենցը գրել է 1933 թվականին, երբ Խորերդային Հայաստանը հառնել էր մահվան վիլատակներից և մոժավանջային ծանր մի անցյալի էր վերածվել արևմտահայության ողբերգությունը: Անկախ գաղափարական վայրի վերումներից՝ երկիրը շարունակում էր իր երրը, և անցյալի մոժավանջի ու դրան հաջարդած ժամանակների լուսավոր ընթացքի վրա է խարսխված պոեմը:

Ժամանյանին նվիրված բանաստեղծությունը գրվել է 1936 թ. փետրվարի 20-ի լրաց 21-ի գիշերը մեծ ճարտարապեսի վախճանվելուց հետո: Ծիշա և այս բանաստեղծությունը փետրվարի 23-ին տպագրվել է Խորերդային Հայաստանի մայր քերրում՝ «Ճորդերդային Հայաստանում» և Չարենցը էլ դեռևս գտնվում էր իր փառքի գեներում, սակայն արդեն մարմնավորվում էր 1937 թվականի ուրվականը և այս ուրվականը մի յուրահատուկ վերջարան է թելալորել բանաստեղծությանը, ուր ոչ թե արվածն է ներկայացվում՝ Երևանի գլխավոր հաստակիծը, այլ մահվամբ կիսաս մնացած գործը:

Չարենցագիտությունը քանի որ կատարել է այս երեք գործերի հանգամանալից քննությունը, ուստի մենք կանորադառնանը միայն տեսիլի ժամանքի հետ դրանց հարաբերակցությանը:

Նախ նկատենք, որ միջև Չարենցը Սիամանքուն «Հայորդիներ» շարքն ավարտել էր «Կախաղաններու կատարեն» բանաստեղծությամբ և հաջորդ «Հոգեվարքի և հույսի ցաներ» շարքը սկսել «Մահվան տեսիլով»: Ահա և Սիամանքուն նկարագրած կախաղանը:

Սահակիր սյուները մքմաղիմ մեջն եղանակար կրաքրանամ, Պայծառ, սրառու և նվիրական որդիմերում համար տրտմաքայիծ Հայրենիքիմ¹:

Ինչպես որ Չարենցն է գծագրում իր ինքնակախվածի պատկերը և հայրենիքին ուղղում իր պատգամը, այնպես էլ Սիամանքուն է այս բանաստեղծությունը ավարտում հայորդիների պատկերով և նրանց վերջին խոսքերով.

Ու ճեր նարմիները, ո՞վ Անակորմեր, ո՞վ Շշմարիսներ,

Զեր նարմինները օղին մեջ առկան և Զեր աշքերը հայրենի ասաղերուն, Օրերով և գիշերմերով, երկու սյուներում մեջտեղ ցիմահույզ, ճոճեան, Եվ Զեր վերջին խոսքերը, անտառին նման ուղճացավ...
«Կեցցն նմրոստմերը և կեցցն Հայաստան»²:

Պատահական չէ, որ Սիամանքուն կախված հայորդիների համար ասաւմ է, որ նրանց աշքերը ուղղվեցին ոչ թե արեգակին, այլ՝ ասսաղերին: Ինչպես նաև հայորդիների խոսքերը համեմատում է ուղճացող անտառի հետ: Անտառի և աստերի հաճախաղեացիակությունը գանում ենք նաև Չարենցի «Դանքեական առասպեկտ» և «Մահվան տեսիլ» պոեմներում. պատկերը իր հերորդին գալիս է Դանքեի «Աստվածային կատակերգությունից»:

Զուգահեռ անցկացմերով Սիամանքուն և Չարենցի «Մահվան տեսիլ»-ների միջև, Հր. Թամրազյանը գրում է. «Այստեղ դուք չեք գտնի Սիամանքունի տագնապի ահազանգը, որ բռնում է երկիր ու երկինք, նրա ցավի ախտանիկան ընդվզումը, երևակայության անտովոր ծավալումները՝ արյան շատրվանների, կարմրած ցրերի, մորքող սերունդների, երդենի տված ազնվական քաղաքների, սարսափահար փախչող նախիրների մասին: Ավելի շուտ այս մահվան տեսիլի մեջ իշխում է մեռնող կյանքի համը, սոսկալի

¹ Սիամանք, Դանիել Վարուժան, Երևան, Երևան, 1979, էջ 80:

² Նույն տեղում, էջ 82:

լուրջունը, եղանակարքի տրամադրությունը»¹:

Միջնադարյան վկայարանություններում սուրբը մինչև նահատակությանը նախորդող տեսիլը տեսնելը անցնում է չարչարանաց ճանապարհով, ասես ամրողովվին ոգեղենանում է և կտամբներն իսկ ի զարու չեն դառնում ազդելու նրա վրա: Նահատակը ընթանում է դեպի գիտակցված մահ: Նույն այս ընթացքով է Չարենցը է զրում:

Եվ Նայերյան իմ երազի վերջին սիրով,-
Երբամ նարու ու նարմրու իրիկվա մեջ,
Որպես ուրու հալածակամ, որպես տեսիլ-
Տա՞մ պարանոց կարուտիմ այս երկնուղեց
Ու օրորինմ եղերական ու անթափր...

Ինչպես որ նահատակներն էին իրենց վերջին աղոթքում խնդրում, որ Տերը ների իրենց հալածողներին, այնպես էլ Չարենցը է խնդրում, որ ուրիշ զոհ չպահանջվի իրենից բացի:

Նահատակության տեսիլների մի զգալի մասում նահատակվող տեսնում է երկնքի բացված դրմերը, այսինքն ապագան և այս մասին հայտնում հավաքվածներին: Տեսիլի այս ձևի նախօրինակը Ստեփանոս Նախասարկավագի տեսիլն է իր քարկոծվելուց առաջ, երբ նա ասում է. «Ահա տեսանեն զերկինս բացեալ», և ապա իրեն նահատակողների համար դիմում է Տիրոջը հետևյալ խնդրանքով. «Տեր, մի՛ համարիր դոցա զայս մեղս» (Գործք առաքելոց, Է 55):

Նահատակվողի կողմից ապագան տեսնելը Չարենցի մոտ արտահայտվել է բավականին յուրօրինակ ձևով: Այստեղ նա ոչ թե որպես նահատակ ասում է, թե ինչ պետք է լինի, այլ որ այդ ապագան ներկաները բռն կարդան կախվածի իր աշքերում: Նաև անհրաժեշտ է նշել, որ ապագային տրված «զուսապսակ» և «պայծառ» բառերով Չարենցը արդեն իսկ բնորոշում է ապագայի դժվարին, բայց և պայծառ ընթացքը:

Վկայարանություններում նահատակվողի հավատքը վիխանցվում էր ապրողներին, և նրանք դառնում էին նահատակի գործի շարունակողը:

Նահատակվողը առ Աստված ուղղված իր վերջին աղոթքում խնդրում էր, որ իր անվամբ Աստծուն դիմողների այս կամ այն բնույթի խնդրանքը կատարվի, որով ամեն մի սուրբ իրենէ խնդրանքով:

բարեխոս է դառնում մարդկանց համար Աստծո առաջ: Այսպես, Վարփառ կոյսի նահատակության պասմությունում ասվում է, որ նահատակվեաց առաջ «սրբութին աղաշեաց զԱստծուած, զի տացէ շնորհս անուան իւրոյ և ուկերաց՝ ողացուցանել զամննեսեան ոքք վասնզին ի ծաղկէ և ի տապասկէ, ոքք հաւատովի ի նա պապակմին»²: Սուրբ Սարգիսը, ով անվանվում է արագահաս օգնական, իր նահատակությունիցից առաջ Աստծուն է դիմում ասելով, թե իրեն ապավինողները թող ազատվեն «Փ կարկարեք և յեղեամնարկու օրոց բռնութենէ դադարապէա»:

Չարենցի այս բանաստեղծության վերջին առղերը ևս կարելի է համարել մի յուրօրինակ բարեխոսություն հայրենիքի պայծառ ապագայի համար: Վկայարանությունների տեսիլային վերջաբանին բնորոշ այս բոլոր հաականիշները Չարենցը խացըրել է վերջին այս առղերու:

Եվ բող տեսմնն իմ աշքերի մեջ կախվածի,
Իմ բո՛ր երկիր, լաւապսակ բռ ապագան:
Թող դուրս ընկած իմ աշքերի մեջ կախվածի
Նորա տեսմնն պայծառ օրերդ ապագա,-
Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ո՛չ մի սավեր կախաղանին բող մոտ չգա...

«Մահկան անսիլի» վերջին այս հատվածի միջնադարյան ավանդություն բխելն է մեկ այլ տեսանկյունից ակնարկում Ս. Աղարարյանը, գրելով. «Մահկան տեսիլի» «քնարական խոստովանության» միջով անցնող անձնվիրումի թեման յուրահատուկ հոգերանական «մարքագործումի»՝ «կատարսիսի» դեր է խաղում, նույն բանը թելաղորելով նաև կախաղանի շուրջը խմբված մարդկանց»³:

Չարենցը վերսախն մահկան տեսիլին դիմում է բավականին անակնկալ կերպով՝ 1933 թ., երբ զոնեն ֆիզիկական առումով ոչինչ չէր սպառնում հայ ժողովրդին և խաղաղ շինարարության ընթացքն էր իշխում: Ինչպես գրում է Հր. Թամրազյանը. «... այս մթնոլորտում նրա ստեղծագործության մեջ անակնկալ կրկին հարություն է առնում մահկան տեսիլը, կրկին բնդգծում է հայ ժողովրդի անցյալի, ներկայի և գալիքի հարցը: Այստեղ մենք տեսնում ենք նույն բնմայի մենարաննան նոր որակ՝ կապված կյան-

¹ Հ. Թամրազյան, Բանաստեղծության հազարամյա խորհուրդը, Երևան, 1985, էջ 495:

² Յայսմատրը, Կ. Պոլիս, 1734, էջ 224:

³ Սովետական հայկական, Վենեսակի, Ժ. Զ. 1854, էջ 48:

³ Ս. Աղարարյան, Եղիշ Չարենց, Խա. Ա, էջ 186:

քի զարգացման և ենդիմակային հոգերամության նշանակալի փոփոխությունների հետա¹:

Անհրաժեշտ է նշել, որ Չարենցի այս երկրորդ մահվան տեսիլը առաջին և երրորդ տեսիլներից տարրերվում է ոչ միայն ծավալային ընդգրկմամբ ու ժանրով (պոեմ է), այլև թեմատիկ բնույթով։ Ի տարրերություն մյուս երկուսի՝ սա ոչ թե դասական տեսիլ է, այլ տեսիլային ճանապարհորդություն դեպի անդրաշխարհ։

Նման ճանապարհորդության բարձրակենար թեև Դանթեի ստեղծագործությունն է, այն սակայն ունի իր նախօրինակները թե ընդհանուր քրիստոնեական գրականության մեջ և թե վերջինիս հետևողության հայ միջնադարյան գրականությունում և համապես եկեղեցական պարականոններում, որոնց երկու նշանակալից արտահայտություններն են *Տիրամար* տեսիլը և *Առաքել Սյունեցու* «Դրախտագիրքը»։ Առաջինի ամրողական վերնագիրն է «Տեսիլ Ամենասրբությու Աստուածածնին», զոր ետև ամենաօրինական՝ յաղագու տաճանաց մեղատրաց»²։

Պարականոն այս պատմությունում ասվում է, որ *Տիրամարը* երկինք վերափոխվելուց առաջ եկում է Զիթենյաց լեռը, այնտեղ աղորում և իր *Միածին Որդուց* խնդրում տեսնել դժոխքում փակված մեղավորների շարչարանները։ Այդժամ գալիս է Գարքինել երեշտակապետը (մի շարք *Խմբագրություններում Միքայելը*) և բացում դժոխքի դրներն ու *Տիրամարն* ուղեկցում դժոխքի խորխորասներով։ *Տեսնելով մարդկային տաճանքները*, *Տիրամարը* «տրաում ենիս» և հարցնում է, թե որոնք են այդ տաճանքների մեղքերը։ *Միքայելը* որոշակի դասակարգմամբ հերթով ներկայացնում է, թե պայմանավորված գործված մեղքերով և ըստ այդմ նախանձակած տաճանքներով՝ ինչ խմբերի են բաժանվում մեղավորները։

Այստեղ հստակորեն արտացոլված են դժոխքի մասին ժողովրդական հավատալիքները, որոնց քրիստոնեական միջնադարում զարգացման բարձրակենամ էր դառնալու Դանթեի «Աստուածային կատակերգությունը»՝ դժոխքի պարունակների բաժանմամբ։

Հաջորդ նմանատիպ գործը *Տաքի դպրոցի նշանավոր ներկայացնեցիներից* *Առաքել Սյունեցու* «Դրախտագիրքն» է։

¹ Հր. Թամրազյան, Բանաստեղության հազարամյա խորրնուրդը, Երևան, 1986, էջ 498։

² Անկանոն գիրք Կտակարանաց, Խո. Բ, Վենետիկ, 1898, էջ 383։

Անդրաշխարհային ճանապարհորդություններին պատկանող գործերի շարքում չափած այս երկի յուրահատկությունն այն է, որ այսաեղ Սյունեցին ոչ թե որևէ մեկին իրեն ուղեկից ընարելով է անցնում դժոխքի պարունակներով, այլ իմքն է դառնում ընթերցողի ուղեկիցը և նրան առաջնորդում դեպի դժոխք, ուր բանմավածները վերասահն ներկայացնում են իրենց կրած տաճանքները ըստ գործած մեղքերի։

«Դրախտագրքի» բնական բնագիրը երատարակելով Վենետիկի *Միսիքարյան հայրերից* է. Ներսն Ներսիսյանը գրի առաջանում այսպես է բնորշում այս գործի գրության շարժադրքը։ «Նպատակ ունի քրիստոնեական սկզբունքներով ազնուացնել մարդկային ապականած բարքերը, արծարծել հաւատը։ Այս զաղակարէն առաջնորդուած՝ նեղինակը յարմար դատած է նկարագրել անդենական կեանքը, աալով քաջակերիչ և միևնույն կողմէ նաև սարսափեցուցիչ պատկերներ, որոնք կը ճգտին ստեղծել հեշտաւոր մարդուն մէջ զգուանք մը դէպի մեղքը, եւ խանդական յարում մը դէպի բարին։ Խրամներ և յօրդորներ, զորս Առաքել կը դէն ննջեցնալներու բերանը՝ կու գան շրջանակել այդ պատկերները»¹։

Թե՛ իիշյալ երկու և թե՛ հայ մատենագրության մի շարք այլ համարնույթ ստեղծագործություններում թեև հանգամանալից ու սահմոկեցուցիչ գոյսներով ներկայացվում են դժոխքը և այնտեղ տաճանշուղ մեղավորները, սակայն այդ երկերում ազգային ակնկալիքների և ապագայի մասին որևէ շեշտակած ակնարկ չկա։ Այս գործի նպատակն է ապրուներին հանդերջալ կյանքում կրելիք տաճանքներով վախեցնելը և նրանց հնարավորինս ես պահելը մեղք գործելուց, ինչպես նաև աղորեկ և տարրեր գործողությունները կատարել հանուն ննջեցյալների իոգիների խաղաղության։ Ինչպես գրում է Հ. Ն. Ներսիսյանը. «Դրախտագրքի ամենէն ցայտուն կեալը՝ ննջեցնալներու և ողջերու միջև գոյութիւն ունեցող անձուկ աղերսն է. մնջմէն աղօրք, իսկ իրենց կողմէն բարեխօսութիւն»²։

Միանգամայն այլ էին Ներսն Սեծի տեսիլը և վերջինիս հետևողությամբ ստեղծված տեսիլները, որոնք պատմա-բաղարական յուրաքանչյուր նոր իրավիճակում և դարաշրջանում համապատասխան վերախմբագրման էին ենթարկվում, շարունակ մնալով հայության իղձերի և ակնկալիքների կենդանի արտահայտությունները։

¹ Առաքել Սյունեցի, Դրախտագիրք, Վենետիկ, 1956, էջ 23։

² Նույն տեղում, էջ 51։

Ի տարրերություն հայկական նյութի, անդրշիրիմյան ճաճապարհորդությունների միջնադարյան ստեղծագործությունները ունենին շեցաված ազգային - քաղաքական բնույթ և ոչ միայն հավատացյալներին զգուշացրել են գործված մնելու ին հաջորդող վերահս հատուցման մասին, այլև ազգային գաղափարների և խանդապառության աղբյուր են եղել. Դանքերին են դիմել XVIII դարավերջից մինչև XIX դարի 70-ական թվականների՝ «Ոխտօքի-մենտոյի» դարաշրջանի բանաստեղծները: Սա այն շրջանն է, երբ Խտալիան արոնված էր տարրեր իշխանապետությունների և Ավստրո-Հունգարիայի միջև, որը տևեց մինչև Խտալիայի վերամիավորումը 19-րդ դարի 70-ական թվականներին, որով և ավարտվեց այս շարժման պատմա-մշակութային առաքելությունը: «Ոխտօքիմենտոյի» բանաստեղծներին խանդապառում և հայրենասիրական լիցքեր էին հաղորդում Դանքերի Խտալիային նվիրված առղերը, այդ թվում և հայրենասերի խոր վշտով խարազանումները, ինչպես, օրինակ՝ «Քավարանի» վեցերորդ եղան 76-79-րդ առղերը.

Օ՛ ցավերի օջախ, սարուկ իտալիա,
Դու անդեկ նավ ահեղասասա հողմերում,
Դու պղծանց, ոչ աիրուի վեհազնյա¹:

Պատահական չէ, որ այս շրջանի խտալացի ենդիմակները ոչ միայն ոգեկոչում են Դանքեի հիշատակը, այլև «Աստվածային կատակերգության» հետևաղությամբ զրված գործերով մահվան աշխարհից ոգեկոչում Խտալիայի նշանակոր զավակների եղակ-ներիմ:

Դանթեի ստեղծագործության նման ընկալման համար է, որ Զարենցը նախ «Դանթեական առասպեկտ» վերնագրեց իայ Գող-գորայի իր անցած ճանապարհը ներկայացնող պոեմը, ուր Դանթեական դժոխքի համարժեքն են դառնում իայ հայրենիքի իրական պատկերները, և ապա «Մահվան տեսլում» 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարասկզբի ազգային-ազատազրական պայքարը վերստին պատկերեց «Աստվածային կատակերգության» հետևողությամբ:

ԹԵ ԻՄԱՍՏԱԾԱՋԻՆ ԻԱՀ ՃՆԵՐԻ ԿԻՐԱՊՄԱՄԲ Է ԶԱՐԵՆԾՈՂ ԻԵՏԱՆԵԼ

Դամբէ Ավելինքի, Աստվածային կատակերգություն, թրգմ. Արքուն Տաւանի, Երևան, 1983, էջ 197:

² Цы йишиб ѿйн И. К. Полуяхтова, Данте в творчестве поэтов начала Риссордимента, Сб. «Данте и всемирная литература», «Наука», М. 1967, стр. 159-178.

160

Դանքեին, հանգամանալից ներկայացրել է U. Աղարարյանը¹:

Ասվածին մենք փորձենք ավելացնել երկու գործերի կառուց վաժքային համեմատությունը: Հայ միջնադարյան անդրաշխարհային ճանապարհորդություններում ներկայացվում էր միայն դժոխք, որպես զգուշացում հանդերձալ կյանքի: Այս պատճառվ դրախար չի ներկայացվում և կամ էլ ներկայացվում է Աղամին նվիրված գործերում, ինչպես, օրինակ՝ նույն Առաքել Սյունեցու «Աղամզիրք», իսկ քավարանը բնդեանդապես բացակայում է, քանի որ Հայոց եկեղեցու աստվածաբանական ըմբռնումներում դրախար և դժոխքի միջև նման միջնադարյալ վիճակ չկա:

Զարենցը, սակայն, նորովի պատճեան իմաստավորմամբ վերստին եռամաս կառուցվածքով է օժանդ իր այս «Մահվան տեսիլը»։ Մուաքում անցյալի խորերդանշանների նորովի կիրառմամբ երկրային կյանքի ափից բանաստեղծք իր ուղեկցի՝ Դանթեի եւա անցնում է անդրաշխարհի այնկողմանային ափը.

ԵՎ ՄԵՋ ԲԱԼՈՒՄ Եմ ԱԽԱՃՈՒՄԻ ԱԽԱԾ, որ ԱՎԱՐԿԵՆՔ քեզ հետ-
ԳՅԱՎ Եմ ահակասիկ քեզ հետ ԶԵՐՈՎՐՅԱՆ ու ԽՈՀԻ

ՀԺՎԱՐ ճամապարհով

Դեպի ավել զեմք՝ ամեն հույս ու հավատ բռնելով այս ավիմն,
Եղ Արածան ահա, որպես մշտացնական ու կորովի Քարոն,
Նաև առողջություն է ունակ Ամայալը. ունակ Ամգյալը դառն.

դեսի ավր Մահվան ու Սարսափի...

Դեպի անդրաշխարի տաճող Քարոնի մակույկն այստեղ բանաստեղծի «Մտածումների նավն» է: Դեպի անդրաշխարի տաճող անցյալի գետը՝ Քերրության ու խոհի դժվարին ճանապարհը: Անցյալի դառը, մահվան ու սարսափի ափը նավարկում է մակույկավար տնենալով Քարոնին, ով հունական դիցաբանության մեջ ստորերկյա աշխարհում մակույկով մեռյալների հոգիներին տաճում էր մեռյալների թագավորության աշխարհը:

Սննդ ափ ենք ի կուտ միասին և մայստ ենք մեր շորջը մի պահ-
Լուրյուն է, մօայլ մառախտող, իսկ վերից զումար մի մահիկ
Եր մնայալ լուսի հետ մեկստեղ տարածում է տիխորություն ու ան-
Այս ամենի հօնորի վրա ամսամբաթ Ասկուսին ու Սահի:

Գումաստ մի մահեկի ներքո՝ Օսմանյան կայսրությունում էր գանվում երկրային դժոխքը, որը բնորոշող Թարենցի վերը բերված առղերը հիշեցնում են դժոխքի մատաքի դանքեական նշանակոր առղերը.

¹ Տե՛ս Ս. Աղարքարյան, Եղիշե Չարենց, Գիրք երկրորդ, Երևան, 1977, էջ 276-
278:

Ինձով եմ զնոս զնենն ահավոր,
Ինձով եմ զնոս հոգլոց հարատանջ,
Ինձով եմ զնոս մարդկանց ախտավոր¹:

Թե՞ Դամբեի և թե՞ միջնադարյան համարնույթ մյուս ստեղծագործություններում մեղավորները պատմում են իրենց մեղքերի, որով և իրենց ապրած կյանքի և որպես հասուցում կրած տաճաշանքների մասին: «Մահվան տեսիլում» ևս կիրառված է նույն այս հնարք, սակայն մեղավորների փոխարեն մեր ազգային գործիչներն են ներկայանում իրենց գործունեությամբ և իրենց անկատար մնացած գործերի, իդերի ու երազների համար շարունակական մորմորով և ցավով ու նրանց գործի արժենվորման շարենցյան բնորոշումներով: Այսպիսով դժոխքի մեղավորներին երկրային դժոխքում փոխարինում են հայ կյանքի նշանակոր գործիչները ոչ թե որպես մեղավորներ, այլ որպես ողբերգական կերպարներ, որպես իրենց դաժան ժամանակի զոհեր: Ինչպես գրում է Վ. Գարբիելյանը, «Արևմտահայ բանաստեղծների կերպարման մեջ Զարենցը անջատում է նրանց էության երկու կողմը՝ բանաստեղծի ծիրքը և ժամանակի կուսակցական գաղափարախոսությամբ տարկած քաղաքացում:

Երբ խոսում է նրանց պոետական անհատականության, արվեստի արժանիքների մասին, Զարենցի խոսքը շաղախվում է համակրանքի, սիրո, ակնածանքի զգացումներով, գնահատումի խոր և իմաստում բնութագրումով, բառապաշարը զուլավում է, մաքրվում այն բանձրացական էպիտետ-համեմատություններից, կրքու բնորոշումներից, որոնք հաճախադեպ են ազգային «կուսակցական» գործիչներին ու նրանց հետառադրություններից, կրքու բնորոշումներից, որոնք հաճախադեպ են ազգային «կուսակցական» գործիչներին ու նրանց հետառադրություններից:

Ինչպես որ ժամանակի գետն է տանում դեպ դժոխք, այնպես էլ այնտեղից՝ պատմության բափուր անտարից, տառապանքով, որպես քավարանով, բանաստեղծը իր վարպետի՝ Դամբեի հետ դրւու է զալիս Առաջին աշխարհամարտի գենենից, ինչպես որ Դամբեն Վերգիլոսի հետ քավարանից տեսնում է դրախտի ուրվագծվող լույսը:

Ինչպես որ քավարանում անտիկ բանաստեղծը երաժեշտ է տալիս Դամբեին, քանի որ ծնված լինելով մինչև Քրիստոսը, մուտք չուներ դեպի դրախտ, այնպես էլ միջնադարի մեծ բանա-

ստեղծմ է ավարտվող անտարի վերջում՝ Հին աշխարհի ավարտին երաժեշտա տալիս Զարենցին:

Հեղափոխությամբ ավարտվում է քավարանը և սկսվում է դրախտը՝ մահվան տեսիլից ելած հայաստանը:

Մինույն կառուցվածքով իրար անհամատեղելի հասկացություններ ներկայացնելը հանգեցնում է արտառոց գուգորդումների: Դրախտի կենարունական կերպարը քրիստոնեական աշխարհի գլխավոր բարեխոս Տիրամայրն էր ճառագուն լույսերով ողողված: «Մահվան տեսիլը» ևս ավարտվում է փրկարար լույսով, որի կրողն է դառնում հեղափոխության առաջնորդը.

Արդ անցել էինք արդեն մենք Անցյալի մուայ եզերքից, Լայնանուն աշխարհն էր իմ դեմ՝ ողողված երով փրկարար, Այն ուսկյա լապատճի լույսով եւ դարձա Գալիքի երգիչ, Այդ լապատճը, ո՞վ պառաջնորդ, կիրկն աշխարհը արար...

Վերգիլոսին՝ Դամբեի երկրորդ ուղեկիցն էր Բեթատրիչն իր սիրած էակը, ով ուժ է տալիս բանաստեղծին, երբ նա հուսահատվում է մթին ճանապարհի երրում: Համանման ձևով Զարենցի երկրորդ ուղեկիցն է դառնում կրառութիւն երգիչը Սիամանրոն իր պայծառ և ջինջ կերպարով: Ինչպես գրում է Ժ. Շալանքարյանը, «Զարենցը դիմում է իտալական հանճարին իր տեսածն ու ապրածը արժանի համարներով նրա գրչին: Դամբեն և... Սիամանրոն, երկնային ու իրական դժոխքի երգիչները, «սատարում են» բանաստեղծին՝ պատշաճ ձևով արտահայտելու հոգում ծանրացած ցավը»:

Այս երկու ստեղծագործությունների համապարական քննությունը ցույց է տալիս, թե ինչպես Զարենցը գրեթե անխարար պահելով միջնադարյան մոնումենտալ ստեղծագործության կառուցը ու որուն ձևով յարկելով գրական նմանակման, միանձամայն նոր բովանդակություն, ասելիք և խորհուրդ է հաղորդել իր երկին:

Անցնող ամեն մի տարին ավելի էր ամոքում ավերված երկրի վշաերը և մղձավանջային անցյալը, բայց և օդի մեջ սկսել էր ուրվագծվել 1937թ. ուրվականը: Այս երկու հակադիր իրողությունների հատման կնառում է ծնվել երրորդ մահվան տեսիլը, որը կարելի է անվանել արարման տեսիլ: Նման տեսիլները տեսանողներին երևացել են ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում, Զարենցի մոտ սակայն դա ճարտարապետի կյանքի վերջին

¹ Դամբե Ավելիքի, Աստվածային կատակերգություն, էջ 15:

² Վ. Գարբիելյան, Դասկանների ժամանակը, Երևան, 1997, էջ 138:

ակնքարքն է: Թաճաստեղծի իսկ բնորոշմամբ՝

Որքա՞ն նման է եղել պահն այդ՝ մարող կանքնելի¹:

Չարենցն ապա պատկերում է իր ժամանակ արդեն կառուցված ու կառուցվելիք նոր Երևանը և մեր աշքերի առջև վեր է հասնում թամանյանական արևային քաղաքը: Այս ամենը ներկայացվում է որպես թե տեսիլով արված:

Նմանատիպ տեսիլներում Աստվածային Աջը, Տիրոջ երեշտակը կամ երկնային լույսը գծագրում էր արվելիքը, այն դրոշմելով տեսանողի սրառում և ենառ նա թղթին կամ քարին էր հանձնում իրեն Երևացածը: Նման տեսիլի բնորոշ օրինակը Մաշտոցի տեսիլն է՝ Աստվածային Աջով գծագրված Հայոց Այրուբնին վերաբերվող, որի մասին գրում են Կորյունը² և Խորենացին³: Թե՛ միջնադարյան և թե՛ նոր շրջանի հայ արվեստում սանդովել են այս տեսիլը ներկայացնող մի շարք սանդագործություններ, որոնցում պատկերվում է այն պահը, երբ Մաշտոցը հայացը հառած երկնային լույսին և մի ճեաքը սրտին դրած, մյուսով թղթին է հանձնում երկնային լույսով իր առջև գծագրված գրերը: Մեր պատմագրությունից մինչև 20-րդ դարասկզբի հայ կերպարվեստ հասած այս պատկերը Սիհամանքոն «Սուրբ Մեսրոպ» պոեմի «Տեսիլը» բաժնում այսպես է ներկայացրել.

Անապասիկ Զերովին մը՝ մրավիմ մնջ Մեսրոպին,
Իր աջ ճեաքովն լուսազիծ՝
Ակերարը մը մնասամանին որմին վրա,
Հայկազնյան Այրենարամը տառազոնց...
Համկարծ Մուրը, մնծ տեսիլքն ցնորաշարժ,
Միայալի մը պես ընդուսա ուռի,
Փետուր գրիչն և տախտակն ի ճերին,
Հրաշքի տակ արտասկերպ,
Որմին առջև անհոնորն ծնրադրեց...⁴

Չարենցն այնինչ հատուկ շեշտում է որ Թամանյանը իր տեսածը չի կարողանում թղթին հանձնել և ընկնում է ծանրացած ճեռը.

¹ Եղիշե Չարենց, Անտիպ և չափարված երկեր, աշխատ. Ա. Չարենցի, Երևան, 1983, էջ 25:

² Կորյուն, Վարք Մաշտոցի, աշխատ. Ա. Արենյանի, Երևան, 1980, էջ 96:

³ Սովուն Խորենացի, Պատմութիւն Հայոց, աշխատ. Աս. Մալիսայանցի, Երևան, 1980, էջ 404, Գիրք Գ, գլ. ԾԳ:

⁴ Սիհամանք, Դամին Վարուժան, Երկեր, էջ 185:

Պարզել է ճեռքը դողրոց դեպի ցմոքմ այդ կապույտ, Այթքան մուն է, այնքան մուս, կղզավի նա իհման, Բայց ծանրացել է համկարծ ճեռք համճարելու նմուտ, Ընկել է վար չոր կրծքին... լուսիյում, մահ:

Նման վերջարանը հակառում է տեսիլի արամարանությանը, որովհետև տեսիլը արվում էր փոխանցվելու համար, այնինչ այստեղ խզվում է փոխանցականությունը: Թերևս դեռ են խաղացել երկու հանգամանքը: Նախ գրության պատճառը, որ ճարտարապետի մահն էր, և երկրորդ՝ 1937-ին նախարարող տարում բանաստեղծին սկսում է տաճուն մահվան զգացողությունը, և նա պատկերում է հանճարեղ ճեռքի ծանրանալը և ընկնելը:

Հր. Թամրազյանը բանաստեղծության նման ավարար բացարձում է հետևյալ մեկնաբանությամբ. «Վերջին պահին, վերջին ջերմում ուղեղի, իրար են մատենում ստեղծողն ու նրա փայտիայած երազը, բայց ընկնում է հանճարեղ ճեռքը, և երազը մնում է որպես ժառանգություն ապրող սերունդներին, ապրող Հայաստանին: Դա և Չարենցի սրբազն երազն է: Դժոխքից մինչև երևանյան երազը, դանքեական ուղիներից, երդեի եռվիխաներից, կախաղաններից, մնոնող ժողովրդի տառապանքներից մինչև ուժեղ մարդկանց և սերունդների, ծաղկուն գալիքի պատկերները, ահա չարենցյան մահվան տեսիլների յուրօրինակ ընթացքը՝ կապված ժողովրդական բախսի պատմական փոփոխությունների հետ»⁵:

Սահկան տեսիլների այս ընթացքը իր յուրօրինակ արտացոլումն է գտնել երեք տեսիլներում ներկայացվող պատկերներում, առաջին տեսիլի՝ կախաղանի պարանից և երկրորդի՝ Սիհամանքոյի բնարանին համահունչ տաղերից մինչև երրորդ տեսիլի շրջադարձը արևային քաղաքով: Հայ տեսիլային գրականության մնջ հանդիպող սահմանկեցուցիչ պատկերների մասին Հր. Թամրազյանը գրում է. «Մեր գրականության մնջ իրականն ու երևակայականը փոխում են իրենց տեղերը, բնականը դուրս է մղվում, ավելի միշտ՝ բնականը երևում է երազի մնջ, անբնականը՝ կյանքում»⁶: Իր երրորդ «Մահվան տեսիլով» Չարենցը տեսիլից դուրս է մղում անբնականը, և մնում է լուսեղն երազը:

Իր կյանքի պարտադրված մայրամուտին մեծ բանաստեղծը սերունդներին է ավանդում թամանյանական տեսիլ- երազի իրականացումը՝ նոր Երևանի կառուցումը:

¹ Հր. Թամրազյան, Բանաստեղծության հազարամյա խորհուրդը, էջ 508:

² Նոյն տեղում, էջ 485:

ՄԻՐԱՆՈՒԾ ԴՎՈՅԱՆ

ԶԱՂԱՋԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ՝ «ԿԱՊԿԱԶ»

...ենց ես մեր քառողի պետական.
ի նշ եր առաջ.
եիշ ո՞ւ եր պառ-լա՝ մե նա»։¹

Հեղափոխությունից հետո բուրժուազիայից ազատագրված շենքերում տեղակայված էին նոր՝ բոլշևիկյան ինստիտուտները։ Ընթաց ինքնին դառնաւմ էր պատմական հիշողության արխիվացման մի վայր, որտեղ դարձրջանների հիշողության միակ վկան ու միևնույն ժամանակ կրիչը ինքը՝ շնորհ էր։ Տարերայնորեն էր ընտրվում նոր ինստիտուտի տեղակայման վայրը, ոչ պատմականորեն, ասենք՝ պառլամենտի շենքում կարող էր տեղակայվել պետական քառորդը։ Ֆունկցիոնալ առումով ինչի հետ ենք գործունենում այս դեպքում, երբ շնորհը ներկայանում է իրքն պատմական հիշողության վկա։

Եղիշե Չարենցի «Կապկազ»-ը, որը հեղինակի բնորոշումով

¹ Հղումները տրվելու նն ըստ նեալյալ երաժարակության՝ Թեղիշն Չարենց, «Երկեր», Երևան, 1932։ Հարկ է նշել, որ Չարենցի հետազո երաժարակություններում, հատկապես վեցհատությակում և քառահատորյակում նրա ավանդարդիստական գործերը վերաբարատակված չեն այնպես, ինչպես որ նույն առաջին ու նաև այս երաժարակության մեջ։ Դրանք ունեն անհամաշափ կառուցվածք, որը արտահայտվել է նաև արտաքին ճիշ մեջ։ Ասենք օրինակ՝ գործը երկու սյունակով է կառուցված։ աջ մասում նշված է, թե ով է խոսում, իսկ երկրորդ մասում ներկայացված է խոսքը։ Նման տարածաշատումը պահանջնառական գործում կոնցեսատուալ է, քանի որ նշում է խոսքը արտաքրոջի ու խորի տարածաշատումը։ Խոսքը մի քան է, որը նդիվում է հանդուրյանը, ով այն պետք է լեզիտիմացնի։ Խոսքը արտաքրոջի ու խորի նման գուգահեռումը նշում է նաև այն փոխստենդող կապը, որ ունեն այս երկուուր։ Հենց այս գործում Չարենցը նման մի խնդիր ունի, երբ ցույց է տալիս խոսքի ու գործի անհամապատասխանությունը, խոսքի և արտաքրոջի միջև հաղորդակցության խորությունը։ Սրբագրված նն նաև բոլոր այն դեպքերը, երբ հաջորդող առողջ սկսվում է փոքրատառություն։ Սա նույնպես էական է այս գործերում։ Հղումներում պահպանել ենք նաև այդ բվականներին գործող ուղղագրությունը, որովհետեւ այս գործերը որպես կանոն գրվում էին օրվա պահանջով և նախատեսված էին շատ արագ ներկայացնելու համար։ Դրանց խնդիրը կապվում էր տվյալ ժամանակվա առօրինականության հետ։ Ուստին, այս դեպքում այդ ուղղագրության պահպանումը պատմական արժեք ունի։

բամաշա է, մի ժամբ, որը Չարենցն ինքն է ստեղծում իրու նմուշ, ներկայացնում է 1920-ականների բարդ իրավիճակը ոչ միայն հասարակական-քաղաքական, այլև հենց պատմության հետ հարաբերության առումով։ Սա այն ժամանակահատվածն է, երբ հեղափոխության հաղթանակից հետո օրակարգում էր հայտնվել ինչպիսի իրականություն ստեղծելու հարցը։ Այս հարցին հետամուտ ստեղծված «Նոր» հանդեսը իր վրա էր վերցրել պատմական ավանդույթի վերստուման ու գիտակցման բարդ խնդիրը։ Այդ նույն խնդիրին իսկ հետամուտ Չարենցը մասն էր կազմում այս հանդեսի, որով նաև այս մասանության ճևազրման։ Այստեղ նն տպագրվում երա «Երկիր Նայիր» վեպը, «Ասպետական» պոեմը, նաև՝ «Կապկազ»-ը։ Մյուս կողմից, սա «Երեք»-ի դեկարացիայի ու «Ստանդարտ»-ի միջակայքն է և հատկապես վերջինով ամրագրված ապահերուստացման, ապառումանահիկացման շրջանը։ «Կապկազը» մի տեսակ այս երկուսի միջակայքն է մի բամի առումներով։

1920-ականներին տարածված ազիտ-քատրոնը համբաղիանուր եղանակություններում, հատկապես վեցհատությակում և քառահատորյակում նրա ավանդարդիստական գործերը վերաբարատակված չեն այնպես, ինչպես որ նույն առաջին ու նաև այս երաժարակության մեջ։ Դրանք ունեն անհամաշափ կառուցվածք, որը արտահայտվել է նաև արտաքին ճիշ մեջ։ Ասենք օրինակ՝ գործը երկու սյունակով է կառուցված։ աջ մասում նշված է, թե ով է խոսում, իսկ երկրորդ մասում ներկայացված է խոսքը։ Նման տարածաշատումը պահանջնառական գործում կոնցեսատուալ է, քանի որ նշում է խոսքը արտաքրոջի ու խորի տարածաշատումը։ Խոսքը մի քան է, որը նդիվում է հանդուրյանը, ով այն պետք է լեզիտիմացնի։ Խոսքը արտաքրոջի ու խորի նման գուգահեռումը նշում է նաև այն փոխստենդող կապը, որ ունեն այս երկուուր։ Հենց այս գործում Չարենցը նման մի խնդիր ունի, երբ ցույց է տալիս խոսքի ու գործի անհամապատասխանությունը, խոսքի և արտաքրոջի միջև հաղորդակցության խորությունը։ Սրբագրված նն նաև բոլոր այն դեպքերը, երբ հաջորդող առողջ սկսվում է փոքրատառություն։ Սա նույնպես էական է այս գործերում։ Հղումներում պահպանել ենք նաև այդ բվականներին գործող ուղղագրությունը, որովհետեւ այս գործերը որպես կանոն գրվում էին օրվա պահանջով և նախատեսված էին շատ արագ ներկայացնելու համար։ Դրանց խնդիրը կապվում էր տվյալ ժամանակվա առօրինականության հետ։ Ուստին, այս դեպքում այդ ուղղագրության պահպանումը պատմական արժեք ունի։

լարումը ավարտվում է արվեստի ճնշումով, ավանդարդի «խափանումով» (բայց իրենն է), որոնք և վարչակարգի ստեղծման առաջին նախադրյալներն են: «Չարենցի հրաժարումը ապագայապաշտոթենէն կը սկսի «Ստանդարտ»-ի խափանումով, որիից բառ առաջին շրմիմ կոչելու համար այս դէպքը: Չմոռնալ որ ամրկա տեղի կ'ունենայ Կարա Դարիշի հայկական ֆուտուրիզմի դասավարութենէն հազի վեց ամիս ետք և զստ իս կը պատկանի հարթումի ընդհանուր ալիքի մը, որ խորհրդային կայսրության մէջ կը սկսի ծայրամասէն յանձելու համար մայրաքաղաք, բայց 1932ին»: Ապա շարունակության մեջ հիշատակելով Կարա Դարիշի Չարենցին տված բներոշումը՝ գրում է: «Դիմոդուրութնը կը վերաբերի Չարենցի 1922-23 տարիներուն: Են սակայն յայտնի կը դարձնէ բանաստեղծի կրկնակ ռազմավարութիւնը՝ որ է ենքրել «հմամաշ ֆուտուրիստը» և ենքրել պրոլետանէյնիմիզը, ի շահ երրորդ ուղղութեան մը»:¹ Խորքի մեջ ծայրամասից դնակի մայրաքաղաք հասնող հարթումի ալիքի հիշատակութը հուշում է մի շատ կարևոր բան. ծայրամասը իրականում չէր ենդափոխվել այս բառի ողջ տարրությամբ և ուրեմն բռլէիկյան հեղափոխության խորհրդային կայսրության վերածվելու պրօցեսը սկսվում էր ծայրամասից՝ ամրողանալու համար կենարունում: Մյուս հուշումը կապվում է Չարենցի կողմից այդ թվականներին առաջարկված մի լրտումի հետ, որին չի անդրադառնում Պրյայնը, բանի որ նրա խնդիրն է ցույց տալ ավանդարդի խափանումը խորհրդահայ իրականության մեջ, որն էլ ի վերջո համարում է իշխանության կողմից բանեցված ճնշումի արդյունք:

Այս պահին ինձ հետաքրքրողը զաղափարախոսության միջամասությունը չէ, որը այլ կարվածքով դիսարկելը նույնպես շատ կարևոր է, և ոչ էլ գեղագիտականը, այլ թե ազիտ-քատրոնը իրականության ինչ պատկերացում էր բերում: Այդ իսկ պատճառով ես առանձնացնում իշխանական ու քաղաքական դիսկուրսները, քանի որ քաղաքական դիսկուրսը դիտարկում են իրքը իրականություն սանդելու ակախ, սանդարար, ներդնող գործունեություն, մինչդեռ իշխանականը իր էությամբ այդպիսին չէ: Իշխանականը իշխանից է աշխատում քաղաքականին այն իմաստով, որ փորձում է սեփականացնել յուրացնել ներդրվածքը: Ես այն համոզում ունեմ, որ 1920-ական թվականներին ավելի շատ գործ

¹ Գրիգոր Պետրոս, «Հայական ֆուտուրիզմ», Սարգս Խաչենց-Փրին-քինք, Երևան, 2009, էջ 416:

ունենք առաջինի հետ, և նման առանձնացումով խոսելու դեպքում թերևս հնարավոր լինի տեսնել, թե իրքը առաջարկ ինչ էր ծնվում այդ փոխադարձ լարումներից: Մյուս կողմից, մասածում են, որ նման առանձնացումը բույլ է տալիս սահմանակ մի բացվածք, որտեղից հնարավոր է խոսել իրականության պատկերացումներից: Այստեղից դիտված՝ գաղափարախոսության միջամասությունը չի դիտարկվում իրքը միակողմանի գործողություն:

* * *

Պիտի վերադառնամ բնարան ընտրված հատվածին: Պետական քատրոնը նախկին պատամենան է: Ուշադիր լինենք, որ քատրոնը ներկայացնող ու կազմակերպող Ղարան խոսում է պատլամենտը քատրոնի վերածելու մասին: Գործը սկսվում է իիշատակումով, որ՝ «Տեսարանը բեմ է, բեմի վրա-քամաշա շանց տվողը՝ Ղարան»: Ծկա ոչ մի դեկորացիա, ոչ մի հավելյալ պճնանք, ամեն ինչ սպորական է, ինչը բնորոշ է պանզարդին: Ոչ մի հիշատակում չկա այն մասին, որ պատլամենտի շենքում է ներկայացնում: Ուրեմն, գործի բեման պատլամենտի շենքում քատրոնի տեղակայումն է: Պիես-քամաշաները նախատեսված են եղել հասարակական վայրերում, իրապարակներում խաղալու համար, որին ակտիվորեն պետք է մասնակցեր նաև հանդիսատեսը:

«Կապկազ»-ը, լինելով քամաշա, երկու բեմադրություն է ունեցել քատրոնում, որքան էլ որ այն նախատեսված է եղել իրապարակում, փողոցում խաղացվելու համար: Ազիտ-քատրոնները առեսարակ նախատեսված են եղել ժողովրդական լայն զանգվածների համար և կամերային նշանակություն չեն ունեցել: Այսպիսի գործերի հաճրային ներկայացնումը ներքին մի ցանկությամբ կապվում էր ծշմարտության հաճրայնացման հետ: Ըստ Էության,

¹ Ուշ միջնադարյան Արևելքում հաճրային քամաշները կազմակերպում էին աշուտները, բայց քիչ հիշատակություններ կան, որ դրանց ակտիվորեն՝ այն իրադարձություն դարձնելուն կարող էր մասնակցել նաև հանդիսատեսը: Հանդիսատեսի մասնակցությունը հուզական էր ավելի շատ, որով կարող էր նպաստել, որ քամաշան իրականան: Այսպիսի ժողովրդական միջոցառությունները «ճշմարտությունները» փոխանցելու լավագույն հնարավորություններ էին: Ուրաքս կանոն, քամաշները աշուտի ու նրա աշակերտի կամ աշուտների խմբի «մնաշնորհն» էին:

² Այս մասին քավականին մանրամասն և հիմնավոր վերլուծություն է կատարում Գ. Պետրոս, նշված հատորում: Տե՛ս՝ նշված հատոր, «Երկեր ֆուտուրիզմի շուրբին» և «Ներջին արար» գլուխները, էջ 344-440:

Ժաղովրդական իրադարձությունը չի ծառայել իր բուն նպատակին, այս կամերայնացվել է:¹

Անպահույթ բնմում հայտնված Ղարան շարունակության մեջ կարծեն թե մեկնարամում է իր իսկ ասածք.

Այսինքը...

Վո՞նց ասեմ...

Առն.

«Ենքու տիրոջ ծառա-
համ և ս, համ և ն:

Հիմի»:

Հիմի, ոհ, ևս շնորում - պետական
քառորդ է, Կապկազում - սավելու.

-վո՞նց եղավ քա եղ.

Ես բոլորդ վա նց եղավ արա:

Հենց նս և, վոր շանց պիտի տաճք.
բա:

Ակնհայտ է, որ քատրոնը տեղակայված է պառամենափ շենքում: Որոշակի հակասարդում է սկսում առաջանալ իրապարակում ու պառամենափ նախկին շենքում ներկայացվող քատրոնների միջև, քանի որ իրապարակում ներկայացվող քատրոնի էությունը սովորականությունն է և դրանով է, որ այն հասանելի է քուրքին: Այն այս դեպքում ոչ այլ ինչ է, քան առանց ավանդությի, ինքնաստեղծ մի քան, որը անլրօգորեն է վերաբերվում նախապես գոյություն ունեցած ցանկացած քանի, քանի որ խնդկատակում է: Սակայն անմիջապես հետո Ղարան շտկում է, որ պառամենափ շենքն է վերածվել քատրոնի, ինչը արդեն կապվում է վերը հիշատակված շենքի պատմական վկա լինելու հետ: Այս հակասությունը շատ բնորոշ է պահնջարդին: Մը կողմից՝ պարզ ու հարթ մակերևույթ, որտեղ արարքն ինքն է իր իսկ սկիզբը, մյուս կողմից՝

¹ Գործի՝ իրապարակներում ներկայացվելու կան չներկայացվելու նախն որևէ հիշատակության առաջն չունեն, ինչպես նաև չունեն որևէ հիշատակություն, թե ինչ պատճաներով չի խաղացվել:

Այս նախն քավականին հմուտ վերլուծություն է կատարել ամերիկացի տեսաբան Ռոլանդ Քրաուսը, ով ավանդարի՝ արվեստի գործի ինքնաստեղծության և եղակիության սկզբունքը դիտարկում է պոստմոդեմուստական շարունակական կրկնության համատեքստում: *Տես ո Rossalind Krauss, The Originality of the Avant-Garde: A Postmodernist Reinterpretation, October, vol. 18 (Autumn, 1981), pp. 47-66. Վարդան Ազատյանի և Անժելա Հարուրյոնյանի կողմից կատարված հայերն քարզմանությունը տես ս <http://2012.revisor.am/2007/no1/rossalind%20krauss.html>:*

170

պատմական հիշողություն և իրականություն, որոնք խախտում են ինքնաստեղծ լինելու առանձիւթյունը, ինչը ավանդարդի ցնորանքն է: Ավելին, «Կապկազ»-ում Ղարան քատրոնը տեղակայելով պարագամենափ շենքում՝ նախկին վիճակը բնորոշում է իրեւ երկու տիրոջ ծառա, համ էս, համ էն, ու անմիջապես հաստատում, որ ինմա այս շենքում պետական քատրոնն է, իսկ Կովկասում՝ սովետ, իսկ թե ինյան դա պատահեց, պետք է ներկայացվի:

Այստեղ գործ ունենք արվեստայինի ու քաղաքականի քավականի բարդ մի դասավորության հետ: Ղարան ստանձնում է պատահարը ներկայացնողի գործառույթը, պատահարը՝ պարագամենափ բարեգույնը է ու Կովկասում խորեղդային կարգերի հաստատումը: Սա անշուշտ կարող է ներկայացնել իրեւ պարզ վիճատեղություն, ինչպես որ ակնարկեցի վերևում, քանի որ վիճատեղությունները հաճախ տարերայնորեն էին կատարված: Բայց ես հակված չեմ այդպես մտածելու, քանի որ ակնարկեցի արդեն, որ այս դեպքում գործ ունենք արվեստայինի ու քաղաքականի քավականի հետաքրքիր մի վիճակարքերության հետ: Ղարան, մյուս կողմից, ակախվորեն մասնակցում, միջամտում է ներկայացման ընթացքին, մի դեպքում՝ իրեւ ներկայացնումը կազմակերպող՝ համապատասխան մեկնարանություններով, մյուս դեպքում՝ իրեւ գործող անձ՝ անզիլացի նախարար: Ղարայի՝ իրեւ քատրոնը ներկայացնողի մեկնարանությունները լսելի են միայն համդիսասեխին, բեմը հաղորդակից չէ դրան: «Կապկազ»-ում ներկայացված քենը մի անդ է, որտեղ շոնդակից արագությամբ իրար են հաջորդում քաղաքական դեպքերը: Դրանք ներկայացնողը, արվեստագենը, օտարված է քաղաքական բնմից, ուստի և դեպքերը որևէ կերպ չեն հաստատագրվում: Ըստ Ղարայի մեկնարանության, որովհետև քաղաքական բնմի վրա՝ «Վայրենիներ [են]: Ֆեղեր»: Այստեղ արդեն գործ ենք ունենում մեկ այլ մտայնության հետ, ըստ որի, քաղաքականը արևմայան է և կապված է քաղաքակրթության ու մշակույթի հետ: Հայ, վրացի և աղորեցանցի քաղաքական գործիները արևելյան մտայնությունը ներկայացնողներն են, ուստի մյուս կողմի հայացքով վայրենիները են ու ցեղեր: Ըստ այդ բնորոշման նրանք չեն կարող ունենալ պատմա-

¹ Հիշենք, օրինակ, որ սոցիալիստական կարգերի հաստատվելուց հետո եկեղեցները ոչ միայն դադարեցին գործելուց, այլև դրանք տրամադրվեցին սովետական տնտեսությանը՝ գործածելու ամենատարբեր նպատակներու: Անշուշտ, սա էլ կարելի է ընթերցել որոշակի տրամադարձությամբ, բայց դա արդեն իննդիրը չէ:

կամ հիշողություն: Ծոնդալից ընթացող դեպքերը ենց այս հիշողության բացակայության վկայությունն են մի տեսակ: Արևմտյան ավանդարդին նույնական բնորոշ է կոմպոզիցիայի կազմակերպման նման մոռացումը: Մի առքերությամբ միայն, որ այնադեպ սրբացաց, հանկարծակի հայտնվող դրվագները եիշողությունից ազատվելու պրոցեսն են ներկայացնում, մինչդեռ այս դեպքում բնի վրա ոչինչ չի պատահում, բացի անընդհատ նույնի կրկնությունից, մի տեսակ չընդմիջվող հնանութ, ինչը վկայում է, որ գործունենք եիշողության բացակայության ենա:

Այս իրավիճակի հանգուցալուծությունից փնտրութքը բնորոշ է Զարենցի այս բարկանների գործերին՝ անշուշտ, ակնհայտ ասարքերություններով: Հանգուցալուծությունը առաջարկում է Ղարան՝ իրքի ծառված անզիացի հայտնվելով գործողությունների կնճարունում: Դիրքային որոշակի փոփոխություն ենք ունենում պասիվ մենամարանություններ անողը հասում է գործողությունների ընթացքը՝ ծառված: Ուշագրավ է նկատել որ Զարենցը բարկանին հետաքրքիր մերժարանություն է կիրառել այս դեպքում: **Օտարված արվեստագետը՝ Ղարան, բաղաքական ծառանդում:**

¹ Հիշողության առկայությունը փաստվում է պատմական իրականության ներկայությամբ, պատմության՝ որպես այդպիսին ինքն իրեն զիտակելու, ինքն իրեն վերանվաճելու և դրանով իսկ ինքն իրեն վերահաստատելու գործողության ենու: Սա այն է, ինչը շատ հաճախ ծևակերպում ենք իրքի «պատմությունից դասեր»: Հիշողության բացակայությունը հնարավոր է դարձնում անբնիահանույնի վերաբերք, կարծես թե հաստատագործում՝ հանակում է ևս մեկ անգամ դաշնի «ծշմարտությունը»: Խորքի մեջ մարու իշխանական գործոդուրություն:

Նույնի այսպիսի կրկնությունը Ռուսական Քրառակի հիշատական պատմություններուն է, որը գործողությունների բազմակիրությունը, որոնք չունեն պատմական օրինաշափության կամ հետանկարի զգացություն: Պատահական չէ, որ 1960-ական թվականներից սկսված հիշողական ամրող ռազմավառությունները, որոնք դարձյալ պաստնողներն հասկուրան մեջ են, խնդիր են դնում ոչ թե վերահաստատել կորցրած կապերը, այլ դրանք ճանաչելի դարձնել: Այս առումն շատ հետաքրքիր դրսևումներ կան նաև հայ գրականության մեջ:

² Նկատի ունեն այն, որ այս բավականների գործերում Զարենցը արվեստային ու բաղաքականի ամենաարքեր վերաբասավորումներ ու հանգուցալուծուներ է առաջարկում, որոնք բարը է կապված են պատմության, հիշողության ենս: Ասենք օրինակ՝ «Երկիր Նախրի» վեպում առաջարկված դիալեկտիկական մերժարանությունը ուղղորդված է հատվածականության հաղթահարմանը և պատմություն ստեղծենում, որքան էլ որ ինքը՝ Զարենցը չի կիրառում այն մերժարանությունը, «Ամենապոն»-ում հանկարծակիրության սկզբունքը փոխվում է իրականությունը՝ իրքի զիտակցության պայծառացում, որի մեջ ընդգծվում է պատմական ամրող ճանապարհը: Բայց սա էլ հակադիր է դիալեկտիկական մուեցմանը: Եվ այլ:

բոլ միջարկում է բատերականացված քաղաքականությունը դարձնելով այն սպորական: Սա այն է, ինչ անում է Զարենցը «Կապկազ»-ում: Քաղաքականության հանդիսավորումը այն է, ինչ Վալտեր Բենյամինի համզմամբ ծնում է ֆաշիզմ, երբ քաղաքականություններ հանդիրծավորվում է իրքն արվեստ: «Կապկազ»-ում ներկայացվող Անդրկովկասյան Սեյմը այնքան էլ այս չէ: Այս դեպքում, երբ խոսքը եիշողության բացակայությամբ իրականացված գործողության մասին է, գործ ենք ունենում պարզ փոխառեղան մասն ու խարկանքի ենա: Այս որքան էլ իշխանական, ամեն դեպքում չի դառնում բաղաքական, որպես ան հաստատագրող հայցը օտարված է: Ղարան, արվեստագետը, մասնակից չէ այս բատրոնին և չի կարող մասնակիցը լինել օտարվածության պայմաններում: Սակայն պետք է նկատի առնել, որ Ղարայի օտարվածությունը ինքնօտարում չէ: Մինչև ծառվելով նա փորձում է ներգրավել գործողությունների մեջ՝ իրքի խնդկատակ անլրջորեն պատմում է «քաղաքական» իրականությունը: Սակայն դուրս է վանդակում բնիմից: Սա մի դրվագ է, որտեղ ներկայացվում է իշխանական հիերարխիան, որի արամարանության մեջ չի կարող աշխատել խնդկատակը: Այդ հիերարխիան գործում է որոշակի պահպատճեն՝ Արևմտաք-Արևելք, արևելքցի փաշա-արևմուտքցի սպա: Ղարան որևէ կերպ չի կարող տեղակայվել այս հիերարխիայի մեջ, քանի որ տարածքային տեղակայման, կամ, ինչպես որ ներկայացվում է պիեսում, որևէ տարածք բաժանելու մեջ ներգրավված չէ: Մյուսները աշխատաւմ են ենց այս շրջանակի մեջ:

Ղարայի երկրորդ մուտքը արդեն ծառված մուտքն է՝ իրքի անզիացիցի: Փաստորեն առաջարկվում է ռազմավարություն՝ արվեստային օտարվածությունը հնարավոր է հատել բաղաքականի ծառանքով: Եվ քանի որ բաղաքականը արևմտյան է, ապա Ղարան կարող էր հանդիրծավորվել իրքի անզիացից: Ենտաքրքիր է, որ Զարենցը առաջարկում է հիշողության բացակայությունը հատել հիշողության ծառանքով: Երկու դեպքում էլ գործ ունենք կեղծված ծշմարտության կամ ոչ իրականության ենա: Բայց երկու տարրեր կեղծիքներ են սրանք: Սեկը՝ հանդիսավորված բաղաքականն է, մյուսը՝ բաղաքականացած հանդիսանքը, այսինքն այն, ինչը Զարենցը մի քանի ամիս անց կեղծեր պարունակում է նիմիսական՝ եղումը տալով «Մուրճ»-ին և «Դարբնոց»-ին: «Մտանդարամ գրական ծրագրի մասին» իր բացատրական գրության մեջ անա այսպես է բնորոշում նա այս դրսնորումը: «Մուրճը» յեկ «Դարբնոցը» մենք համարում ենք պարզեցված պատմական մուեցմանը: Եվ այլ:

կան, վարովինետեղ նրանցում իշխանող պրիմիտիվագույն նեյնիմն ե, գործարանի ու հեղափոխության վերամբարձ յեկ վերացական ներուղն ու գովքը, վոր գուցե յեկ 1917-20թթ. զորկ չեր վորոշ նշանակությունից, բայց այժմ միանգամայն անտեղի յե, անգամ վճասակար, վորովինետեղ իր վարդագույն ռոմանտիզմի մշուշով ծածկում է մեր առորյա խնդիրները, մեր կարենոր անելիքները»:¹ Չարենցի առաջարկը հստակ է. «Մենք ամողոր կրիկ ենք հայտարարում այդ պրոլետանեյնիմիզմին յեկ հայտնում ենք, վոր մարտնչող դասակարգին վոչ նեյնիմ է հարկավոր, «ընդհանրապես» գործարանի յեկ «ընդհանրապես» հեղափոխության «քնարերգություն», այլ գեղարվեստական կոմկրետ խոսք, վոր ակտիվ կերպով կազմակերպում ե նրա աշխարհայացքը, ոգնում ե նրան իր գործարանի յեկ իր հեղափոխության այսորվա հերթական, կոմկրետ անելիքներն հասկանալու, կամ, վոր, միյելնույն ե, լարում ե նրա կամքը վորոշ ուղղությամբ».² Այս պոեզիան նա կոչում է քաղաքական պոեզիա: Այստեղ ուզում եմ առանձնացնել երկու բնորոշում՝ «զեղարվեստական կոմկրետ խոսք, վոր ակտիվ կերպով կազմակերպում ե նրա (դասակարգի՝ U.Դ.) աշխարեայացքը» և «վոր լարում է նրա (դասակարգի՝ U.Դ.) կամքը վորոշ ուղղությամբ»: Կամքի լարումը և ուղղորդումը արվեստով: Սա այն էր, ինչ առաջարկում էր այս քվականներին Չարենցը իրականություն ստեղծելիս, և որը չէր համարում երկու տիրոջ ծառա:

Դժվար չէ նկատել որ այս բանաձևի կրողը Ղարան է: Թամաշան ավարտվում է «Խնամերնացիոնալ»-ով: Բեմը և ժողովուրդը միասին երգում են, Ղարայի համար խնդիրն այն չէ՝ արդյոր հացողեց պիեսը, թե ոչ: Ըեշտադրելին դառնում է կամքի լարումը արվեստով: Ուշադիր լինելու դեպքում կարելի է նկատել, որ Չարենցը առաջարկում է արվեստայինի ու քաղաքականի համակեցություն, ինչը նշանակում է, որ բեմը ծիսական տարածք չէ այլևս, այլ հանրային: Դարձյալ ուշադիր լինելու դեպքում կարելի է նկատել, որ Չարենցի առաջարկը կոմկրետ օրկա և կոմկրետ հանգամանքի հետ է կապվում:

* * *

Վերադաշնամ սկզբում արած հարցադրմանը, թե ֆունկցիոնալ առումով ինչի հետ ենք գործ ունենում այն դեպքում, երբ շենքը ներկայանում է իրեն պատմական հիշողության վկա՝ կապելով

¹ Standard, ժունալ գրականության յեկ արվեստի, Սոսկվա, 1924, N 1, էջ 5:

² Նույն տեղում:

դա Չարենցի առաջարկի հետ: Պատկամենափ շենքում բատրոնի տեղակայումը Չարենցը դիմարկում է իր առաջարկի շրջանակներում՝ իրեն ռազմավարություն («կամքի լարումը որոշ ուղղությամբ»): Ուղղորդված կամքը աշխարհայացք ծևավորելու միջոց է: Փաստորն այն, ինչ Չարենցը համարում է քաղաքական արվեստ, ավելին չէ, քան որոշակի ռազմավարություն ունեցող, ուղղորդված խոսքը: Ավելի ուշ, 1928-ից սկսած նա կսկսի փնտարել խոսքի կառուցման միջոցներ:

Ողակին Քրասուր Ռուենի «Դժիսքի դարպասները» գործի բոլոր ցուցադրությունները համարում է բնօրինակ, այն իմաստով, որ դրանցից յուրաքանչյուրը հենց այդ պահին է ձուլվում ցուցասրահում, և այցելուն դառնում է յուրօրինակ հաղիսատեսք այդ ներկայացման: Այդ ցուցադրությունների կարևոր բաղկացուցիչը և նախապայմանը հանդիսատեսի այդ յուրօրինակ ներկայությունն է իրեն մասնակցություն: Թանգարանը և ցուցասրահը այս դեպքում հանրային տարածքներ են, ոչ թե պաշտոնական բանագրան-արգելավայրեր, որտեղ յուրաքանչյուրը ցուցադրություն վեր է ածվում իրադարձության: Ընդունողի դիրքում գտնվող հանդիսատեսը ամրագականացնում է, այս իմաստով՝ պարտում է գործը: Խնդիրն այն է, որ նմանատիպ գործերում ստեղծող հեղինակի մանրախնդիր հաշվարկը պետք է որ հաշվի նստի բոլոր հնարավոր հայացքների ու դիրքավորումների հետ՝ ակտիվացնելով դրանց հնարավոր արձագանքը:

Հրապարակում ներկայացվելու համար նախատեսված քամաշան երկու բնմադրություն է ունենում բատրոն: Ըստ էության հրապարակի համար նախատեսված պիեսը (քամաշան) չի ամրացնում, քանի որ նման գործի ավարտը պայմանակործված է միջավայրով, որտեղ այն պիտի տեղի ունենա, իրականանա: Ծեմքի պատմականացնումը կամ հիշողության հաստատումը թեման է, որը պիտի ներկայացվեր դրսում և դրանով իսկ վերահսապավեր որպես այդպիսին: Ավանդարդի՝ ինքնաստեղծ լինելու և պատմական կոնժերստի հետ աշխատելու ներփակությանությունը լուծող ռազմավարություններից մեկը կարող էր լինել պատմականացնան գործողությունը, որը առաջարկվում, սակայն չի կիրավում այս գործով: «Կապկազ»-ի դեպքում, փաստորն ազդացնում է գործ ենք ունենում տեղական ավանդարդի մի յուրօրինակության հետ, որը կկոչեն հապաղող: 1930-ական թվականներին Չարենցը կվերդառնա տեղական ավանդարդի այս յուրօրինակությանը «Աքիլես, թե Պյեր» գործում, բայց սա արդեն այլ խոսակցության նյութ է:

ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՌԱՑԱՆ

«ԾԻԱԾԱՆ». ՍԻՐՈ ԱՌԱՍՊԵԼԸ ՄԵԿ ՕՐԱՊՏՇՈՒՑՈՒՄ

Ինչպես իմաստուն կերպով քանաձնել է Հովհաննես Թումանյանը, «գրականության մեջ սիմվոլիզմը ոչ այլ ինչ է, եթ ոչ մի հանդուզն զգացնելով ենքիարին մոռանալու»¹: Այս, որ սիմվոլիստները օգտագում էին սիմվոլիկ լեզվի օրինաչափություններից, որ սիմվոլների արտաքին շերտի տակ էր բարեկամ ներքին իմաստն ու բովանդակությունը, որ սիմվոլները դասնում էին զգացմունքների ու ապրումների խառացված արտահայտություններ, հատկանիշներ են, որ հատուկ են և ենքիարներին, և առասպելներին:

Իր սաեղծագործության առաջին շրջանում սիմվոլիստական գրականության սկզբունքներով ստեղծագործող Եղիշե Չարենցը բնականարար պետք է մոտենար ենքիարին ու առասպելին: Եվ դա ոչ թե անմիջական ենքիարային կամ առասպելական սյուժեների՝ գրականություն ներմուծման ճանապարհով, այլ ավելի խորքային՝ բանահյուսական խորհրդանշների, արքեալիպային նախակերպարների և իհարկե՝ վաղնջական կառույցների օգտագործման: Այսպես են ստեղծվել Չարենցի շատ ու շատ գործեր, որոնք, իհարկե, մեծ մասամբ արդեն նկատված և ուստինասիրված են գրականագիտության մեջ: Թեմայի բնությունը հատկապես կատարվել է Հ. Էդոյանի աշխատության մեջ, որը բավական խորքային ու արժեքավոր նկատառումներ են կատարված հարցի առնջությամբ²:

Մեր ուշադրության առարկան տվյալ դեպքում «Ծիածան» ժողովածուն է՝ իր բանաստեղծական կառույցով և հնագույն առասպելական, արքեալիպային խորհրդանշներով:

Սիր առասպելը ժամանակային շրջապատճեամում: Սարդկության վաղ մտածողությանը հատուկ է նոր ցիկլային բնույթը: Ժամանակը մարդու պատկերացրել է շրջապատճեամի ճնուպ՝ որպես պատավող անիվ՝ ճախրի ֆալլաք, որի յուրաքանչյուր պառույտ

ունի իր սկիզբն ու ավարտը³: Այդ սկիզբն ու ավարտը համապատասխանում էին ժամանակային առանձին միավորների սկզբին ու ավարտին: Հնագույն ժամանականերից սկսած՝ ժամանակային միավորի սկիզբը մարդու նույնացրել է զարնան զալսայանը՝ որպես նոր կյանքի սկիզբ, իսկ ավարտը՝ ճմռանը, երբ կյանքը մահանում է:

Հնուց ի վեր մարդու փորձել է մնկմարանել բնության երևոյթները և դա արել է՝ ելնելով իր սեփական ապրումներից ու հոգեկան աշխարհից, բնության երևոյթները մարմնավորելով աստվածների մեջ և բնության փոփոխությունները մեկնարանելով որպես այդ աստվածների զգացմունքների ու կամքի դրսաքրումներ, կապելով սիրո, ատելության, խանճի, վրեժիննորության և մարդու ու մարդկայինին բնորոշ այլ ապրումների հետ: Ծիշա այսպես էլ ստեղծվել է սիրո առասպելը՝ բնության մասն ու զարթոնքը նեկարանող: Բնությունը մարմնավորել է մի երիտասարդ և գեղեցիկ պատամի, որին սիրահարվում է սիրո գեղանի աստվածունին: Սակայն պատամին մահանում է, տիրում է սիրո աստվածունին, և մահանում է բնությունը: Տեսնելով այս՝ աստվածները խնդրում են մեռյալների թագավորության տիրակալին՝ վերադարձնել պատամուն լույս աշխարհ: Առասպելը պատճառարանում է բնության ամնամյա հերքազայությունը. աստվածների որոշմամբ պատամին տարփա կեսը մնում է անդրաշխարհում, կեսը՝ այսաշխարհում: Յուրաքանչյուր հարության հետ վերածնվում է բնությունը և փրթում, կյանքը վերսկսվում է, իսկ աշնանը և ճմռանը՝ մահանում է: Այս կառույցը բնկած է բազմարիկ առասպելների հիմքում՝ Ակրողիտե և Արոնի, Իշտար և Թամոնի, Կիրեկա և Ատիս, Համիրամ և Արա: Այստեղից են առաջացել տարեպատույան այն ծիսակատարությունները, ըստ որոնց ժողովարդը նախ սգում էր բնության աստծո մահը, ապա տոնում նրա հարությունը (Աղոնիսի, Ատիսի ծիսակատարություններ)²:

Ժամանակային առավել փոքր շրջապատճեամ է օրը: Առասպելական պակերացումներում օրվա շրջապատճեամ կապվում էր արևի առասպելին: Արևը նույնացես մնոնող-հառնող աստված է: յուրանչյուր օրվա արշալույս արևի նոր ծնունդն է, իսկ մայրամուտը՝ նրա մահը: Հայ առասպելարանության մեջ մնոնող-հառնողի

¹ Հովհաննես Թումանյան, Երկրի լիակատար ժողովածու, հ. 10, Եր., 1999թ., էջ 424:

² Տես «Հեմքի Էդոյան», Եղիշե Չարենցի պահտիկան, Եր., 1986:

176

¹ Տես «Սարգիս Հարությունյան», Հայ առասպելարանություն, Թիվուր, 2000, էջ 444-447:

² Տես «Զեյմս Զորք Ֆրեզեր», Ուկի ճյուղը, Եր., 1989, 409-419:

այս գործառույթի կրողն է Սիեր արևային ասսավածք՝ իր վիպականցված՝ Փոքր Սիերի կերպարով¹:

Խոսելով առասպելների և մարդկային հոգերանության կապի մասին՝ հոգեվերլուծարան Կարլ Յունգը գրում է. - «Հնագույն մարդը ոչ թե երևույթների օրյեկտիվ բացատրություններ է փնտրել, այլ ծառել է արտաքին աշխարհը համապատասխանեցնել իր ներքին ապրումներին: ...Առասպելացված բոլոր բնական երևույթները, ինչպիսիք են ամառը, ձմեռը, լիալուսինը, տարվա անձրևային եղանակները, այնքան այլարանություններ չեն, որքան հոգեկան անգիտակից դրամայի սիմվոլիկ արտահայտություններ»²: Այն սերտ կապը, որ հնուց ի վեր մարդը նկատել է իր և բնության միջև, սաեղեն է մարդկային ապրում-բնություն այն միաձույլ փոխկապակցվածությունը, որը դարձել է պոլիգայի արտահայտման հիմնական կերպերից մեկը, եթե ոչ զիշավորը:

Արդեն 20-րդ դարում «հոգեկան անգիտակից դրամայի սիմվոլիկ արտահայտություն» Եղիշե Չարենցի համար դասնում է ոչ թե տարեապույտը, այլ օրապատույտը: Սիրո արեգերական առասպելը անհատական ապրումների դրսւորում է ստանում՝ վերսափին կապվելով ժամանակային շրջապատճյան: Ժամանակային սկզբի ու ավարտի և, համապատասխանաբար, սիրո սկզբի ու ավարտի սիմվոլիկ արտահայտությունն այս դերում հանդիսանում է նոր օրվա տարրեր հատվածները՝ առավոտ - կեսօր - երեկո: Չարենցյան սիրո առասպելում օրվա հատվածներից յուրաքանչյուրն ունի իր գույնը՝ կապույտ - սպիր - մանուշակագույն: Սիրո առասպելի վաղնջական կաղապարը նոր լիցը է ստանում 20-րդ դարի սիրո դրամայի արացողմանը՝ սիրո վաղորդային, կիզիւ և արևոտ կեսօր, սիրո բաժանման բախչուու մայրամու:

Չարենցյան սիրո առասպելի օրապատույտը մեռնող-հասնող խորհրդանիշը դարձյալ արևն է՝ լուսարցին՝ ծնվող, կեսօրին՝ եռորդերառող, երեկոյան՝ մահացող: Օրվա երեք հատվածների գրեթե բոլոր խորհրդանիշները առկայությամբ կամ բացակայությամբ են բնորոշվում: Արևից բացի, «Ծիծածանում» տեղ են գտնում նաև այլ խորհրդանիշներ, որոնք

¹ Ըստ Ս. Հարությունյանի «...Սիերի՝ ժայռում փակվելը սկզբնապես կարող էր դիտվել իրեն արևամուտ, իսկ դրան զալը՝ արևածագ, հետևաբար՝ առասպելի մասնակին նախնական վարկածով հնարավոր է, որ Սիերի երունուր կապված արևային օրվան ցիկլի, այն է՝ զիշերքին ու ցերեկվա հետ, որ կրկնվում է ամեն օր» (Ս. Հարությունյան, Հայ առասպելաբանություն, էջ 460):

² Կարլ Գյուտաք Յոնց, Արքուն և սիմբոլ, Մոսկվա, 1991, ստոր. 95.

178

դարձյալ կապ են ստեղծում հնագույն առասպելների, վաղնջական արքեստիպային մասապատկերների հետ:

Առավայան խորհրդանիշներ («Կապույտը»): Սիրո արշալույսի անսարանը զարմանալի նրբությամբ է կերտված: «Կապույտը» սիմվոլները՝ մանկական սիրազ, հոգու լուս բաժակը, որի մեջ դեռ ոչ մի ճայն չի ընկել, արցուքներն ու աղոքքները, ծեզի զանգերը, բոլորը նոր սկսված օրվա մարդությունն են խորհրդանշում: Չարքի սկզբից ի հայս է գալիս քնած աղջկա կերպարը, որը հետևողականորեն զարգացվում է բանաստեղծությունից բանասեղծություն:

Երբ որպես ուրու դեռ քնած են դրւ
Կապույտում մարդուր:

Առավոտ կանուխ, երբ արև չկա,
Լուս զգում եմ ես,-

Որ լուս հոգին քնած աղջկա

Սոսիկ է այնպես(51):

-Չույր, քմի՛ր, քմի՛ր...

....ԵՎ չկայիր կարծեն դու՝ դրյակում հոգու

Ամշշուկ քնած:

Չույր, իմ հոգին աստղային, որպես նինջը քո –
Կապույտում մնաց:

Երազային կապույտ դրյակում քնած աղջկա կերպարը վաղնջական, արքետիպային զնկալումներ է հուշում՝ ուղղորդելով դեպի հերիաբները: Քնած գեղեցկուիկների հետ կապված բազմաթիվ հերիաբների սյունեները մի ընդհանուր կառուցվածքային օրինաչափություն են բացահայտում. կախարդանքով քնած արքայադրությունը կարենանա միայն առաջին սիրո համբույրից (Քնած գեղեցկուիկներ, Լուսերեսը (Սահմակացյունիկ): Այդ նույն հրաշագործ սիրո համբույրը այլ պարագայում կարող է նույնիսկ հեռշին մարդ դարձնել (Գեղեցկուիկն և հրեշը): Այս մոտիվը բազմաթիվ դրսւորումներ ունի հայ ժողովրդական հերիաբներում. կախարդանքով դրյակում հայտնված հերոսը համբույրում է քնած արքայադրությունը, որից հետո նրանց միջև ծածուկ սիրավեպ է սկսվում («Չարխի մեջ նստող տղեն», «Տղու էրազը»³):

¹ Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 1, Եր., 1986, էջ 50: Ե. Չարենցի բանաստեղծությունների այս հատորից բերվող հետազու մնօքերումները կծանրագրվեն շարադրանքում:

² Հայ ժողովրդական հերիաբներ, հ. 9, Եր., 1968, № 66:

³ Հայ ժողովրդական հերիաբներ, հ. 11, Եր., 1980, № 45:

Ինչպես հերիաթմերում, այնպէս էլ չարենցյան մեկնարանուրյամբ արքայադստեր քունը սիրուն անզիտակ վիճակն է, կուսական անաղարտ սրահ նիրեղ, որը պիտք է զարքին սիրու առաջին համրույրից: Համանման մեկնարանուրյուն հոգնվերլուծարան Հան Դիկմանը տալիս է դրյակում փակված հերիաթային հերոսութուում կապակցուրյամբ՝ աղջիկն ապրել է իր երազների աշխարհում՝ իրականուրյունից մեկուսացած, և ոչ մի աղամարդու դեռ չի հաջողվել բարձրանալ նրա դյոյակի բարձր աշխարհակը¹:

Չնած աղջկա մեկ այլ խորիդանիշ են քնած կարապները:

Կարապները լճերի մեջ, ջրերի վրա

Դեռ քնել են, դեռ նիրուում են. կարբնանան իիմա (54):

Սպիտակ կարապը, ինչպես հայտնի է, իր ճերմակուրյամբ ու մազանրով կուսական անրիծ մաքրուրյունն է խորիդանշուում: Առասպելական համատեքստում կարապը հոռմեական Վեներա և հունական Աֆրոդիտ սիրո, գեղեցկուրյան և կրքի դիցունիների խորիդանիշն է²: Կարապը որպէս կրքի խորիդանիշ, ի հայտ է գալիս նաև Զևսի առասպելուում, ուր սիրահարված Զևսը գեղեցկուրյի Լեդային տիրելու համար կարապի է փոխակերպվուու: Այսպիսով, որպէս դեռ չարբնած կրքի, կուսական մաքրուրյան խորիդանիշներ՝ կարապները լիովին համահունչ են քնած աղջկա կերպարի իմաստարանուրյանը:

Կեսօրի խորիդանիշներ («Ուկին»). Եթե կապույտը սիրո երազային հոգեվիճակն է, պլատոնական՝ մաքուր ու անրիծ, ուր «անմարմին քրոջ համբույրը հոգին է միայն զգուն իր շուրջերին» (51), ապա «Ուկին» շարքի բանաստեղծուրյուններում սիրո զարքուրի, իրական ու ապրված սիրո, կրքի ու երայրքի խորիդանիշներն են իշխուում: Արևը իր բազմարիկ խորիդանիշներով գերիշխուում է շարքում՝ ոսկեծաղիկ ասուակ, ոսկե թիրեն, ոսկե խաչ, ոսկե շորա, արև-արքա, մի կառո ոսկի, երուա, երաշեկ ոսկի:

«Ուկին» շարքի բանաստեղծուրյուններում ամեն ինչ ոսկե գույններով է բնորոշվուու: Ուկին դեռ առասպելական ընկալումներում էլ արևի գույնն է եղել՝ դա ակնհայտ է և հնագույն առասպելներում, և հերիաթնում: Հայ ժողովրդական հրաշապատում հերիաթների կախարդական աշխարհագրուրյաների նկարագրուրյուններում

¹ Ханс Дикман. Юнгианский анализ волшебной сказки. Сказание и иносказание. — СПб.: 2000, стр. 108.

²Տե՛ս Գագիկ Սամայակ, Խորիդանշների հանրագիտարան, Եր., 2007, 190:

³Տե՛ս Միфы народов мира, т. 2, М., 1992, стр.47.

հասկապն առատորնն իիշատակվում է ոսկին ու ոսկեգույնը: Խոսներպ այն մասին, որ հրաշապատում հերիաթում հերոսի վերջին հանգրվանը արևային երկիրն է, ուր ամեն ինչ ոսկե գույն ունի՝ ուսւ հայտնի հերիաթագետ Վ. Պրապը նկատում է. «Այս ժողովուրդները, որոնք չեն ունեցել արևի պաշտամունք, նրանց հատուկ է կախարդական առարկաների ոսկե գույնը»⁴:

Արևի սիմվոլներից ուշագրավ է հատկապն առաջին հայացքից անսպավոր՝ արև-սուկն խաչ խորիդանշուումը՝ «Ու կմարի խաչը վանքի կապույտում վերջին»(54): Այս խորապն բանաստեղծական պատկերը՝ վանքը՝ երկինք, խաչը՝ արև, նույնական իր ակունքներն ունի առասպելական արքետիպային մտապատկերներում: Արևային առասպելներում արևը նաև խաչի խորիդանիշը է ի հայտ գալիս. երկնքում հատված շողերը խաչի մտապատկեր են ստեղծուում:

«Ուկին» համատեքստում դարձյալ ի հայտ է գալիս քնած աղջկա կերպարը, քայլ այս անգամ արդեմ՝ զարքոնքի կոչերով: Կարապները արքնացել են ու կանչում են քնած աղջկան, զանգերի զողանցը և զարքոնքի կոչուու:

Խաչը վանքի, երգը՝ զանգի – կապույտում վերջին.

Զարքնին՝ զարքնին՝ կապույտ աղջիկ, ու նային խաչին (54):

Կեսօրի արևը ոսկեգույն քրոյ է հազգնում ամրող աշխարհին: Երազային քրոյն ասաիծանարար մարմին է առնում: Արևը արտացոլվում է արքնացած աղջկա աչքերում՝ մի ոսկե շորա: «Հիվանդ, անգույն ու անմարմին աղջիկը կենդանում է՝ այտերի բափանցիկ կարմրուրյամբ, ոսկեգույն շողով».

Սփրբնած, գումաւա կապույտ արդեա

Չքացավ, չկա.

Ժպառում, ոսկեվիայլ վառվում են քա դեմ

Աշքերն աղջկա (57):

Որպէս բափանցիկ կարմրուրյունն հոսող՝

Այսերին վրա ոսկեգույն մի շող (59)

Կենդանուրյուն է առնում նաև աղամ՝ աստղային նորայրը:

Ու սփրբնած դնմքին վրա – բռնկվող մի փայլ.

Այն արևն է, այն արևն է, աստղային նորայր (56):

Եղ ահա հայոնվում են ոսկեգույն քրոյ հազած, ճերմակ, հարսների պես շիկացած առագաստները, որոնք մեկնում են դեպի ոսկերաց հեռուումները:

¹ Пропп В., Исторические корни волшебной сказки, Ленинград, 1986, 293.

²Տե՛ս Միфы народов мира, т. 2, стр. 12.

Ահա ճերմակ առաջասաւները՝ ոսկի
Արևի դեմ հարսների պես շիկացած՝
Օրորվերով, նազաքըներով, կողք-կողքի՝
Շամփա ընկան դեախ հնոտն ոսկերաց... (58)

Երազուն ափերից մեկնող նավակների մուտիկը մեզ ծանոթ է
ման Սեծարենցի սանդագործություններից («Նավակների մեկնեցան
ամենն այ, բաղմանքավ ակաղձում»), սակայն այսաեղ Չա-
րենցի հիշատակած առաջասաւները, երազանքների մարմնավո-
րումն լինելուց բացի՝ բառի փոխարերական իմաստի ակնարկ են
բարցում՝ առաջասար՝ որպես ամուսնական միության
խորհրդանշ, հատկապես, երբ առաջասաւները հարսնացած են,
կամ՝ հարսների են նման:

Առաջասաւները, ոսկեգույն քող հազար,
Արևելյան հարսների պես նազանուա... (58)

Այսպիսի իմաստավորումն ավելի ակնհայտ է դառնում հա-
ջորդ բանասանեղության մեջ, ուր հարսնացած առաջասաւների
կողքին հայտնվում է հարսնացած աղջիկը:

Որպես կարմրությունն այն այրող, երուա-
Հարսնական դեմքի՝ ամորխած, կարու... (59)

Այսպիսով, սիրո երազներին հաջորդում է իրական սիրո ապ-
րումը, բնած, անմարմին բրոջը՝ հարսնացած, շիկնած, ամորխած
կիմը:

Հանդես է զայիս կեսօրի հաջորդ խորհրդանշիցը՝ հասուն հաս-
կը (արևի տակ շիկացած հասկ, հացի հեռաստաններ, բերրի
արտեր):

Ես հավատում եմ հասկի շշուկին, խոսքին –
Երբ հագել ես արևի բափանցիկ ոսկին:
Հետաստանները հացի – ոսկեգույն, ոսկեգույն:
Դու նայեցիր, ժամացիր իմ գումար հոգուն:
...Եվ եռուս էր ոսկեծուի կապույտից դեպի վար՝
Արտերի զիրկը բերրի՝ մի հնշառություն երավառ (60):

Հասկերի հասուն արտի խորհրդանշիցը ոսկու համատեքս-
տում պատահական չէ: Հացարույսը սերտորեն առնչվում է և բու-
սականության մեռնող-հարսնող ասածո, և՝ արևի առասպելներին: Հիմ Արևելքում բնարդյունը մարմնավորող պատահները զյանավ-
րապես համդիսացել են հացի, հատկապես՝ հացահատիկի ասա-
վածներ (Օսիրիս, Թամուզ, Աղոնիս, Ատախ): Հացարույսն էլ
բաղվում է եռորում, այնուհետև վերածնվում և ենոս որպես զոհ

մատուցվում մարդկությանը¹ (ի դեպ, այս առասպելը քրիտոնեա-
կան կրոնում շարունակվեց ենց Քրիստոսի կերպարում, իհարկե,
այս պարագայում արդեն սիրո առասպելից անկախ): Արև-Մեծերի
առասպելում էլ երազված աշխարհի խորհրդանշիցը հիմնականում
հացարույսն է՝ խոշորացած ցորենը կամ գարին:

Ի՞նչ առնչություն ունի այս ամենը շարենցյան մեկնարանման
հետ, արդյո՞ք խորհրդանշիցը եմբռում պահել է նախապատկերա-
ցումները: Յորենը և արևը առասպելական այն մեռնող-հարսնող
խորհրդանշիներն են, որոնց գործառույթներում շեշտակում է նաև
զոհի զաղակարը (արևը այրվում է հանուն մարդկության, ցորենը
հացի տեսքով զահարերվում է մարդկությանը): Չարենցյան՝
ծիածանային ծամփան անցնող քնարական հերոսի ուղին ևս
դեպի զոհարերում է տանում, մի զաղակար, որ արտահայւալում է
«Ծիածանի» երկրորդ բանասանեղության մեջ:

Բայց Ե՞րբ կիասնի հոգին, որպես սեզ, սրբացած մի զոհ,-
Սայրամուային եղերքը Կապույտ, լույս եղերքը Զո... (45)

Արքեսիպային այս ընկալումները թերևս առկա են անզի-
տակցականի մակարդակում: Անշուշան Չարենցն ամենից առաջ ի
մկատի է ունեցել արևի՝ սիրո ջերմությամբ հասունացած և բաղ-
վելու պատրաստ հունըր, հասուն և ապրվող սիրո հոգեվիճակը,
որը դառնում է շարքի զգացմունքային զագաթնակետը, և որից
հետո արդեն արևի դեպի մայրամուտ է թերվում՝ սիրո երայրքն
աստիճանարար մարում է:

Երական սիրո որպես այրող կրակի պատկերումը հարա-
զատ զուգահետ է սանդում Չարենցի այլ սանդագործություննե-
րի և հատկապես՝ «Հետերա-երազի» պատկերներին: Հրավարս
կնոջ երուա համրայերը վասպող դրյակում այսաեղ նույնպես
դեպի մահ են տանում՝ դեպի դրյակի մախիրները:

Բայց չ՞ որ, երբ դեռ
Հրդեհն էր լափում դրյակը իր իհմ՝
Թոքերի ծովում մի ոսկի թիրես
Զնգում էր, շաշում - հրավարս մի կիմ (35):

Ոսկեվարս կիմը առասպելական պատկերացումներում էլ
արևի խորհրդանշից է եղել և դրա լավագույն վկայությունը տեսնում
ենք մեր էպոսում՝ ոսկեվարս Քառաւն-Ծյուղ Ծամի կամ Դեղձուն
Ծամի՝ երկնային Պղնձե քաղաքի քագակորի աղջկա կերպա-

¹Տե՛ս Ս.Հարությունյան, Հայ առասպելարանություն, էջ 361:

րում¹: Այս արև-կճոր հակապատկերն է ճերմակ դոյակի անմարմին ուրում, որը «Հետերա-երազ»ում էլ հակադրվում է աշքերում ուկի կրակներ ունեցող կճոջը:

Եվ քո՞ն չիմի երազն ասազային –
Շերմակ դոյակի անմարմին ուրում...
Եվ չէ՞ որ ոսկի կրակներ կային
Մեռներու առաջ նրա աշքերում ... (35)

Ուկու սիմվոլները հակասական տրամադրություններ են արտահայտում: Արևի ոսկին գունավորում է անգույն աշխարհը, քախծոտ կապույտի մեջ հայտնվում է ուկու ծիժադր, երավառ ոսկին երդենեված հոգիներին եռվ է բերում, սակայն միննույն ժամանակ արևը ցավ է պատճառում, արևը խանճում է կապույտը:

Ինչո՞ւ է խոցում, ասեղի մման,
Ուսկին արևի ... (55)
Կապույտը վառվեց, խանձվեց ոսկու,
Արևը - անցավ.
Արևը - անհուն որ կապույտում
Թռմկված մի ցավ (63):

Արևի հայտնվելը երկակի զգացումներ է առաջացնում քնարական եերոսի սրտում, սպասված արևի հայտնվելը տագնապ ու եղինտամք է առաջացնում:

Դու չն՞ս ուզում, դու չն՞ս ուզում արևի ոսկին.
Չե՞ս հավատում արևի շիկացած հասկին... (56)

Իրականություններ զայխս է այրելու սիրո երազները: Ինչպես «Երեք երգ տիրադարուկ աղջկան» ժաղավածուում իրական սիրո ապրումը երազների խորտակման է հանգեցնում, այնպես էլ «Ծիածան»ում ոսկե արևը զայխս է այրելու կապույտ երազները («Քոնիր, երազներն այրվեցին ու անցան», 69): Առավոտյան անմարմին երազի և արևոտ կեսօրի իրական, մարմնական սիրուն պնաք է հաջորդի սիրո երեկոն: Սիրո հեշտալի կեսօրը մի ակնթարք է տևում: Արևն ընդամենը մի ոսկե քիրեան է, հայտնվում է կապույտում ու չքանում՝ իր հետ տանելով նաև կապույտը: Արևի թաշնային խորհրդանշումն առասպելական մտածողության արդյունք է, սակայն Չարենցը քիրեանի միջոցով ընդգծում է արևի՝ երկ-

¹ Արև - անգին քար - ոսկեվարս կին (Դեմքուն Ծամ) զուգայիր քննությունը «Ասան ծոերի» առաջին ճյուղում ան Մ.Արելյան, Երկեր, հ. 1, Եր., 1966, էջ 417:

² Ե. Չարենցի պոեզիայում կանց կերպարի ընկալման այս յուրահատկությունների մասին՝ երկնային քոյլը և հետերիզմ, ան Հ.Հոգոյան, Եղիշեն Չարենցի պոետիկան, էջ 183-211:

բային սիրո ու կյանքի կարծատևությունը, վայրկեմական բռնկում ու մահ («Քոնիր, վայրկյանը սրբազն է - բռնկում ու մահ» 54):

Ու բոլցած, ու սիրբան կմարի
Արևի ոսկին-
Վերջին անգամ եղերի մոտ կամարի
Բոնկված կրկին (62):

Կապույտը նախ դառնում է վարդագույն, ապա՝ մանուշակագույն: Արևը չքանում է: Դա արդեն մայրամուտն է:

Երեկոյի խորհրդանիշները («Մանուշակագույն»): Սիրո մայրամուտի պատկերները բոլորը հանգում են մարող արևի խորհրդանիշին: ոսկե շղթան ընկնում է ամոքխան լուսության զիրկը, ոսկե վարդերը չքանում են, խաչը մարում է, մեռնող արևը ժպառում է վերջին անգամ: Այս շարրում զրեթե նոր սիմվոլներ չի ներմուծում բանաստեղը, այլ շարունակում է նախորդների իմաստարանությունը, որոնք բարոր մարած և խամրած սիրո երազների արտահայտություններն են դառնում: Խանձված հոգի, ցողուած աշքեր, իրիկնային ժպիտ, ցրտարեր քամի: Սիրո կարծառն կեսօրը չի բավարարում արշալույսի անհուն երազները, սիրո անքաղ հասկերը բախիծ են ծնում:

Եվ որպես շշուկ չքաղաքած հասկի,
Մեր հոգմած սրտում -
Սպասումը, որ ցրտարեր քամին
Հիմա կուրա... (65)

Սիրո բռնկումները նվազում ու հանգում են, խանձված սրտերում ու մանուշակագույնի մեջ մնում են կապույտի ու ոսկու հուշերը, որոնք ծիածանվում են հոգու և աշքերի մեջ: Մայրամուտային պատկերներում աղջկա ապրումը հաշտառությունն է ու ներումը.

Հաշտություն էր ու ներում
Զա ժպիտը սրբազն
Զա արցունքու աշքերու
Ամրջացած ծիածան... (68)

Տղայի ապրումը՝ ափսոսանքն ու զղումը.

Թայց ես ինչո՞ւ, քոյլը իմ, ախրեցի այնքամ,
Երբ հայտնվեց քա աշքերու մի ոսկի օդակ (77):

Ինչպես վաղճական սիրո առասպելում, «Ծիածանում» ևս սիրո ավարագ բնության պարտադրանքով է զայխս, երեկոն բախիծ ու կարծատ է բերում, աներածեցած բաժանումը նոր հանդիպման հույսների տնդիր է տալիս, ինչպես յուրաքանչյուր օրվա ավարտից հետո՝ ծնվում է նոր արշալույսի սպասումը.

Դու գմամ ես, բայց եղջիւ սպասում է քեզ.

- Կապույտ աղջիկ, քո՞յր իմ հեզ, դու ենա չե՞ս գալու... (72)

Այդպիս սիրո վաղմաջական առասպելում սիրահարի մահվանը հաջորդում է նրա նոր հարության երկար ու տաճջալի սպասումը:

Օրվա շրջապատույթի տրամարանական զարգացումը հանգեցնում է ավարտի գիտակցությանը, որից ենառ, թվում է, պետք է լինի գիշերը, սակայն Չարենցը չի երշատակում գիշեր բառը: Գիշերն ու նրա սևությունը տեղ չունեն շարենցյան ծիածանում: Հուսարաց - կեսօր - երեկո եերթազայությունն, այնուամենայիվ, ունենում է իր տրամարանական շարունակությունը. երեկոյին հաջորդում է քունը և մահը՝ քունը՝ որպէս ժամանակավոր մահ, և մահը՝ որպէս հավերժական քուն՝ ընկալման առասպելական իմաստարանությամբ:

Իրիկուն է, քո՞յր, - աշքերդ փակի՛ր,
Հոգմարեկ, ախուր, աշքերդ փակի՛ր (87):

Դիր մատներդ կույս՝ աշքերիս վրա.-

Հոգեվար եղջուս - աշքերիս վրա... (88)

Մարտուն է եղջիւ, քո՞յր, քո աշքերում ու մեռնում է նա:

Մընում է ահա քո կապույտ ենառուն - ու մեռնում է նա (92):

Սիրո երեկոյի պատկերներին հաջորդում են մահվան սիմվոլները՝ դողմանցող օրերի մարտունը, մայրամուտի սգահանդեսը, տրտում թափորը, արծարեն վարդերը: Խսկ ի՞նչ է սպասվում մահվանից հետո: Մայրամուտից ու բաժանումից հետո պետք է զա մի նոր հանդիպում, ու պետք է նորից լինի կապույթը, բայց այս դեպքում արդեն՝ հավերժական ու անանց: Եվ դարձյալ խորքում ուրվագծվում է վաղմաջական, առասպելական նախակաղապարը. կապը Միհեր-Սինը արև ասածու առասպելին ակնհայտ է. մայրամուտը իր մեջ և բախիծ ու տագնապ, և լավագույնի գալսայան եռոյսեր է պարունակում: Ավարտի մեջ կա նաև նոր ու ավելի լավ աշխարհի սպասման եռոյսը: «Ծիածան»ում այդ լավագույն աշխարհը Ամենատի երկիրն է. երկրային երաժեշտին պետք է հաջորդի սիրահարների երկնային հանդիպումը: Մահը ավարտ չի, մահը Կապույտ երկրի բաներն է, որ տաճում է դեպի ամոքիչ Հավերժը, Ամենատի երկիրը՝ իր Հավերժական Կապույթով:

«Ծիածան» մի սովորական բանաստեղծական շարք չէ: Նրանում տեղ գտած բանաստեղծությունները մի համաձույլ ամ-

րդություն են կազմում, և իգոր չէ, որ որոշ ուսումնասիրողները այն պես են անվանել: «Ծիածանը» ամրադրական սյուժե և կուռ կառուցվածք ունի: Հետևողականորեն զարգացվող խորհրդանշիների իմաստարանությունը ստեղծում է սիրո բազմազան ապրուների մի ող շղթա՝ արևածագից մայրամուտ ու մահ: Ժամանակային շրջապատույթում սիրո ապրուները որակական փոփոխություններ են կրում: Այսաշխարհային վաղանցուկ արևի կողքին հանդիւն է զալիս Ամենատի երկրի Հավերժական կապույթը, որը քեն խանձվելու վտանգ չունի, սակայն այնտեղ, այնուամենայնիվ, արև չկա:

Ըստներորդ դարի մտածողներից մեկը՝ Բրուն Շուլցը, ուշագրավ բնութագիր է տալիս բանաստեղծությանը: Ըստ այդմ, բառները, որոնք այսօր մենք կենցաղային գործածության մեջ ենք դրել, հնագույն առասպելների բեկորներ են: «Ամեն անգամ, երբ գործնականության խստաշունչ երամայականները ինչ-ինչ պատճառներով բոլվանում են և ճնշումից ազատ խոսրը բաղնում են ազատ՝ վերադարձնելով վաղեմի իրավունքները, նրան մեկեն համակուսւմ է եսադարձի տենչը, և բառը ճգառում է վերականգնել նախկին կապերը, վերադառնալ դեպի իմաստի լիությունը: Բառի այդ տենչը առ հարազատ օրրանը, նրա կարուտն առ վերադարձ, դեպի բառային նախահայրենիքը, կոչում են բանաստեղծություն: Պոեզիան բառերի միջև եղած իմաստի կարծ միացումն է, նախնադարյան առասպելների ակնբարբարային համբարձումը²:

«Ծիածանի» բանաստեղծական կատարելության գաղտնիքը ենց այստեղ է բարձրված: Միայն ճշմարիտ հանճարմերին է հաջողված հավաքել այդ «նախնական առասպելների բեկորները», բառ-խորհրդանշները, և վերադարձնել նրանց իրենց իմաստային լիությունն այնպիս, որ հառնեն այդ վաղեմի առասպելները, և վերստեղծվելով՝ լինեն նոր ու նույնքան հմայող, որքան հներն են:

Օրվա շրջապատույթում ապրվող սիրո նորագույն առասպելի միջոցով, օգտագործելով առավոտ, կեսօր, երեկո արքետիպային ընկալմուները՝ որպէս մարդկային կյանքի փուլերի խորհրդանշային դրսևորումներ, Եղիշե Չարենցը պատկերել է մարդու վաղանցուկ կյանքի դրաման՝ ծնունդ, կարծակ կեսօր, մայրամուտ ու մահ:

¹ Ս. Աղարարյան, Եղիշե Չարենց, հ. 1, Եր., 1973, էջ 55:
² www.168.am/am/articles/22409 10.06.2012

ՎԱՐՍՍ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԿԱՐՍԸ ՈՐՊԵՍ ՎԵՐԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ

(ԸՆ ՉԱՐԵՆՑԻ «ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ» ԵՎ ՓԱՍՈՒԿԻ
«ՀՅՈՒՆԸ» ՎԵՐԻՐԻ)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հումական ոռմանսների քննությունը Միխայիլ Բախտահնին հիմք է տվել մտածելու, որ տարածության ընարարությունը ամենին էլ չի պայմանավորում գործողությունների պատճառականությունը, և այն, ինչ տեղի է ունենում Բարելոնում, հանգիստ կարող էր տեղի ունենալ նաև Եզիդականի հայություն:

Իտալական ծագումով ամերիկացի գրականագետ Ֆրանկո Մորետին, մեջքերելով Բախտահնին, նկատում է, որ տարածության այս իներասությունը փոխվում է վեպի ինքնորոշման հետագա փուլերում, և յուրաքանչյուր տարածք պայմանավորում կամ առնվազն օգնում է միայն իրեն հատուկ պատճություն (story) ստեղծել: Հսա նրա՝ արդի եվրոպական վեպերում ինչ և ինչպես պատահելը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, թե որտեղ է այն պատահում: Որոշակի պատճություններ (story) որոշակի տարածությունների արդյունք են, և որոշակի հստակ տարածությունների լինելը անհնարին կրարձնելը որոշակի կոնկրետ պատճությունների (story) ստեղծումը: Պատճումը պայմանավորող օրենքի հավակնություն ունեցող այս բանաձևը գրականագետը ապացուցում է Օսրինի և Դիկենսի Լոնդոնի և Բալզակի Փարիզի համեմատական քննությամբ, թե ինչպես Լատինական բաղամասի գոյությունը Փարիզում և նման երրորդ կետի բացակայությունը Լոնդոնում մեծ քաղաքի պատճությունները դարձրել են տարբեր քաղաքների պատճությունները և վեպի ժամանակակից տարբեր հանգրվանները¹:

Երբ հայերեն քարգմանությամբ լույս տեսավ Օրիամ Փամու-

կի «Զյունը» վեպը¹, որի գործողությունները ծավալվում են Կարսում, կարծում եմ միայն իմ մոտ չեն, որ ծագեց Եղիշե Չարենցի «Երկիր Նաիրի» վեպի հետ զուգահեռ: Այդ զուգահետին մոդա առաջին ազդակը նույն քաղաքի՝ Կարսի առկայությունն է երկու գործերում՝ որպես վիպական տարածություն: Մնացյալում, թվում է, և դա իրականում հենց այդպես է, զործ ունենք չափազանց տարբեր հեղինակների չափազանց տարբեր ստեղծագործությունների հետա: Ես չեմ փորձելու այս հոդվածում և հոդվածով ժխտել այդ տարբերությունները և արհեստական «ազդեցություններ» ստեղծել: Իրականում որևէ ազդեցության մասին խոսք լինել չի կարող: Թեև Չարենցի վեպը անցյալ դարի քանականներին է գրվել, իսկ Փամուկի ստեղծագործությունը լույս է տեսել արդեն նոր հազարամյակում, սակայն «Երկիր Նաիրին» Փամուկին հասու որևէ լեզվով թարգմանված չէ (անգլերեն, բուլղարեն): Ուրեմն՝ այս զուգահեռ ընթերցման միակ ու զյսավոր եիմքը Կարսն է՝ որպես երկու տարբեր վեպերի հատման կետ:

Ուրիշ հանգամանքներ էլ կարենի է գտնել շատ ցանկանալու պարագայում, օրինակ՝ ուսու գրականությունից եղած շատ կարեւոր ազդեցությունները երկու հեղինակների վրա. Չարենցի վեպի դեպքում նկատված է Գոգովի ու Բելիի հայտնի գործերից եկող մոտիվները, իսկ Փամուկի դեպքում նույնամի անքարույց է Դուստուկու ներկայությունը՝ սկսած վեպի բնարաններից: Բայց այս հանգամանքն էլ մեր նյութի դեպքում թեական է և ոչ առանցքային:

Ոլիխարդ Վազների երաժշտադրամահիկական «Պարսիֆալ» (1882 թ., ըստ միջնադարյան քրիստոնեական լեզենդի) միստերիա-օպերայում գործող անձանցից մեկը դիմում է որդուն հետևյալ խոսքերով՝ նայիր, տղաս, այստեղ ժամանակը փոխվում է տարածության: Հենց այս համաժամանակյա տարածությունն է, որ փորձելու եմ ընթերցել Չարենցի ու Փամուկի վեպերի միջնորդությամբ: Ընթերցումը երեք հիմնական ուղղվածություն է ունենալու ՝ Կարսը՝ որպես աշխարհագրություն (աշխարհագրական տարածք), Կարսը՝ որպես պատճություն (պատճական տարածք) և Կարսը՝ որպես քաղաքականություն (քաղաքական տարածք):

¹ Franco Moretti, *Atlas of the European Novel 1800-1900*, pp. 70, Verso, London, 2009.

ԿԱՐՍԸ՝ ՈՐՊԵՍ ԱՌԽԱՎՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պատմական և քաղաքական, ասել է թե՝ բուն վիպական իրադարձությունների բատերաբն լինելուց առաջ Կարսը աշխարհագրական տարածք է, և հենց այդ աշխարհագրության վիպականացում-քարտեզագրումը մնձ չափով պայմանավորում է մնացալը: Թե՛ Եղիշե Չարենցը և թե՛ Օրիան Փամուկի շատ հստակ գիտակցել են դա, և պատմական չե, որ երկու վեպերի ընթերցումն էլ հնարավորություն է տալիս ուրվագծելու քաղաքը՝ Կարսը՝ որպես տարածություն: Նախ և առաջ երկու վեպերում էլ կարելի է տեսնել քաղաքի երկու հասպածների բաժանարար գիծը: Չարենցի դեպքում դա վերի (իին քաղաքը) և վարի (նոր քաղաքը) բաժանումն է, առաջինում գտնվում են Բերդը, Առաքելոց Եկեղեցին և Վարդանի կամուրջը, իսկ երկրորդում՝ երկարուղագիծը, առևարական հաստատությունները, քաղաքային այգին, ակումբը, վարժարանները և հինգեարկանի շինությունները: Փամուկի վեպում Կարսի մի հասպածը բազմադարյա հնությունների քաղաքն է՝ նույն բերդով և քարե կամրջով, իսկ մյուսում իինզ վաղործներով և մնկ պաղուտայով ձգվող նոր քաղաքն է՝ կառուցված ոռուսական կայսրության օրոր Կարս գետի հարավային տափարակում: Վիպական ցանկացած գործադրություն տարածական եղում ունի, բուն վեպերի իիմնական իրադարձությունները տեղի են ունենում նոր քաղաքում: Հին քաղաքի եւտ ավելի շատ կապված են պատմական դեպքերի հիշողությունները: Չարենցի մոտ այդ բաժանումն ավելի հստակ է. այն, ինչ որ տեղի է ունեցել անցյալում, սովորաբար եղվում է դեպի բերդ-Եկեղեցի-կամուրջ և հարակից շինություններ, իսկ Փամուկի վեպում աշխարհագրությունը ավելի խճողված է, որպեսնուն քաղաքը իր ամբողջության մեջ ատցացվում է հետ հետ, որ պիտի նորացվի կամ յուրացվի՝ որպես նոր տարածք:

Սյուս կարևոր ընդհանրությունը վերաբերում է քաղաքի շափերին. Չարենցի համար քաղաքի փոքրության մասին եղումը ընդգծվում է զավառական փոքր և ոչ բազմամարդ բնութագրումներով, իսկ Փամուկի վեպի զյանավոր կերպարը՝ բանասանդ Կան, Կարս ժամանելու հենց առաջին օրը 15 րոպեում անցնում է ողջ քաղաքը՝ լայնքով ու երկայնքով: Այս փոքրությունը վիպականացնելու համար երկու հեղինակները տարրեն լուծումներ են գտել, որոնք ուղղել հակառակ վեկտորներն ունեն: Չարենցի վեպը ժամանակային ավելի մեծ՝ տարիների ընդգրկում ունի՝ իիմնականում 1910-ական թվականները, ավելի մասնավոր՝ առաջին

աշխարհամարտի տարիները: Իսկ Փամուկի վեպի հիմնական գործողությունները տեղի են ունենում 3-4 օրերի ընթացքում, պատմական ժամանակն այստեղ կանգ է առնում, և միայն վիպական ժամանակով են չափում ժավալվող իրադարձությունները, կամ պատմականացվում է վիպական ժամանակը:

Երկու վեպերում էլ կենարոնական՝ բրոնսուպայիկ նշանակություն ունեն վարչական շենքերը և բատերական երապարակակումները. Չարենցի մոտ դա հինգեարկանի շինությունն է, որը տեղակայված է վարչական իշխանությունն և «մութ տեղը», սրա համարժեք Փամուկի վեպում Անվանգության վարչության եռահարկ երկարավուն շինությունն է, որը, ըստ վեպի, մեծահարուս հայի առանձնատուն է եղել: Ըստ Չարենցի վեպի ծանոթագրության՝ հինգեարկանի շենք Կարսում ընդհանրապես չի եղել, և վարչական իշխանությունը կենարոնացած է եղել Կարսի մեծահարուստ Ալեքսանդր Դիբուցյանին պատկանող առանձնատուններից մեկում, ով վեպում գործող Գեներալ Ալոշի նախատիպան է: Կարելի է ենթադրել, որ խոսքը նույն շինության մասին է երկու վեպերում էլ: Հետաքրքիր է, որ քաղաքի կանքը մի կողմից կառավարվում է այս երկու կենտրոններից, մյուս կողմից երկու վեպերում էլ նշվում է ալտերնատիվ կենարոնների մասին. Չարենցի մոտ դա Լուսի վարչությունն է, որ պատկանում է Սագուրի Համբային, իսկ Փամուկի մոտ՝ ոռուսներից մնացած մինհարկանի առանձնատունը, որը հանգրվանել է Կարս ժամանակ բատերախումբը՝ Սունայ Զայիմի զյանավորությամբ, ով դառնալու էր Կարսում կատարվող ռազմական հեղափոխության սցենարիստը և ոնժիսորը: Երկու վեպերում էլ կարևորվում են բատերական երապարակները. Չարենցի մոտ՝ քաղաքային այգու դահլիճը և ակումբը, որը բատերականացված բանախություններ են տեղի ունենում, իսկ Փամուկի մոտ նույն գործառույթը ունի Ազգային քարառնը, որը բատերականացվում է ռազմական հեղափոխությունը, և մի քանի օր հետո հենց նույն բնմի վրա էլ վերջ է դրվում այդ հեղափոխությանը:

Հետաքրքիր են նաև փողոցների և պողոտաների անվանումների ընդհանրությունները: Երկու վեպերում էլ քաղաքի զյանավոր պաղուտան առաջնորդի առունեն է կրում. Չարենցի մոտ ոռուսական ցար Ալեքսանդր Երկրորդի առունուվ է, իսկ Փամուկի մոտ՝ Հանրապետության հիմնադիր Աթարուրի: Փամուկի վեպում ընդ-

¹ Եղիշե Չարենց, Երկնի ժողովածու, հատոր 5, էջ 524, Երևան, 1966:

գծում է, որ քաղաքի հինգ զիսավոր փողոցները բուրք հայտնի զինվորական գեներալների պատվին էին անվանակոչված, որպես ներական ժողովուրդը չէր պատկերացնում ավելի նշանավոր անձնավորություն, քան զինվորականն է, օրինակ՝ Քյազիմ Կարարեքիրը կամ Ընկա Չենգիզ Թոփալը: Զարենցի մոտ Ալեքսանդրյանից բացի ևս մի փողոցի անուն է հիշատակում, խոսքը Լորիս-Մելիքյան փողոցի մասին է, որի երկայնքով զգում էին առևտրական հաստատությունները: Իսկ Միլսայի Լորիս-Մելիքովը ենց հայկական ծագումով Ուստաստանի պետական-զինվորական գործիչ է եղել:

Մինչև պատմական կամ քաղաքական իրադարձություններով քաղաքային կյանքի անդրբի խօսումը երկու վեպերում է Կարսը հատկանշվում է որպես միատոն, իրադարձություններով ոչ հարուստ, կրկնվող ու ճանձրայի կենսակերպի տարածություն: Զարենցի մոտ առօրյան եիմնականում լցված է ճանձրացող խանութպահների խոսք ու զրուցով և երեկոյան բորախաղով, իսկ Փամուկի մոտ քաղաքի բնակչների եիմնական զրազմունքը ենուստացույց դիտելն ու իրար պատմություններ պատմելն է: Մի վեպում զավառական քաղաքին բնորոշող փոշուածությունը («Երկիր Նաիրի»), մյուսում տեղացող անվերջ ճյունը («Ջյունք») կարծն ու նրա բնակչների կեցության կրկնվող որթմին:

ԿԱՐՍԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Այս հատվածում փորձելու եմ ներկայացնել քաղաքը՝ որպես պատմություն կամ ավելի կոմըրես՝ քաղաքի պատմական հանգրվանով քացարել վիպական իմշ-ինչ առանձնահատկություններ: Նման ենթագիսի առանձնացումը ավելի շատ պայմանավորված է բուն քաղաքի՝ Կարսի ընտրությամբ՝ որպես վեպի տարածք երկու ենդինակերպի կողմից, քան բուն վեպերի պատմականությամբ կամ պատմավիպային մոտիվներով: Հայկական մատենագրության մեջ Կարսը հիշատակում է 9-10-րդ դարերից, սակայն, ըստ պատմական տեղեկատունների, այն եիմնվել է շատ ավելի վաղ ժամանակներից՝ մ.թ. 9-6-րդ դարերից: Թե Զարենցը և թե՝ Փամուկը պատմում են իրենց ժամանակի քաղաքը, այսինքն՝ առաջինի համար 20-րդ դարի առաջին քառորդը, իսկ երկրորդի համար նոյն դարի վերջին տարիններն են քաղաքը գրելու եիմք հանդիսացել: Այս դեպքում հետաքրքիր է պարզել քաղաքի

ԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽԱՐԾԸ՝ ՈՐՊԵՍ ՎԻՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ:

Զարենցի դեպքում Կարսը ենդինակի ծննդավայրն է, որը անցել են նրա ամրող մանկությունն ու պատանեկության մի մասը, այսինքն՝ իմշ-որ տեղ նաև անձնական պատմության կարևոր մաս է այս քաղաքը: Բայց Զարենցի վեպում Կարս տեղանունը գրեթե չի հիշատակում՝ նայիրյան ենամյա քաղաք, որը անուն չունի: Միակ հիշատակումը երբորդ զիսի սկզբում է, որը ոչ թե ընդգծվում, այլ ուղղի եակառակը՝ Ժիստվում է անունին և ապրածքի նույնացումը, երբ պատմողը նկատում է, որ եթե նամակ հասցեագրե Գեներալ Ալոշին և ուղարկեք Երկիր Նաիրի, ապա այն ամենին չի զա ու եասնի Կարս: Զարենցը ենալուսպականորեն ազաւում է վեպի զիսավոր ու թերևս միակ կերպարի՝ ենց իր՝ ենդինակի՝ նայիրյան ենամյա քաղաքի ենաւ իդենտիֆիկացումից, մի տեսակ զրում է, որ ազաւի սեփական պատմությունից, իմշի խարերդանշական մոտիվը քաղաքը չանվանելն է և քաղաքի մասին պատմող վեպը «Երկիր Նաիրի» վերնագրելը, որի գոյությանը պիտի ենց սկզբում կասկածեր՝ ասելով, որ չկա այն այլիս, եղել է միք, ֆիկցիա, ուղեղի մորմոր, սրաի հիվանդություն, իսկ փոխարենը կա ուրիշ մի երկիր՝ Հայաստան:

Փամուկի դեպքում պատմությունը մի քիչ այլ է: Մինչև գերմանական ենթագրացիայում հայտնվելի զիսավոր կերպարը ծնվել և ապրել է Ստամբուլում, այսինքն՝ նայիրենի քաղաք չէ Կարսը: Նույնը ծշմարիտ է նաև ենդինակի պարագայում: Վեպի առիրով գերմանական մամուլին տված հարցազրույցներից մեկում, երբ Փամուկին հարցնում են, թե ինչու է վեպի համար տարածք դարձել ոչ թե իր եայրենի Ստամբուլը, այլ Կարսը, նա պատասխանում է, որ դեռևս պատանի հասակում, երբ որչել էր շրջել և ճանաչել իր երկիրը, նա զալիս է Կարս ու մի կողմից ենայմում այս քաղաքի հնությամբ ու գեղեցկությամբ, մյուս կողմից իր մեջ անջնջելի ենաք է քողովում քաղաքի օտարությունը, որովհետև այն նման չէ իր եայրենիքի այլ վայրերիմ: Բուն վեպում զիսավոր կերպարը՝ քանաստեղծ Կան, զալիս է մի քաղաք, ուր եղել էր տարիներ առաջ և չի ճանաչում իր տեսած քաղաքը, որովհետև անդադար տեղացող ճյունը ամբողջությամբ սպիտակով է պատել

¹ «Գիրք երածեցախ»՝ ինչպես շատ դիպուկ ներակերնագրել էր Աշոտ Ռուկանյանը «Երկիր Նայիրի» վեպի իր ընթերցումը. տես, <http://www.arteria.am/> hy/1328535111

² Orhan Pamuk and the Turkish Paradox, Spiegel Online International, Issue 42/2005.

այն: Այստեղ երկու խոսքով պիտի անդրադառնամ կերպարծուն-քաղաք լնգվական-խարիրդանշական շորային: Ուրեմն՝ վեպի կենարոնական կերպարի անունը Քերիմ Արարուչօղլու է, այսինքն՝ իննոց Քերիմն է ասարիներ առաջ նոր այստեղ, սակայն բուն վեպում նրա անունն այլևս փոխվել է. Քերիմը վերցրել է Կազական ժամանակունք: Քերիմը չի ճանաչում այն քաղաքը, որով ինքը ժամանակին հիացել և միևնույն ժամանակ զգացել է նրա օտարությունը: Այդ օտարությունը հաղթահարողը, քաղաքը յուրացնողն ու քացահայտողը Կան պիտի դառնա, հակառակ դեպքում անհմասս կյիմներ նրա վերստին, արդեն նոր անվան տակ Կարսում հայտնվելը: Իսկ Կայից Կարս ընկած խորիրդանշական տարածության կարևոր անցումը նախկին Քերիմի համար քաղաքը անձանաշելի դարձրած անվերջ տեղացող ճյունն է, որը նաև վեպի վերմազիրն ու քաղաքի կարևոր բնութագրին է: Թուրքերն ճյուն քաղաք քարզմանվում է եա, այսինքն՝ յուրացումն ու քաղաքի հետ իդենտիֆիկացումը նաև լնգվական մակարդակով է ամրագրվում՝ Կա-Կար-Կար:

Փաստորեն Զարենցը հետևողականորեն ազաւագում, իսկ Փամուկը հետևողականորեն յուրացնում է քաղաքը: Հենց սա է քաղաքը՝ որպես պատմություն ընթերցելու և այդ քաժինն առանձնացնելով ընդգծելու իմ նպատակադրությունը, որովհետև այս մոտիվը ոչ միայն ու ոչ այնքան քաղաքի վիպական, որքան այլևս պատմական հանգրվանով է պայմանավորված: Զարենցը չի անվանում այն վայրը, որտեղ այլևս չեն ապրում ինքն ու իր կերպարները, Փամուկը անձնանունների փոխարերությամբ և լնգվական մետադաշտի օգտագործմամբ նորովի ու վերստին է անվանում քաղաքը, որը նաև նախկին օտարության զգացումի հաղթահարման յուրօրինակ ճանապարհ է:

ԿԱՐՍԸ ՈՐՊԵՍ ԶԱՂԱՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Թե՛ Զարենցը և թե՛ Փամուկը Կարսը գրելով քաղաքական վեպեր են հղացել: Եթե Զարենցը «Երկիր Նահիր»-ից քացի ուրիշ վեպ չի գրել, ապա Փամուկը մի շարք վեպերի հեղինակ է, սակայն «Զյունը» իննոց հեղինակի խոստովանությամբ իր առաջին ու վերջին քաղաքական վեպն է: Տարրեր հարցագրույցներում նա խոստովանում է, որ շատ չի հավատում այս ժանրի հաջողությամբ և կարծում է, որ քացարիկ վեպեր են, որ քաղաքական լինելով հանդերձ՝ գեղարվեստական գլուխգործոցներ են: Վեպի բնարաններից մեկը իննոց այս հղումն ունի, որ վերցված է Ստենդալի «Պար-

մի մենաստանը» վեպից: «Քաղաքականությունը գրական ստեղծագործության մեջ հնչում է կոպիտ, ինչպես ասրբանակը, որ կրակում է համերգի ժամանակ, սակայն դա այն է, ինչ անտեսել չենք կարող: Իսկ եիմա խոսելու ենք նողկալի բաների մասին...»: Ակզրում արդեն ասել ենք, որ երկու հեղինակների ստեղծագործությունների միմյանցից կրած ազդեցությունները օրյեկտիվորեն բացառվում են, ուրեմն քաղաքական վեպ ստեղծելու այս համընկնումը ևս պետք է, որ բացատրվի կամ պայմանավորված լինի քաղաքի բնարությամբ:

20-րդ դարասկզբի Զարենցի Կարսը Ռուսական և Օսմանյան կայսրությունների սահմանին ընկած գավառական քաղաք է, ուր մինչև Առաջին աշխարհամարտի ավարար ցարական իշխանությունն էր կառավարում, և բնակեցված էր եկմնականում հայերով: Զարենցի վեպի ժամանակը պատերազմների ու հեղափոխությունների ժամանակ է, և վեպի ընթացքում Կարսի բերդի զլիխն մի քանի դրոշ է փոխվում, այսինքն՝ բնականարար Կարսը պատմական ու քաղաքական անցուղարձի երեւ ոչ կենարոն, ապա գոնեակամա քատերարքն է դամանում: Համշխարհային անցուղարձի լուրերը միշտ զայիս են դրսից, և գավառական Կարսը, իր աշխարհայցրային ու քաղաքական տարրեր կողմորոշում ունեցող գործիքներով, յուրավի արծագանքում է այդ մեսիզներին՝ բանակ կազմել, կոմիտեներ ու կուսակցական քջիզներ ծևավորել, քատերական դասախոսություններ կազմակերպել, որոնք տեղ-տեղ քաղաքական հայացքների բախումներով են հատկանշվում: Այսինքն՝ շարենցյան Կարսի քաղաքականացումը պատմականարարքին ազդեցություններով է նաև պայմանավորված:

Իսկ նույն 20-րդ դարի վերջում Փամուկի Կարսը Թուրքիայի եյուսիս-արևելյան ժայրամասում ընկած պահպանողական և հետամնաց քաղաք է, որի հիմնական բնակչությունը քրդեր և քուրդ ծայրահեղական մուսուլմաններ են, սակայն այդ համայնքը կառավարվում է Հանրապետության ավելի առաջնորդ գործիքների կողմից, ովքեր հակամարտության մեջ են պահպանողականների հետ: Փամուկը գերմանական մեկ այլ պարբերականին տված իր հարցագրույցում ասում է, որ ինքը քաղաքական վեպ չի գրել որևէ քարոզչություն անելու համար, այլ փորձել է նկարագրել հոգերանական վիճակը մի կոնկրետ քաղաքում, որը կարող է միկրոկումու ծառայել ամբողջ Թուրքիայի համար: Սակայն հաջորդ հարցին պատասխանելիս հեղինակն ավելի է որոշակիացնում ու մասնավորեցնում հենց Կարսի ընտառությունը՝ նկատելով, որ հասկա-

պես Կարսում է ինքը զգացնել այն մեծ տիսրությունը, որ գալիս է Եվրոպայի մաս լինելով ոչ Եվրոպական կեցություն վարելուց, ուր շատ սրված է հակադրությունը արդիականության և իսլամի միջև, երբ մարդիկ ճգնաւում են ընդունվել Եվրոպայի կողմից, բայց միևնույն ժամանակ վախսենում են այդ ընդունելությունից¹: Արտաքին ինտեղրման պահանջով հանդերձ՝ այստեղ կոնֆլիկտը ներքին լարվածությամբ է պայմանավորված: Պատահական չէ, որ քաղաքական զիսավոր ակար՝ ռազմական հեղաշրջումը, տեղի է ունենում քաղաքի կղզիացման և ճյան պատճառով արտաքին ճանապարհների փակման ժամանակ:

Չարենցի վեպում Կարսը քաղաքականացվում է, երբ քացվում է արտաքին աշխարհի առաջ, իսկ Փամուկի վեպում ուղիղ հակառակը՝ Կարսը քաղաքականապես անկառավարելի ու հեղափոխական է դառնում, երբ փակվում են արտաքին ճանապարհները: Այս ակնհայտ թվացող օրինավորթյան մեջ մի կարևոր բայց կայ: Չարենցի Կարսում քաղաքական ակտիվությունը ինմանականում իրականացվում է տեղի բնակչների կողմից, և դրսի աշխարհի ներկայացուցիչները քաղաքում չեն գործում (շփորություն կարող է առաջացնել Կարս Դարայանը, ով դրսի է գալիս, բայց չմռանամբ, որ նա ևս տեղացի էր, ով փաստորն վերադարձող է): Փամուկի մոտ ուղիղ հակառակը՝ քաղաքական լարվածությունը պայմանավորվում է դրսի ներկայացուցիչների՝ ոչ կարսեցիների Կարսում հայտնվելով, մի կողմից ազգայնական գործի Լազիվերդը և արդիականացման մղեսանդ քեմական քարոզիչ Սունայ Զայիմը՝ իր պոստամունքում քատերախմբով, մյուս կողմից քաղաքական հալածանքների հնաևանքով արևմուտքում ապաստանած, բայց անձնական պատճառներով հայրենի Ստամբուլ վերադարձած ու քաղաքապետի ընտրությունները և ինքնասպանություն գործած չաղրայավոր աղջիկների դեպքերը լուսարանելու համար Կարս ժամանած քանաստեղծ Կամ:

Երկու վեպերում էլ քաղաքական զիսավոր ակտիվիտաները տարրեր հանգամանքներում զոհ են գնում իրենց խաղացած հեղափոխություններին (Չարենցի մոտ Կարս Դարայան, Սազուրի Համո և ուրիշներ, իսկ Փամուկի մոտ Լազիվերդ, Սունայ Զայիմ և Կա): Բայց Չարենցի վեպում պատմական-քաղաքական հանգու-

ցալուծումը կաթվածահար է անում քաղաքը և դատարկում այն, իսկ Փամուկի դեպքում՝ ուղիղ հակառակը. քաղաքը վերագտնում է իր երբեմնի խաղաղությունը: Մի դեպքում քաղաքը պարտվում է արտաքին ուժերին՝ սպառելով ներքին ռեսուրսը, մյուսում հաղթում է քաղաքը՝ ազատվելով դրսից եկած ուժերից: Գլխավոր պատճառները անշուշտ պատմական են, բայց զուս վիպական լուծումները քաղաքը գրելու ներքին արամաքանությամբ են նաև պայմանավորված: Չարենցի Կարսը պատմական ժամանակով է ապրում, Փամուկինը՝ իր ներքին՝ վիպական ժամանակով, Չարենցը հակառակ է պատմական ժամանակին, Փամուկը՝ ուղիղ հակառակը, արդեն զիսի, որ պատմական ժամանակի ավերածություններն անդառնալի են, ու փակում է քաղաքը, կանգնեցնում այդ պատմական ժամանակը՝ վեպի մեջ ու վեպի ժամանակով վերստին փորձարկելով քաղաքը: Սա զուս գրադական ակա է ինձ համար. Չարենցը գրելում է քաղաքը, որ փոխվի երկիրը, Փամուկը փրկում է քաղաքը, որ փոխվի երկիրը: Սրանք ոչ միայն քաղաքական վեպեր են, այլև երկու տարրեր մտածողների երկու տարրեր քաղաքականություններ՝ իրականացված վեպում և վեպի միջոցով:

¹ Struggling with the Elements of a Complicated History, Qantara.de, 12.10.2006.

ԱՐՄԵՆԱԿԱՆ ԱՎԱԼՈՒՄԸ ՉԱՐԵՆՑԻ «ԳԻՐԶ ՏԱՆԱՊԱՐՀԻ» ԺՈՂՈՎԱԾՈՒԹ

Յուրաքանչյուր գրական-գեղարվեստական երկի հիմքում առկա է որոշակի ժամանակային ընդգրկում, որն այլ կերպ ընդունված է կոչել գեղարվեստական ժամանակ:

Գրական երկում ժամանակային ընդգրկումն ու դրսևորումը որքան խորհ է ու տարողունակ, այնքան հարուստ ու բազմաշերտ է տվյալ երկը և այլազան վերլուծությունների առիթ է ընծառում:

Դեռևս «Էպիքական լրացրաց» գրքում «Ժուղը բանաստեղծ քարեկամիս»՝ N.N.-ին, գրված Երևանից՝ բանաստեղծության մեջ Չարենցը կարևորում է ժամանակի գործոնը գրական երկում.

Թե ուզում ես երգդ լսեմ՝
Ժամանակին շունչը դարձիր: -
Կապկի՞ր նյարդով յուրաքանչյուր
Զա օրերին ու քա դարի՞...¹:

Ժամանակի այս ընկալումը, բնականաբար, պեսար է ելակետային լիներ Չարենցի հաջորդ գրքի համար:

Ե. Չարենցի «Գիրը ճանապարհի» գիրքը ժողովածու լինելով, միևնույն ժամանակ դիտարկելի է իրեն մեկ ընդհանրական երկ, իր ամրողականությամբ, կառուցիկությամբ, և այդ է պատճառը, որ առաջ քաշված հարցադրումը ոչ թե մեկ առանձին ստեղծագործության սահմաններում է, այլ պարագրկում է ամրող գրքի սահմանները:

Ընդհանուր առմամբ՝ Չարենցի ստեղծագործության մասին բազմաթիվ ուսումնասիրություններ են կատարվել: Կարելի է ասել՝ ստեղծվել է առանձին գիտածյուղ՝ չարենցագիտություն, բայց արի ու տես, որ «Գիրը ճանապարհի» գրքի մասին (որը միանշանակ քարձր են արժևորել բայց վերլուծաբանները) այնքան էլ ժավալուն վերլուծություններ չկամ:

¹ Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, Եր., 1968, հ. 4, էջ 26: Չարենցից բոլոր մեջքերումները այս հատորից են. էջերը կնշվն անդում: 198

Գրքի ժակատագիրը շատերին է հայտնի, իսկ մամա ժակատագիր կանխորշչվեց գրքի հարուստ բովանդակությամբ: Հեղինակի արծարծած բազմաթիվ խնդիրների մեջ կարևորագույններից է ժամանակի ընկալման հարցադրությունը:

Ժամանակի և չարենցյան, և ընթերցաղական ընկալումներն այս դեպքում համատեղ դիտարկման նյութ են դառնում: Այսպես «Գիրը ճանապարհի»-ում կարելի է առանձնացնել ժամանակի ընկալման երեք կերպ:

- ա) պատմական ժամանակ - անցյալ,
- բ) գեղարվեստական ժամանակ - ներկա,
- գ) փիլիտիայական ժամանակ - ապագա:

Անշուշտ այս բաժանումը շինական պարիսպով անջրապետաված երևույթներ չի ենթադրում: Հաճախ ժամանակային այս հարբությունները ծոված են միմյանց, մեկը պայմանավորված է մյուսով և այլն: Սակայն բնագրի ընթերցումը հնարավորություն է տալիս գրքի ժամանակային ընդգրկումը բացահայտել այս երեք ընկալումների միջոցով:

Պատմական ժամանակը կամ անցյալի պատկերները Չարենցի «Գիրը ճանապարհի»-ում ածանցվում են գեղարվեստական ժամանակից՝ ներկայից:

Հեղինակը հայեցաղական և տեսական միջավայր է ստեղծում և հայացը հասում անցյալին: «Սաստանցի Դավիթ», «Պատմության քառուղիներով», «Դեպի Սառը Սասիս», «Մահվան տեսիլ» պոեմներով բացվում է գիրքը, որոնցում գրողի հիմնական շեշտադրումը անցյալի իրողությունների նորօրյա արձագանքը պատկերում է: Այս պոեմներում բանաստեղծի անդրադարձը պատմական ժամանակին ծնվում է բանաստեղծի կերպարի ներկայությունից, որն արդեն գեղարվեստական ժամանակն է՝ ներկան:

Այսպիսի գրույցը մեզ,
Սաստանցի Դավիթը գրույցն արդար... (199):

Հեղինակն այսպես դիտավայրայի մատնում է իր հայեցումը և ապա շեշտադրում ներկան «Դաստանք բարբառներ նզով» և «Փառք փառաբաններ» դիմելածներով:

Բանաստեղծական նույն մուսնությունն է առկա նաև «Պատմության քառուղիներով» պոեմում: Անցյալը պատկերվում է հայեցաղարար՝ ներկայից դեպի ետ հայացը նետելու ձևով, որը բանաստեղծի կողմից պատմության տարրներում է:

Թայց օրերի հետվում նս տեսնում եմ միայն
Սարկություն, մոխիր, մոռացություն ու մահ
Եվ երկրային ըմբացք մի ամիմասս... (203):

«Ես տեսնում եմ» – սա ոչ միայն ներկա ժամանակածելի կիրառումն է և բանաստեղծի վերաբերմունքի արտահայտությունը, այլև փաստում է այն մասին, որ գեղարվեստական ժամանակը այս ստեղծագործության մեջ ևս ներկան է: Այսպես անցյալ ժամանակը դադարեց և գոյություն ունենալ ենց պոեմի առաջին տողերից սկսած:

Պատմության քառուղիներով մնեք քայլել ներկար՝
Անդեկ, ցարուցրիլ, անզաղափար,
Հիմ դարերից մինչև այս հանճարեն ներկան...
(Ըույն տեղում, ընդգծում՝ Ա. Ա.)

«Քայլել ենք» – ենդինակը խոսում է անցյալ ժամանակի մասին, քայց պատկերում է «այս հանճարեն ներկան»:

Պատկերելով անցյալն ու անցյալի կորուստները՝ Զարենցը ուշագրավ գեղարվեստական հնարանքի է գնում: Անցյալում տեսչիվում է անցյալի գալիքը, այսինքն՝ դարձյալ գեղարվեստական ժամանակը դառնում է ներկան.

Ելած որոնելու գալիքների շավին,
Ապագայի ընթացք ու եռիզոն –
Նորս կրում են լոկ անանձնական ցավի
Ու հանգուցյալ փառքի մնանային կավիճ՝
Հազարամյա մնու դնմքը եռիզոն...

Պատմական ժամանակը ուրվագծվում է նաև «Դեպի Սառը Մասիս» և «Մահվան տեսիլ» պոեմներում: Արագինում պատկերվում է իւ. Արովյանի վերջին անքում անցկացրած գիշերն ու անհնացման լուսաբացը: Մեկ դար ետ գնալով՝ 1848, ապրիլի 2, Զարենցին տեսիլվում է իր սեփական ճակատագիրը: Նա կարծես զգում եր, որ ինքն էլ Արովյանի պես լինելու է անգերեզման, ուստի այս ստեղծագործության գեղարվեստական ժամանակը ենդինակի ներգայության ժամանակն է՝ ներկան:

Նույնը «Մահվան տեսիլում», երբ դարձյալ Դամբեկի Դժոխիք պատկերներով Զարենցը տեսլապատումի ձևով ներկայացնում է անցյալի ազգային-մշակութային գործիքներին, ովքեր կերպավորվում են ձևախեղված, իսկ պատմական ժամանակը դառնում է տեսլական ներկա ժամանակ:

Գրքի հաջորդ պոեմները՝ «Զրահապատ» «Վարդան գորավար», «Գալիքի որմնադիրներին», «Համայնական դաշտերի» 200

սերմնացանները», «Գովը խաղողի, զինու և գեղեցիկ դայրության», «Նորք» և «Արիլե՞ս, թէ՞ Պյերը» դրամաթիկական պատմք, ներկայի պատկերներով են կառուցված: Այս ստեղծագործություններում Զարենցը վավերագրում է իր ապրած ժամանակները, արտահայտում իր ամեն հավատը առ ներկան, իրեն կործանող օրերի գովքը երգում:

Այժմ ենթում է կյանք մի համեմարի՝
Խորիրոյային այս բոքք արեգակի ներքո:
Եվ բոլ երգեն ես այս իմ շառաչում երգով
Լեռնացումը այս վեհ, այս չմարող
Արեգակը՝ վառված այս երեկը՝
Ամեղքական կամքի անմարելի երու (278):

Ներկա կյանքը նորօրյա պայյարն է «Զրահապատ «Վարդան գորավար»), երկրի կառուցումն ու շենացումն է («Գալիքի որմնադիրներին»), զյուղամանեսության և հողագործության նոր թափ առած զարգացումն է («Համայնական դաշտերի սերմնացանները»), մշակութային զարրոնքն է («Գովը խաղողի, զինու և գեղեցիկ դայրության»), «Նորք», «Արիլե՞ս, թէ՞ Պյերը»):

Ներկայի այս մերրողները որքան էլ հայսուն լինեն, տեսլականացնում են պայծառ գալիքը, որը Զարենցի հավատն է վաղվա օրվա նկատմամբ:

Ու պիսի գմա՛ եկմա այն դեռ
Միմէն օվկիա՞նը զայք կյանքի,
Ուր մարդկությունը ողջ աշխարհի,
Առանց դասի ու դասակարգի,
Լծված խմելազին աշխատանքի
Պիսի իր անհում երկիրն երկի, -
Երկիր արկի՞, զինո՞ւ, երգի՞ -
Եվ մարի՞, ոգո՞ւ ընդուն բերդի... (307):

Գալիքը իր բանքը վարագույրները բացում է Զարենցի առջև, ուր արդեն գործում է գրողի փիլիսոփայական ժամանակը: Փիլիսոփայական այն իմաստով, որ զայքը ապագան չէ, սուկ ապացնի ժամանակը չէ, արժեսորվում ու կարևորվում է այնքանով, որքանով զայքը վաղվա օրվա ներկան է:

Գրքի «Տաղեր և խորհուրդներ» բաժինը հենց այս փիլիսոփայական ընդգրկումն ունի իր գեղագիտական հարցադրումների հիմքում: Բոլոր ստեղծագործությունները վերաբերում են ապագային, սակայն ձևերն ընտրված են միջնադարյան գրականությունից՝ տաղ, ծոն, խորհուրդ (խրառական բանաստեղծություն):

Ապագայի ծոնն ու ներրողը երգելով՝ Զարենցը հասու

ընդգծում է ներկան, այն ժամանակը, որը հարատև ընթացք է ու մշտապես գոյության առջնորդը: Եթե անցյալը մերժվում է, բանի որ բացակա է (չկա գոյության հիմքում), ապա ապագան հարատև բացայման է ներարկվում, ամեն ակնքարթի վերածվելով մի նոր ներկայի:

Եթե յուրաքանչյուր վայրելյանը և զյուտ և, և կորուտ, և վ դաշտ և արևածիստ, և խավարով եղի մի անսատ... (366):

Ժամանակը շնչավորվում է, և ժամանակի շունչը հարատև ներկան է. «Յուրաքանչյուր վայրելյան մտնում ենք մեր տունը» (368), «Իսկ ժամանակը որպես հավերժական երգի» (373) և այլն: Անցյալն ու ապագան լրում են մեկ ամրողը՝ ներկա ժամանակը, կյանքը դառնում է միայն այսօր և այդ այսօրը պայմանավորում է վաղվա ներկան: Ժամանակի շունչը հարատևությունն է, մեկ ժամանակ գոյություն ունի՝ ներկա, և հենց հարատև ներկայի երգին է եղիշե Զարենցը:

Այստեղ թերևս տեղին է բարձրացնել մի կարևոր հարցադրում: Անշուշտ, Զարենցը որոշակիորեն հարել է ապագայապաշտության հոսանքին, և հարկավ որոշ երևույթներ պահպանել է իր ողջ ստեղծագործության ընթացքում: Սակայն, կարծում եմ, տեղին չէ չարենցյան գոերե ամրողը բնագիրն ընթերցել ապագայապաշտության հոսանքի սահմանափակումների շրջանակներում, ինչպես վարդում է Գրիգոր Պրլայանը¹: Կարելի է բացահայտել Զարենցի որոշ առնցությունները ֆուտուրիզմի հետ, բայց ոչ Զարենցի նման բազմաշերտ, պալիֆոնիկ բանաստեղծին տեղափորել մեկ ուղղության մեջ: Անշուշտ, Գրիգոր Պրլայանի «Հայկական ֆուտուրիզմ» գիրքը արժերավոր է թե՛ տեսական հազեցվածությամբ ու բարձրացված հարցադրումներով և թե՛ գրապատմական առումով ու գրանցութիւններուն ծավալով: Սակայն հասկապես Զարենցի ստեղծագործությունը քննել միայն «ֆուտուրիզմի շուրջն», կարծում եմ սպասի լինել չի կարող: Հայսուսն ու բարդ խառնվածքի տեր բանաստեղծն այնպիսի ստեղծագործական ընթացք ունի, որ այս պահին տեսանելի է այս կետում, հաջորդ պահին՝ մեկ այլ կետում, ինչպես հարատև ընթացք, ինչպիսին է նրա ժամանակային ընկալումը: Եվ հատկապես հենց ժամանակի ընկալման տեսանելյունով, Զարենցը դուրս է գալիս ֆուտուրիստական գեղագիտության ժամանակի փիլիսոփայությունից և ստեղ-

ծում է սեփական-անհամական ժամանակի ընկալում: Ծիշա է, նա հավատում էր լուսավոր ապագային, բայց երբեք ապագան չէր իդեալականացնում և վերացարկում, ինչը հատուկ էր ֆուտուրիստական փիլիսոփայությանը:

«Սովորական գրականության պնտափիկան» գրքում Էդվարդ Ջրաշյանն անդրադառնալով «Խմբացնա Ծավարշը» պոեմի ժամանակային կառուցվածքին, դիաստ է ներկա-ապագա-անցյալ-ապագա-ներկա անցումների շղթամ²: Դիաստ է նկատված, բանզի շղթան ներկայով սկսվում, ներկայով շրջանակվում է: Այս ընկալումը ընդունելի է ոչ միայն «Խմբացնա Ծավարշը» պոեմի առումով, այլև տարածվում է չարենցյան գրերե ամրողը պոեզիայի վրա: Սակայն հետագա վերլուծության մեջ գրականագետը չի հիշում ներկայի հարատևության խորհրդի մասին, ինչով, անշուշտ, պայմանավորված է ժամանակի ընթացքի չարենցյան այս հարցույցը ինչպես «Գիրք ճանապարհիում», նույնպես «Խմբացնա Ծավարշը» պոեմում:

Մի առիթով ժենյա Քալանքարյանը նկատում է, որ Զարենցի ստեղծագործությունների հիմքում ընկած ժամանակը շրջանաձև ընթացք ունի³: Գրականագետի այս բնորոշումը եւակետային է չարենցյան բնագրի ժամանակային ընդգրկումների խորհրդությունը ընկալելու համար: Շրջանաձև ընթացք, նշանակում է հարատև ներկա, ինչպես սյուրունալիսաններն են ժամանակը համեմատում գետի հետ, որն անընդհատ զնում-զնում է, բայց միշտ իր տեղում է: Այսինքն Զարենցի համար ժամանակի հասկացությունը գուգաելուվում է ընթացքի՝ հարատև շարժի հետ. «Ով համճարեղ ակնքարք / դու ընթացք ես և ոստում»:

Այս ժամանակային ընկալման սկզբունքով է կառուցված Զարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուն, որի ժամանակային կառույցի բանաձևն է «Աշքերս հատել եմ անցյալին՝ ապագայի նժույզը նստած» առողք: Այս դեպքում ամրողը ընթացքը ներկա ժամանակին է վերաբերում՝ հառել եմ, նստած եմ և փաստուն, Զարենցը հարատև ներկայի երգին է, իր խոսքով ասած՝ դարձել է ժամանակի շունչը:

¹ Տե՛ս Գ. Պրլայան, Հայկական ֆուտուրիզմ, Երևան, «Սարգս Խաչինց» հրատարակություն, 2009:

² Տե՛ս Ժ. Զալանքարյան, Գրական երիգուններ, «Զարենցյան ինչ-ինչ աղակներ հայ արդի պնդակայում» եղանակություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2008, էջ 78:

ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԾԱՂԿԱՇՈՐՅԱՆ ՄԻՋԱԴԵՊԻ ՀԵՏՁԵՐՈՎ

Այս ի՞նչ է պատահել Չարենցին,
Հայացքը տխուր ու մոլոր է,
Այս իր սիրած Ծաղկածորն է,
Այս ի՞նչ է պատահել Չարենցին:
Հիշել է անառ իր Վերջին,
Այստեղ՝ դավադիր այց օրը.
Այս ի՞նչ է պատահել Չարենցին,
Հայացքը տխուր ու մոլոր է...

L. Սարգսյան

Քսաներորդ հարյուրամյակի մեծագույն բանաստեղծ Եղիշե Չարենցի անվան ու գրական վաստակի շուրջ ստողծվել է ծավալուն ու արժեքավոր գիտական, մեկնական գրականություն: Մեծարծեք աշխատություններ են երևան եկել՝ զերծ ճախիկնուն անխուսափելի դարձած քարարական պարտադրանքներից: Այդքանի հանդերձ՝ տակալին շատ են չարենցագիտական՝ լրտման կարու հարցերը: Իրենց գեղագիտական նշանակության ու գաղափարական տարրագության չափերով ծավալուն հարցերի կողքին, բնականարար, առկա են բազմաթիվ փոքր ու աննշան բվացող վաստեր ու իրադուրյուններ՝ շտկման և ճշաման կարու, որոնք ևս չարենցագիտառյան համար արծեք ունեն, և նրանց լուծումը կարող է օգտակար լինել թե՝ բանաստեղծի գիտական կենսագրության և թե՝ նրա կյանքի ու ստեղծագործության տարեգրաւան ամրողացման գործում:

Վաղ պատամենկուրյունից սկսած՝ իմ հարազատներից ու համազուղացիներից հաճախ եմ լսել Ե. Չարենցի՝ 1937-ի ամռանը՝ ծաղկածորյան հայտնի միջադեպից հետո, «Քրազդանի շրջանի Աղրյուրակ գյուղում եղած լինելու և այնտեղից ձերքակալվելու մասին: Կարունակելով մառել այդ մասին, անգամ բանասիրական կրթություն ստանալու հետո ճեմնապահ էի մնում հարցը բարձրացնելուց, որովհետև չարենցագիտական ոչ մի ուսումնակրության մեջ 1937-ին Չարենցի ամռանը Ծաղկածորից զատ Հրազդանի և շրջանի գյուղերից որևէ մեկի հետ չեր կապվում:

Բայց ահա Չարենցի ծննդյան յոթանասումամյակի կապակցությամբ շրջանային «Հրազդան» թերթը 1967-ի սեպտեմբերի 28-ի համարում ապագրում է «Եղիշե Չարենցը Հրազդանում» վերնագրով մի հոդված և փաստը առաջին անգամ, թերութ շրջանային տարածում, բայց և այնուամենակ հրապարակ հանում: Հոդվածագիրը՝ թերթի պատասխանառու քարտուղար Արդա Սարգսյան-Վարդանյանը, լինելով Աղրյուրակի հարս, տեղեկացել էր, որ Չարենցը 1937-ին ըմտանքով ապրել է Հովհաննես և Արփենիկ Գրիգորյանների աանը, հանդիպել էր նրանց, զրուցել այդ մասին և գրառած վաստերը հրապարակել իր հոդվածում:

Այդ հրապարակումը ինձ ուրախացրեց. Վերջապես Չարենցի կյանքի մի փոքրիկ և անհայտ հանգույց դառնում է խոսքի առարկա, բայց և զրոհացրեց, որովհետև հրապարակվել էր տասկական վաստը՝ առանց գիտական մեկնարարանուրյունների:

Աղրյուրակցիներից նրանք, որոնք տեսել էին բանաստեղծին, պնդում էին, թե Չարենցը մեկ ամիս ապրել է Աղրյուրակում: Գրիգորյաններն էլ, երկար տարիներ եղանակներ ունենալով և մեզ հետաքրքրող վաստի մանրամասները չիիշելով, եղում էին եղանական «սեղոնի» ըմբռնումից...

1970-ի ամռանը, երբ Հրազդանի շրջանում վարում էի ԵՊՀ բանասեր ուսանողների բանահավաքչական պրակտիկան, ինքու էլ մի խումբ ուսանողների հետ դիմեցի Հովհաննես և Արփենիկ Գրիգորյաններին, որոնք 1937-ին երիտասարդ ամուսիններ են եղել՝ չորս մանկահասակ երեխանների տեր: Արդա Սարգսյանի օգտագործած վաստերը բարմացան և հարստացան Գրիգորյան ամուսինների, Հովհաննես Գրիգորյանի եղբոր կնոջ Վարսենիկ Վարդանյան-Գրիգորյանի նոր վերիշշումներով, որոնք թեև եիս մականում իրական տվյալներ էին, բայց բավարար չին փաստը եկմանավորելու համար: Անջնջելի է հորաքրքու՝ Վարսենիկի պոռքումը: Իր լազգարը կապույտ աչքերը գամելով երեսիս ու դարձնելով ունկնդրող ուսանողներին՝ ճա ասաց. «Թա՛, ընձի չե՞ս հավատքը... զրկվածը խի՛ եր բանց սիվտկե, բարակե...»: Ակամա Սահարու տողը եիշեցի՝ «Սամները մոմե...»:

Այս ամենը՝ որպես բանավոր վկայություն: Բայց ոչ չարենցագիտական այլ վկայություններ կային, և ոչ էլ հրապարակված եղանակության մեջ որևէ հիմք կար: Հետո էր, որ թե՝ մեկ և թե՝ մյուս առումով բավականաշափ կովաններ պիտի ունենայի, մանականդ՝ «կիակ դրների»՝ մարդկությունից բարցրած վավերագիրությունը:

Մինչև ստալինյան բռնամնջումների գոհերի վերաբերյալ արխիվային նյութերի հանրամատչելի դառնալը հարցը փաստերի լեզվով քննարկելու մասին խոսր լինել էր կարող:

Բանաստեղծի կինը՝ Իզարելա Չարենցը, «Եկշում է» 1937-ի ամսանն իրենց ընտանիքի՝ Շաղկաձորում մեկ ամիս կենալու և հայտնի միջադեպից հետո այնտեղից ուղղակի Երևան-Նորք տեղափոխվելու մասին, իսկ աղբյուրակցիները պմրում էին, որ ժաղկաճորյան իր ապրած մղջավանջից հետո Չարենցը Աղբյուրակում է հանգրվանել և այստեղից է ճերրակալվել:

Չարենցի ընտանիքի՝ Նորքում կամ Աղբյուրակում լինելու փաստը, ժաղկաճորյան վերջին ամռան օդակներից մեկը լինելով, բնականարար, աներաժեշտ էր դիտարկել ամբողջության մեջ այդ ամռան մյուս փաստերի շղթայում: Իսկ այդ շղթայի առավել կարևոր փաստերը տեղ էին գտել ճերրակալվելուց երկու օր անց հարցաքննության ժամանակ Չարենցի տված ցուցմունքի մեջ: Քննիլի հարցին, թե Չարենցը պարտավոր է «քստ էության» ցուցմունք տալ «իսրահրային իշխանության հասցեին» Շաղկաձորում բույլ տված «հակահեղափոխական հարձակումների» մասին, բանաստեղծը պատասխանել է. «Հուլիսի 17-ին գնալով Դարայիշակ՝ մեզ տվեցին հողեն հատակով սենյակ, ես չհամաձայնեցի, երկու օրով և վեցին գրասենյակը, ապա մասմակոր տառն վարձեցի: Ես վերադարձա Երևան: Հուլիսի 24-ին իմանալով, որ ընտանիքին վարչական կարգով դուրս են արել, գնացի Դարայիշակ: Պարզ վեց, որ նրանց դուրս են արել 20-ին, երեք օր նրանք ապրել են հանրակացարանում»¹:

Այսպես, ուրեմն, 1937 թ. հուլիսի 17-ը Չարենցի ընտանիքի համար ժաղկաճորյան ամռան սկզբն է: Այդ օրը, շմորանանք ասել տնային կալանքի հեթարկված բանաստեղծն իր ընտանիքը Երևանից տեղափոխել է Շաղկաձոր՝ առանց տնից իր բացակայելու մասին պետանկանացության մարմիններին տեղյակ պահելու: Շաղկաձորում գրադների միության հանգստյան տան աշխատողները նրան ցույց են տվել «հողեն հատակով փոքրիկ մի

սենյակ», և այս չի համաձայնել: Այստեղից սկսած պարզությունում է բանաստեղծի նկատմամբ ծրագրված գրգռիչ, սադրիչ վերաբերմունքը: Ըստ երևույթին՝ բանաստեղծը մերժել է նաև «մասնակիորից վարձու սենյակը»: (Գուցե դա իր՝ մեզ անհայտ պատճառ ուն ունի, գուցե ցուցմունքի մեջ այս մասին վրիպեն է): Չարենցը համակերպվում է երկու օր մնալ գրադների հանգստյան տան գրասենյակում, որպեսզի հարցը տանելի լուծում ստանա, և լուծումից հետո Երևան է մեկնում հուլիսի 19-ին: Սակայն մեկ օր հետո՝ հուլիսի 20-ին բանաստեղծի ընտանիքը «վարչական կարգով» դուրս է հանգում հատակացված սենյակից, որից պարզ երևում է, որ սենյակը, ի վերջո, եղել է ոչ թե մասնակիորից վարձվածը, այլ հենց գրադների տնից հատակացվածը: Փաստն այն է, որ Ալի Սահմանը իր հետո, որի ով լինելն ու անունը Իզարելան չի հիշում, սադրանք ստեղծելու համար նրան գրադների հանգստյան տան նույն սենյակն են տրամադրել, և այս բռնի կերպով բանաստեղծի ընտանիքի իրերը սենյակից դուրս է հանել: Այս ամենը, ինչպես ասվեց, կատարվել է հուլիսի 20-ին, Չարենցի մեկնելու հաջորդ օրը, որի մասին լրագր բանաստեղծին է հասում միայն հուլիսի 24-ին, եթե և այս ամսիցաւեն Շաղկաձոր է հասնում:

Չարենցին ճերրակալելու, ինչպես և գրողների միությունից վատարելու համար եինք է ծառայել այս օրվա նրա պահվածքը, երբ բանաստեղծին այլ բան չեր մնում անել քան տեղի ունեցածի համար զյսավոր դեմքիմ՝ ՀԿԿ Կենտկոմի առաջին բարսուղար Ամստումուն հայույն:

Դեռ կխոսվի այն մասին, թե Չարենցը ինչպես է քողում Շաղկաձորը: Այստեղ կարևոր է գիտենալ, որ հուլիսի 24-ով փաստորեն ավարտվում են ժաղկաճորյան օրերը, բայց մենք տակավիմ պատեհություն ունենք կենսագրական մի այլ ճշգրտում կատարելու: Խոսքը վերաբերում է Չարենցին Շաղկաձորում ճերրակալելու մի փոքրի, որը վկայությունն է նրա, թե տնային կալանքում գտնվող Չարենցի նկատմամբ հսկողությունը եղել է գործուն, օպերատիկ՝ պարտադրված նաև միութենական անվտանգության օրգաններից²: Դրանում համոզվում ենք Սերիկ Դավթյանի վկայումից, որով ընթերցողը տպագործում է 37-ին Չարենցի շուրջ ստեղծված մթնոլորտաից: Բայց դա բավարար պայման չէ, մենք պարտավոր ենք փաստերի արամարանությամբ որոշակիություն մտցնել, թե որ օրը և ինչ պատճառով է տեղի ունեցել Ս. Դավթյանի

¹ Հավիր Գասպարյան, Փակ դամերի գաղտնիքը (Չարենցը, Բակունցը և նյութները), Եր., 1994, էջ 32-33: Չարենցի այս ցուցմունքի մեջ հստակ չի խոսվում արամարդկան սենյակի մասին: Անհանձանանություն կա նաև Իզարելայի և Չարենցի ներկայացրած փաստերի միջև: Ըստ Չարենցի՝ 20-24-ը իր ընտանիքը սպարել է հանրակացարանում, իսկ ըստ Իզարելայի՝ հանգստյան տան առաջին հարկի պատշաճություն: Համենայն դեպք, գոնեն առաջին զիշերը (Չարենցի հետ: Հուշեր, Կազմող և խմբագիր Դավիթ Գասպարյան, Եր., 1997, էջ 300-375): 206

² Այս մասին անըն Հավիր Գասպարյան, Փակ դամերի գաղտնիքը, էջ 30:

հիշատակած եղելությունը: Չայնը տաճք Չարենցի անողորմ էալգրամների եերսուհուն, էալգրամներ, որոնք տեղ են զւել Դավիթ Գասպարյանի աշխատասիրությամբ երատարակած «Նորահայտ էջեր»-ում (Եր., 1996):

«...1937-ի ամռանը ես գնացել էի Ծաղկաձոր՝ պիոններական ճամբարները ստուգելու... Վերադարձիս մերենայի մոտ սպասում էի ըմկերներիս: Ներքից երևաց Չարենցը՝ խելազարի դեմքով, ինձ տեսավ, բայց կանգ չառավ ու վագելով վեր բարձրացավ, անհետացավ խիտ անտառում: Յավ զգացի. ի՞նչ անել, վազել գանել, բերել նստեցնել մերենա, տանել քաղաք՝ առուն: Ծրջվեցի, նայեցի հակառակ կողմ, որ գանես վարորդին, մի տեսակ քարացած էի, նույնիսկ գլուխս դրել էի մերենայի վրա: «Սերիկ, Չարենցին չէ՞ն տեսել»... ուուրի պես պայթեց ականջիս Կոստիկյան ու չեկիսա եղրդը ծայնը: Ես սառած նրանց էի նայում: Եղրայրը կրկնեց Չարենցին չե՞ն տեսել: Նրանք ծանր էին շնչում, բվում էր, թե վազելով էին եկել: Ես լուս էի:

-Իմ վարորդին չե՞ք տեսել - եարցրեցի...

Նրանք անցան իմ կողրդ և դիմեցին դեսի ճորը: Ուրեմն՝ Չարենցին էին որոնում: Վերադարձա երևան ծանր տպավորություններով»¹:

Քանի որ պատումը շատ է կոնկրետ և երա ճշմարտացիությունը՝ կասկածից վեր, ուստի աներաժշառարար պետք է պարզել, թե 37-ի ամռանը Չարենցի՝ Ծաղկաձորում եղած երկու անգամներից որին է վերաբերում Սերիկի հաղորդումը. առաջինի՞ն՝ հուլիսի 17-19, երբ բանաստեղծը ընտանիքին տեղափորել է գրողների հանգստայն տանը, թե՝ երկրորդի՞ն՝ հուլիս 24, երբ Ծաղկաձոր է մեկնել ընտանիքի վիճակով անհանգստացած...

Կասկածից վեր է, որ խոսքը վերաբերում է Ծաղկաձոր մեկնելու առաջին անգամվան, երբ Չարենցն իր այդ մեկնումով խախտել է տնային կալանքի սեժինը և այդպիսով դարձել պետանկանգործյան աշխատողների կողմից հետապնդելի:

Ծաղկաձոր երկրորդ անգամվա մեկնելուն ոչ մի կերպ չէր կարող վերաբերել այն պարզ պատճառով, որ այդ մեկնումը ծովուկի պես մի բան էր՝ հենց վերևից խնամքով նախապատրաստված:

Ծաղրանք նաև, թե առաջին անգամվա երեք օրերից որում պիտի կայանար Սերիկի վկայած փաստը: Պետք է ենթադրել, և դա միակ արամարանական է, որ տեղի է ունեցել հուլիսի 19-ին:

¹ Չարենցի հետ: Հուշեր, էջ 375: Այի Մահմեդովի՝ այդ օրերին Հայաստանում պատասխանատու պաշտոնում գտնվելը ևս իրավաշյորնեն գնահատվել է որպես «Թերիայի և Բաղրամովի հաստոկ կայլային քաղաքականության արդյունք»: Տես Դավիթ Գասպարյան, «Եղիշե Չարենց: Հայոց բանաստեղության մայրաբաղաց», Եր. 1996, էջ 629:

17-ին և 18-ին չէր կարող լինել, որովհետև 19-ին տակավին այն տեղ է եղել և զրադիւ իր խնդրով: Ամենայն հավանականությամբ, դա տեղի է ունեցել, երբ արդեն ընամերիք տեղափորել և ցանկացել է վերադարձնալ: Այդ ժամանակ էլ Կոստիկյանը և իր շեկիսա եղրայրը ընկել են նրա հետքերին:

Այժմ այս փաստերին համադրենք այն ավյանները, որ տեղ են գտել դեպքերից մոտ 30 տարի անց՝ Իզարելայի վերահշումների մեջ:

Ակսենք ծաղկաձորյան ամռան մասին նրա հիշած կարևոր փաստից. «Էնտեղ վերևի հարկում մի հատ սենյակ» վերցրեց, որ գրադարձների տանն է պատկանել: Մրանով՝ մասմավորից վարձած սենյակի հարցը, որ Չարենցի ցուցմունքի մեջ կար, կարցնում է իր նշանակությունը: «Խսկական էսպես մի սենյակ ավեցին (Իզարելան ցույց է տալիս կիվանդանոցի սենյակը, որը նրան ճայնագրել են – Խ.Վ.): Ես մի ամիս էնտեղ մնացի»: «Ես»-ի առկայությունը ցույց է տալիս, որ Չարենցը, եարցը լուծելով, վերադարձել է Երևան: Այսաեղ պես է ընդունել, որ Իզարելան, ըստ երևույթին, շփորել է ծաղկաձորյան երկու տարրեր ամսաներ, այն ամռան մի քանի օրվա փոխարեն այլ տարվա ավյալ է իշշել: Այստեղից էլ Իզարելայի՝ Այի Մահմեդովին վերագրած խոսքը. «Չեմ եիշում ո՞վ էր՝ եկավ ասաց, որ դուք պիտի այս սենյակն ազատեք: Ասում ես՝ «Ինչո՞ւ»: Ասում է մեկ ամիս ապրել եք, բավական է, եիմա էլ պիտի ուրիշներն ապրեն»:

Սեկզանդրիշտա պիտի իմանանք, որ Չարենցի վերջին ծաղկաձորյան առնությունները սկսվել են հուլիսի 17-ին, վերջ գտել նույն ամսի 24-ին:

Այս պատումի մեջ վակիրականը բանաստեղծի ընտանիքին լկաի կերպով սենյակից հանելու փաստն է: Ահա այդ վկայությունը. «Ասում ես՝ «Բա ես որտա՞ղ գնամ, սպասեք մի քանի օր, Չարենցին հայտանեմ, որ զա մեզ տանի Երևան»: Նա չսպասեց: Իմ իրերը սենյակից դուքս հանեց»¹: Սա հուլիսի 20-ն է: Չարենցի կողմից ընտանիքին տեղափորելու հաջորդ օրը: Իրերը մեկ հարկ ներքին առաջին հարկի բաց պատշաճբը իջեցնելով և այստեղ երկարյա մահճականեր գտնելով՝ Իզարելան երեխաներին տե-

¹ Չարենցի հետ: Հուշեր, էջ 375: Այի Մահմեդովի՝ այդ օրերին Հայաստանում պատասխանատու պաշտոնում գտնվելը ևս իրավաշյորնեն գնահատվել է որպես «Թերիայի և Բաղրամովի հաստոկ կայլային քաղաքականության արդյունք»: Տես Դավիթ Գասպարյան, «Եղիշե Չարենց: Հայոց բանաստեղության մայրաբաղաց», Եր. 1996, էջ 629:

դավորում և շատ ժամը գիշեր է անցկացնում՝ վախով ու տագնապով: Հաջորդ օրը մարդ է զանում, որ Զարենցին իմաց տան:

Զարենցի ցուցմունքի ավլյանները այսանդ ճշգրտություն են մտցնում: Ըստ էռիքան նույն այդ վիճակով Իզարելան երեխանների հետ 3-4 այդպիսի գիշեր է անցկացնում, որովհետև լուրջ Զարենցին հասնում է 24-ին, և նույն օրն էլ նա մեկնում է Ծաղկաձոր: Իզարելան հիշում է, որ Զարենցը շատ է հուզվում ըստանիքը պատշաճոր մի ամելյունում ծվարած տեսնելով: «Սարսափելի հուզվեց և շատ վաս էր իրն զգում», բայց՝ «ոչ մեկի ոչ մի բան չասաց»¹:

Այնուհետև մի տեսարան է Իզարելան նկարագրում, մի տեսարան, որ նրա գիտակցության մեջ ոչ մի կերպ չէին կարող խամբել խոտառ կյանքի տասնամյակները. «Գնաց մի սայլորդ վարձեց, ասաց. «Մի տասը բռպի սպասեք, ինմա կզամ»: Թեմ իմանում որտեղից գուտնաշիններ գտավ: Բերեց սայիլ առջեր դրեց և ասաց. «Նվազեք ամենատխու՝ ը երգը»: Նրանք սկսին նվազել, և սայլը գուտնաշիններով կամաց-կամաց շարժվեց: Եվ մեկ էլ տեսա, որ այդ գուտնաշինների ճայմի՞ց էր, թե ինչի՞ց էր, ամրադր Դարաշիշակի ժողովուրդը դուրս է քափվել և ճայում ու ասում էին. «Էս ի՞նչ բան ա, ևս ի՞նչ բան ա»: Ես ասացի. «Զարենց, այ ճայիր, ամրոդր ժողովուրդը դուրս է եկել փողոցները, նայում են, լավ չի...»: ... Ասում է. «Թող հայ ժողովուրդը տեսնի, հայ զրոյը վերջին ճանապարհն է գնում»²:

Այժմ բերենք այս զգայացունց դրվագի շարունակություն կազմող մաքերը, ուր և աշխատենք գտնել աղյուրակյան օրերի հետքերը: «Կամաց-կամաց մենք շարժվեցինք մինչև Դարաշիշակի փորքիկ կամուրջը: Էմտեղից արդեն մենք մերենա նստեցինք և եկանք Երևան»³:

Արդ, ի՞նչ է իրականում եղել հույսի 24-ից հետո՝ մինչև 27-ը՝ Զարենցին ճերրակալելու օրը: Զարենցը այդ օրերին Երևան է եկել և Նորք բարձրացել, ինչպես վկայում է նրա կիմք, թե՝ հան-

գրվանել է Աղրյուրակում: Եվ վերջապես այս երկուսից ածանցվող հիմնական հարցը՝ Զարենցը որտեղից է ճերրակալվել. Նորքի՞ց, թե՝ Աղրյուրակից:

Հարցը տեղից շարժելու համար հօգուած Աղրյուրակի որևէ, թեկուու հուշիչ բնույթի փաստ էր անհրաժեշտ, քանի որ Իզարելայի վկայությունը բացառում էր աղյուրակյան օրերից խոսելը: Մի վկայություն էր պեսք, որ տարրեր լիներ Նորք և եղափոխվերու պնդումից, որից հետո կյանքին աղյուրակցինները՝ ի դեմս Գրիգորյան ամուսինների, Վարսեննիկ Վարդանյան-Գրիգորյանի, շինարար-ճարտարագետ Վաչե Սահմանյանի...

Պրապտումները վերջապես ի հայտ բերին նման մի ավյալ բանաստեղծի մասին հուշերի երկրարդ գրքում: Գրող Հ. Սիրասն է այդ մասին անկիութորեն ակնարկում, որ ընկերակցել է ծաղկաձորյան միջադեպի կապակցությամբ այնտեղ մեկնած պաշտոնյային՝ գրողների միուրյան քարտուղար Գ. Արովին:

Նա գրում է. «...Երևանի շոգերն անտանելի էին: Զարենցը բնաւանիքով գնաց Զաղկաձոր՝ հանգստանալու:

Հետևյալ օրը Զաղկաձորից լուր հասավ, որ այնտեղ ինչ-որ անախտործություն է պատահել. Զարենցը դժոխ է իրեն հատկաց ված սենյակից... Երբ ես ու Արովը տեղ հասանք, ասին՝ Զարենցը գնացել է Ախտա...»⁴:

Դատելով Արովի ու Սիրասի՝ մինչ այդ Զարենցի դեմ ունեցած ելույթներից՝ նրանք բոլորովին այլ նպատակով պիտի Ծաղկաձոր մեկնեն: Եվ այդպես էլ ցույց են տալիս վավերագրերը: Սիրասը բավարարվում է ծաղկաձորյան եղելության խնդարյուր վածքը վերապատմելով՝ բոլորովին շխոսելով իրենց մրերած այն տեղեկությունների մասին, որ օգտագործվել են հենց Արովի նախագահությամբ գրողների միուրյան քարտուղարության՝ հովհան 28-ի նիստում, ուր լսվել է. «Զարենցի խուլգանության մասին» հարցը: Այդ նիստում որոշվել է «Հետացնել գրողների միուրյունից Ե. Զարենցին՝ իր խուլգանության և պրակացիոն արարքների համար, որ բույլ է տվել Ծաղկաձորում եղանակի 24-ին»⁵:

Փաստերը ցույց են տալիս, որ Արովի ու Սիրասի ծաղկաձորյան «ասաքելությունը» հարազատ արտահայտություն էր նրանց՝

¹ Զարենցի հետ: Հուշեր, էջ 375:

² Հարկ է ասել, որ Զարենցը իրականում կազ է վարձել, որ այդ տարիներին Ծաղկաձորում հասարակական արանսարքատի ծև էր: Այս փաստը գրույցներում հաստատում է եղելությունից անդամ աղյուրակցիները և վկայում է անշափ կարևոր մի ամենավլորդյուն: Սա. Զարյանը (Տե՛ս Սահման Զորյան, Հուշեր գիրք, Եր., 1991թ., էջ 331):

³ Զարենցի հետ: Հուշեր, էջ 375-376 :

⁴ Նույն անդամ, էջ 376:

⁵ Հուշեր Եղիշե Զարենցի մասին, Եր., 1986, էջ 244-245:

⁶ «Զարենցապատում ըստ անտառ վավերագրերի» (Հ. Բախչինյանի հրապարակումներով, մեկնարանումներով ու ծանոքագրումներով). Եր., 1997, էջ 110: Հենրիկ Բախչինյանը միանգամայն իրավացիորն այլ ակտը Զարենցի նկատմամբ համարում է «գրողների միուրյան պատմության ամենասկ էջերից մեկը»:

դեսի Չարենցն այդ տարիներին ունեցած արմատապես բացասական վերաբերմունքի:

Ինչ վերաբերում է Արովին՝ բանաստեղծի՝ «Երեք դեկարացիայի» շրջանի ընկերոջը, ապա այդ օրերին նրա հակաշարենցականությունը սաղիզմի է հասել:

Վերադառնանք Սիրասին: Նրա՝ վերը մնջրերված տողերը ուշադրության են արժանի միայն վերջին փաստի համար՝ «...ասին՝ Չարենցը զնացել է Ախտա...»: Այլապես նրա պատումը ծաղկածորյան միջադեպի վերաբերյալ փաստերի անցության մի կույտ է, իսկ ոգու մեջ՝ զարդելի կեղծիք:

Նախ փաստական անցությունները:

Ըստ Սիրասի՝ միջադեպը տեղի է ունեցել նույն օրը, երբ Չարենցը ընտանիքը Ծաղկածոր է տարել (չի ասում երբ և որ օրը), իսկ լուրը Երևան է հասել հաջորդ օրը («Հետևյալ օրը Ծաղկածորից լուր հասավ»):

Չարենցը ընտանիքը գրադերի միուրյան հանգստի տուն է հասցել 17.07.1937թ. ու որոշ քաշը կ հաղթահարելով՝ 19-ին վերադարձել: Սաղրի արարքը տեղի է ունեցել վերադարձից մեկ օր հետո՝ 20-ին, բայց Չարենցին լուրը հասել է Յ օր հետո՝ 24-ին, և նա, հարկադրված, Ծաղկածոր է վերադարձել: Ծայրահետ հուզված՝ նա հայեցել է իրեն հալածող բանակին, հատկապես այդ բանակի պարագուխ Ամատունում: Սիրասի նկատած «հաջորդ օրը» հուլիսի 18-ը պիտի լիներ, որը հնարավոր չէր: Այդ օրը Չարենցը դեռ Ծաղկածորում էր և աշխատում էր հարմար սենյակում ընտանիքը տեղափոխել:

Սիրասն ու Արովը իրականում Ծաղկածոր են մեկնել Չարենցի՝ այնտեղից վերադառնալուց հետո՝ հուլիսի 25-ին, և բնական է, որ Երևան չվերադարձած բանաստեղծին մատնացույց են անում Հրազդան-Ախտայում...

Ինչ վերաբերում է ճշմարտությանը, նրանց՝ Ծաղկածոր գնալու իրական նպատակին, ապա զրական զույգ պաշտոնյաները, այնտեղ հայտնի վերաբերմունք Չարենցի կանքի դափաղի օրվանից՝ հուլիսի 24-ից անմիջապես հետո, պարտաճանաշյորեն նրերել են իրենց մասնակցությամբ կազմակերպված սաղրանքի այնքան խոսում փաստերը՝ մեծ հալածականի դեմ, որպեսզի հավոր պաշտամի ներկայացնեին գրադերի միուրյան քարտուղարության 28.07.1937թ. նիստում:

Այդ նիստը, ինչպես տեսնում ենք, կայացել է բանաստեղծի ծերակալումից մեկ օր հետո: Արովից, Սիրասից մի քանի օր է

պահանջվել (հուլիսի 25-ից մինչև հուլիսի 27-ը) փաստերը ձևակերպելու և հասուն Չարենցի հարցով նիստ գումարելու համար: Հարկ էր ցույց տալ, որ իհմնավորված հանցակազմով ծերակալված ու անել դատաստանի մատնաված բանաստեղծը չէր կարող Խորհրդային գրադերի միուրյան անդամ լինել:

Սիրասի հուշերի մեջ Չարենցի՝ Ծաղկածորից Ախտա գնալու փաստի օգնությամբ կարող ենք տեսնել Իգարելայի հուշապատումի Նորք գնալուն վերաբերաղ փաստի շփորմունք լինելը: Նա Աղբյուրակը շփորել է Նորքի հետ, եավանարար այն պատճառով, որ նախորդ տարիներին Չարենցը ընտանիքը նաև Նորք էր տարել:

Մեծ էր իմ մեջ ճգառումը՝ որքան հնարավոր է կարծ ճանապարհով ցույց տալ, որ հուլիսի 24-ին տեղի ունեցածից հետո Չարենցի ընտանիքը ոչ թե վերադարձել է Երևան, այլ ետարծի ճանապարհին մնացել է Հրազդանում: Կարծում էի՝ այդ պարզելուց հետո Ախտա-Նորք շփորը կվերանա: Բայց երբ տեղենկացան նման նոր վկայության, (նաև Սա. Զորյանի՝ հուշերում), զգացի, որ միայն այդքանով ոչ ոքի չեն կարող հանգել, թե անա պարզվել է Իգարելայի հուշերի մեջ Ծաղկածորից ուղղակի Երևան-Նորք տեղափոխվելու փաստի շփորմունք լինելը և, եեւսնարար, Նորքին նրա վերագրումները, ըստ էության, Հրազդան-Աղբյուրակին են վերաբերում: Հիշյալ վկայությունները, սակայն, անհետանանք չանցան: Դրանք սախաեցին ինձ ոչ միայն չհետանալ Իգարելայի վերիշշումներից, այլև աշխատել երիտասարդ, Հայաստանը լավ չճանաչող, հետազա կյանքը աքտորի տառապանքներով անցկացրած, ծայրասահման դժբախտ և հուշերը պատմելու օրերին իիվանդ ու իիվանդանցում գտնվող կնոջ խոսքի մեջ իրականությունը «մատնող» տեղեր բացահայտել:

Համոզված էի, որ ինչքան էլ աննպաստ հանգամանքները մշտական նրա միարք, այնուամենայնիվ, նա չէր կարող երջանիկ հուն մտած իր կյանքի խաթարման օրերից ինչ-ինչ հուշումներ չպահպանել: Ակսեցի ուշի-ուշով նման հուշումներ որոնելու: Իս ուշադրությունը նախ գրավեց Նորքում Իգարելային անծանոր տունը՝ մեծ, երկինարկանի («Նորքում, էնտեղ երկու հարկանի մեծ տուն էր, չեմ եիշում ումն էր, չեմ եիշում եիմա»):¹

¹ Տես Ստեփան Զորյան, Հուշերի գիրք. Եր., 1991, էջ 331: «Հուզված վիճակում Չարենցը Ծաղկածորից վերադառնում է Նորքին Ախտա...»:

² Չարենցի հետ; Հուշեր, էջ 376:

Ավելի քան տարակուսելի փաստ էր արդեմ, դարձյալ Նորքում, «զրի», «գետի» առկայությունը վկայող: Երկու փաստաերն էլ իմ միտքը ուղղակի լուսավորեցին: Ինչ գետի մասին խոսք կարող է լինել Նորքում: ԵՎ ևս ստիպված էի համոզվել, որ խոսքը իրականում Աղբյուրակի մասին է՝ և գետի, և տան առումներում: Գետը մի քանի տասնյակ քայլ է ընդամենը երկեարկանից ենուում եռուել:

Հետաքրքիր է, որ ջրի ափի հետ կապված եղելություն կա և Արփենիկ Գրիգորյանի խոսքում, որն իր եղանակում օգտագործել է Ա. Սարգարյանը: Ես անձամբ տասնյակ անգամներ լսել եմ Վարսենիկ եղաքություն, որ այդ օրը եղել է անգրոջ տանը:

Երեխսաները ճեռք ճեռքի հասնում են գետափ և խաղում ավազների հետ: Հանկարծ տեսնում են, որ նրանք չկան: «Էն ո՞նց եղուզեց Չարենցը, քիչ էր մնում սիրար պատոնք, -ասում էր ինձ եղաքություն, - Իզարելա, Իզարելա... Լավ է շուտ գնացին բերեցին ջրի կրաղից»:

Չարենցին հարցմող մարդկանց իր բնակված տաճ՝ բակից Իզարելան մատնացույց է անում «գետը», «ջուրը». «Էնտեղ է երեխների հետ...»²: Իմ այս համոզումը ևս բավարար չէր, որ իրքն սառույց փաստ մատուցվեր հանրությանը, ուստի շարունակեցի Չարենցի կյանքի վերջին օրերին վերաբերող հուշերի ուշադիր վերընթերցումը: ԵՎ երբ կարդաւ էի Արփենիկ Չարենցի հուշերը, ակամա հուսադրվեցի՝ «Մայրս հորս մասին» վերնազիքը կարդալով: Մի՞րե այսրան խոստումնալից տեղում էլ իրական փաստի մասին ոչինչ չպիտի գտնեի: ԵՎ չխսալվեցի: Ան և այնքան ցանկալի միարը՝ դարձյալ Իզարելայից, բայց ոչ նրա հուշերում, այլ մտերմիկ մքնոլորտում դստերը՝ նրա բացառիկ մնելու եղերարախսա հոր մասին պատմելիս: «Տունդարձի վերջին գիշերը անցկացրինք Ախտայում», -ասում է Իզարելան՝ և ըստ

¹ Ծանրագրմամբ նկատեն, որ ներկա հոդվածի նյութը ներկայացնելիս դահիճում ցուցադրել եմ նորվածում միայն անվանապես հիշատակված՝ ճարտարագիտ-շինարար Վաչե Մանվանամի կատարած մի լուսանկար /1950-ական թվականների կանոնին/, ուր իրենց տաճ համապատկերում, հորիզոնը եղբակական գծում, երեսում են այն մասում ճյուղակիրքած Զանգուն և Աղբյուրակի զյուղամեջը (կենտրոնը), ուր և բավականաշատ տեսանելի է Գրիգորյաններին պատկանող երկեարկանիք: Հատկապես Եղիշեն Չարենցի տուն-բանգարանում ցուցադրելու նկատառումը Աղբյուրակի զյուղամեջ-կենտրոնը բազմապատկի շափերով խոչընացվել է:

² Տե՛ս Չարենցի հետ: Հուշեր, էջ 376:

³ Նույն աելում, էջ 387:

Երթյան սկիզբ դնում Նորքում համգտանալու մասին իր իսկ պատմածի հերքմանը:

Իրական տունդարձի մասին... Հշտապենք: Նկատենք, որ առաջին գիշերը եռվիս 24-ի լույս 25-ինն է: Տեսմենք, թե ինչպես է դստերը պատմում այն, որը ծիշա վերիշելու դեպքում պիտի պատմեր նաև հիվանդանոցում իրեն շրջապատող չարենցապաշտ իրադարձությունը եղանական է կաշկանդ ված, մի տեսակ «պաշտոնական» հարկադրանքով ու շփոթի մասնել էականը:

«Տունդարձի» գիշերը, գիշեր մղմավանջի, որ բանաստեղծի կյանքի ամենամուր օրվանն է հաջորդել, երբ հոգելիկած գիշերի կամուրջը «...Ախտայում»:

«Ողջ գիշեր քայլում էր: Չընեց, ծխում էր սիգարետ եւսկից և իր սովորության համաձայն՝ մնտաքսե վերմակը այրել էր տարրեր անդերից: Լուսադեմին նոր միայն քննեց»:

Եթե անտեսներ Իզարելայի առայժմ «քաքցրածը» մնացած 1-2 գիշերի վերաբերյալ, ապա պիտի ընդունենք, որ իր անցկացրած մղմավանջային գիշերից հետո Չարենցը ընտանիքը Երևան է աեղափոխել: Բայց Իզարելան ասելիք ունի այրված վերմակի քննայով, և դա էլ հենց «քաքցրածն է»: Այդպիսին չիններու դեպքում այսպես թե այսպես դեռ իր ուժը կպահպաններ նորը... Չէ՞ր կարող Չարենցը միջադեպին հաջորդող գիշերից հետո էլ Նորք տանել ընտանիքը: Դեռ երկու գիշեր կար, որպեսզի հայտնված պետանվանգության երկու աշխատակիցները...

Այո՛, մի վերջին գիշերը՝ Ախտայում անցկացնելու փաստը այդ իմաստով կարող էր դեռևս ոչինչ չնշանակել:

Իզարելան ընդհատված տեղից շարունակել է դստերը հաղորդել ամուսնու անքուն գիշերվա ընթացքում «տարրեր տեղերից» այրված մնտաքսյա վերմակի քեման: «Հետո տաճաներից տեղեկացած, – ասում է նա, – որ մկրատով ծնել-հանել էր այրված տեղերը...»²:

Մի՞րե այսանդ Իզարելայի հիշողության թելի խճճված կծիկը վերջնականապես բացվելու ականատեսը չենք: Չէ՞ որ այդպիսով սպառվում է բանաստեղծի ազատ օրերի ու գիշերների պաշարը: «Հետո»ն իմաստավորդ ամենասուղ ժամանակը էլի մի 2-3 օր պիտի լիներ, բայց ազատության պաշարը 1-2-ճ է... Իհարկեն, հա-

¹ Նույն աելում:

² Նույն աելում:

գորդ օրն էլ կարող էր տաճախիմք նկատել ու փոխանցել: Բայց այդ անփափկանկատության դեպքում էլ մնացած մեկ զիշերը՝ լուս 27-ի, ոչինչ չէր նշանակի, որովհետև 27-ի առավտայան, թեյելուց հետո Չարենցի կյանքը տնօրինողները մերկայանում են:

Հուլիսի 26-ին արդեն ստորագրվել էր Եղիշե Չարենցի ճերպակալման օրդերը: Հուլիսի 27-ին այն պետանկուտանգության երկու աշխատակիցների ձեռքում էր:

Ինչ վերաբերում է ամուսնու ճերպակալության վերաբերյալ Իզարելայի պատմածին, ապա այն մի նախադասության պակասով լիովին համընկնում է Գրիգորյանների վկայությանը:

Խոսքը տանք Իզարելային. «Առավոտյան էր, թեյ խմեցինք, պրծանք: Նա (Չարենցը – Խ.Վ.) մի երեխին վերցրեց զիրկը, են մյուսի ծեռքից բռնեց, գնաց ջրի ափը: Ես էլ տունը հավաքում էի: Մերենա եկավ, ես ասացի. «Էս ի՞նչ մերենա է»: Տեսա երկու ՆԳԺԿ-ի մարդիկ են՝ հազնված, համազգեստով: Եկան ասացին. «Որտե՞ղ է Չարենցը»: Ասացի. «Էնան է, երեխների հետ էնան կամքնած է»: Նրանք շուր եկան, գնացին դեպի նա»:

Այստեղ Իզարելան յի իիշել անկոչների այն խոսքերը, որոնց ի պատասխան Չարենցը խնդրել է ընտանիքին նույնակա հետանքը վերցնելու, Երևան տանելու համար: Այդ խոսքերը իիշում էր տաճախրութին՝ Արփենիկ Գրիգորյանը, որը եղելությանը ներկա է եղել: «Ընկեր Չարենց, քեզ պիտի Դիլիջան տանենք, քո առողջության համար այնտեղ ավելի լավ է», - ասել են, որից պարզվում է՝ նրանք միայն Չարենցին են ցանկացել տանել: Բաճաստեղծը կոտահել է դա և անհազմացել ընտանիքի համար: «...Գիտեմ, ես էլ էստեղ չեմ վերադառնա, -պատմում է Իզարելան, - խնդրում եմ, ընտանիքս էլ հետանքը տաներ Երևան»¹: Չարենցի՝ մեր կողմից ընդգծած արտահայտությունից էլ ներքուն զգացվում է, որ խոսքը Երևանից ահազին հեռավորության մասին է, ուր յի կարող երիտասարդ կնոջը և փոքրիկ երեխաններին թողնել, այլ ոչ թե մայրաքաղաքին գրեթե հարող բնակավայրի՝ Նորքի:

Խոսքեր կան, որոնք ավելին են ասում, քան իրենց բովանդակած իմաստան է: Այդպիսին է Իզարելայի հուշերից այս մի քանի տողը. «...Իմ գրկին փոքր երեխան էր: Մեծ երեխան Չարենցի գրկին էր: Իմքը՝ շատ ախուր, զլուխը քարշ... Ամրող ճանապարհին մինչև Երևան էսպես եկանք: Մի խոսք նա չասաց ճանապար-

հին»²: Այս տաղերից հետո ևս Իզարելայի խոսքը դաժանորեն ծշմարիտ է՝ մինչև Չարենցի՝ ընտանիքին չողջագուրված, չեկիսամերի առջևից քայլելով տնից հեռանալը... ընդմիշտ:

Այստեղ էլ քափանցիկ կերպով կարելի է տեսնել ճանապարհի դաժան հեռավորությունը՝ Հրազդանից Երևան՝ այն ժամանակված ճամփաներով մոտ ժամ-ժամուկն ճգվող, երբ հանձարի պրկված միտքը արվել է կեղերիչ, իսկապես հոգեխարածի լուրյան:

Այդքան տարիներ հետո փաստերը համախ շփոթող կինը ի՞նչ քառորդությամբ է վերիշում ամուսնու տառապալի լուրյունը՝ կապարից էլ ծանր, երբ նա «գլուխը քարշ» ապրել է քսանական թվականներից սկսած ու հայ միտքը զիշատելու փուլին հասած մի զարգացում՝ մի կողմից անպաշտապան ժողովուրդ ու իր լուսավոր զավակները՝ Ն. Ստեփանյան, Ա. Բակունց, Վ. Թոքավանց, Զ. Եսայան, Գ. Մահարի, ինքը... տասնյակներ և հարյուրավորներ, մյուս կողմում Բերիան՝ Հայաստան մտցրած ապազգային, անտոն, «հայ բանակով»՝ դրած Ամասունու զիշավորությամբ, Լենինի շքանշանակիր Չարյանով ու տևական ոսկերչյան ներով...

Չարենցին Դիլիջան տանելու մասին խոսքից հետո ՆԳԺԿ աշխատաղները իրենց բուն նպատակի մասին արտահայտվել են միայն Երևանում՝ բանաստեղծի տանը: Նա, շոգից նեղվելով, հանելի է թիկնոցը նստել, իսկ ճերպակալողները մտել են աշխատասենյակ և այնանդից էլ ասել. «Ընկեր Չարենց, Ձեզ կանչել են ՆԳԺԿ: Դուք պիտի գաք Շեր գործով» և մահաեռա այս խոսքերից հետո անփուրորեն ավելացրել. «Բայց խնդրում ենք մի երկու գիրք մեզ նվեր ավերք»³:

Չարենցը «վերցրեց երկու գիրք, ստորագրեց, ավեց ամեն մեկը: Հետո թիկնոցը չհագավ: Ասաց, «Ծոգ է»: Ծառ գեղեցիկ և լայն շղթայով տակե ժամացույցը հանեց ծեռքից և ինձ տվեց: Էսպես աշքերին նայեց մի իինք բռպե, մի չորս բռպե, նայեց ախուր, հետո ասաց. «Լավ, Իզարելա, ես գնացի»: Էսպես նա առաջ ընկապ, հետակից՝ էդ երկու տղերքը»⁴:

Այդպիսով Ստալին-Բերիա մակարդակով տնօրինվող «հայկական հարցի» չլուծված մեկ օղակը ևս զտնում էր իր գուծումը»:

¹ Նույն տեղում, էջ 376:

² Նույն տեղում, էջ 376:

³ Նույն տեղում, էջ 376-377:

Հենց այնպէ՞ս էր, որ «Սիութենական նշանակության գաղտնի ծառայությունների համար անզամ «հայտնի հայ բանաստեղծի» վրա սահմանված էր համակողմանի վերահսկողություն: *Տեղական մարմինները նաև այդ պատճառով վերադասներին պիտի ապացուցեին իրենց զգոնությունը և նրանց տեղյակ պահեին «Ճեռարկված միջոցառումների մասին»:*

Եղիշե Չարենցի՝ մեր ազգային կյանքի տարեգրության բացառիկ երևոյթներից մեկի, Սարահրան Սարյանի հայացրով՝ «ամենաքիչը կիսաստծու» մասին ամեն պատճառարանված խոսք իր տեղում ու նշանակությունն ունի: Այդ գիտակցումով հարկ համարեցի խոսել երա կյանքի վերջին մի քանի օրերի մասին՝ ճգտելով նպաստել այդ օրերի իրական ճանաչողությանը:

...Լինում են բանաստեղծական արտահայտումներ, որոնց պարզ հյուսվածքը անբացարելի խորհրդավորություն է քարցնում: Առաջին ընթերցմանը հածելիորեն ուժին տպավորվելով՝ դրանք շարունակում են պահպանել նույն ուժը: Եղիշե Չարենցի ծաղկաձորյան արձանից Լիպարիս Սարգսյանի ներշնչանքը ինձ համար այդպիսին է: Ահա ինչու եմ հողվածս ամփոփելիս և նույն զգացումով առաջնորդվում:

...Իզարելամ լախս էր բարուն,
Գնում էր հիմ կառցը թխկոցով:
Աշխարհը դարձել էր վշտի ծով,
Պնեազ այդ ո՞մ էր բողոքում...

ՆՈՐ ՍԱՍՈՒՆՁՆԵՐ ԵՎԻԸԵ ՉԱՐԵՆՑԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Ե. Չարենցի տուն-թանգարանի հիմնական առաքելությունը և խնդիրը հանճարեղ բանաստեղծի կյանքի, հասարակական-քաղաքական գործունեության, ստեղծագործական անցած ուղու, նրա ապրած ժամանակաշրջանի, ինչպես նաև գրական ժառանգության ուսումնասիրությունն է, քանզարանային առարկաների, հավաքածուների հայտնաբերումը, մեկտեղումը, պահպանումը, գիտական ուսումնասիրումը, հանրահեղակումը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիներին և օաարեկոյա գրոսաշրջիկներին մատուցվող բազմաբնույթ ծառայությունները:


Մեծ է քանզարանի ները մատադ սերմոյի, երիտասարդության եղուոր, բարոյական, հայրենասիրական դասախարակության գործում: Այդ են վկայում քանզարանի ծավալած աշխատանքները ՀՀ տարրեր շրջանների դպրոցներում և քարձրագույն ուսումնական հաստատություններում:

Ծրագրի իրականացմանը նպաստում են ամենամյա քանզարանային առարկաների, հավաքածուների ձեռքբերումը, գիտահետազոտական աշխատանքները, ցուցահանդեսների, քազմարմնույթը միջոցառումների, զեկուցումների, դասախոսությունների, քեմատիկ դասների, թեմատիկ համերգների, ամենամյա չարենցյան ընթերցումների, փառասպների, մրցանակարաշխությունների կազմակերպումը, երաժարակական աշխատանքները և այլն: Թանգարանը այսօր առաջարկում է քազմալեզու էրևկուրսիաներ, կազմակերպում քազմարմնույթը, այլ ժողովարդների մշակութային արժեքները ներկայացնող ցուցահանդեսներ, տարրեր ազգերի սպորտույթների, կենցաղի, մշակույթի հետ առնչվող միջոցառումներ, նպաստելով տարրեր ազգությունների մշակույթների ճանաչմանը, մերժեցմանը, կապերի ստեղծմանը:

Թանգարանի գործունեության հիմնաքարան է հավաքչական աշխատանքը՝ քանզարանի ֆոնդերի համալրումը, երբ հետազոտությունների, ուսումնասիրությունների արդյունքում պարզվում, գտնվում են չարենցյան մասունքներ, որոնք քանզարանի տնօրինության և գիտանձնակազմի հետևողական աշխատանքը բարենցյան մասունքներ, կապերի սպորտույթների, կենցաղի, մշակույթի հետ առնչվող միջոցառումներ, նպաստելով տարրեր ազգությունների մշակույթների ճանաչմանը, մերժեցմանը, կապերի ստեղծմանը:

¹ Դավիթ Գասպարյան, Փակ դրսերի գաղտնիքը. Չարենցը, Բակունցը և մյուսները, Եր., 1997, էջ 30:

շնորհիվ բերվում և մեկտեղվում են տուն-քանգարանում՝ հարստացնելով քանգարանի ֆոնդերը:



Թանգարանը ունի եիմնական (ՀՖ) և գիտաօժանդակ (ԳՕՖ) ֆոնդեր:

Եիմնական ֆոնդ են մտնում բոլոր այն մասունքները, քանգարանային արժեք ներկայացնող նյութերը, որոնք առնչվում են Չարենցի կյանքի և ստեղծագործությունների հետ: Դրանք են՝ Չարենցին և նրա ընտանիքին պատկանող անձնական իրերը, ծեռագրերը, անձնական գրադարանը, անձնական արխիվն իր ողջ պարունակությամբ՝ լրացնելով անձնական գիտարքեր, գեղանկարչական և գրաֆիկական աշխատանքներ, քանդակներ և այլն:

Թանգարանի ֆոնդ մուտքագրված յուրաքանչյուր նյութի համար ստեղծվում է գիտանձ-

նազիր, որտեղ արվում է ավալ քանգարանային առարկայի մանրամասն նկարագիրը՝ ստեղծման տարեթիվը, ենդինակը, նյութը, չափսերը, վիճակը, ծեռք բերման ճանապարհը, եթե կա որևէ պատմություն կապված ավալ առարկայի հետ և այլն:

Թանգարանի եիմնական ֆոնդի առաջին համարի ներքո գրանցված է Ե. Չարենցի բնակարանը, ուր ապրեց քանաստեղն իր կարծառ կյանքի վերջին տարիներին՝ 1935-1937թթ.:


Այսօր քանգարանի ՀՖ-ում առկա է 7956 միավոր քանգարանային առարկա, իսկ ԳՕՖ-ում՝ 8876 միավոր:

Չարունակվում են քանգարանի ֆոնդերի համալրման աշխատանքները. յուրաքանչյուր հայտնաբերված, ծեռք բերված մասունք, զալիս է լրացնելու եղածը, լույս սփռելու հանճարի կենսագրության, ինչպես նաև ստեղծագործությունների հետ կապված լրացնարանված, մուր էցերին:

Այս տարի Չարենցի տուն-քանգարանի ՀՖ-ն նվիրատվության միջոցով համարվել է Չարենցի անձնական շախմատով 220

(17-րդ դար, ենդինական վիլուկը. քանաստեղն այն գմել է 1933-ին Թիֆլիսում, Ուսուբավելու վաղոցում գտնվող կոմիսիոն խանութից): Շախմատը տուն-քանգարանին է նվիրել ՀՀ մեծարգու նախագահ Սերժ Սարգսյանը Չարենցի ծննդյան օրը՝ մարտի 13-ին:

Վերջերս երևանարքակ մի քաղաքացուց գնեցինք Չարենցի «Երկիր Նախի» վեպի ուսուերեն քարգմանությունը (1935-ի երատարակություն) ենդինակի մակագրությամբ՝ “Дорогому Кимику товаришу и другу с искренним уважением и любовью. Егише Чаренц. Москва 15.X. 1935”.



2009-ին քանգարանի գիտխորհողի որաշմամբ քացվեց քանաստեղի ավագ դստեր՝ Արփենիկ Չարենցի եիշատակը հավերժացնող քաժին, ուր ցուցադրվում են նրա սեփականությունը համայնացող հետաքրքիր և արժեքավոր մասունքներ, որոնցից թերևս ամենապատմականը Գ. Սունդուկյանի <<Ամուսիններ>> դրամայի՝ ենդինակին պատկանող եզակի օրինակն է, որի կազմին դացված է <<ՏԻԿԻՆ ՍՈՓԻԱ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻՆ>>. Գիրքը արժեքավոր է նաև նրանով, որ Սունդուկյանը մակագրությամբ (քվագրված՝ 16 հունիսի 1893, Թիֆլիս) այն նվիրել է կնոջը՝ Սոփյային, իսկ Սոփյան՝ իր դստերը՝ Եկատերինա Սունդուկյանին: Վերջինս այն նվիրել է Ե. Չարենցին. քանաստեղն էլ

Ավիրել է իր դստերը՝ Արփենիկ Չարենցիմ՝ հետևյալ մակարությամբ.

<Այս գիրքը նվիրել է ինձ
Գ. Սունդուկյանի դուստրը՝
Եկատերինա Սունդուկյանը՝
ի արխառու նրա հոր յերկերը
ամրազավիմ լուս ընծայելու
գործում իմ քափած ջանքերի:

Տե. Չարենց

1934. IV. 24
Յերևան

Ես եկիմ կողմից նվիրում եմ
իմ դուստր Արփենիկ Չարենցին,
վորպեսզի երբ մեծանան՝ սուրբ
պահի իր սրտում եայ գրակա-
նության հանճարմերի հիշատակը:

Տե. Չարենց

Ի՞սկ գրույք սերել է ի Յ
Գ. Սունդուկյանի դուստրը՝
Եկատերինա Սունդուկյանը՝
ի արխառու նրա հոր յերկերը
ամրազավիմ լուս ընծայելու
գործում իմ քափած ջանքերի:

[1934. IV. 24.] Տե. Չարենց

Եկիմ կողմից նվիրում եմ
իմ դուստր Արփենիկ Չարենցին,
վորպեսզի մեր մեծանան՝ սուրբ
պահի իր սրտում եայ գրակա-
նության հանճարմերի հիշատակը:

Տե. Չարենց

Գիրքը զետեղված է մոմաքն տուփի մեջ, որի ներսում
Չարենցը մակագրել է.

Իմ դուստր Արփենիկ !

Սիրիք հանճարը եայ, վար դարեր
շարունակ մաքասել ե –

Եեվ, իրքն իր փառքը վերջին՝ քո հորմ ե
լուս աշխարհ բերել:

Տե. Չարենց

1934. IV. 26.
Յերևան

ԼԻԼԻԹ ՀԱԿՈԲՅԱՆ
Եղիշե Չարենցի տում-քանգարանի տնօրին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վազգեն Գարբիեյան

«Գիրք ճանապարհի». Երկու տարրերակ. ի՞նչ են ասում
վիդուխությունները 5

Վազգեն Սաֆարյան

Պատմական փաստի և անծի շարենցյան ընկալումները 22

Ժննյա Զալամբրարյան

Չարենցի պոեմների ներժանրային հարցեր 45

Սամվել Մարտարյան

Եղիշե Չարենց և Հովհաննես Շիրազ 73

Սեյրամ Գրիգորյան

Չարենցի տավալողամները 89

Աստղիկ Քերմեզյան

Զերականական և գեղարվեստական ժամանակները
«Նավահիկե»-ում 120

Աշխեմ Ջրքաշյան

Բանաստեղծության կայուն ճևերը Չարենցի պոեզիայում 133

Սարենիկ Ավետիսյան

Չարենցի դիմանկարը՝ ըստ Գուրգեն Մահարու 140

Վարդան Դեկիլյան

Սիրնադարյան տեսիլը և Չարենցի «Մահկան տեսիլ»-ները 150

Սիրանուշ Դվիյան

Զաղաքական քատրոն՝ «Կապկազ» 166

Նվարդ Վարդամյան

«Ծիածան». սիրո առասպելը մեկ օրապտույտում 176

Վահրամ Դամիենյան

Կարսը որպես վեպի տարածություն /ըստ Չարենցի
«Երկիր Նայիրի» և Փամուկի «Ջյունը» վեպերի/ 188

Արմեն Ավանեսյան

Ժամանակի ընկալումը «Գիրք ճանապարհի» ժողովածուում 198

Խաչառու Վարդամյան

Ծաղկածորյան միջադեպի հետքերով 204

Լիլիթ Հակոբյան

Նոր մասունքներ Չարենցի տում-քանգարանում 219

**ՉԱՐԵՆՑՅԱՆ
ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**

9

Համ. Ճեպիզորում՝ Ա. Խ. Աղուգոստյանի

**Չափսը՝ 84x108 1/32: Թուղթը՝ օֆսիք:
Տպաքանակ՝ 200: Պատվեր՝ 52:**

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Սահմակյան 1

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Արովյան 52